



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

CASSATION COURT
OF THE REPUBLIC OF ARMENIA

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ASSOCIATION OF JUDGES
OF THE REPUBLIC OF ARMENIA

ISSN 1829 - 0744

ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ

ԳԻՏԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ



ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ СУДЕБНАЯ ВЛАСТЬ JUDICIAL POWER

ԳԻՏԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
НАУЧНО-МЕТОДИЧЕСКИЙ ЖУРНАЛ
SCIENTIFIC - METHODOICAL JOURNAL

1-3/307-309 2025
ՀՈՒՆՎԱՐ-ՄԱՐՏ

Գիտական խմբագրական խորհուրդ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Լիլիթ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ – ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահ, ՀՀ վաստակավոր իրավաբան, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐ

Արման Դիլանյան – ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահ, իրավաբանական գիտությունների թեկնածու,

Համլետ Ասատրյան – ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահ, ՀՀ վաստակավոր իրավաբան,

Հովսեփ Բեդկյան – ՀՀ Վճռաբեկ դատարանի վարչական պալատի նախագահ,

Արթուր Դավթյան – ՀՀ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի նախագահ, իրավաբանական գիտությունների թեկնածու,

Երվանդ Խունդկարյան – ՀՀ Սահմանադրական դատարանի դատավոր, ՀՀ վաստակավոր իրավաբան,

Սերժիկ Ավետիսյան – ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի դատավոր, ՀՀ վաստակավոր իրավաբան, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,

Ելիզավետա Դանիելյան – ՀՀ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի կոռուպցիոն հանցագործությունների քննության դատական կազմի դատավոր, ՀՀ վաստակավոր իրավաբան, իրավաբանական գիտությունների թեկնածու,

Լիանա Հակոբյան – ՀՀ Վճռաբեկ դատարանի վարչական պալատի դատավոր, իրավաբանական գիտությունների թեկնածու,

Ռուզաննա Հակոբյան – ՀՀ Վճռաբեկ դատարանի վարչական պալատի դատավոր, ՀՀ վաստակավոր իրավաբան,

Նորա Կարապետյան – ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավոր, իրավաբանական գիտությունների թեկնածու,

Գոռ Թորոսյան – ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի դատավոր, իրավաբանական գիտությունների թեկնածու,

Արշակ Վարդանյան – ՀՀ դատավորների միության անդամ, իրավաբանական գիտությունների թեկնածու,

Սերգեյ Առաքելյան – ՀՀ Արդարադատության ակադեմիայի ռեկտոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,

Արմեն Հայկանց – ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,

Վահե Հովհաննիսյան – ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,

Բորիս Գավրիլով – ՌԴ ներքին գործերի նախարարության Կառավարման ակադեմիայի հանցագործությունների քննության մարմինների կառավարման ամբիոնի պրոֆեսոր, ՌԴ գիտության վաստակավոր գործիչ, ՌԴ վաստակավոր իրավաբան, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,

Անատոլի Կուստով – ՌԴ վաստակավոր իրավաբան, Ռուսաստանի բնական գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

Գլխավոր խմբագիր՝

ՀՀ վաստակավոր իրավաբան, ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի պրոֆեսոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Վահե Ենգիբարյան**

«Դատական իշխանություն» գիտամեթոդական ամսագիրը 2014 թվականից ընդգրկված է Հայաստանի Հանրապետության բարձրագույն որակավորման կոմիտեի կողմից հաստատված թեկնածուական ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար ընդունելի պարբերական գիտական հրատարակությունների ցուցակում:

Հրատարակվում է

Երևանի դատական փորձագիտության և հոգեբանության ինստիտուտի գիտական խորհրդի երաշխավորությամբ:

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«ՀՀ դատավորների միություն»
հասարակական կազմակերպություն
Հասցե՝ ք. Երևան, Վ. Սարգսյան 5
<http://www.ajra.am>

«Դատական իշխանություն»
Հասցե՝ ք. Երևան, Վ. Սարգսյան 5
Հեռ. 56-99-89
Էլ. հասցե՝ judge@netsys.am
ISSN 1829-0744

Հանձնվել է տպագրության՝ 22.04.2025
Ֆորմատը՝ 70x100 1/8
Տպաքանակը՝ 60
Ծավալը՝ 14.625 պայմ. մամուլ
Գրանցման վկայական՝ 01ՄՕՕՕՕ23
Տրված է՝ 07.11.2001 թ.

Տպագրված է «ՔՈՓԻ ՓՐԻՆԹ» ՍՊԸ-ում:
ք. Երևան, Խորենացի 4-րդ նրբ., 69 տուն

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ/THEORY OF STATE AND LAW/
ТЕОРИЯ ГОСУДАРСТВА И ПРАВА**

Արարապ Բայանդուրյան

Վերականգնող կամ հաշտեցնող արդարադատությունը՝ որպես դատական իշխանության
իրականացման նոր տիպ 3

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ/CONSTITUTIONAL LAW/
КОНСТИТУЦИОННОЕ ПРАВО**

Հերբերտ Հարությունյան

Իրավագիտական և քաղաքական գիտակցության փոխհարաբերակցության
հիմնախնդիրները 13

ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ/CIVIL PROCEDURE/ГРАЖДАНСКОЕ ПРОЦЕСС

Արա Զոհրաբյան

Աշխատանքային վեճերի քննության դատավարական առանձնահատկությունները 24

Հենրիկ Խունդկարյան

Հանրային ծառայության անցնելու, այն իրականացնելու,
ծառայությունից ազատելու հետ կապված վեճերի ենթակայությունը 33

ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ/CIVIL LAW/ГРАЖДАНСКОЕ ПРАВО

Նարինե Առաքելյան

Պետական և համայնքային հողերի նկատմամբ կառուցապատման
իրավունքի սահմանման առանձնահատկությունները..... 47

Սիրո Ամիրխանյան

Պետությունը և վարչատարածքային միավորները՝ որպես հանրային իրավունքի
իրավաբանական անձ..... 58

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ/CRIMINAL LAW/УГОЛОВНОЕ ПРАВО

Արման Բաբախանյան

Գողական աշխարհի ղեկավար կազմի դեմ քրեաիրավական
պայքարի որոշ հիմնահարցեր 70

Գևորգ Իսրայելյան

Զենքի օրինական շրջանառության դեմ ուղղված հանցագործություններ կատարող
անձի քրեաբանական նկարագիրը Հայաստանի Հանրապետությունում 87

Мери Вануни

Уголовная ответственность за международные преступления в Армении:
юридические и практические аспекты..... 93

Գևորգ Բարսեղյան

Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող անձանց քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքների արդի հիմնախնդիրները և զարգացման միտումները100

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ/CRIMINAL PROCEDURE/УГОЛОВНЫЙ ПРОЦЕСС

Оганес Баяндурян

Механизмы отказа от уголовного преследования юридических лиц 119

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ/INTERNATIONAL LAW/МЕЖДУНАРОДНОЕ ПРАВО

Gevorg Yeghiazaryan

The Jury Trial: An Absolute Right or a Conditional Privilege?138

Մարտին Մանուկյան

Ազգային խորհրդարանների ձևավորման ու զարգացման առանձնահատկություններն Արևելյան Եվրոպայի երկրներում 147

Siranush Grigoryan

Innovative Mechanisms to Prevent Civil Harm from Sanctions168

ԴԱՏԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱ

Վճռաբեկ դատարանի որոշումներ.....180

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ/THEORY OF STATE AND LAW/
ТЕОРИЯ ГОСУДАРСТВА И ПРАВА

<https://doi.org/10.59546/18290744-2025.1-3-3>

ԱՐԱՐԱՏ ԲԱՅԱՆԴՈՒՐՅԱՆ
ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և
իրավունքի ինստիտուտի ասպիրանտ,
ՀՀ փաստաբանների պալատի անդամ

ARARAT BAYANDURYAN
*PhD student of the Institute of Philosophy, Sociology and Law
of the National Academy of Sciences of the Republic of Armenia,
Member of the Chamber of Advocates of the RA*

ԱՐԱՐԱՏ ԲԱՅԱՆԴՈՒՐՅԱՆ
*Аспирант Института философии, социологии и права
Национальной академии наук Республики Армения,
член палаты адвокатов РА*

ՎԵՐԱԿԱԳՆՈՂ ԿԱՄ ՀԱՇՏԵՑՆՈՂ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ՝
ՈՐՊԵՍ ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՈՐ ՏԻՊ

RESTORETIVE OR RECONCILIATIVE JUSTICE AS A NEW TYPE OF
IMPLEMENTATION OF JUDICIAL POWER

ВОССТАНОВИТЕЛЬНОЕ ИЛИ ПРИМИРИТЕЛЬНОЕ ПРАВОСУДИЕ КАК
НОВЫЙ ВИД ОСУЩЕСТВЛЕНИЯ СУДЕБНОЙ ВЛАСТИ

Ներածություն

Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել, որ դատական իշխանության իրականացման ոլորտում քաղաքակրթության կողմից կուտակված փորձը շարունակում է զարգանալ, քանի որ ժամանակակից կյանքն և հասարակական հարաբերություններն առաջադրում են նոր խնդիրներ: Ժամանակակից դատավարությունում ծագում են նաև որոշակի բարդություններ, որոնք պայմանավորված են սոցիալական հարաբերությունների զարգացման առանձնահատկություններով: Օրինակ, քաղաքացիական-իրավական կամ հանրային հարաբերություններից բխող իրավական վեճերի նկատմամբ հաստատվում է դատական հայցերի, դիմումների և

համապատասխանաբար դատարաններում գործերի անբեկանելի աճ¹: Դատարան ներկայացվող խախտված իրավունքների պաշտպանության համար դիմումների աճը որոշակի աստիճանով վկայում է դատական իշխանության և գործի լուծման մեջ պետական իշխանության հարկադրությամբ դրա հնարավորությունների նկատմամբ մարդկանց վստահության աճի մասին: Սակայն միաժամանակ հարց է ծագում, արդյո՞ք դատարանի իշխանական-հարկադրական գործունեությունը նման վեճերի լուծման միակ միջոցն է:

Այս խնդրի պրագմատիկ բաղադրիչն այն է, որ պետությունն էքստենսիվ մինչև անվերջություն կարող է զարգացնել իր դատական համակարգը և դատական կորպուսը:

Հիմական հետազոտություն

Արդարադատությունը թանկ արժե, և դատական իշխանության գործման ոլորտը պետք է ունենա որոշակի ընդունելի սահմաններ՝ ըստ դատարանների և դատավորների վրա ծանրաբեռնվածության քանակության: Այս խնդրի գործնական լուծումը, ինչպես ցույց է տալիս ազգային և միջազգային պրակտիկան, դառնում է քաղաքացիական-իրավական վեճերի լուծման համար դատավարության այլընտրանքների որոնումը և զարգացումը²: Դատական մարմինները, տեղեկացված լինելով տվյալ ձևերի մասին, կարող են դիմումի կամ հայցի ստացման ժամանակ վերլուծել վիճելի իրավիճակը և գնահատել այլընտրանքային վերականգնող գործընթացների կիրառման հնարավորությունները և նպատակահարմարությունը: Որոշ երկրներում արդեն կան օրենսդրական նորմեր, որոնք ենթադրում են հաշտության գործընթացների պարտադիր նախնական իրականացում և միայն դրանց անհաջողության դեպքում թույլատրվում է դատավարությունը³:

Քրեական արդարադատությունը, տարբեր պատիժների կիրառությամբ երկար դարեր պայքարելով հանցավորության հետ, փորձարկելով հանցավորության սոցիալական հսկողության տարբեր տարբերակներ, ընդհարվում է նրա հետ, որ հանցավորության բացարձակ և հարաբերական աճը համաշխարհային միտում է: Հետևաբար, քրեական գործերի քանակական աճը ևս անխուսափելի է հանցավորության սոցիալական հսկողության օբյեկտիվ պայմանավորված հապաղմամբ, հանցավորության վրա առաջընթաց ազդելու, դրա զարգացումն և ձևափոխությունը կանխարգելման անհնարինությամբ⁴: Այդ իսկ պատճառով վերաիմաստավորման է ենթարկվում քրեական արդարադատության համար ավանդական ամբողջ շղթան, հանցագործության կատարում-դատական քննություն- պատիժ-պատժի իրականացում: Միաժամանակ իրականացվում է ոչ միայն պատժիչ արդարադատության համակարգի քննադատություն⁵, այլ նաև քրեական դատավարության համար պիտանի կոնֆլիկտների լուծման այլընտրանքային եղանակների որոնում:

Ըստ քրեական գործերի՝ արդարադատության այլընտրանքի անհրաժեշտությունը գիտակցվում է բազմաթիվ իրավաբանների կողմից, և տարբեր երկրներում կատարվում է նման

¹ Մանրամասն տե՛ս Արդարադատության ոլորտի վերաբերյալ հանրության կարիքները և ակնկալիքները Հայաստանում, Մոնիթորինգի արդյունքների վերաբերյալ զեկույց, Երևան, 2017 (395 էջ):

² Воскобитова Л. А., Сущностные характеристики судебной власти, Ставрополь, 2003, с. 45, 65; О восстановительном правосудии как новой парадигме юридического сознания см. Карнозова Л. М., Уголовная юстиция и гражданское общество, Опыт парадигмального анализа, М., 2010, с. 210-299, 388- 455.

³ Аболонин В. О., Закон Германии “О поддержке медицины и других форм внесудебного урегулирования конфликтов” (Mediations G) (с кратким пояснением) // Вестник гражданского процесса, 2013, №5, с. 203-2017.

⁴ Лунеев Ш. Ш., Преступность XX века, Мировой криминологический анализ, М., 1997.

⁵ Տե՛ս Սարգսյան Արսեն, Քրեական գործերով պատժի նշանակման կանոնների խիստ որոշակիացման հիմնախնդիրներ, Դատական իշխանություն, № 1/2 (259-260), 2021, Գիտամեթոդական ամսագիր, էջ 93-100:

ձևերի որոնում: Ամենից առաջ նման այլընտրանքները պահանջված են լինում և ցուցադրում են իրենց արդյունավետությունը՝ ըստ անչափահասների հանցագործությունների գործերի: Նպատակահարմար և հեռանկարային է հանդիսանում հաշտեցման գործառնությունների լայն ինտեգրում հաշտարար դատավորների գործունեության մեջ: Դրա հետ կապված արդարադատության նոր հայեցակարգը, որում քննարկվում է ավանդական արդարադատության և կոնֆլիկտների լուծման, այլընտրանքային եղանակների ինտեգրման հնարավորությունները, մասնագիտական գրականության մեջ և պրակտիկայում ստացել է «վերականգնող արդարադատություն» անվանումը՝ արժանանալով ամենամանրակրկիտ ուշադրության⁶:

Վերականգնող արդարադատության գաղափարը սկսած 1970-ական թթ. սկսում է զարգանալ, ամենից առաջ պայմանագրային հարաբերությունների գործարարության առևտրային իրավունքի ոլորտում քաղաքացիական-իրավական վեճերին համարժեք լուծումներ տալու համար, սակայն այն սկսում է շոշափել նաև քրեական արդարադատությունը՝ հիմնականում տարածում ստանալով մի շարք արտերկրյա պետություններում. Կանադա, ԱՄՆ, Բելգիա, Նոր Զելանդիա, Լեհաստան և այլն⁷: Իրավական վեճերի հանրային դատավարության փոխարեն հաշտարար կարգավորման գաղափարների լայն ճանաչումը դեռևս 1997 թվականին հանգեցրեց՝ ըստ դատական քաղաքականության կատարելագործման Եվրոպական խորհրդի Նախարարների կոմիտեի հանձնարարականների ընդունման, որտեղ անմիջական նշվում է ինչպես դատական համակարգից դուրս, այնպես նաև դատավարության ընթացքում կողմերի հաշտեցման աջակցման անհրաժեշտությանը: Եվրոպական միության անդամ-պետությունների կառավարություններով առաջարկվեց մինչդատական քննությունում հաշտեցման գործընթացների հնարավորության դիտարկում և դրանց ներդրման համապատասխան խթաններ: Միաժամանակ հանձնարարվում էր հատկապես դատավորներին խնդիրներից մեկի որակով ստանձնել կողմերի հաշտության ձեռք բերման և մինչդատական քննության կամ դատական քննության ցանկացած փուլում հաշտեցման պայմանագրի կնքման անհրաժեշտությունը: Բացի դրանից՝ ԵԴԽԽ-ի կարծիքով, դա պետք է դիտարկվի որպես փաստաբանների էթիկ պարտք և աշխատանքային սկզբունք, որոնք ևս պետք է ջանան մինչև դատական քննությունը կամ նման քննության ցանկացած փուլում ձեռք բերել կողմերի հաշտեցում⁸:

Նմանօրինակ մոտեցումը և վերականգնողական արդարության գաղափարը, վեճի դա-

⁶ Восстановительное правосудие / Под ред. И. П. Петрухина; Мельникова Э. Л., Карнозова Л. М., Ювенальная Юстиция — охранительная и восстановительная; *Воскобитова Л. А.*, Судебная власть: возникновение, развитие типология; она же: Сущностные характеристики судебной власти; *Воскобитова Л. А., Ткачев В. Н., Сачков А. Н.*, Мировая юстиция и восстановительное правосудие; Научно-практическая конференция «Правовое обеспечение практики восстановительного правосудия: Мировые тенденции и перспективы в России» // Государство и право. 2003, № 9. с. 114-121; № 10. с. 102-112; Место примирения и посредничества в доктрине уголовного правосудия ... // Государство и право. 2006, № 9. с. 115-122; № 10. с. 113-119; *Морщакова Т. Г.*, К дискуссии о восстановительном правосудии // Неволя. 2005. № 4, с. 25-34; *Карнозова Л. М.*, Восстановительное правосудие // Судебная реформа: проблемы и перспективы / Отв. ред. Б. Н. Топорнин, И.Л. Петрухин. М., 2001.

196-206; *Ткачев В. Н.*, Восстановительное правосудие и ювенальное уголовное право // Российская юстиция. 2002, № 5. с. 13-14; он же: Освобождение несовершеннолетних от уголовной ответственности по Уголовному Кодексу Российской Федерации...; *Рубинштейн Е. А.*, Нормативное регулирование института прекращения уголовных дел в связи с примирением сторон: Автореф.дис...канд.юр.наук. М., 2004; и др..

⁷ *Տեն Հовард Յեր.*, Восстановительное правосудие:Новый взгляд на преступление и наказание. Пор.с англ., М., 2002:

⁸ Տեն «Ողջամիտ ժամկետում արդար դատաքննության և դատաքննության ժամանակ դատավորի դերի մասին՝ հաշվի առնելով վեճերի կարգավորման այլընտրանքային միջոցները», Ընդունվել է ԵԴԽԽ-ի կողմից ԵԴԽԽ 5-րդ հանդիպման ժամանակ, Ստրասբուրգ., 2004 թվականի նոյեմբերի 22-24-ը:

տական հարկադիր որոշման փոխարեն հաշտեցման գործընթացների կիրառությունը նոր հեռանկարներ են տրամադրում քաղաքացիական և արբիտրաժ դատավարություններում հայտնի ընթացակարգային ինստիտուտների հաշտության համաձայնագրերին և քրեական դատավարությունում հաշտեցման հարաբերական նոր ինստիտուտին:

Դժբախտաբար, վերականգնող արդարադատությունում դատական պրակտիկայի էական «առաջընթաց» դեռևս տեղի չի ունեցել: Դրա վերաբերյալ վկայում է, օրինակ, հաշտարար համաձայնագրերի քանակությունը գործնականում չի ավելացել, այն դեպքում, երբ դատարան դիմումների և քաղաքացիական և արբիտրաժ դատավարություններում քննվող գործերի քանակությունը այս տարիների ընթացքում միայն աճել է: Սակայն բոլոր դեպքերում վեճերի այլընտրանքային լուծման պրակտիկան, այդ թվում՝ նաև հաշտության միջոցով, աստիճանական ներածվում է ազգային դատական պրակտիկայում և հաշտեցման առավելությունը դառնում է ավելի ցայտուն:

Քաղաքացիական և նույնիսկ քրեական դատավարության ոլորտներում կոնֆլիկտների լուծման այլընտրանքային եղանակներ կիրառող իրավաբանները և հետազոտողները նշում են, որ հաշտեցման գործընթացների կիրառման դրական առիթներ են հանդիսանում. 1) վեճերի քննման ժամկետների կրճատում, 2) դատական ծախսերի նվազեցում, 3) փաստաբանների օգնություն չպահանջող քննման գործընթացի պարզեցում, 4) միջնորդի (հաշտարարի) կամ միջնորդ դատարանի (դատավորի) ընտրության հնարավորություն, 5) ձեռք բերված համաձայնությունների կատարման կամավորություն, 6) դրանց կատարման բարձր տոկոս, 7) գաղտնիություն⁹: Քրեական դատավարության նկատմամբ կիրառական կարելի է ավելացնել նաև հաշտեցման գործընթացից հետո մեղադրյալի և տուժողի միջև հարաբերությունների դրական փոփոխությունը, իրավախախտողի կողմից բոլոր ապրումների գիտակցումը, որոնք նա իր գործողություններով պատճառել է տուժողին, վնասի հարթեցման ցանկությունը, այդ թվում նաև սեփական աշխատանքով, վնասի հատուցման համար հնարավոր օգնության ցուցաբերումը, իրավախախտումների կրկնելիության էական նվազումը, հատկապես անչափա-հասների դեպքում, տուժողի հոգեբանական վիճակի վերականգնումը՝ ըստ վնասի հարթեցման պարտավորությունների կատարման պատեհաժամությունը և կամավորությունը և այլն: Այս բոլոր առանձնահատկությունները սկզբունքային փոխում են դատաիշխանական հարաբերությունների բնույթը՝ դատական իշխանությանը հաղորդելով առավել մարդասիրություն:

Այս ամենն ստեղծում է դատական իշխանության մասին՝ որպես իրավական կոնֆլիկտների լուծման առավել արդյունավետ միջոց, ավանդական պատկերացումների վերանայման համար պայմաններ: Դատական իշխանությունում ժամանակակից բարեփոխչները պետք է հաշվի առնեն վերականգնող արդարադատության ձևավորվող փորձը և կանխատեսեն հնարավոր փոփոխությունները՝ հաշվի առնելով և գնահատելով նոր գաղափարները, ապահովելով հասարակության աճող պահանջը: Բացառված չէ, որ վերականգնող արդարադատության հայեցակարգի ընդունումը և հաշտեցման գործընթացների կամ առանց դատական իշխանության դիմելու իրավական վեճերի այլ այլընտրանքային եղանակների կիրառության գործնական ընդարձակումն ապագայում հիմք կհանդիսանա ևս մեկ, դատական իշխանության իրականացման նոր տիպի վերականգնողականի (հաշտեցման) ձևավորման համար:

Կանխատեսելով դատական իշխանության իրականացման վերականգնող տիպը՝ որպես ապագայում հնարավոր չէ չընդունել նոր պարադիգմի ընկալման առկա բարդություն-

⁹ Shtu Развитие альтернативных форм разрешения правовых конфликтов. Учеб. метод. пособие. Ч. 1. С. 26, Актуальные проблемы гражданского права, гражданского и арбитражного процесса: в 2 т. / под ред. Е. И. Носыревой, Т. Н. Сафроновой, Воронеж, 2002, Т. 2. С. 169:

ները: Իրավական կոնֆլիկտների լուծման այլընտրանքային եղանակները՝ ըստ ձևավորվող պրակտիկայի պետք է գոյություն ունենան դատավարության շրջանակներից դուրս: Դրանք փոխարինում են դատավարությունը կամ լրացնում ըստ կողմերի հաշտեցման դրա հնարավորությունները: Կարող է արդյո՞ք այն դատական իշխանության իրականացման տիպի փոփոխության հիմք լինել: Վերականգնող արդարադատության էությունն անխուսափելի փոխում է իրավական վեճերի և դրանց հարկադիր լուծման մեջ պետական, իշխանության դերի վերաբերյալ իրավաբանական պարադիգմը: Այս պարադիգմը ենթադրում է պետության և դատական իշխանության վստահության էական աճ՝ որպես պատասխանատու սուբյեկտներ իրավական կոնֆլիկտի կողմերի նկատմամբ, ովքեր ունակ են ինքնուրույն գտնել դրա ընդունելի լուծումը:

Վերականգնող արդարադատության պարադիգմը կոնֆլիկտի կողմերին ուղղում է ոչ թե դատարանից հարկադիր որոշման ստացման նպատակով հակամարտությանը, ինչը կհաստատի, ով է ճիշտ և ով մեղավոր, սահմանում է, թե ինչպես պետք է բավարարվեն հաղթանակած կողմի իրավական հավակնությունները: Այն կողմերին, և դատական մարմիններին կողմնորոշում է վեճի կողմերի միջև երկխոսության վերականգնմանը, թե ինչպես դուրս գալ ձևավորված կոնֆլիկտից, ինչպես նրանք կցանկանային այն կարգավորել, ինչ պետք է այս ուղղությամբ իրականացնի յուրաքանչյուր կողմը և նրանցից յուրաքանչյուրը ինչ է համաձայն և պատրաստ անել:

Նման մոտեցման դեպքում սկզբունքային փոխվում է կոնֆլիկտի նկատմամբ դատարանի տեսանկյունները. այն կողմնորոշվում է ոչ թե նախկինում ձևավորված կոնֆլիկտային հարաբերությունների հաստատմանը և վերականգնմանը, այլ դրանցից ապագայում ելքի նախագծմանը: Իսկ դա դատական իշխանության այլ նպատակադրություն է: Դա սկզբունքային փոփոխում է դատարանի վերաբերմունքը դատական գործնականում ծագած իրավական վեճերի նկատմամբ: Դատարանը սկսում է տեսնել ոչ միայն վեճի լուծման դատական-հարկադրական հնարավորությունները, այլ նաև դրա կարգավորման հեռանկարները: Դատարանը շահագրգիռ է դառնում հարկադիր որոշման գործընթացի կողմերով փոխադարձ ընդունելի, կամավոր և պատասխանատու որոշման որոնման հարթություն փոխանցման մեջ, որոշումը կհաշտեցնի կողմերին, կապահովի նրանց կողմից ընտրված հաշտեցման վերաբերյալ համաձայնագրի կատարումը, ինչը ունի առանցքային նշանակություն, հնարավորություն կտա կողմերին շարունակել ապագայում իրենց փոխհարաբերությունները:

Փոփոխվում է նաև պետության նպատակադրումը քրեական արդարադատության միջոցով դատական իշխանության իրականացման ոլորտում: Վերականգնող արդարադատության առջև չի կարող առաջադրվել հանցագործություն կատարած անձի պատժման ուղիով խախտված իրավունքի վերականգնման նպատակը: Նման դեպքերում դատական իշխանությունը կարող է իրականացնել առավել շատ ընթացակարգային ապահովման նպատակներ. ապահովել հանցագործություն կատարած անձի և տուժողի բանակցությունների հնարավորությունները և ընթացքը (անմիջական կամ հաշտարարների ցանցի միջոցով), ապահովել հաշտարար-միջնորդի օգնությունը, երաշխավորել բանակցությունների կողմերի իրավաչափ վարքագիծը և նրանց փոխադարձ ներկայացված պահանջների օրինականությունը, երաշխավորել և ապահովել կողմերի ստանձնած պարտավորությունների կատարումը, սահմանել այդ պարտավորությունների չկատարման հետևանքները: Կողմերի որոշման և փոխադարձ պարտավորությունների հաշվառմամբ ձեռք բերված համաձայնության հիման վրա դատարանը կարող է ընդունել վերջական որոշում՝ ըստ մեղքի քրեական պատասխանատվության հարցի վերաբերյալ, կարճել գործը տուժողի և մեղադրյալի հաշտության արդյունքում կամ քննել և

լուծել այն դատական նիստին սովորական կարգով: Արդյունքում դատական իշխանությունը՝ ըստ իրավական վեճերի բոլոր կատեգորիաների կարող է վերաժվել հասարակական հարաբերությունների արդյունավետ կանոնակարգման, դրանցում կոնֆլիկտության մակարդակի նվազեցման, կոնֆլիկտային իրավիճակներից «ոչ ագրեսիվ» ելքի իրավահարաբերությունների մասնակիցների մոտ հմտության ձևավորման կարևոր սոցիալ-իրավական գործիքի:

Սակայն անհրաժեշտ է հասկանալ, որ նմանօինակ փոփոխություններն ավտոմատ, այսինքն՝ ինքնին տեղի ունենալ չեն կարող:

Դա վկայում է, որ վերականգնող արդարադատության գաղափարը՝ ոչ միայն դատարաններին, իրավաբանական պրակտիկային, այլ նաև ամբողջ հասարակական հարաբերություններին նետված յուրահատուկ մարտահրավեր է: Նոր գաղափարների գիտակցումը տեղի է ունենում աստիճանաբար, սակայն, բացահայտելով այդ գործընթացի խոչընդոտները, պատեհաժամ և նպատակաուղղված ձեռնարկելով դրանց չեզոքացման միջոցառումներ, կարելի և անհրաժեշտ է աջակցել տվյալ գործընթացին:

Հայաստանում վերականգնող արդարադատության կիրառման փորձը համեմատաբար նոր է, սակայն վերջին տարիներին քաղաքացիական և քրեական դատավարության ոլորտում սկսվել են որոշ քայլեր, որոնք ուղղված են այս մոտեցման ներդրմանը: Դրանք հիմնականում վերաբերում են քաղաքացիական և ընտանեկան վեճերին, նաև դատական գործընթացներում կողմերի երկխոսության խթանմանը:

1. Քաղաքացիական դատավարության ոլորտում միջնորդություն և հաշտեցում

Հայաստանում քաղաքացիական դատավարությունում զարգացել է միջնորդական գործընթացը, որը հաճախ կիրառվում է որպես հաշտեցման միջոց: Դատավորները որոշ դեպքերում կողմերին առաջարկում են միմյանց հետ քննարկել վեճերը և փորձել լուծել դրանք մինչև դատական գործընթացի ավարտը՝ փոխադարձ համաձայնությամբ: Օրինակ՝ 2019-2020 թվականներին Հայաստանի տարբեր դատարաններում փորձարկվել է քաղաքացիական գործերում կողմերի միջև համաձայնության հասնելու համար միջնորդություն կազմակերպելու պրակտիկա: Դատարանը, ուսումնասիրելով գործը, որոշում է առաջարկել դատավարության կողմերին մի քանի հանդիպում՝ բանակցելու հնարավոր հաշտեցման պայմանները: Այս գործընթացի արդյունքում որոշ գործերում կողմերը հասել են փոխադարձ համաձայնության, ինչը թույլ է տվել խուսափել երկարատև դատական ընթացակարգերից և նվազեցրել դատական բեռը: Քիչ կարևոր չէ Հայաստանի քաղաքացիական դատավարության ոլորտում հաշտարարության ինստիտուտը ձևավորումը՝ որպես իրավական վեճերի լուծման այլընտրանքային միջոց: Այս մեթոդը նպատակ ունի նվազեցնել դատական համակարգի ծանրաբեռնվածությունը, արագացնել վեճերի լուծումը և ապահովել կողմերի միջև հարաբերությունների վերականգնումը:

2. Ընդհանրական բռնության դեպքերի համար վերականգնող արդարադատության մոտեցման փորձեր

ՀՀ-ում սկսել են օգտագործել վերականգնող արդարադատության մոտեցումներ ընտանեկան բռնության դեպքերով: Տուժած կողմերին (այդ թվում՝ կանանց) հաճախ առաջարկվում է մասնագիտական աջակցության ծառայություններ, հաշտեցման և վերականգնման ծրագրեր, որոնք ներառում են երկխոսություն և համընդհանուր լուծումներ: Օրինակ. ՀՀ-ում, սոցիալական կազմակերպությունների և պետական հաստատությունների համատեղ աշխատանքով, ընտանեկան բռնության դեպքերով զոհ դարձած կանանց ու մեղավորներին առաջարկվում են հոգեբանական աջակցություն և փոխհաշտեցման գործընթացներ: Տուժող կողմը և մեղավոր կողմը հաճախ ներգրավվում են վերականգնող ծրագրերում, որտեղ քննարկվում են

վնասի վերականգնման տարբեր ուղիներ, ինչպես նաև մեղավորի վարքագծի փոփոխման հնարավորությունները:

3. Դատական միջնորդություններ և փոխհաշտեցման ծրագրեր

ՀՀ-ում վերջին տարիներին հանրային ուշադրությունը գնալով մեծանում է դատական համակարգում փոխհաշտեցման ու միջնորդական ծրագրերի կիրառման նկատմամբ:

Օրինակ. 2021-2022 թվականներին Երևանի դատական համակարգում որոշ քաղաքացիական գործեր ավարտվել են փոխհաշտեցման և փոխհատուցման պայմաններով, երբ կողմերը որոշել են բանակցել փոխհատուցման կամ այլ հաշտության հիման վրա՝ առանց դատական ակտի կայացման: Դա ցույց տվեց, որ դատական համակարգը պատրաստ է ընդունել ավելի մարդասիրական մոտեցումներ, որոնք համապատասխանում են վերականգնող արդարադատության սկզբունքներին:

4. Հոգեբանական և սոցիալական աջակցության ծրագրեր

ՀՀ-ում մի շարք հասարակական կազմակերպություններ սկսել են իրականացնել վերականգնող արդարադատության գաղափարներով ծրագրեր՝ ուղղված առավելապես սոցիալապես անապահով խմբերի կամ քրեական դատավարությունից անցած անձանց վերակառուցմանը: Օրինակ. «Հոգեբանական աջակցության կենտրոն» հասարակական կազմակերպությունը իրականացրել է մի շարք ծրագրեր, որոնք միտված են քրեական հանցանք կատարած անձանց վերականգնմանը: Հոգեբանական և սոցիալական աջակցություն ստացած այս անձինք հաճախ անցնում են վերականգնող հանդիպումների՝ նպաստելով ոչ միայն իրենց, այլ նաև տուժած կողմերի առողջության բարելավմանը:

5. Պատժի փոխարեն վերականգնման ծրագրեր երիտասարդների համար

Հայաստանի երիտասարդական ծրագրերում ներառվել են այնպիսի մեթոդներ, որոնք ուղղված են քրեական կամ վարչական պատասխանատվության ենթարկված երիտասարդներին՝ վերակառուցելու իրենց վարքը, որպեսզի նրանք կարողանան ինտեգրվել հասարակություն և նվազեցնեն ապագա հանցագործությունների հավանականությունը: Օրինակ. 2019-2020 թվականներին, Հայաստանում տարբեր մարզերում իրականացվել է «Անպատասխանատու (հանցավոր) վարքագծի կանխարգելման» ծրագիր, որտեղ երիտասարդները մասնակցել են վերականգնող արդարադատության միջոցառումների, ի թիվս այլոց՝ միջնորդական հանդիպումների, որոնց ժամանակ նրանք կարողացել են քննարկել իրենց սխալները և հասնել փոխհաշտեցման և սոցիալական վերաբնակեցման տարբեր պայմանների:

Հայաստանում վերականգնող արդարադատությունը դեռևս գտնվում է զարգացման գործընթացում: Այն լայնորեն կիրառվում է որոշակի ոլորտներում (ինչպես քաղաքացիական գործեր և ընտանեկան խնդիրներ), բայց դեռևս չի դարձել համընդհանուր կիրառելի մոտեցում: Վերականգնող արդարադատության ծրագրերի բարենպաստ ազդեցությունը, ինչպիսիք են հաշտեցման և փոխհատուցման միջնորդությունները, ակնկալվում է կշարունակեն տարածվել Հայաստանում՝ ընդլայնելով այն նաև քրեական արդարադատության և այլ ոլորտներում:

Եզրակացություն

Անկասկած, այլընտրանքային ձևերը չեն կարող փոխարինել ժամանակակից արդարադատությանը և դատական իշխանությանը: Եղել և մնում են կոնֆլիկտներ, որոնք պահանջում են դատական հարկադրանքի միջոցների կիրառություն իրավախախտի նկատմամբ ինչպես իրենց քննության, այնպես նաև դրանց լուծման ժամանակ, այդ իսկ պատճառով դատական իշխանության նկատմամբ պահանջը պահպանվում է, քանի դեռ գոյություն ունի պետություն:

նր: Սակայն այլընտրանքային ձևերի հայեցակարգային տարբերությունները, վերականգնող (հաշտեցման) արդարադատության գաղափարը և փորձը հանդիսանում են հնարավոր նախադրյալ դատական իշխանության իրականացման նոր տիպի ծագման համար: Դրանում կարող են ձևավորվել հսկայական պոտենցիալ հնարավորություններ վերը շարադրված խնդիրների լուծման համար, որոնք դեռ չեն հաղթահարում նույնիսկ դատական իշխանության իրականացման ամենադեմոկրատ և ժամանակակից ձևերը: Այդ իսկ պատճառով վերականգնող (հաշտեցման) արդարադատության առաջին փորձերի վերլուծությունը, նրա գծերի հետազոտությունը, դրա հարաբերակցությունը վերը շարադրված դատական իշխանության պատմական ձևերի հետ հետաքրքրություն է ներկայացնում և հնարավորություն ընձեռում դիտարկելու դատական իշխանության զարգացման միտումները:

Ամփոփագիր: Սույն հոդվածում հեղինակը հանգամանորեն վերլուծության է վերականգնող կամ հաշտեցնող արդարադատության հայեցակարգը՝ որպես դատական իշխանության իրականացման նոր տիպ: Հեղինակը ներկայացնում է արդարադատության այս մոտեցման էությունը, նպատակը և առանձնահատկությունները՝ նշելով, որ այն առաջնահերթ նպատակաուղղված է սոցիալական արդարության վերականգնմանը այլընտրանքային մեթոդներով՝ առանց կտրուկ պատժիչ գործողությունների, դրա նպատակը ոչ թե պատժիչ քաղաքականությունն է, այլ կոնֆլիկտների լուծմանն ուղղված այլընտրանքային եղանակների միջոցով սոցիալական արդարության վերականգնումն է: Հոդվածը մատնանշում է, որ վերականգնողական արդարադատությունը կարևոր դեր է խաղում ինչպես քաղաքացիական, այնպես էլ քրեական դատավարության ոլորտներում: Բերվում են օրինակներ, թե ինչպես վերականգնող արդարադատության գործիքակազմը նպաստում է վեճերի արագ լուծմանը, դատական ծախսերի կրճատմանը և կողմերի հաշտեցմանը:

Հոդվածը եզրահանգում է, որ վերականգնող արդարադատությունը ոչ միայն հնարավորություն է տալիս կողմերին լուծելու կոնֆլիկտը երկխոսության միջոցով, այլև նպաստում է իրավական համակարգի մարդասիրականացմանը: Հայաստանում վերականգնող արդարադատությունը դեռևս զարգացման փուլում է, սակայն արդեն կիրառվում է ընտանեկան և քաղաքացիական վեճերում՝ ներառելով միջնորդություն և հաշտեցում: Հեղինակն առաջարկում է խորացնել այս մոտեցման կիրառումը Հայաստանում՝ հաշվի առնելով միջազգային փորձն ու առկա հաջողությունները:

Annotation. In this article, the author provides a detailed analysis of the concept of restorative or conciliatory justice as a new type of judicial power implementation. The author explains the essence, goals, and characteristics of this approach to justice, emphasizing that its primary objective is to restore social justice through alternative methods of conflict resolution without resorting to punitive measures. The goal of this approach is not punitive policy but the restoration of social justice through alternative means of resolving conflicts.

The article highlights that restorative justice plays a significant role in both civil and criminal proceedings. Examples are provided of how restorative justice tools facilitate faster resolution of disputes, reduce legal costs, and promote reconciliation between parties.

The article concludes that restorative justice not only enables parties to resolve conflicts through dialogue but also contributes to the humanization of the legal system. In Armenia, restorative justice is still in the developmental stage but is already being applied to resolve family and civil disputes, including mediation and reconciliation. The author suggests expanding the use of this approach in Armenia, taking into account international experience and existing achievements.

Аннотация. В данной статье автор подробно анализирует концепцию восстановительного или примирительного правосудия как нового типа осуществления судебной власти. Автор раскрывает суть, цель и особенности этого подхода к правосудию, отмечая, что его основная цель направлена на восстановление социальной справедливости с использованием альтернативных методов разрешения конфликтов, без резких карательных мер. Целью такого

подхода является не карательная политика, а восстановление социальной справедливости через альтернативные способы разрешения конфликтов.

В статье подчеркивается, что восстановительное правосудие играет важную роль как в гражданском, так и в уголовном судопроизводстве; приводятся примеры того, как инструменты восстановительного правосудия способствуют более быстрому разрешению споров, снижению судебных издержек и примирению сторон.

В статье делается вывод, что восстановительное правосудие не только предоставляет сторонам возможность разрешить конфликт посредством диалога, но и способствует гуманизации правовой системы. В Армении восстановительное правосудие находится на этапе развития, однако уже применяется в разрешении семейных и гражданских споров, включая медиацию и примирение. Автор предлагает углубить применение этого подхода в Армении, учитывая международный опыт и имеющиеся успехи.

Բանալի բառեր - վերականգնողական արդարադատություն, հաշտեցնող արդարադատություն, անցումային արդարադատություն, պատժողական արդարադատություն, արդար դատաքննություն, կոնֆլիկտների լուծման այլընտրանքային եղանակ:

Keywords: Restorative justice, conciliatory justice, transitional justice, retributive justice, fair trial, alternative conflict resolution.

Ключевые слова: восстановительное правосудие, примирительное правосудие, переходное правосудие, карательное правосудие, справедливое судебное разбирательство, альтернативное разрешение конфликтов.

Օգտագործված գրականության ցանկ

1. «Ողջամիտ ժամկետում արդար դատաքննության և դատաքննության ժամանակ դատավորի դերի մասին՝ հաշվի առնելով վեճերի կարգավորման այլընտրանքային միջոցները», Ստրասբուրգ, 2004 թվականի նոյեմբերի 22-24 ը:
2. Аболонин В. О., Закон Германии, “О поддержке медицины и других форм внесудебного урегулирования конфликтов” (Mediations G) (с кратким пояснением) II Вестник гражданского процесса, 2013, №5, с. 203-2017.
3. Воскобитова Л. А., Сущностные характеристики судебной власти, Ставрополь, 2003. с. 45-65; О восстановительном правосудии как новой парадигме юридического сознания.
4. Воскобитова Л. А., Судебная власть: возникновение, развитие типология, она же: Сущностные характеристики судебной власти.
5. Воскобитова Л. А., Ткачев В. Н., Сачков А. Н., Мировая юстиция и восстановительное правосудие; Научно-практическая конференция «Правовое обеспечение практики восстановительного правосудия: Мировые тенденции и перспективы в России» II Государство и право, 2003, № 9, с. 114-121, № 10, с. 102-112.
6. Восстановительное правосудие / Под ред. И.П. Петрухина; Мельникова Э. Л., Карнозова Л. М., Ювенальная ЮСТИЦИЯ — охранительная и восстановительная.
7. Карнозова Л. М., Уголовная юстиция и гражданское общество. Опыт парадигмального анализа. М., 2010, с. 210-299, 388- 455.
8. Карнозова Л. М., Восстановительное правосудие II Судебная реформа: проблемы и перспективы / Отв. ред. Б. Н. Топорнин, И. Л. Петрухин. М., 2001, с. 196-206.
9. Лунеев Ш. Ш., Преступность XX века, Мировой криминологический анализ, М, 1997.
10. Развитие альтернативных форм разрешения правовых конфликтов. Учеб. метод. пособие, ч. 1. с. 26, Актуальные проблемы гражданского права, гражданского и арбитражного процесса: в 2 т. / под ред. Е. И. Носыревой, Т. Н. Сафроновой, Воронеж, 2002, т. 2. с. 169.
11. Рубинштейн Е. А., Нормативное регулирование института прекращения уголовных дел в связи с



примирением сторон: Автореф. дис., канд. юр. наук., М., 2004.

12. Ткачев В. Н., Восстановительное правосудие и ювенальное уголовное право II Российская юстиция. 2002, № 5. с. 13-14.

13. Ховард Зер. Восстановительное правосудие: Новый взгляд на преступление и наказание. Пор. с англ. М., 2002.

14. Արդարադատության ոլորտի վերաբերյալ հանրության կարիքները և ակնկալիքները Հայաստանում: Մոնիթորինգի արդյունքների վերաբերյալ զեկույց: Երևան, 2017:

15. Սարգսյան Արսեն, Քրեական գործերով պատժի նշանակման կանոնների խիստ որոշակիացման հիմնախնդիրներ// «Դատական իշխանություն», № 1/2 (259-260), 2021, Գիտամեթոդական ամսագիր, էջ 93-100:

Բայանդուրյան Ա. - ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի ասպիրանտ, ՀՀ փաստաբանների պալատի անդամ, էլիասցե՝ ararat.bayanduryan@gmail.com:

Ներկայացվել է խմբագրություն 19.12.2024 թ., տրվել է գրախոսության 19.12.2024 թ., երաշխավորվել է իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Գ. Սաֆարյանի կողմից, ընդունվել է տպագրության 22.04.2025 թ.:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ/CONSTITUTIONAL LAW/
КОНСТИТУЦИОННОЕ ПРАВО

<https://doi.org/10.59546/18290744-2025.1-3-13>

ՀԵՐԲԵՐՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի հայցորդ

HERBERT HARUTYUNYAN
PhD Student at the Chair of Constitutional Law of Yerevan State University

ГЕРБЕРТ АРУТЮНЯН
Соискатель кафедры конституционного права ЕГУ
<https://orcid.org/0000-0003-4878-1080>

ԻՐԱՎԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ
ՓՈԽՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

FUNDAMENTALS OF COMMUNICATION BETWEEN LEGAL
AWARENESS AND POLITICAL AWARENESS

ОСНОВЫ КОММУНИКАЦИИ МЕЖДУ ПРАВОВЫМ И
ПОЛИТИЧЕСКИМ СОЗНАНИЕМ

Ներածություն

Իրավագիտակցությունը և իրավական մշակույթը մարդկության կողմից կուտակած իրավական արժեքների, պատկերացումների, զգացումների և սովորույթների ամբողջությունն է: Այդ իսկ պատճառով իրավագիտակցությունը և իրավական մշակույթը սոցիալ-քաղաքական զարգացման կարևոր նախապայմաններից են: Այս արժեքները նույնպես, ինչպես ավանդական մշակութային արժեքները, պաշտպանության կարիք ունեն: Իրավագիտակցությունը և իրավական մշակույթը կարելի է համարել ազգային իրավական բաղադրատարրերի՝ իրավակարգի, իրավական համակարգի ինքնատիպության և արժեհամակարգի վերարտադրության միակ համընդգրկուն ձևը: Իրավական մշակույթը գործառնում է մշակույթի մյուս՝ քաղաքական, բարոյական, գեղագիտական, կրոնական ոլորտների հետ համագործակցության միջոցով: Իրավական մշակույթը և քաղաքական մշակույթն ունեն բավականաչափ ընդհանրություններ, քանի որ պետության, քաղաքական իշխանության, քաղաքական կազմակերպությունների միջև փոխհարաբերությունները ձևավորվում և գործառնում են նաև իրավական դաշտում: Այդ հարաբերությունները, առաջին հերթին լինելով քաղաքական, այնուամենայնիվ չեն սահմանափակվում բացառապես քաղաքական օրինաչափություններով և չեն բացառում դրանց իրավական կողմը: Այս ամենի հետ մեկտեղ հարկ է ընդգծել իրավական և քաղա-

քական մշակույթների փոխլրացման և փոխներգործության կարևորության մասին, քանի որ ժողովրդավարական վարչակարգի պայմաններում անհատի մոտ հնարավոր է ձևավորել սոցիալապես համապատասխան և օրինապահ վարք միայն քաղաքական և իրավական մշակույթների միասնության միջոցով:

Հիմնական հետազոտություն

Իրավական մշակույթն իր բովանդակությամբ ավելի ընդգրկում և որակապես հագեցած երևույթ է, քան իրավագիտակցությունը: Այն ընդգրկում է հասարակության ամբողջ իրավական կյանքը, իրավունքի՝ որպես սոցիալական վերահսկողության ինստիտուտի գործառնության ամբողջական մեխանիզմը: Իրավագիտակցության վիճակը և զարգացումը մեծապես պայմանավորված են հասարակության, ինչպես նաև անհատի իրավական մշակույթի կատարելագործման մակարդակով, քանի որ այն ներառում է հասարակական հարաբերությունների նորմերի և կանոնների, անձի իրավական սոցիալականացման, նրա հոգևոր-բարոյական ներուժը: Իրավունքն իր ձևավորման և զարգացման գործում որոշիչ ազդեցություն է թողել ոչ միայն տնտեսության և քաղաքականության, այլև մշակույթի վրա: Իրավունքը չի կարող ավելի բարձր լինել, քան հասարակության իրավական մշակույթի մակարդակը: Անհնար է բարձրացնել հասարակության իրավական և քաղաքական գիտակցությունը, եթե հասարակության իրավական-քաղաքական մշակույթի մակարդակը ցածր է: Իրավական-քաղաքական մշակույթի արդիականացման պայմաններում է միայն հնարավոր հասարակության մեջ որակապես նոր իրավական և քաղաքական գիտակցության ձևավորումը: Իրավունքը հասարակության մեջ ազատ քաղաքացիների գոյության կարևորագույն պայմանն է: Առօրյա-գործածական իրավագիտակցությունը գնահատում է գործող օրենքների համապատասխանությունը բարոյական պահանջմունքներին, իսկ տեսական իրավական մտածողությունը դիտարկում է գործող իրավունքի սոցիալ-քաղաքական նշանակությունը, վերջինիս համապատասխանությունը ռացիոնալ պահանջմունքներին, որոնք օբյեկտիվորեն պայմանավորված են հասարակական-քաղաքական կյանքում տեղի ունեցող գործընթացներով¹: Գիտակցությունը գոյություն չունի հասարակությունից դուրս, քանի որ այն տվյալ իրականության օբյեկտիվ արտացոլումն է: Հետևաբար՝ իրավագիտակցությունը ուղղակիորեն կախված է կոնկրետ հասարակության ձևից²: Իրավագիտակցությունը մարդկանց պատկերացումներն ու գիտելիքներն են գործող իրավունքի վերաբերյալ: Օրենքը ներգործում է իրավագիտակցության ձևավորման վրա, իսկ վերջինս էլ իրագործվում է իրավունքի և արդարադատության մեջ: Ինչպես իրավունքը, այնպես էլ իրավագիտակցությունն առաջացել և զարգանում են որոշակի տնտեսական հիմքի վրա և կապված են հասարակական դասերի և պետության առաջացման հետ³: Իրավագիտակցությունը լայնորեն կապված է նաև հասարակության գիտակցության այլ ձևերի հետ՝ քաղաքական, բարոյական, կրոնական, փիլիսոփայական, գեղագիտական: Ընդ որում, մեր կարծիքով, իրավագիտակցության վրա ամենաեական ազդեցությունն ունեն քաղաքական, բարոյական և կրոնական գիտակցությունները:

Քաղաքական գիտակցությունը, ինչպես և իրավագիտակցությունը, բավականաչափ բարդ երևույթ է: Քաղաքական գիտակցությունը բնորոշում է անհատի քաղաքական սոցիալականացման ամբողջական գործընթացը, որը պայմանավորում է վերջինիս ունակությունը

¹ Տե՛ս Տիրքին Ա., Философия, Учебник, 2-е изд., М., Гардарики, 2006, с. 660.

² Տե՛ս Мясоутов О., Политическое сознание: социально-философский анализ, <http://conf.sfu-kras.ru/sites/mn2012/thesis/s034/s034-044.pdf>. /12.03.2013/.

³ Տե՛ս Տիրքին Ա., Философия. Учебник. 2-е изд., М., Гардарики, 2006, с. 658.

քաղաքական ոլորտում հատուկ քաղաքական գործառնությունների իրականացման, կառավարման մարմինների հետ համագործակցության միջոցով սեփական կարողություններն իրականացնելու համար: Քաղաքական գիտակցության կառուցվածքային տարրերն են քաղաքական նորմերն ու արժեքները, քաղաքական համոզմունքներն ու պատկերացումները, տեսական և էմպիրիկ գիտելիքները, որոնք ձևավորվում են անձի սոցիալականացման քաղաքական գործընթացում: Կառուցվածքային առումով քաղաքական գիտակցությունը բաղկացած է կայուն և փոփոխական բաղադրամասերից: Օրինակ՝ գաղափարախոսական ընտրության հիմքում ընկած են կայուն սոցիալ-քաղաքական արժեքներ՝ ժողովրդավարություն, ազատություն, հավասարություն և այլն: Քաղաքական գիտակցության փոփոխական տարրերը կապված են ընթացիկ պահի վերագնահատման հետ: Մասնագիտական գրականության մեջ տարբերում են քաղաքական գիտակցության տեսական, էմպիրիկ, պետական և կենցաղային մակարդակները: Քաղաքական գիտակցությունն իրականացնում է կարգավորման, ճանաչողական, արժեքավորման, հավաքագրման, կանխատեսման, նորմատիվային և այլ գործառնություններ⁴: Քաղաքացիների քաղաքական գիտակցությունը որոշվում է տվյալ հասարակության տնտեսական և պետական կարգով: Քաղաքականությունը, քաղաքական պայքարը ներթափանցում են մարդկանց կենսագործունեության բոլոր ոլորտները և հասարակական գիտակցության բոլոր ձևերի մեջ⁵: Բնականաբար, քաղաքական գիտակցությունը միաբովանդակ չէ, քանի որ այն ներառում է տարբեր դասերի և շերտերի, սոցիալական խմբերի, պետության և կառավարության, իշխանության ճյուղերի միջև փոխհարաբերությունները: Ոչ միայն սոցիալ-տնտեսական, այլև հասարակության հոգևոր կյանքը հարաբերական կախվածության մեջ են գտնվում քաղաքական գիտակցությունից:

Քաղաքական և իրավական գիտակցության միջև փոխկապակցվածությունը բավականին սերտ է: Իրավագիտակցությունն ազդեցություն է գործում քաղաքական դաշտի վրա դրական իրավունքի ձևավորման միջոցով: Իրավական նորմերի ստեղծման գործընթացում ձևավորվում են պետության, քաղաքական իշխանության գործունեության քաղաքական-իրավական չափանիշները: Իրավունքի միջոցով քաղաքական իշխանությունը իրականացնում է քաղաքական կարևորագույն գործընթացների և քաղաքական հարաբերությունների կարգավորումը: Քաղաքական և իրավական գիտակցության փոխկապակցվածությունը պետք է ուղղված լինի հասարակության ընդհանուր բարեկեցությանը, տարբեր սոցիալական շերտերի շահերի և պահանջմունքների հավասարակշռմանը: Սա նաև քաղաքական իշխանության մենաշնորհային գործառնություններից է: Միայն այս պարագայում քաղաքական իշխանությունը կարող է լինել ուժեղ և կայուն: Պատահական չէ, որ Հայաստանում պետական-իշխանական հարաբերություններում դժվարությունները հիմնականում պայմանավորված են քաղաքական և իրավական գիտակցության ցածր մակարդակով, ինչը հաճախ դրսևորվում է քաղաքական լարվածությամբ, բախումներով, արմատականությամբ և իրավական նիհիլիզմով: Իրավագիտակցությունը կարևորագույն գործիք է քաղաքական իշխանության համար անհատ-պետություն, հասարակություն-պետություն փոխհարաբերություններում ներդաշնակության հասնելու նպատակով: Դրա անտեսումը կարող է հանգեցնել ապակառուցողական գործընթացների, քաղաքական և սոցիալական կոնֆլիկտների: Բավականին ուշագրավ է իրավագիտակցության և քաղաքական գիտակցության փոխհարաբերակցության հիմնախնդիրը: Դրանք չափազանց մոտ են միմյանց և հաճախ գրվում են միասին (իրավաքաղաքական գիտակցու-

⁴ Տե՛ս Պողոսյան Վ., Միրումյան Կ., Բաբաջանյան Ա., Աստվածատուրով Ս. Քաղաքագիտություն հանրագիտական բառարան., Եր., Լինգվա հրատ., 2004, էջ 76-77:

⁵ Տե՛ս Спиркин А., Философия. Учебник. 2-е изд., М., Гардарики, 2006, с. 654.

թյուն): Յուրաքանչյուր սոցիալ-տնտեսական և քաղաքական ուժ ունի իր իրավագիտակցությունը և, պայքարելով ու հասնելով քաղաքական իշխանության, փորձում է կենսագործել այդ իրավագիտակցությունը լեգիտիմ իրավաքաղաքական համակարգում: Այս երևույթի դրսևորումը կարելի է տեսնել նաև Հայաստանի Հանրապետությունում, որտեղ քաղաքական իշխանությունը ստանձնած յուրաքանչյուր ուժ պայքարել է սահմանադրական և տարաբնույթ օրենսդրական բարեփոխումների իրականացման համար՝ փորձելով դրանք համապատասխանեցնել իր իրավագիտակցությանը (օրինակ՝ ՀՀ Սահմանադրության փոփոխություն 2005 թվականին և բազմաթիվ օրենսդրական փոփոխություններ):

Իրավաքաղաքական գիտակցությունն անհատի և հասարակության սոցիալ-հոգևոր կյանքի բնական բաղադրատարրն է և քաղաքական հարաբերությունների կարևոր բաղկացուցիչը: Իրավաքաղաքական գիտակցությունը ձևավորվում է երեք բաղադրատարրերի միջոցով՝ ռացիոնալ, զգայական և իռացիոնալ: Ռացիոնալ բաղադրատարրերն են՝ ընդհանրացված գաղափարները, հայեցակարգերը, պատկերացումները, նորմերը, կարծիքները և այլն: Զգայական բաղադրատարրերն են՝ գնահատականները, տրամադրությունները, ցանկությունները և այլն: Իսկ իռացիոնալ բաղադրատարրերն են՝ գիտակցությամբ չպատճառաբանված սուբյեկտիվ ձևերը, ուտոպիաները և երևակայությունը: Նկատենք, որ ռացիոնալ, զգայական և իռացիոնալ պատկերացումները փոխկապակցված են: Քաղաքական իրականության ռացիոնալ ձևը չի կարող առաջանալ առանց զգայական ընկալման, ինչը խթանում է մտածողության գործընթացը: Իռացիոնալ պատկերացումները, օրինակ՝ քաղաքական առասպելները ևս կապված են զգայական և ռացիոնալ պատկերացումների հետ⁶:

Քաղաքական իրականության արտացոլման տեսանկյունից իրավաքաղաքական գիտակցությունը կարող է լինել տեսական և առօրեական: Ըստ իր ուղղվածության՝ այն կարող է լինել ժողովրդավարական, ավտորիտար, ավանդական, ժամանակակից, հպատակային, արդարացի, խռովարար և այլն: Ըստ սուբյեկտների՝ կարելի է տարբերել իրավաքաղաքական գիտակցության սոցիալ-խմբային, ազգային-էթնիկական, կրոնական, կորպորատիվ, անհատական և այլ ձևեր: Իրավաքաղաքական գիտակցության բազմազանությունը կարող է ավելանալ, եթե այն դիտարկվի քաղաքական գործընթացների կոնկրետ սուբյեկտների և օբյեկտների տեսանկյունից (գլոբալ, տարածաշրջանային խնդիրներ, պատերազմ, խաղաղություն, շրջակա միջավայր և այլն): Հասարակական գիտակցության քաղաքականացումը կապված է ճգնաժամային, հեղափոխական իրավիճակների, քաղաքական վարչակարգերի, իշխանության կրողների փոփոխության, քաղաքական համակարգերի, իրավաքաղաքական վարքագծի հիմքերի փոխակերպման հետ: Հասարակական գիտակցության քաղաքականացումը, որպես կանոն, սկսվում է հասարակության սոցիալական կառուցվածքի ստորին և վերին շերտերից: Իսկ հասարակության միջին շերտերն առավել քիչ են ենթարկվում քաղաքականացման գործընթացին: Քաղաքական հարաբերությունների, քաղաքական գործընթացների և դրանց հնարավոր զարգացումների էության ընկալման համար կարևոր է վերլուծել զանգվածային, սոցիալ-խմբային և անհատական իրավաքաղաքական գիտակցությունները: Զանգվածային իրավաքաղաքական գիտակցությունն առավել միանման, բոլորի կողմից ճանաչված քաղաքական գաղափարների, հայացքների, քաղաքական իշխանության կառուցվածքի և սոցիալական կառավարման սկզբունքների ամբողջությունն է: Այն առաջանում և զարգանում է հասարակական կյանքի քաղաքականացման, դրա նորմերի և սկզբունքների միավորման

⁶ Տե՛ս *Варламова Н.*, Политико-правовое сознание и развитие самоуправления. Готовность к самоуправлению как качество политико-правового сознания. М., /Диссертация канд. юрид. наук/, 1991, с. 95- 105.

գործընթացում՝ հիմնվելով պատմական և անհատական փորձի, մշակութային և բարոյական ավանդույթների, կրոնական պատկերացումների վրա: Զանգվածային իրավաքաղաքական գիտակցությունը տարբերվում է իր միատարրության աստիճանով: Կայուն քաղաքական համակարգ և զարգացած քաղաքացիական հասարակություն ունեցող պետություններում այն առավել միատարր է: Ժողովրդավարական վարչակարգերում, որտեղ կայացել են իրավական պետությունը և քաղաքացիական հասարակությունը, քաղաքական բազմակարծության սկզբունքների հիման վրա ձևավորվում և զարգանում է զանգվածային իրավաքաղաքական գիտակցությունը: Զանգվածային գիտակցության այս ձևն իր էությամբ կառուցողական է, քանի որ լայն զանգվածների իրավաքաղաքական գիտակցությունն ուղղված է ավելի լավ, հեռանկարային, արդար և ժողովրդավարական կենսամիջավայրի ձևավորմանը: Հեղափոխական-անարխիկ սկզբունքների հիման վրա ևս ձևավորվում է զանգվածային իրավաքաղաքական գիտակցություն, որը բնորոշ է խիստ բևեռացված սոցիալ-դասակարգային կառուցվածք ունեցող հասարակություններին, որտեղ իշխանական և կառավարման գործառույթներն իրականացվում են ավտորիտար մեթոդներով: Այսպիսի իրավաքաղաքական գիտակցությունը ենթարկվում է խիստ գաղափարախոսական, քարոզչական ազդեցության, ինչպես նաև սուր և հուզականորեն արձագանքում է տեղի ունեցող սոցիալ-քաղաքական գործընթացներին: Ինչ վերաբերում է խմբային իրավաքաղաքական գիտակցությանը, ապա այն առաջանում և զարգանում է տարբեր սոցիալական խմբերի փոխազդեցության ընթացքում սեփական քաղաքական շահերի բավարարման նպատակով: Խմբային իրավաքաղաքական գիտակցությունը չի կարող լինել միատարր, ինչպես և չի կարող միատարր լինել նրա սուբյեկտների սոցիալ-քաղաքական կարգավիճակը: Այդ իսկ պատճառով յուրաքանչյուր սոցիալական խմբում կարող են լինել հակասական քաղաքական դիրքորոշումներ: Բացի այդ, խմբի իրավաքաղաքական գիտակցությունը ներառում է հասարակության համընդհանուր քաղաքական արժեքները, որոնց հիման վրա ձևավորվում են հասարակական կարգի միասնականությունը և կայունությունը⁷: Քաղաքական սոցիալականացման ժամանակ անհատը յուրացնում է զանգվածային և խմբային իրավաքաղաքական գիտակցության հիմնարար տարրերը: Իրականացնելով իր շահերը՝ նա օբյեկտիվորեն համապատասխանեցնում է իր դիրքորոշումն այն սոցիալական խմբի հետ, որն իրեն ամենամոտն է: Չնայած, որ խմբային իրավաքաղաքական գիտակցությունը ձևավորվում է անհատական քաղաքական գիտակցությունների միջոցով, այն չի նույնականանում վերջինիս հետ: Անհատական իրավաքաղաքական գիտակցությունը բնութագրվում է ոչ միայն սոցիալականացման բարձր մակարդակով, այլ նաև իր յուրահատկությամբ: Յուրաքանչյուր անհատի սոցիալական փորձն անկրկնելի է: Այդ իսկ պատճառով կենսագործունեության ընթացքում իրավաքաղաքական գիտակցությունը ենթարկվում է փոփոխությունների, ինչի արդյունքում ձևավորվում են ռեակցիոն, պահպանողական կամ հեղափոխական քաղաքական դիրքորոշումներ: Անհատի, սոցիալական խմբի, հասարակության իրավաքաղաքական գիտակցությունը իրականացնում է ճանաչողական, արժեքային-կողմնորոշման, գաղափարախոսական և կանխատեսման գործառույթներ⁸:

Սուբյեկտի մոտ իրավաքաղաքական գիտակցության ձևավորումը տեղի է ունենում մի քանի փուլով՝ 1. սուբյեկտների ներգրավվածությունը քաղաքական հարաբերություններում, 2. անձի, սոցիալական խմբի, հասարակության քաղաքականացումը, 3. քաղաքական կողմնորոշումը:

⁷ Տե՛ս Черкасенко Ю., Социодинамика политико-правового сознания специалистов в военных вузах. Содержание, структура и функции политического и правового сознания личности. Ставрополь, / Диссертация канд. философских наук/, 2000, с. 24-33.

⁸ Տե՛ս նույն տեղում:

րոշումների ձևավորումը, 4. քաղաքական գիտելիքների կուտակումը, 5. քաղաքական գործողությունների գիտակցումը⁹։ Քաղաքական գործընթացներում առանձնակի կարևորություն են ստանում անձի ակտիվ սոցիալ-քաղաքական դիրքորոշումը, նրա նախաձեռնողականությունը և ինքնակարգապահությունը, պահանջների որոշակի ծավալը՝ նախևառաջ ուղղված սեփական անձին։ Այս հանգամանքը ենթադրում է անհատի կողմից իր պարտավորությունների, պետության և հասարակության հանդեպ քաղաքացիական պարտքի բարեխիղճ կատարում։ Այս պարագայում նման վարքագիծը ներթափանցում է հասարակական կառուցվածքի մեջ՝ ներառելով և՛ տնտեսական, և՛ սոցիալական, և՛ բարոյական, և՛ հատկապես քաղաքական հարաբերությունները։ Հարկ է նկատել, որ այսպիսի անհատի ձևավորումը հնարավոր է միայն ժողովրդավարական կերպափոխումների ճանապարհով, որոնք պայմանավորված են քաղաքացիական հասարակության շրջանակում իրավական պետության կառուցման գործընթացով։ Միայն այս պայմաններում է հնարավոր ինքնուրույն քաղաքական գործունեություն ծավալելու ունակությունների և հմտությունների մշակումը, քաղաքական փորձի և գիտելիքների ձեռքբերումը։ Միայն այսպիսի անձը կարող է ունենալ բարձր սոցիալ-քաղաքական, հետևաբար՝ նաև իրավական գիտակցություն։ Այսպիսի անհատն իրեն կարող է զգալ իրավաքաղաքական հարաբերությունների լիարժեք սուբյեկտ, ճիշտ ընկալել և գնահատել սեփական իրավունքները, ազատությունները և պարտավորությունները։ Քանի որ յուրաքանչյուր հասարակությունում գործում է որոշակի իրավաքաղաքական համակարգ, որը կարգավորում է մարդու կենսագործունեության բոլոր ոլորտները, անձն իր գնահատականն է տալիս իրեն շրջապատող տարբեր իրավաքաղաքական երևույթներին։

Հարկ է անդրադառնալ նաև իրավական և բարոյական գիտակցությունների հարաբերակցության խնդրին, ինչը կարևոր է քաղաքական գործընթացներում հասարակության իրավագիտակցության հիմնախնդրի ուսումնասիրության համար։

19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբի ռուս մտածողները (Ի. Իլյինը, Վ. Սոլովյովը և ուրիշներ) հաստատակամորեն ընդգծում են, որ իրավունքը բարոյականության նվազագույնն է կամ իրավաբանորեն ամրագրված բարոյականությունը։ Այս հեղինակների կարծիքով՝ բարոյականությունը հասարակության բարոյական-հումանիտար իդեալների իրականացումն է¹⁰։ Բարոյականությունը կարևորագույն սոցիալական ինստիտուտներից է և հասարակության գիտակցության կարևորագույն ձևերից մեկը։ Այն պատմականորեն ձևավորվող և զարգացող կենսական սկզբունքների, հայացքների, գնահատականների, համոզմունքների և դրանց վրա հիմնված վարքագծի նորմերի ամբողջությունն է։ Բարոյական գիտակցությունը հասարակական գիտակցության հիմնական արժեքային ձևն է, որն արտահայտում է մարդկանց պատկերացումները բարու և չարի, ազնվության և անազնվության, պարտքի ու պատասխանատվության և այլ բարոյական հասկացությունների մասին, որոնց միջոցով գնահատվում է մարդկանց վարքը։ Բարոյական գիտակցության հիման վրա կազմավորվում է հասարակության բարոյականությունը, այսինքն՝ մարդկանց վարքի և համակեցության նորմերը։ Բարոյական նորմերը համապարփակ են և շատ ավելի լայն, քան իրավական նորմերը, որովհետև դրանք ընդգրկում են ոչ միայն իրավական, այլև հակաիրավական բոլոր հարաբերությունները¹¹։

Իրավագիտակցությունը և բարոյական գիտակցությունը համագործակցում են որպես փոխլրացնող երևույթներ։ Դրանք միաժամանակ հետապնդում են միևնույն նպատակներն

⁹ Տե՛ս *Варламова Н.*, Политико-правовое сознание и развитие самоуправления. Готовность к самоуправлению как качество политико-правового сознания. М., /Диссертация канд. юрид. наук/, 1991, с. 125- 154.

¹⁰ Տե՛ս *Спиркин А.*, Философия: М., Учебник. 2-е изд., Гардарики, 2006, с. 661-667.

¹¹ Տե՛ս *Ասատրյան Մ.*, Փիլիսոփայության ներածություն, Եր., Նոյյան Տապան հրատ., 2004, էջ 372,

ու առաջադրանքները, այն է՝ հասարակական կյանքի կարգավորումն ու կատարելագործումը, անձի զարգացումն ու առաջընթացը, մարդասիրության և արդարության իդեալների հաստատումը հասարակության մեջ: Իրականացնելով իրենց գործառույթները՝ իրավունքը և բարոյականությունը փոխօգնության են հասնում միմյանց նպատակների իրագործման համար: Սուբյեկտի միևնույն արարքին տրվում են ինչպես իրավական, այնպես էլ բարոյական գնահատականներ՝ տվյալ արարքի մասին դատելով ինչպես օրենքի, այնպես էլ խղճի և պատվի տեսանկյունից: Իրավագիտակցության և բարոյական գիտակցության սերտ կապը դեռևս չի նշանակում, որ այդ գործընթացը տեղի է ունենում սահուն և առանց կոնֆլիկտների: Դրանց միջև հաճախ առաջանում են սուր հակասություններ, քանի որ բարոյական և իրավական պահանջումները հաճախ չէ, որ համընկնում են: Իրավունքի և իրավագիտակցության կողմից հասարակության բարքերի թերագնահատումը կամ, առավել ևս, անտեսումը հանգեցնում են բացասական և, երբեմն նաև, անդառնալի հետևանքների: Իրավական համակարգի կողմից հասարակության բարոյական նորմերի, սկզբունքների, արժեքների անտեսումը հանգեցնում է ազգի հոգևոր արժեքների քայքայմանը, իրավական գիտակցության, մտածելակերպի լավագույն որակների՝ օրինականության, իրավակարգի, հանդուրժողականության կորստին:

Հայ հասարակության ճգնաժամային իրավիճակի պայմաններում իրավական և բարոյական գիտակցության միջև հակասությունները ծայրահեղ կերպով սրվել են: Կտրուկ նվազել է անհատին ներկայացվող բարոյական պահանջների նիշը: Էականորեն փոխվել են անհատի հեղինակության սոցիալական և հոգևոր արժեքների չափանիշները, որոնք իրենց ազդեցությունն են թողնում նաև քաղաքական զարգացումների և գործընթացների վրա: Այս երևույթն առավելապես դրսևորվում է ընտրական գործընթացների ժամանակ, երբ ուղղակիորեն բացահայտվում է հասարակության և քաղաքական ընտրախափի իրավաքաղաքական գիտակցության ցածր մակարդակը:

Մյուս կողմից, հասարակության մեջ քրեական գործոնի մեծացման արդյունքում իրավունքը և իրավագիտակցությունը իրենց կարգավորման և պաշտպանական գործառույթներով այլևս չեն կարողանում պաշտպանել հասարակությունը և անհատին բազմաթիվ հակասոցիալական երևույթներից¹²: Այս և նմանատիպ հարաբերություններում իրավական և բարոյական գիտակցությունը գտնվում են հակամարտության և հակասության մեջ: Այնուամենայնիվ, իրավական և բարոյական գիտակցությունները օժտված են գնահատման տարբեր չափանիշներով, որոնք տարբերվում են մարդկանց գիտակցության և վարքի վրա ազդեցության բնույթով և միջոցներով:

Այսպիսով՝ իրավական և բարոյական գիտակցությունները, հանդես գալով որպես հասարակական գիտակցության ինքնուրույն ձևեր, սերտորեն փոխգործակցում և փոխլրացնում են միմյանց նաև քաղաքական գործընթացներում: Ինչպես արդարացիորեն նշում է Ե. Լուկաշևան. «Իրավագիտակցությունը և իրավական նորմերը, բարոյական գիտակցությունը և բարոյական արժեքները գործում են հասարակական-քաղաքական հարաբերությունների միասնական դաշտում՝ արտացոլելով այդ նույն հարաբերությունների՝ յուրաքանչյուր ոլորտին բնորոշ առանձնահատկությունները»¹³: Ակնհայտ է, որ ժամանակակից հայ իրականության պայմաններում իրավունքը՝ որպես հասարակական-քաղաքական հարաբերությունների կարգավորիչ, չի կարող հաջողությամբ լուծել հասարակության առջև ծառացած բոլոր խնդիրները:

¹² Сі́н Селиванова О., Позитивная ответственность по российскому праву. Толь., Юриспруденция, №5, МаБиБД, 1996, с. 13

¹³ Лукашева Е., Право. Мораль. Личность. М., Наука, 1986, с. 76. Тихонравов Ю., Основы философии права. М., Вестник, 1997, с. 403. Щегорцев В., Социология правосознания. М., Мысль, 1981, с. 114

րը՝ իր հիմքում չունենալով ամուր բարոյական և քաղաքական հենք: Այս պարագայում, մեր կարծիքով, արդարացի է Յու. Տիխոնրավովի մոտեցումը. «Բարոյականությունը դրականորեն է գնահատում իրավունքը, եթե վերջինիս բովանդակությունը համապատասխանում է բարոյականության արժեքներին»: Վ. Շեգորցևի պնդմամբ. «Որքան բարձր է անհատի բարոյական գիտակցության մակարդակը, այդքան բարձր են վերջինիս իրավական պատկերացումները»: Ասվածը, ամենևին, չի նշանակում, որ հասարակության մեջ կարգ ու կանոն հաստատելու համար անհրաժեշտ է թուլացնել պետական հարկադրանքի միջոցները: Այնուամենայնիվ, իրավունքը պետք է մշտապես հարստացվի հոգևոր-բարոյական բովանդակությամբ, ինչն էլ, իր հերթին, կհարթեցնի իրավական և բարոյական գիտակցության միջև առկա կամ առաջացող հակասությունները:

Այսօր մեր հասարակության բարոյական հիմքերը, կարելի է ասել, խարխլված են: Մեծանում է ոչ միայն իրավական, այլև բարոյական նիհիլիզմը: Այս բացասական երևույթների հաղթահարումը հայ հասարակության սոցիալ-քաղաքական և բարոյական վերածննդի հիմնապատճառ կարող է դառնալ: Հասարակական-քաղաքական կյանքի փոխակերպման գործընթացում ուսումնասիրության կարևոր օբյեկտ է հանդիսանում հասարակության կրոնական գիտակցությունը: Կրոնական գիտակցությունը հասարակական գիտակցության ձևերից է: Իրավական և կրոնական գիտակցության փոխհարաբերակցությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ կրոնական բազմաթիվ դոգմաներ, կանոններ, ինչպիսիք են՝ «մի՛ գողացիր», «մի՛ սպանիր», ստացել են իրենց իրավական ամրագրումը դրական իրավունքում:

Հայ հասարակության իրավագիտակցությունը տարբերվում է այլ հասարակությունների իրավագիտակցությունից: Սա պայմանավորված է հայկական մշակույթում ձևավորված աշխարհընկալման հետ: Հայ հասարակության առանձնահատուկ աշխարհընկալումը պայմանավորված է Հայ առաքելական եկեղեցու գաղափարաբանությամբ: Քրիստոնեության մեջ իշխանության և պետության ուժը պայմանավորված է ոչ միայն վերջիններիս աստվածային բնույթով, այլև՝ կառավարողների և ենթակաների միջև փոխհամաձայնությամբ: Ի տարբերություն իրավագիտակցությանը՝ կրոնը ճանաչում է աշխարհը հավատքի միջոցով: Կրոնական գիտակցությունն առավել պահպանողական է, քան իրավական գիտակցությունը: Իրավական գիտակցությանը բնորոշ է օբյեկտիվ իրականության ընկալման և գիտակցման ռացիոնալ բնույթը: Այնուամենայնիվ, մեր կարծիքով, ՀՀ-ում օրենքների մշակման գործում հաշվի չի առնվում կրոնական իրավունքը, ինչը, հատկապես հայ հասարակության համար, կարծում ենք, կարևոր է: Օրենքների մշակման գործում կրոնական իրավունքի կարևորության մասին է նշում ռուս հետազոտող Մ. Բաբանը, որ գտնում է, որ պետք է հաշվի առնել կրոնական իրավունքը, քանի որ իրավագիտակցությունն իր հիմնավորումն է գտնում նաև բարոյական գիտակցության մեջ: Մեր կարծիքով, հայ հասարակության իրավագիտակցության ձևավորման գործում անհրաժեշտ է նաև հիմնվել կրոնական իրավունքի վրա:

Եզրակացություն

Ժամանակակից իրավագիտակցությունը բավականին բարդ երևույթ է ինչպես իր ներքին կառուցվածքով, այնպես էլ իր արտաքին սոցիալ-մշակութային կապերով: Այսօրվա հայ իրականության պայմաններում, երբ տեղի է ունենում համակարգային ճգնաժամ, հասարակության աննորմալ շերտավորում, հասարակության իրավագիտակցության՝ որպես սոցիալ-քաղաքական կոնսոլիդացիայի և կայացած քաղաքացիական հասարակության կարևորագույն գործոնի ձևավորումը, որը կհամապատասխանի ժամանակակից սոցիալ-քաղաքական իրականությանը, առավել քան կարևոր, և, միևնույն ժամանակ, բավականաչափ բարդ երևույթ

է: Սակայն, չնայած հասարակության իրավագիտակցության ճգնաժամային իրավիճակին, կարելի է վստահաբար պնդել քաղաքական գործընթացներում իրավագիտակցության դերի կարևորության մասին: Ինչ վերաբերում է քաղաքական գիտակցությանը, ապա վերջինս առանցքային նշանակություն ունի ժողովրդավարական հասարակության կայացման, պետության կայունության և քաղաքացու իրավունքների պաշտպանության համար: Այն խթանում է տեղեկացված և պատասխանատու քաղաքական մասնակցությունը՝ նպաստելով երկրի զարգացմանը: Այս համատեքստում՝ ժողովրդավարական իրավագիտակցության և քաղաքական գիտակցության մշակումն ու հաստատումը՝ հիմնված ազգային-մշակութային արժեքամակարգի վրա, առավելապես կարևոր են հայ հասարակության արդիականացման պայմաններում քաղաքական գործընթացների առավել արդյունավետ կազմակերպման և կառավարման, քաղաքացիական հասարակության և իրավական պետության ձևավորման համար: Ամփոփելով կարող ենք ասել, որ իրավական գիտակցությունը հենվում է քաղաքական գիտակցության վրա: Քաղաքական զարգացումները հաճախ ազդում են օրենքների ընդունման և կիրառման գործընթացի վրա: Ժողովրդավարական հասարակություններում օրենքները ձևավորվում են քաղաքացիական ներգրավվածության շնորհիվ: Քաղաքական գիտակցությունը ձևավորվում է իրավական հիմքի վրա: Ժողովրդավարական պետություններում քաղաքական գործունեությունը հնարավոր է միայն իրավական դաշտում, ինչը նշանակում է, որ քաղաքացին պետք է գիտակցի իր սահմանադրական իրավունքներն ու պարտականությունները: Իրավական անգրագիտությունը կարող է խոչընդոտել քաղաքական ակտիվությանը: Եթե քաղաքացիները չեն հասկանում իրենց իրավունքը կամ օրենքների էությունը, նրանք կարող են հեշտությամբ մանիպուլացվել քաղաքական ուժերի կողմից: Քաղաքական գիտակցությունը կարող է ազդել իրավական բարեփոխումների վրա: Գիտակից հասարակությունը կարող է պահանջել օրենքների բարեփոխում, հակակոռուպցիոն միջոցառումների իրականացում, ինչպես նաև արդարադատության համակարգի արդիականացում: Քաղաքական և իրավական գիտակցությունը սերտորեն կապված են միմյանց հետ և միասին ապահովում են իրավական պետության և ժողովրդավարական հասարակության կայունությունը: Եթե քաղաքացիները ունենան բարձր քաղաքական և իրավական գիտակցություն, նրանք կկարողանան ոչ միայն պաշտպանել իրենց իրավունքները, այլև ձևավորել ավելի արդյունավետ և արդար պետություն:

Ամփոփագիր: Աշխատանքը նվիրված է քաղաքական գործընթացներում իրավագիտակցության դրսևորման հիմնախնդրի ուսումնասիրությանը, որը կարևոր նշանակություն ունի ՀՀ-ում քաղաքացիական հասարակության ձևավորման և իրավական պետության կայացման գործում: Աշխատանքի նպատակն է Հայաստանի Հանրապետությունում ընթացող քաղաքական գործընթացներում իրավագիտակցության դերի և նշանակության վերհանումը, քաղաքացիական հասարակության և իրավական պետության կայացման գործում իրավագիտակցության նշանակության իմաստավորումը: Աշխատանքում վերլուծվել են քաղաքական սոցիալականացման և հասարակություն-պետություն փոխհարաբերությունների համատեքստում իրավագիտակցության նշանակությունը, Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական հասարակության ձևավորման գործում իրավագիտակցության տեղը և դերը, վեր են հանվել հայ հասարակության իրավագիտակցության առանձնահատկությունները, կարևորվել է իրավագիտակցության անհրաժեշտությունը իրավական պետության կայացման գործում: Ուսումնասիրվել է հայ հասարակության մոտ իրավագիտակցության հակասականությունը: Մի կողմից քաղաքացիական հասարակության մի հատվածի մոտ առկա է իրավագիտակցության բարձր մակարդակ, ինչը դրսևորվում է քաղաքացիների կողմից իրենց շահերի և իրավունքների պաշտպանության համար իրականացվող քաղաքացիական նախաձեռնություններում: Իսկ մյուս կողմից, ընդհանրական իմաստով, հասարակության մոտ բացահայտվել է իրավագիտակցության շատ ցածր մակարդակ, որոշ հարցերում, նույնիսկ, բացարձակ անտեղյակություն:

Իրավական պետության ձևավորումը միանշանակ հնարավոր է բարձր իրավագիտակցության դեպքում: Իհարկե, իրավական պետության ձևավորումը չի կարող տեղի ունենալ առանց որոշակի քաղաքական գործընթացների, քանի որ դրանք, ինչպիսիք են օրինակ՝ սահմանադրական պետության, իշխանության բաժանման, օրենքի գերակայության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության մասին գաղափարները, հնարավոր է կյանքի կոչել միայն քաղաքական կամքի առկայության դեպքում: Չէ՞ որ առանց քաղաքական կամքի՝ վերը նշված գաղափարները, որոնք հանդիսանում են իրավական պետության հիմքը, կմնան զուտ հռչակված սկզբունքներ առանց իրական գործնական կիրառության: Հետևապես՝ այս քաղաքական գործընթացում առաջնային դերակատարը պետությունն է, որը միակ ինստիտուտն է, որ կարող է հասարակությունն ուղղորդել իրավական պետության ձևավորման ճանապարհով:

Annotation. The work is dedicated to the study of the issue of the manifestation of legal awareness in political processes, which is of great importance in the formation of civil society and the establishment of a legal state in RA. The aim of the work is to highlight the role and importance of legal awareness in the ongoing political processes in the Republic of Armenia, to understand the importance of legal awareness in the establishment of civil society and the legal state. The work analyzed the importance of legal awareness in the context of political socialization and society-state relations, the place and role of legal awareness in the formation of civil society in the Republic of Armenia, highlighted the features of legal awareness in Armenian society, and highlighted the importance of legal awareness in the establishment of a legal state.

On the one hand, a section of civil society has a high level of legal awareness, which is manifested in civil initiatives carried out by citizens to protect their interests and rights. And on the other hand, in a general sense, a very low level of legal awareness was revealed among the public, even absolute ignorance in some issues. The formation of a legal state is definitely possible in the case of high legal awareness. Of course, the formation of a legal state cannot take place without certain political processes, because they, for example, the ideas about the constitutional state, the separation of powers, the rule of law, the protection of human rights and freedoms, are possible. can be implemented only if there is political will. Without political will, the above-mentioned ideas, which are the basis of the legal state, will remain merely declared principles without real practical application. Therefore, the primary actor in this political process is the state, which is the only institution that can guide the society in the formation of the legal state by road.

Аннотация. Данная статья посвящена изучению вопроса проявления правосознания в политических процессах, что имеет большое значение в формировании гражданского общества и становлении правового государства в РА. Цель работы – подчеркнуть роль и значение правосознания в происходящих политических процессах в Республике Армения, понять значение правосознания в становлении гражданского общества и правового государства. В работе проанализировано значение правосознания в контексте политической социализации и отношений «общество-государство», место и роль правосознания в формировании гражданского общества в Республике Армения, выделены особенности правосознания в армянском обществе, выделены значение правосознания в становлении правового государства. С одной стороны, часть гражданского общества обладает высоким уровнем правосознания, что проявляется в гражданских инициативах, осуществляемых гражданами по защите своих интересов и прав. А с другой стороны, в общем смысле среди населения выявился очень низкий уровень правосознания, вплоть до абсолютного невежества в некоторых вопросах. Формирование правового государства определенно возможно при высоком правосознании. Разумеется, формирование правового государства не может происходить без определенных политических процессов, поскольку они, как и идеи правового государства, разделения властей, верховенства права, защиты прав и свобод человека, могут быть реализованы только в условиях наличия политической воли. Без политической воли вышеупомянутые идеи, являющиеся основой правового государства, останутся лишь декларируемыми принципами без реального практического применения. Поэтому основным действующим лицом в этом политическом процессе является государство, которое является единственным институтом, который может руководить обществом в формировании правового государства.

Բանալի բառեր - իրավական մշակույթ, իրավակարգ, իրավաքաղաքական գիտակցություն, քաղաքական իրականություն, հասարակական գիտակցություն, քաղաքական վարչակարգ, ժողովրդավարական վարչակարգ, բարոյական գիտակցություն, կրոնական գիտակցություն, քաղաքացիական նախաձեռնություն:

Keywords: legal culture, legal system, legal and political awareness, political reality, public consciousness, political regime, democratic regime, moral awareness, religious consciousness, civic initiative.

Ключевые слова: правовая культура, правовая система, правовая и политическая осведомленность, политическая реальность, общественное сознание, политический режим, демократический режим, моральное сознание, религиозное сознание, гражданская инициатива.

Օգտագործված գրականության ցանկ

1. Ապիյան Ն., Պետրոսյան Ա., Իրավական պետություն և օրինականություն: /2-րդ հրատարակություն, լրացված և վերամշակված/ ԵՊՀ, Եր., Տիգրան Մեծ հրատ., 2001, 288 էջ:
2. Հարությունյան Մ., Արդի հայ հասարակությունը և օտարված գիտակցության փիլիսոփայությունը, Եր., Նաիրի հրատ., 2014, էջ 648:
3. Ներսեսյանց Վ., Իրավունքի և պետության տեսություն, Երևան, Նաիրի հրատ., 2001, 300 էջ:
4. Ստեփանյան Հ., Իրավունքի գոյաբանություն, Եր., Եվրոպրինտ հրատ., 2012, 224 էջ:
5. Алексеев С., Общая теория права, В 2 т., Т. 1, М., Юрид. лит., 1981, 215 с.
6. Апресян Р., Гражданское неповиновение - в политической теории и социальной практике (Джон Ролз и Мохандас Ганди), Насилие и ненасилие: Философия, политика, этика / Под ред. Р. Г. Апресяна, М., МИОС, 2003, с.54-70.
7. Баранов П., Институты гражданского общества в правовом пространстве современной России: Ростов-на-Дону, Дисс. ... канд. юрид. наук. 2003. с. 22.(Грудцына Л. К вопросу о формировании государственной концепции развития гражданского общества в России // журнал «Экономика и право. XXI век» №1 (январь*март) 2010г. www.economy.law-books.ru/1-1-10/7-1-1-10.doc 18/07/2014).
8. Бегинин В., Общественное правосознание и государственность / Под ред. В.А. Шабалина.: Изд-во Саратов. ун-та, Сар., 1993, с. 130.
9. Бельский К., Формирование и развитие социалистического правосознания. Высш. шк., М., 1982, 183 с.
10. Варламова Н., Политико-правовое сознание и развитие самоуправления. Готовность к самоуправлению как качество политико-правового сознания. /Диссертация канд. юрид. наук/, М., 1991, 175 с.
11. Остроумов Г., Правовое осознание действительности. Наука, М., 1969, 173 с.
12. Черкасенко Ю., Социодинамика палитико-правового сознания специалистов в военных вузах. Содержание, структура и функции политического и правового сознания личности. /Диссертация канд. философских наук/, Ставрополь, 2000, 138 с.
13. Cowan D., Legal Consciousness: Some Observations, The Modern Law Review, Volume 67, Issue 6, London, 2004, p. 928-958.
14. Rawls J. A., Theory of Justice. Cambridge, Ma., The Balknap Press of Harvard U.P., 1971, 538 p.

Հարությունյան Հ. - ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի հայցորդ, էլիստե՝ herbert.harutyunyan@ysu.am:

Ներկայացվել է խմբագրություն 09.01.2025 թ., տրվել է գրախոսության 09.01.2025 թ., երաշխավորվել է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչ, ի. գ. թ., դոցենտ Վ. Այվազյանի կողմից, ընդունվել է տպագրության 22.04.2025 թ.:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ/CIVIL PROCEDURE/ГРАЖДАНСКОЕ ПРОЦЕСС

<https://doi.org/10.59546/18290744-2025.1-3-24>

ԱՐԱ ԶՈՀՐԱԲՅԱՆ

Իրավաբանական գիտությունների թեկնածու

ARA ZOHRABYAN

Candidate of Legal Sciences

ԱՐԱ ՅՕԳՐԱԲՅԱՆ

Кандидат юридических наук

**ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՎԵՃԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

JUDICIAL FEATURES OF THE EXAMINATION OF LABOR DISPUTES

**ПРОЦЕССУАЛЬНЫЕ ОСОБЕННОСТИ РАССМОТРЕНИЯ ТРУДОВЫХ
СПОРОВ**

Ներածություն

Աշխատանքային վեճերն իրենց առանձնահատուկ բնույթով տարբերվում են այլ քաղաքացիաիրավական վեճերից, ինչի արդյունքում այս վեճերի լուծման արդյունավետությունը չի կարող ապահովվել քաղաքացիական դատավարության ընդհանուր ընթացակարգով:

2018 թ. ընդունված ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով հստակ ամրագրվեց աշխատանքային վեճերի քննության հատուկ կարգ, և այս վեճերը ստացան հատուկ հայցային վարույթի կարգով քննվող վեճերի ինքնուրույն տեսակի կարգավիճակ՝ ըստ էության ենթադրելով դատարանի կողմից ex officio քննության իրականացում՝ չնայած այդ մասին ուղղակի նշում առկա չէ:

Ստորև կներկայացնենք աշխատանքային վեճերի քննության հիմնական առանձնահատկությունները՝ վեր հանելով առկա իրավական բացերը և ներկայացնելով օրենսդրության կատարելագործմանն ուղղված մեր տեսլականը:

Հիմնական հետազոտություն

Աշխատանքային վեճերի հիմնական տարբերակիչ առանձնահատկությունը կողմերի փաստացի ոչ հավասար պայմաններն են, որոնք էլ պայմանավորված են աշխատանքային հարաբերությունների բնույթով: Մենք համակարծիք ենք իրավաբանական գրականության մեջ շրջանառվող այն դիտարկմանը, որ աշխատանքային վեճերի քննության առանձնահատկություններից է այն, որ փաստացի բացակայում է կողմերի հավասարությունը, ինչով պայ-

մանավորված նաև հավասար չեն նաև ապացույցներ ներկայացնելու նրանց հնարավորությունները¹: Բացի դրանից՝ ինչպես իրավացիորեն նկատել է Դ. Կազանցևը, գործնականում աշխատողը չի ունենում փաստաթղթերի բնօրինակներ, այլ լավագույն դեպքում նրան տրամադրվում են պատճեններ²:

Այն, որ աշխատանքային վեճերի քննության արդյունավետությունը հնարավոր է ապահովել միայն հատուկ կամ առնվազն ընդհանուր ընթացակարգից տարբերվող ընթացակարգերի սահմանմամբ նորույթ չէ քաղաքացիական դատավարության համաշխարհային պրակտիկայում:

Բազմաթիվ զարգացած և զարգացող պետություններ իրենց դատական համակարգում ներառել են մասնագիտացված աշխատանքային դատարաններ, օրինակ՝ Գերմանիայում³, Բելգիայում⁴, Իռլանդիայում⁵, Շվեդիայում⁶ և այլուր:

Բնականաբար մասնագիտացված աշխատանքային դատարանի առկայությունը շատ ավելի պրոֆեսիոնալ մակարդակ է ապահովում աշխատանքային վեճերի լուծման համատեքստում, սակայն Հայաստանի Հանրապետության դեպքում ներկայում իրատեսական չենք համարում աշխատանքային դատարանների ձևավորումը:

Այդուհանդերձ, պետք է նշենք, որ ՀՀ օրենսդիրը նույնպես առանձնացրել է աշխատանքային վեճերը՝ որպես քաղաքացիական դատավարության կարգով քննվող վեճերի առանձին տեսակ և սահմանել աշխատանքային վեճերի քննության համեմատաբար պարզեցված կարգ:

Մենք կողմ ենք մասնագիտական գրականության մեջ շրջանառվող այն մոտեցմանը, որ պարզեցված դատական վարույթները քաղաքացիական դատավարության արդյունավետության բարձրացման միջոցներից մեկն են, քանի որ ուղղված են նվազագույն ռեսուրսներով նպատակին հասնելուն⁷:

Առանձին գիտնականների կարծիքով՝ պարզեցված վարույթներ պետք է կիրառվեն այն դեպքում, երբ գործերը պարզ են ապացուցման տեսանկյունից, ինչպես նաև այն գործերով, որոնցով հայցի իրավաչափության արժանահավատությունը բարձր է, ինչպես նաև փոքր նշանակության գործերով⁸:

Բոլոր դեպքերում դասագրքային առումով աշխատանքային վեճը պարզեցված վարույթի կարգով չի կարող քննվել, քանի որ վերջինիս փաստակազմը կարող է լինել խիստ բարդ, իսկ ապացուցման առարկայի և ապացուցման բեռի ճիշտ բաշխումը՝ վճռորոշ վեճի լուծման տեսանկյունից:

Այլ հարց է, որ պարզեցված կարգով գործի քննության առնվազն մեկ հատկանիշ՝ սեղմ ժամկետում վեճի լուծման հատկանիշը, պետք է առկա լինի ցանկացած աշխատանքային վեճի դեպքում, ընդ որում՝ պայմանավորված ոչ միայն աշխատողի, այլ նաև գործատուի շահերի

¹ Տե՛ս *Буянова М.*, Проблемы доказательств и доказывания при рассмотрении индивидуальных трудовых споров// Трудовое право. 2014, №3, էջ 61:

² Տե՛ս *Казанцев Д.*, Непосильное бремя доказывания/ ЭЖ-Юрист. 2011, №17, էջ 11:

³ <https://www.bundesarbeitsgericht.de/responsibilities/>.

⁴ <https://www.eajtn.com/judicial-systems/belgium/>.

⁵ <https://legalguide.ie/labour-court/>.

⁶ <https://www.government.se/government-agencies/swedish-labour-court/#:~:text=The%20Swedish%20Labour%20Court%20is,relationship%20between%20employers%20and%20employees.>

⁷ Տե՛ս *А.А. Се́йдумбек, М.А. Аленов*, Процессуальные особенности рассмотрения отдельных категорий гражданских дел.// Вестник Евразийского национального университета имени Л.Н. Гумилева. Серия Право. №4(145), 2023, էջ 140:

⁸ Տե՛ս *Шпак В.В.*, Оптимизация гражданского судопроизводства: дисс. ... к.ю.н.-Саратов, 2019, էջ 227:

պաշտպանությամբ:

«Ուշացած արդարադատությունը մերժված արդարադատությունն է» խոսքերը, որն արտացոլվել է նաև Մարտին Լյութեր Կինգի կողմից 1963 թ. «Նամակ Բիրմինգհեմի բանտից»-ում, որում նա նշել է «շատ երկար տևած արդարադատությունը հավասար է մերժված արդարադատությանը»⁹, հատկապես էական նշանակություն են ձեռք բերում աշխատանքային վեճեր քննելիս, երբ աշխատողի՝ սեփական աշխատանքով իր ապրուստը հոգալու իրավունքը կախվածության մեջ է դրվում արդարադատության իրականացման ժամկետի հետ:

Առանձնացնելով աշխատանքային վեճերի առանձնահատկությունները, պետք է նշենք, որ մասնագիտական գրականության մեջ դրանք տարանջատվում են հետևյալ խմբերի՝

- պետական տուրքից ազատված լինելը,
- հայցային վաղեմության ժամկետների հաշվարկը և վերականգնումը,
- գործերի քննության սեղմ ժամկետները,
- աշխատանքի տեսչական մարմնի ներգրավվումը¹⁰:

Նշված առանձնահատկություններից ՀՀ օրենսդիրը չի ներառել տեսչական մարմնի ներգրավումը և չի սահմանել առանձին դատավարական կարգ աշխատանքային վեճերով հայցային վաղեմության ժամկետը վերականգնելու համար՝ փոխարենը, որպես աշխատանքային վեճի լուծման համար վճռորոշ նշանակություն ունեցող հանգամանք է սահմանվել աշխատանքային վեճով վիճարկվող անհատական իրավական ակտում իրավական և փաստական հիմքի հստակ վկայակոչումը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով առանձնացված են աշխատանքային վեճերի քննության հետևյալ առանձնահատկությունները՝

- սեղմ ժամկետում աշխատանքային վեճի քննությունը,
- գործատու վրա ապացուցման բեռ դնելը,
- ազատման կամ կարգապահական տույժ կիրառելու մասին հրամանի անվերապահ անվավերությունը իրավական կամ փաստական հիմքերի դրևէ մեկի բացակայության դեպքում:

➤ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՎԵՃԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՍԵՂՄ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 210-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է՝ Աշխատանքային վեճերն առաջին ատյանի դատարանում քննվում և լուծվում են հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ երեք ամսվա ընթացքում:

Թեև գործնականում այս ժամկետը խիստ հազվադեպ է պահպանվում, այդուհանդերձ, առնվազն օրենսդրի կամքը առկա է և մնում է միայն պրակտիկայի համապատասխանեցումը սահմանված պահանջներին:

Ընդ որում, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածը սահմանում է, որ ... *եթե պարզվում է, որ աշխատանքի պայմանները փոփոխվել են, կամ աշխատողի հետ աշխատանքային հարաբերությունները դադարեցվել են առանց օրինական հիմքերի կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կամ գործադրի ներքին կամ անհատական իրավական ակտերով կամ աշխատանքային պայմանագրով սահմանված պահանջների խախտմամբ,*

⁹ Տե՛ս «Letter from a Birmingham Jail [King, Jr.]»// https://www.africa.upenn.edu/Articles_Gen/Letter_Birmingham.html (23.11.2024):

¹⁰ Տե՛ս А. А. *Самфилова*, Особенности судебного рассмотрения и разрешения индивидуальных трудовых споров.// Журнал Юриспруденция. էջ 134 <https://cyberleninka.ru/article/n/osobennosti-sudebnogo-rassmotreniya-i-razresheniya-individualnyh-trudovyh-sporov/viewer>.

ապա աշխատողի խախտված իրավունքները վերականգնվում են: Այդ դեպքերում աշխատողի օգտին գործատուից գանձվում է միջին աշխատավարձը՝ **հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար, կամ աշխատավարձի տարբերությունը այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում աշխատողը տվյալ գործատուի մոտ կատարում էր նվազ վարձատրվող աշխատանք**: Հարկադիր պարապուրդի ժամանակահատվածում աշխատողի կողմից այլ գործատուի մոտ նոր աշխատանքի անցնելու բոլոր դեպքերում տվյալ ժամանակահատվածի համար հարկադիր պարապուրդի դիմաց վճարվում է նախկին աշխատանքի համար վճարված վերջին ինն ամսվա աշխատավարձի չափով գումար, իսկ եթե աշխատողը ինն ամսից պակաս է աշխատել՝ այդ ժամանակահատվածի համար վճարված աշխատավարձի չափով գումար, ինչպես նաև նախկինում և հարկադիր պարապուրդի տվյալ ժամանակահատվածում նոր աշխատանքի դիմաց ստացած աշխատավարձերի դրական տարբերությունը:

Այս կարգավորումը հաշվի առնելով, ակնհայտ է, որ բացառությամբ այլ կազմակերպությունում աշխատողի աշխատանքի ընդունվելու դեպքի, գործատուն ազատման հրամանի անվավերության դեպքում վճարում է աշխատողին նրա միջին աշխատավարձի չափով գումար, որի ժամանակահատվածը համընկնում է դատական գործընթացի տևողության հետ, ուստի մեր համոզմամբ առաջին հերթին հենց գործատուների շահերից է բխում աշխատանքային վեճերի քննության սեղմ ժամկետների սահմանումը և դրանց պահպանումը:

Ավելին, եթե օրենսդիրը կարևորել է աշխատանքային վեճերի քննության ժամկետները՝ սահմանելով եռամսյա ժամկետ առաջին ատյանի դատարանի համար, ապա առնվազն տրամաբանորեն նույն մոտեցումը պետք է կիրառելի լիներ վերաքննիչ և վճռաբեկ ատյանների համար, քանի որ աշխատանքային վեճը չի քննվում և լուծվում միայն առաջին ատյանի դատարանում, այլ որպես կանոն շարունակում է քննվել նաև առնվազն վերաքննիչ ատյանում, որից հետո նվազագույնը կողմերը կարող են օգտվել վճռաբեկ բողոք ներկայացնելու իրենց իրավունքից:

Տեսականորեն, եթե անգամ առաջին ատյանի դատարանն աշխատանքային վեճը քննի և լուծի եռամսյա ժամկետում, ապա միևնույն է վերադաս ատյաններում ժամկետ սահմանված չլինելու արդյունքում աշխատանքային վեճի քննությունը միևնույն է կարող է տարիներ տևել:

Ընդ որում, հատկանշական է, որ վեճի ըստ էության քննարկում՝ կողմերի ներկայությամբ նիստեր անցկացնելով, տեղի է ունենում հենց առաջին ատյանի դատարանում: Այս տրամաբանությամբ, եթե օրենսդիրն աշխատանքային վեճի քննության համար առաջին ատյանի դատարանի համար սահմանել է եռամսյա ժամկետ, ապա տրամաբանորեն այս ժամկետը պետք է շատ ավելի սեղմ լինի վերաքննիչ և վճռաբեկ դատարանների համար, երբ գործի քննությունն առավելապես գրավոր ընթացակարգով է իրականացվում:

Ուստի, մեր կարծիքով աշխատանքային վեճերի քննության արդյունավետությունից է բխում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացում կատարելը և սահմանելը, որ աշխատանքային վեճերի քննության համար վերաքննիչ և վճռաբեկ դատարանների համար սահմանվում է մեկամսյա ժամկետ, որը ներառում է նաև ստորադաս ատյանից գործը ստանալու ժամկետը¹¹:

¹¹ Գործը ստանալու ժամկետը գործի քննության ժամկետի մեջ չներառելու արդյունքում չի լինում որևէ օբյեկտիվ վերահսկողություն, որպեսզի ստորադաս դատարանը անհապաղ կամ հնարավորինս սեղմ ժամկետում գործը ուղարկի վերադաս ատյան, ինչի արդյունքում գործի հանձնումը մեկ դատարանից մյուսը կարող է տևել ավելի երկար, քանի գործի քննության համար սահմանված ժամկետն է: Օրինակ՝ թիվ ԵԴ-12957/02/20 քաղաքացիական գործով, որի առարկան աշխատանքային վեճ է, վերաքննիչ բողոք ներկայացվել է 29.04.2024 թ., սակայն գործն

➤ **ԳՈՐԾԱՏՈՒ ՎՐԱ ԱՊԱՑՈՒՑՄԱՆ ԲԵՌ ԴՆԵԼԸ**

Աշխատանքային վեճերը ծագում են ոչ իրավահավասար սուբյեկտների միջև, ինչով պայմանավորված դրանց քննության նկատմամբ պետք է լինի հատուկ մոտեցում¹²:

Տարբեր գիտնականներ ընդգծելով աշխատանքային վեճերով դատարանի դերը, նշում են, որ իրավունքների հավասարակշռման և ոչ միայն օրինական և հիմնավորված, այլ նաև արդար դատական ակտ կայացնելու նպատակով դատարաններին անհրաժեշտ է ղեկավարվել ներքին համոզմունքով՝ օգտագործելով իր հատուկ գիտելիքները և հմտությունները վեճի փաստակազմը, ապացուցման բազան և կիրառելի նորմերը վերլուծելու համար¹³:

Մեր կարծիքով՝ միանշանակ արդարացված է նաև օրենսդրի մոտեցումն առ այն, որ գործատուի վրա է դրվում աշխատանքային վեճերով ապացուցման բեռը, սակայն այս առումով առկա է մեկ այլ դատավարական խնդիր:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 211-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը սահմանում են՝

2. Հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պարասխանողից հետևյալ ապացույցները պահանջելու մասին.

1) վիճարկվող անհատական իրավական ակտի հիմքում ընկած փաստերը հաստատող ապացույցները,

2) վիճարկվող անհատական իրավական ակտում որպես հիմք վկայակոչված ներքին և անհատական իրավական ակտերը,

3) աշխատողի գործունեությունը կարգավորող պայմանագրերը.

3. Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պարասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում:

Այս նորմի տրամաբանությունից բխում է, որ գործատուն մեկշաբաթյա ժամկետում պետք է ներկայացնի վերը նշված ապացույցները, իսկ դրանից հետո ներկայացված ապացույցները դատարանը պետք է չընդունի:

Այդուհանդերձ, այլ կարգավորման բացակայությամբ պայմանավորված, նախնական դատական նիստի կանոնները կիրառելի են նաև աշխատանքային վեճերի նկատմամբ, ինչը նշանակում է, որ նաև նախնական դատական նիստով է դատարանը բաշխում ապացուցման բեռ և տալիս ապացույցներ ներկայացնելու ժամկետ:

Վերոգրյալի հաշվառմամբ, գործատուն կարող է այն ինչ չի հասցրել կամ չի ցանկացել ներկայացնել սահմանված մեկշաբաթյա ժամկետում, ներկայացնել շատ ավելի ուշ՝ պահպանելով ապացուցման բեռի բաշխման որոշմամբ սահմանված ժամկետը:

Նման պայմաններում առաջարկում ենք ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում սահմանել լրացում և նախադեսել կարգավորում այն մասին, որ աշխատանքային վեճերով դատարանը նախնական դատական նիստի ընթացքում չի բաշխում ապացուցման բեռ և գործը քննում է ներկայացված ապացույցների հիման վրա՝ միևնույն ժամանակ հնարավորություն տալով հայցվորին նախքան դատաքննությունը ներկայացնել իր կարծիքով վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացույցներ,

առաջին ատյանի դատարանից վերաքննիչ դատարան ուղարկվել է 10.09.2024 թ.՝ ավելի քան 4 ամիս անց:

¹² Костян И. А., Об особенностях рассмотрения индивидуальных трудовых спорах//Судья 2014.№9, 2014, էջեր 21-26:

¹³ Н. М.Саликова, Е. М. Батухтина, Процессуально-правовые особенности рассмотрения трудовых споров об оплате труда работников за работу в выходные и праздничные дни// Журнал Российское право:образование, практика, наука, №5, 2019, էջ 16:

իսկ անհրաժեշտության դեպքում իրացնել նաև ապացույց պահանջելու իր հնարավորությունը:

➤ **ԱԶԱՏՄԱՆ ԿԱՄ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՐԱՄԱՆԻ ԱՆՎԵՐԱՊԱՀ ԱՆՎԱՎԵՐՈՒԹՅՈՒՆՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՄ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԻԴ ՈՐԵՎԷ ՄԵԿԻ ԲԱՅԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ:**

Թեև օրենսդրական տեխնիկայի առումով մեր համոզմամբ դատավարական իրավունքը սահմանել է նյութական իրավունքը նորմ, ինչը սխալ է և նյութական օրենքով պետք է սահմանվեն անհատական իրավական ակտին ներկայացվող պահանջները:

Այդուհանդերձ, այս կառուցակարգն իրականում նպատակաուղղված է աշխատանքային վեճերի քննության արդյունավետության ապահովմանը և մեր համոզմամբ արդարացված է:

Չնայած դրան, օրենսդիրը բավականաչափ հստակ չի ձևակերպել, թե ի վերջո ազատման հրամանի իրավական և փաստական հիմքը որն է:

Օրինակ, եթե աշխատանքային պայմանագրի լուծման հիմքը մասնագիտական ունակությունների անբավարարությունն է, արդյոք այս դեպքում ազատման հրամանում աշխատողի կողմից չկատարված պարտականությունների թվարկումը կարող է դիտարկվել որպես փաստական հիմք:

Մեր համոզմամբ՝ փաստական և իրավական հիմքը սերտ կապի մեջ են մեկը մյուսի հետ և փաստական հիմքը բացառապես այն փաստերն են, որոնք հիմք են հանդիսացել իրավական նորմի կիրառման համար և ոչ թե ձևական առումով որոշակի փաստերի վկայակոչումը ազատման հրամանում:

Ավելին՝ փաստական և իրավական հիմքի վերաբերյալ միայն 2024 թ. ՀՀ Վճռաբեկ դատարանը երկու գործով հայտնել է իրավական դիրքորոշում:

Մասնավորապես՝ ՀՀ Վճռաբեկ դատարանն իր 2024 թ. մայիսի 7-ի ԵԴ/49421/02/22 որոշմամբ հայտնել է մասնավորապես հետևյալ դիրքորոշումը. ... Վերոնշյալ նորմերի համադրված վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գործող օրենսդրությունը գործադրուի կողմից աշխատողի վերաբերյալ ընդունված անհատական իրավական ակտն անվավեր ճանաչելու անվերապահ և ինքնուրույն հիմքեր է դիտարկում բոլոր այն դեպքերը, երբ գործով հաստատվում է, որ ... 2) անհատական իրավական ակտը չի պարունակում աշխատանքային պայմանագիրը փոփոխելու, լուծելու կամ աշխատողին կարգապահական պատասխանատվության ենթարկելու փաստական կամ իրավական հիմքը, **այլ կերպ ասած՝ չի պարունակում հղում աշխատանքային պայմանագիրը փոփոխելու, լուծելու կամ աշխատողին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքը սահմանող իրավական նորմին կամ տրեղեկավորություն այն փաստերի մասին, որոնց առկայության պարագայում անհատական իրավական ակտում վկայակոչված նորմը, ըստ գործադրուի, նրան իրավունք է վերապահում փոփոխելու կամ լուծելու աշխատողի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը կամ նրան ենթարկելու կարգապահական պատասխանատվության:**

04.11.2024 թ. թիվ ԵԴ/30480/02/19 քաղաքացիական գործով կայացված իր որոշմամբ ՀՀ Վճռաբեկ դատարանը հայտնել է հետևյալ իրավական դիրքորոշումը՝ Այլ կերպ ասած՝ եթե անհատական իրավական ակտը պարունակում է հղում այն իրավական նորմին, որը, ըստ գործադրուի, նրան իրավունք է վերապահում փոփոխելու կամ լուծելու աշխատողի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը կամ նրան ենթարկելու կարգապահական պատասխանատվության, իսկ անհատական ակտի հիմքում գործադրուի կողմից դրված և դրանում նշված փաստական հանգամանքները վկայակոչված իրավական նորմերի հետ համակցու-

թյան մեջ թույլ են տալիս ճշգրտորեն որոշել անհատական իրավական ակտն ընդունելիս գործադրուի կողմից կիրառված իրավական նորմ(եր)ը, վիճարկվող անհատական ակտը չի կարող անվավեր ճանաչվել բացառապես այն հիմքով, որ դրանում չեն պահպանվել Օրենքով անհատական իրավական ակտերին ներկայացվող ձևական պահանջները: Աշխատանքային պայմանագիրը փոփոխելու, լուծելու կամ աշխատողին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործադրուի կողմից ընդունված անհատական իրավական ակտին վերաբերող՝ օրենքով սահմանված՝ օրենսդրական տեխնիկայի, իրավական ակտի կառուցվածքի կամ նմանատիպ այլ պահանջների խախտումը դատարանի կողմից պետք է որակվի որպես ձևական և չի կարող հիմք հանդիսանալ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 214-րդ հոդվածի 2-րդ մասի կիրառման համար, հաշվի առնելով նաև տվյալ անհատական իրավական ակտի համար հիմք հանդիսացած և դրանում նշված փաստական հանգամանքները, առավել ևս, երբ աշխատանքային վեճերով վարույթներում դատարանի հիմնական նպատակն ու առաքելությունն աշխատանքային պայմանագիրը փոփոխելու, լուծելու կամ աշխատողին կարգապահական պատասխանատվության ենթարկելու օրինական հիմքի առկայությունն ստուգելն է:

Ըստ էության Վճռաբեկ դատարանը հստակ մեկնաբանել է թե՛ իրավական և թե՛ փաստական հիմքին ներկայացվող օրենսդրական պահանջները, սակայն, մեր կարծիքով, այս ինստիտուտն իր կարևորությամբ և հետևանքների խստության տեսանկյունից պետք է պարզաբանվի հենց օրենսդրի մակարդակով, հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ ՀՀ Վճռաբեկ դատարանը, լինելով դատական ատյան, կարող է իր նախորդ որոշումները վերացնել նորերով, որպիսի դեպքեր աշխատանքային վեճերով մեկ անգամ չէ, որ եղել են:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում ենք, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 214-րդ հոդվածում անհրաժեշտ է կատարել լրացում և նշել, որ հրամանի փաստական հիմք կարող են հանդիսանալ բացառապես այն փաստերի վկայակոչումը, որոնք հիմք են հանդիսացել նույն հրամանում նշված իրավական նորմի կիրառման համար:

Եզրակացություն

Ամփոփելով վերոգրյալը՝ աշխատանքային վեճերի քննության դատավարական առանձնահատկությունների ուսումնասիրման համատեքստում մեր կողմից ներկայացվել են օրենսդրության կատարելագործմանն ուղղված որոշ առաջարկություններ:

Մասնավորապես, մեր կողմից առաջարկվել է աշխատանքային վեճերը սեղմ ժամկետներում քննելու պահանջը տարածել նաև Վերաքննիչ և Վճռաբեկ դատարանների նկատմամբ, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանել աշխատանքային վեճի առարկա հանդիսացող անհատական իրավական ակտում փաստական հիմքի բնորոշումը, ինչպես նաև բացառել գործատուի կողմից ապացույցներ ներկայացնելու հնարավորությունը նախնական դատական նիստի ընթացքում:

Ամփոփագիր: Հոդվածը նվիրված է ՀՀ քաղաքացիական դատավարության կարևորագույն և Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում համեմատաբար նոր ինստիտուտներից մեկին՝ աշխատանքային վեճերի քննության առանձնահատկություններին:

Հոդվածի շրջանակում ներկայացվել են աշխատանքային վեճերի առանձնահատկությունները և դրանով պայմանավորված նաև դրանց քննության հատուկ կարգ սահմանելու անհրաժեշտությունը:

Ներկայացվել է աշխատանքային վեճերի վերաբերյալ դոկտրինալ մոտեցումները, դատական պրակտիկան,

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրով սահմանված կարգը, ինչպես նաև առկա խնդրահարույց հարցերը:

Աշխատանքային վեճերի քննության արդյունավետության ապահովման տեսանկյունից ներկայացվել են օրենսդրության կատարելագործմանն ուղղված առաջարկություններ, որոնք մասնավորապես ուղղված են գործերի քննության ժամկետների հստակեցմանը, ապացուցման կարգին և աշխատանքային վեճի առարկա անհատական ակտի փաստական հիմքի հստակեցմանը:

Annotation. The article is dedicated to the peculiarities of labor disputes examination, one of the most important and relatively new institutions in the legal system of the Republic of Armenia - labor disputes.

The article presents the peculiarities of labor disputes and the need to establish a special procedure for their examination.

In the article are presented doctrinal approaches to labor disputes, judicial practice, the procedure established by the RA Civil Procedure Code, as well as existing problematic issues.

From the perspective of ensuring the effectiveness of labor dispute examination, proposals are presented for improving the legislation, which are particularly aimed at clarifying the terms of examination of cases, the procedure for proof, and the clarification of the factual basis of the individual act that is the subject of the labor dispute.

Аннотация. Статья посвящена одному из важнейших и относительно новых институтов гражданского процесса в правовой системе Республики Армения – особенностям рассмотрения трудовых споров.

В рамках данной статьи представлена специфика трудовых споров и, в связи с этим, необходимость установления отдельного порядка их рассмотрения.

В рамках статьи были представлены доктринальные подходы к трудовым спорам, судебная практика, порядок, определенный Гражданским процессуальным кодексом РА, а также существующие проблемные вопросы.

С точки зрения обеспечения эффективности рассмотрения трудовых споров были представлены предложения, направленные на совершенствование законодательства, которые, в частности, направлены на уточнение сроков рассмотрения дел, порядка доказывания, точного определения фактических оснований правового акта, являющегося предметом трудового спора.

Բանալի բառեր – քաղաքացիական դատավարություն, վեճ, աշխատանքային վեճ, հարուկ հայցային վարույթներ, հրամանի փաստական հիմք, հրամանի իրավական հիմք, գործի պարզեցված քննություն, ազատման հրաման, հրամանի անվավերություն, պարզեցված վարույթ:

Keywords: civil proceedings, dispute, labor dispute, special claim proceedings, factual basis of the order, legal basis of the order, simplified examination of the case, dismissal order, invalidity of the order, simplified proceedings.

Ключевые слова: гражданский процесс, спор, трудовой спор, особое исковое производство, фактическое основание приказа, правовое основание приказа, упрощенное судебное разбирательство, приказ об увольнении, недействительность приказа, упрощенное производство.

Օգտագործված գրականության ցանկ

1. Буянова М., Проблемы доказательств и доказывания при рассмотрении индивидуальных трудовых споров// Трудовое право. 2014.№3, էջ 61:
2. Казанцев Д., Непосильное бремя доказывания/ ЭЖ-Юрист, 2011, №17, էջ 11.
3. Костян И. А., Об особенностях рассмотрения индивидуальных трудовых спорах//Судья 2014.№9, 2014, էջեր 21-26:
4. Саликова Н. М., Батухтина Е. М., Процессуально-правовые особенности рассмотрения трудовых споров

об оплате труда работников за работу в выходные и праздничные дни// Журнал Российское право:образование, практика, наука, №5, 2019, էջ 16:

5. Сейдимбек А. А., Аленов М. А., Процессуальные особенности рассмотрения отдельных категорий гражданских дел.// Вестник Евразийского национального университета имени Л.Н. Гумилева. Серия Право. №4(145) 2023, էջ 140:

6. Шпак В. В., Оптимизация гражданского судопроизводства: дисс. ... к.ю.н.-Саратов, 2019, էջ 227:

7. «Letter from a Birmingham Jail [King, Jr.]»// https://www.africa.upenn.edu/Articles_Gen/Letter_Birmingham.html (23.11.2024):

8. <https://www.bundesarbeitsgericht.de/responsibilities/>

9. <https://www.eajtn.com/judicial-systems/belgium/>

10. <https://legalguide.ie/labour-court/>

11. <https://www.government.se/government-agencies/swedish-labour-court/#:~:text=The%20Swedish%20Labour%20Court%20is,relationship%20between%20employers%20and%20employees.>

Զոհրաբյան Ա. - ի.գ.թ., էլիասցե՝ ara.zohrabyan@gmail.com:

Ներկայացվել է խմբագրություն 13.03.2025 թ., տրվել է գրախոսության 13.03.2025 թ., երաշխավորվել է ի.գ.թ. Մ. Կարապետյանի կողմից, ընդունվել է տպագրության 22.04.2025 թ.:

<https://doi.org/10.59546/18290744-2025.1-3-33>

ՀԵՆՐԻԿ ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ
ՀՀ Վճռաբեկ դատարանի դատավորի օգնական,
Երևանի պետական համալսարանի քաղաքացիական
դատավարության ամբիոնի դասախոս,
Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի
քաղաքացիական դատավարության ամբիոնի ասպիրանտ

HENRIK KHUNDKARYAN
*Assistant to the Judge of the Court of Cassation of the RA,
Lecturer at the Chair of Civil Procedure of Yerevan State University,
PhD Student at the Chair of Civil Procedure, Faculty of Law, Yerevan State University*

ГЕНРИХ ХУНДКАРЯН
*Помощник судьи Кассационного суда РА,
Преподаватель кафедры гражданского судопроизводства
Ереванского государственного университета,
Аспирант кафедры гражданского судопроизводства
Юридического факультета Ереванского государственного университета
ORCID' <https://orcid.org/0000-0002-9335-1007>*

ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՑՆԵԼՈՒ, ԱՅՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԻՑ ԱՋԱՏԵԼՈՒ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՎԵՃԵՐԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

JURISDICTION OVER DISPUTES RELATED TO ENTERING PUBLIC SERVICE, PERFORMING IT, AND DISMISSAL FROM SERVICE

ПОДВЕДОМСТВЕННОСТЬ РАЗНОГЛАСИЙ ПРИ ПОСТУПЛЕНИИ НА ГОСУДАРСТВЕННУЮ СЛУЖБУ, ЕЁ ИСПОЛНЕНИИ И ОСВОБОЖДЕНИИ ОТ СЛУЖБЫ

Ներածություն

Հանրային ծառայության անցնելու, այն իրականացնելու կամ ծառայությունից ազատվելու կապակցությամբ առաջացող իրավահարաբերությունները, հիմքում ունենալով սահմանադրական առանձին նորմերով երաշխավորված ընդհանուր հիմունքներով հանրային ծառայության անցնելու և աշխատանքի ազատ ընտրության իրավունքները, ունեն երկակի կարգավիճակ: Այդ իսկ պատճառով դատական պաշտպանության տեսանկյունից տվյալ հարաբե-

ությունների շրջանակում ծագող տարաձայնությունների լուծման գործընթացում խնդրահարույց է որոշել տվյալ վեճերի առարկայական ընդդատությունը (ենթակայությունը):

Սույն հոդվածով իրականացվող հետազոտման նպատակն է բացահայտել հանրային ծառայության անցնելու, այն իրականացնելու կամ ծառայությունից ազատվելու կապակցությամբ առաջացող իրավահարաբերությունների բնույթը և տվյալ հարաբերությունների շրջանակում ընդունվող անհատական իրավական ակտերի բնույթը:

Նշված նպատակին հասնելու ուղղությամբ սույն աշխատանքում խնդիր է դրվել՝

(i) Դիտարկել 02.05.2024 թվականի օրենսդրական փոփոխությունների արդյունավետությունը,

(ii) բացահայտել արդյո՞ք հանրային ծառայության անցնելու, այն իրականացնելու կամ ծառայությունից ազատվելու կապակցությամբ առաջացող իրավահարաբերություններն ունեն հանրային բնույթ, և արդյո՞ք տվյալ հարաբերությունների շրջանակում ընդունվող անհատական իրավական ակտերը վարչական ակտ են, թե՞ ոչ:

Կատարվող աշխատանքի համար մեթոդաբանական հիմքն են հանդիսացել գիտական ճանաչողությանը հայտնի՝ համեմատաիրավական, համակարգակառուցվածքային, իրավահամեմատական վերլուծական, անալիզ, սինթեզ և այլ մեթոդները:

Հիմնական հետազոտություն

Անձի խախտված իրավունքների պաշտպանության ամենաարդյունավետ միջոցը դատական պաշտպանությունն է: Դրան համապատասխան՝ ՀՀ Սահմանադրության¹ 61-րդ հոդվածը յուրաքանչյուրին վերապահում է իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք: Դատական պաշտպանության իրավունքի իրացման առաջնային նախադրյալն օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անկողմնակալ դատարան դիմելու իրավունքն է: Ընդ որում, չնայած այն հանգամանքին, որ ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածը, որպես դատական պաշտպանության իրավունքի իրացման երաշխիք, չի նախատեսում «օրենքի հիման վրա ստեղծված դատարան դիմելու իրավունքը», սակայն այն իր ամրագրումն է ստացել ինչպես մի շարք հիմնարար միջազգային իրավական ակտերում (օրինակ՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի² 6-րդ հոդվածում, «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի³ 14-րդ հոդվածում), այնպես էլ «Դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի⁴ 8-րդ հոդվածում:

Դատական պաշտպանության իրավունքի իրացման տեսանկյունից խիստ արժևորվում են ընդդատության կանոնները: Այս առիթով ՀՀ Սահմանադրական դատարանն իր որոշումներից մեկում արձանագրել է, որ դատական պաշտպանության իրավունքի բաղկացուցիչ տարրն է հանդիսանում անձի՝ այն դատարանում իր գործի քննության իրավունքը, որի ընդդատությանն օրենքով հանձնված է տվյալ գործը⁵: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկան, իր հերթին, ցույց է տալիս, որ վերջինս Կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված «օրենքի հիման վրա ստեղծված դատարանի» բաղկացուցիչ տարրն է

¹ Ընդունվել է 06.12.2015 թ., ուժի մեջ է մտել 22.12.2015 թ., ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում Հոդ. 1118:

² Ընդունվել է 04.11.1950 թ., ՀՀՊՏ 2002.06.05/17(192) Հոդ. 367:

Այսպիսով, հանրային իրավունքի իրավաբանական անձանց համակարգի մեջ մտնում են նաև ՀՀ մունիցիպալ կազմավորումները: Պետք է նշել, որ չնայած դրանցից որոշներն արդեն իսկ օրենսդրության մակարդակով սահմանված են որպես այդպիսին, այնուամենայնիվ անորոշ է՝ ինչու հանրային իրավունքի իրավաբանական անձի կարգավիճակ չի տրվել մարզերին: Մարզը ՀՀ-ում համարվում է վարչատարածքային բաժանման կարևորագույն միավորներից մեկը³³ և այս առումով պետք է ընդգծել գործող օրենսդրության թերությունը առ այն, որ մարզը չի դիտվում որպես հանրային իրավունքի իրավաբանական անձ: Մարզի՝ իրավունքի սուբյեկտ չհանդիսանալու խնդիրն ընդգծվել է նաև պրոֆեսոր Տ. Բարսեղյանի կողմից, ըստ որի՝ ներկայում մարզը չի հանդիսանում քաղաքացիական իրավունքի սուբյեկտ և չհանդիսանալով անօրինական մասնակցում է քաղաքացիական շրջանառությանը³⁴: Չնայած մարզի՝ որպես հանրային իրավունքի իրավաբանական անձի, ճանաչման անհրաժեշտությանը, այն իր իրացումը չի գտել ոչ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում, ոչ «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքում: Կարծում ենք՝ մարզին տալով հանրային իրավունքի իրավաբանական անձի կարգավիճակ՝ պետք է սահմանել, որ մարզը իրավունքներ և պարտականություններ է ձեռք բերում իր մարմինների միջոցով, իսկ որպես մարզի մարմին պետք է սահմանվի մարզպետը, անհրաժեշտության դեպքում նաև գլխավոր քարտուղարը:

Ինչ վերաբերում է մունիցիպալ կազմավորումների մարմիններին, ապա, կարծում ենք, պետության համանմանությամբ նրանք ընդամենը ներկայացնում են մունիցիպալ կազմավորումներին և նրանց առածին իրավաբանական անձի կարգավիճակ անհրաժեշտ չէ:

Եզրակացություն

Այսպիսով, ՀՀ օրենսդրության մեջ հանրային իրավունքի իրավաբանական անձանց կատեգորիայի դե յուրե ամրագրումը պետք է հանգեցնի նաև նրանց տեսակների առավել ամբողջական սահմանմանը, որի տարատեսակ, ըստ մեզ, պետք է հանդիսանա՝

1) **Պետությունը**, քանի որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 128-րդ հոդվածից բխում է, որ իրավաբանական անձանց վերաբերող իրավական նորմերի սուբսիդիար կիրառելիությունը,

³² Տե՛ս Հայաստանի Հանրապետության սահմանադրության մեկնաբանություններ, Իրավունք, 2010, էջ 1010, 1015:

³³ ՀՀ Սահմանադրության (06.12.2015թ.) 121 հոդվածը սահմանում է՝ Հայաստանի Հանրապետության վարչատարածքային միավորներն են մարզերը և համայնքները:

³⁴ Տե՛ս *Բարսեղյան Տ.*, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական գործող օրենսգրքի ներկա վիճակը և կատարելագործման հեռանկարները, Երևան, 2013, էջ 61:

որը թույլատրելի է միայն որոշակի դեպքերում, ծառայում է որպես օրենսդրական պահանջ որպես քննարկվող սուբյեկտների նույնականացման անհնարություն՝ պահանջելով իրավա-կիրառողից նրանց միջև սկզբունքային տարբերությունների հաստատում, որի կառուցակարգը պետք է լինի հենց հանրային իրավունքի իրավաբանական անձը: Ընդ որում՝ հանրային իրավունքի իրավաբանական անձի կարգավիճակ չի կարող տրվել պետական մարմիններին:

2) **Վարչատարածքային միավորները.** ճիշտ է դրանցից որոշները (համայնք և միջհամայնքային միավորում) արդեն իսկ օրենսդրության մակարդակով սահմանված են որպես այդպիսին, սակայն համանման կարգավիճակ պետք է վերապահվի նաև մարզերին, քանի որ մարզը ՀՀ-ում համարվում է վարչատարածքային բաժանման կարևորագույն միավորներից մեկը և ներկայում վերջինս, չհանդիսանալով քաղաքացիական իրավունքի սուբյեկտ, անօրինական մասնակցում է քաղաքացիական շրջանառությանը:

Ամփոփագիր: ՀՀ օրենսդրության մեջ ամրագրված լինելով հանրային իրավունքի իրավաբանական անձանց կատեգորիան՝ այդպիսի կարգավիճակ է վերապահված միայն համայնքներին և միջհամայնքային միավորումներին:

Թեմայի արդիականությունը հիմնավորվում է նրանով, որ ՀՀ օրենսդրության մեջ հանրային իրավունքի իրավաբանական անձանց կատեգորիայի դե յուրե ամրագրումը պետք է հանգեցնի նաև նրանց տեսակների առավել ամբողջական սահմանմանը: Հիմք ընդունելով ՀՀ-ում և արտասահմանում գործող իրավակարգավորումները և մի շարք իրավաբան-գիտնականների աշխատությունները, հիմնավորվել է, որ թեև ՀՀ-ում պետությունը և համայնքները ներկայում դիտարկվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի հատուկ սուբյեկտ, սակայն, քաղաքացիական իրավունքի սուբյեկտների այլ «երրորդ տարատեսակ», բացի ֆիզիկական և իրավաբանական անձանցից, գոյություն ունենալ չի կարող, այն պատճառով, որ իրավաբանական անձանց վերաբերող իրավական նորմերի սուբսիդիար կիրառելիությունը, որը թույլատրելի է միայն որոշակի դեպքերում, ծառայում է որպես օրենսդրական պահանջ, որպես քննարկվող սուբյեկտների նույնականացման անհնարություն՝ պահանջելով իրավակիրառողից նրանց միջև սկզբունքային տարբերությունների հաստատում, որի կառուցակարգը պետք է լինի հենց հանրային իրավունքի իրավաբանական անձը, որպիսի մոտեցումը որդեգրել են ռոմանոգերմանական իարվունքի համակարգի գրեթե բոլոր երկրները, որտեղ առկա է նշված կատեգորիան: Հետևաբար անհրաժեշտ է ՀՀ քաղաքացիական օրենսգրքում առանձնացնել հանրային իրավունքի իրավաբանական անձանց տեսակները և սահմանել, որ այդպիսիք են հանդիսանում պետությունը և վարչատարածքային միավորները՝ համայնք, միջհամայնքային միավորում և մարզ:

Annotation. Despite the fact that the legislation of the Republic of Armenia enshrines the category of legal entities of public law, only communities and inter-community associations have such a status.

The relevance of the topic is due to the fact that the legal consolidation of the category of legal entities of public law in the legislation of the Republic of Armenia should also lead to a more complete definition of their types. Based on the legal norms in force in the Republic of Armenia and abroad and the works of a number of legal scholars, it is substantiated that although in the Republic of Armenia the state and communities are currently considered special subjects of the Civil Code of the Republic of Armenia, there can be no other “third” subjects of civil law, except for individuals and legal entities, since the subsidiary applicability of legal norms in relation to legal entities, permissible only in certain cases, acts as a legislative requirement as the impossibility of identifying the subjects in question, requiring the law enforcement officer to establish fundamental differences between them, the structure of which should be the legal entity of public law itself, which is accepted in almost all countries of the Romano-Germanic legal system, where this category exists. Therefore, it is necessary to distinguish between the types of legal entities of public law in the Civil Code of the Republic of Armenia and establish that these are the state and administrative-territorial units: community, inter-community association and region.

Аннотация. Несмотря на то, что в законодательстве Республики Армения закреплена категория юридических лиц публичного права, такой статус имеют только общины и межобщинные объединения.

Актуальность темы данного исследования обусловлена тем, что юридическое закрепление в законодательстве Республики Армения категории юридических лиц публичного права должно привести также к более полному определению их видов. На основе действующих в Республике Армения и за рубежом правовых норм и трудов ряда ученых-юристов обосновано, что несмотря на то, что в Республике Армения государство и общины в настоящее время считаются особыми субъектами Гражданского кодекса Республики Армения, иных, «третьих», субъектов гражданского права, кроме физических и юридических лиц, быть не может, поскольку субсидиарная применимость правовых норм в отношении юридических лиц, допустимая лишь в определенных случаях, выступает законодательным требованием как невозможность идентификации рассматриваемых субъектов, требуя от правоприменителя установления принципиальных различий между ними, структурой которых должно быть само юридическое лицо публичного права, что принято практически во всех странах романо-германской правовой системы, где указанная категория существует. Поэтому в Гражданском кодексе Республики Армения необходимо разграничить виды юридических лиц публичного права и установить, что таковыми являются государство и административно-территориальные единицы: сообщество, межобщинное объединение и регион.

Բանալի բառեր՝ իրավաբանական անձ, հանրային իրավունքի իրավաբանական անձ, պետություն, համայնք, տեսակ, իրավաբանական անձանց տեսակ:

Keywords: legal person, legal entity of public law, state, community, types, type of legal entities.

Ключевые слова: юридическое лицо, юридическое лицо публичного права, государство, сообщество, вид, вид юридического лица.

Օգտագործված գրականության ցանկ

1. Բարսեղյան Տ., Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, Առաջին մաս, Երևանի համալսարանի իրատարակչություն, Երևան 2009, էջ 166:
2. Բարսեղյան Տ., Հայաստանի Հանրապետության քաղաքացիական գործող օրենսգրքի ներկա վիճակը և կատարելագործման հեռանկարները, Երևան 2013 էջ 61:
3. Еллинек Г., Общее учение о государстве. Под ред.: С. Гессен. – 2-е изд., испр. и доп. СПб., Изд-во Н. К. Мартынов, Санкт-Петербург 1908г. էջ 123:
4. Garrido Falla Fernando Tratado de Derecho Administrative. Vol. 1. Madrid.: Instituto de Estudios Politicos. 1976 էջ 353:
5. Ястребов О., Юридическое лицо публичного права: сравнительно-правовое исследование: диссертация на соискание ученой степени доктора юридических наук. Москва 2010г. 262-263:
6. Кокошкин Ф., Русское государственное право. Выпуск 2. Изд. О-ва взаимопомощи Студентов-Юристов Моск. У-та Москва 1908г. էջ 59:
7. Эсмен Н., Общие основания конституционного права. Изд. О. Поповой, Москва 1898г. էջ 7:
8. Ильин И., Теория права и государства. Под ред. и с предисл.: В. Томсинова, Издательство Зерцало, Москва 2003г. էջ 45:
9. Ильин И., Теория права и государства. «Основы законоведения: общедоступные очерки», Москва 1915г. էջ 161 -162, 166:
10. Гражданское право: учебник / под ред. Ю. Толстого, А. Сергеева. Изд-во Наука, Москва 1996г. էջ 154,
11. Братусь С., Субъекты гражданского права. Изд-во Госюриздат, Москва 1950г. էջ 241,
12. Чантурия Л., Юридические лица публичного права: их место в гражданском праве и особенности правового

регулирования, Государство и право, Изд-во Наука Москва 2008г. № 3 էջ 38-45:

13. Чиркин В., Субъекты конституционного права в частноправовых отношениях// Журнал российского права. 2007 № 2 էջ 153:

14. Чиркин В., Юридическое лицо публичного права. Монография, Изд-во Норма, Москва 2007г. 108- 109:

15. Freitas do Amaral, Diogo Curso de direito administrativo. Vol. 1. Coimbra: Almedina. 1993 էջ 201 – 202:

16. Пушкин А., Ленин об экономической роли Советского государства и вопрос о гражданской правосубъектности государства // Вопросы государства и права: Сб. статей. М.: Юрид. лит., 1970г. էջ 40:

17. Брагинский М., Участие Советского государства в гражданских правоотношениях. Изд-во Юрид. лит. Москва 1981г. էջ 21, 46. 64, 145, Гражданское право России. Курс лекций. Ч. 1 / Под ред. О. Садикова, Изд-во Юрид. лит. Москва 1996г. էջ 114,

18. Головизнин А., Некоторые вопросы участия в гражданском обороте органов государственной власти (местного самоуправления) // Хозяйство и право. 1999г. № 6 էջ 62–63:

19. Новый Гражданский кодекс Российской Федерации. Часть первая. Краткий научно-практический комментарий / Под ред. В. Гапеева, С. Зинченко, А. Лукьянцева. Изд-во Феникс, Ростов н/Д, 1995г. էջ 158–159:

20. Талапина Э., Административное право Франции сегодня // Ежегодник сравнительного правоведения. Изд-во Норма, Москва, 2004г. էջ 139 -140,

21. Кузык М., Симачев Ю., Государственные корпорации в России: создание и эволюция в 2007-2012 годах Москва 2013г. էջ 26:

22. Кутафин О., Субъекты конституционного права РФ как юридические и приравненные к ним лица. Избранные труды в 7 т. Т. 6. Изд-во Проспект, Москва 2011г. էջ 175:

23. Ромашко Е., Государственные органы со статусом юридического лица как субъекты конституционно-правовых отношений: дис. ... канд. юрид. наук. Архангельск, 2006г. էջ 74 – 75:

24. Головизнин А., Некоторые вопросы участия в гражданском обороте органов государственной власти (местного самоуправления) // Хозяйство и право. 1999. № 6. էջ 66:

25. Рудакова В., Гражданско-правовой статус публичных юридических лиц, диссертация на соискание ученой степени кандидата юридических наук. Москва 2014г. էջ 66:

26. Болдырев В., Конструкция юридического лица собственника: опыт цивилистического исследования. Изд-во Статут, Москва 2012г. էջ 90 – 96, Комментарий к Гражданскому кодексу. Части первой (постатейный) / отв. ред. О. Садикова Москва 2005г. էջ 352:

Ամիրխանյան Ս. - ՀՀ գլխավոր հարկադիր կատարող, Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ, էլիասցե՝ s.amirkhanyan777@gmail.com:

Ներկայացվել է խմբագրություն 28.03.2025 թ., տրվել է գրախոսության 28.03.2025 թ., երաշխավորվել է Երևանի պետական համալսարանի քաղաքացիական իրավունքի ամբիոնի պրոֆեսոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Հայկյանցի կողմից, ընդունվել է տպագրության 22.04.2025 թ.:



ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ/CRIMINAL LAW/УГОЛОВНОЕ ПРАВО

<https://doi.org/10.59546/18290744-2025.1-3-70>

ԱՐՄԱՆ ԲԱԲԱԽԱՆՅԱՆ

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի դատավորի օգնական,
ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի դասախոս

ARMAN BABAKHANYAN

*Assistant to the Judge of the Criminal Chamber of the Cassation Court of the RA,
Lecturer at YSU Chair of Criminal Law*

АРМАН БАБАХАНЫАН

*Помощник Судьи Уголовной палаты Кассационного суда РА,
Преподаватель кафедры уголовного права ЕГУ*

**ԳՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՂԵԿԱՎԱՐ ԿԱԶՄԻ ԴԵՄ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ
ՊԱՅՔԱՐԻ ՈՐՈՇ ՀԻՄՆԱՀԱՐՅԵՐ**

**SOME KEY ISSUES IN THE CRIMINAL-LEGAL FIGHT AGAINST THE
LEADERSHIP OF THE THIEVES' WORLD**

**НЕКОТОРЫЕ КЛЮЧЕВЫЕ ВОПРОСЫ УГОЛОВНО-ПРАВОВОЙ
БОРЬБЫ ПРОТИВ РУКОВОДСТВА ВОРОВСКОГО МИРА**

Ներածություն

Հայաստանի Հանրապետության գործող քրեական օրենսգրքի¹ (այսուհետ նաև՝ գործող Օրենսգիրք) 323-րդ հոդվածը քրեական պատասխանատվություն է նախատեսում քրեական ենթամշակույթ կրող խմբավորում ստեղծելու կամ ղեկավարելու համար, իսկ նույն հոդվածի 3-րդ մասով սահմանվում է քրեական ենթամշակույթ կրող խմբավորման հասկացությունը:

Ինչպես արդեն նշվել է, «քրեական ենթամշակույթ կրող խմբավորման» փոխարեն անհրաժեշտ է կիրառել «գողական աշխարհ» եզրույթը: Միևնույն ժամանակ, բացակայում է գողական աշխարհի ստեղծելը քրեականացնելու անհրաժեշտությունը, հետևաբար՝ գործող Օրենսգրքի 323-րդ հոդվածի 1-ին մասը՝ գողական աշխարհը ստեղծելու մասով, անհրաժեշտ է ուժը կորցրած ճանաչել²:

¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք, ՀՕ-199-Ն, ընդունվել է 2021 թվականի մայիսի 5-ին, ուժի մեջ է մտել 2022 թվականի հուլիսի 1-ին, Միասնական կայք 2021.05.17-2021.05.30, Պաշտոնական հրապարակման օրը 27.05.2021:

² Տե՛ս *Բաբախանյան Ա.*, Քրեական ենթամշակույթ կրող խմբավորման (գողական աշխարհի) հասկացության և գողական աշխարհի ստեղծելը քրեականացնելու որոշ հիմնահարցեր, Պետություն և իրավունք, թիվ 2 (99), 2024,

Սույն հոդվածում անդրադարձ է կատարվել գողական աշխարհը ղեկավարելու հիմնական հանցակազմի օբյեկտին, օբյեկտիվ կողմին, գործող Օրենսգրքի 323-րդ հոդվածում նախատեսված հանցակազմի բացասական (նեգատիվ) հատկանիշին, ինչպես նաև այդ հոդվածում խրախուսական հատուկ նորմ նախատեսելու նպատակահարմարության հարցին:

Հիմնական հետազոտություն

Գործող Օրենսգրքի 323-րդ հոդվածով նախատեսված հիմնական հանցակազմի օբյեկտիվ հատկանիշների քննարկումն անհրաժեշտ է սկսել՝ քննարկվող հանցակազմի օբյեկտը որոշելով:

Ըստ Վ. Կրասնոպետևի՝ հանցագործության օբյեկտն այն է, ինչի նկատմամբ ոտնձգում է հանցագործությունը, ինչին հանցագործությունը վնաս է պատճառում կամ վտանգի է ենթարկում (կարող է վնաս պատճառել)³:

Իսկ ըստ Ե. Դրոժժինայի՝ որպես հասարակական հարաբերությունների կարգավորիչ, դիտարկելիս տրամաբանական է ենթադրել, որ հանցագործության օբյեկտը հենց հասարակական հարաբերություններն են⁴:

Ներկայում քրեական իրավունքի տեսության մեջ համընդհանուր ճանաչում է ստացել հանցագործության օբյեկտի քառանդամ դասակարգումը: Ըստ այդմ՝ առանձնացվում են հանցագործությունների ընդհանուր օբյեկտը, սեռային օբյեկտը, տեսակային օբյեկտը և անմիջական օբյեկտը⁵:

Գործող Օրենսգրքի 323-րդ հոդվածով նախատեսված հանցակազմը նախատեսված է գործող Օրենսգրքի՝ «Հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունները» բաժնի «Հասարակական անվտանգության դեմ ուղղված ընդհանուր բնույթի հանցագործությունները» գլխում: Հետևաբար, քննարկվող հիմնական հանցակազմի սեռային և տեսակային օբյեկտները համընկնում են և որպես այդպիսին հանդես են գալիս հասարակական անվտանգության պաշտպանությանն ուղղված հասարակական հարաբերությունները, ինչի էությունը քրեական իրավունքի տեսության մեջ բացահայտված է⁶, հետևաբար՝ դրան կրկին անդրադառնալու անհրաժեշտությունը բացակայում է:

Անդրադառնալով քննարկվող հիմնական հանցակազմի անմիջական օբյեկտին՝ հարկ է նշել, որ որպես դրա հիմնական անմիջական օբյեկտ հանդես են գալիս անձանց, հասարակության և պետության անվտանգության պաշտպանությանն ուղղված հասարակական հարաբերությունները, իսկ որպես ֆակուլտատիվ լրացուցիչ անմիջական օբյեկտ կարող են հանդես գալ կյանքի, առողջության, անձնական ազատության, պատվի, արժանապատվության, ֆիզիկական, հոգեկան անձեռնմխելիության կամ սեփականության պաշտպանությանն ուղղված կամ այլ հասարակական հարաբերությունները՝ հաշվի առնելով հայաստանյան հա-

Երևան, էջեր 159-160:

³ Տե՛ս Краснопеев В. А., Объект преступления в российском уголовном праве (теоретико-правовой анализ), дисс. на соиск. учен. степени канд. юрид. наук, Кисловодск, 2001, էջ 131, (հասանելի է <https://www.twirpx.com/file/1533079/> հղումով 02.11.2024 թ. դրությամբ):

⁴ Տե՛ս Дрождина Е. А., Общественная безопасность как объект преступления, дисс. на соиск. учен. степени канд. юрид. наук, Москва, 2015, էջ 71, (հասանելի է <https://www.twirpx.com/file/1820504/> հղումով 02.11.2024թ. դրությամբ):

⁵ Առավել մանրամասն տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք, Ընդհանուր մաս, դասագիրք բուհերի համար, վեցերորդ հրատ.՝ փոփոխ. և լրաց., խմբ.՝ Ղազինյան Գ. Ս., Երևան, ԵՊՀ հրատ., 2012, էջեր 116-120:

⁶ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք, Հատուկ մաս, դասագիրք բուհերի համար, վեցերորդ հրատ.՝ փոփոխ. և լրաց., խմբ.՝ Ղազինյան Գ. Ս., Երևան, ԵՊՀ հրատ., 2012, էջ 489, Дрождина Е. А., նշված աշխ., էջեր 94-134:

սարակության վրա քրեական ենթամշակույթի ազդեցությունը, դրա դրսևորումների բազմազանությունը և տարածվածությունը⁷:

Վերը նշված դիրքորոշումները վերաբերելի մասով կիրառելի են նաև գործող Օրենսգրքի 322-րդ հոդվածով (քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ տալը կամ ստանալը կամ պահպանելը)⁸, 324-րդ հոդվածով (քրեական ենթամշակույթ կրող խմբավորմանը մասնակցելը կամ ներգրավելը), 325-րդ հոդվածով (քրեական ենթամշակույթ կրող խմբավորման մասնակցին կամ քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող անձին դիմելը) հանցակազմերի նկատմամբ⁹: Վերոգրյալ հետևությունների պայմաններում՝ չենք կարող համաձայնվել իրավակիրառ պրակտիկայում արտահայտված այն տեսակետի հետ, որ միայն քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ տալը կամ ստանալը կամ պահպանելը, այսինքն՝ ինքնին այսպես կոչված «օրենքով գողի» կարգավիճակ տալը կամ ստանալը կամ պահպանելը (եթե այն հանցագործության այլ հատկանիշներ չի պարունակում կամ չի ուղեկցվում այլ հանցագործությունների կատարմամբ) չի կարող պետության կողմից պաշտպանվող որևէ հասարակական հարաբերության կամ այդ հարաբերության տարրերից որևէ մեկին փաստապատճառել, քանի որ օբյեկտիվորեն այդպիսի հասարակական հարաբերություններ, և հետևաբար՝ տարրեր գոյություն չունեն և չեն էլ կարող ունենալ: Օբյեկտիվորեն հնարավոր չէ որոշել, թե այս հանցագործությունը կոնկրետ ինչ հասարակական հարաբերությունների շրջանակի դեմ է ունեցվում, քանի որ գոյություն չունեն այնպիսի արժեքներ, որոնց կարող է փաստապատճառվել միայն այն փաստի ուժով, որ որևէ մեկը «օրենքով գողի» կարգավիճակ է ստացել կամ նման կարգավիճակ է տվել կամ պահպանել¹⁰:

Հաջորդիվ, հարկ ենք համարում անդրադառնալ գողական աշխարհը ղեկավարելու հանցակազմի օբյեկտիվ կողմին:

Հանցագործության օբյեկտիվ կողմն իրենից ներկայացնում է պաշտպանվող քրեաիրավական հարաբերության նկատմամբ հանրորեն վտանգավոր ոտնձգության արտաքին ակտը: Հանցագործության օբյեկտիվ կողմն իրենից ներկայացնում է սուբյեկտի հանցավոր վարքագծի արտաքին հատկանիշների համակցություն, որը արտահայտվում է անմիջականորեն արարքում (գործողություն կամ անգործություն), հետևանքներում և դրանց միջև պատճառահետևանքային կապում, ինչպես նաև դա կատարելու ժամանակում, տեղում, իրադրությու-

⁷ Տե՛ս *Քաբախանյան Ա.*, Քրեական ենթամշակույթի տարածման միտումները Հայաստանի Հանրապետությունում, Դատական իշխանություն, հուլիս-սեպտեմբեր 2024 7-9 (301-303), էջեր 51-59, (հասանելի է http://ajra.am/images/files/Judicial_Power/2024/5_Babaxanyan_A.pdf հղումով 10.02.2025թ. դրությամբ):

⁸ Գործող Օրենսգրքի 322-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի օբյեկտի առնչությամբ տե՛ս նաև *Արշակյան Մ. Ս.*, Քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ տալու կամ ստանալու կամ պահպանելու քրեաիրավական բնութագիրը, իրավ. բակալավրի որակավորման աստիճանի հայցման համար ավարտական աշխատանք, Երևան, 2024, էջեր 27-28:

⁹ Հարկ է նշել, որ գործող Օրենսգրքի 324-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հիմնական հանցակազմի (քրեական ենթամշակույթ կրող խմբավորմանը բռնության, սպառնալիքի կամ հարկադրանքի այլ եղանակով ներգրավելը) դեպքում կյանքի, առողջության, անձնական ազատության, պատվի, արժանապատվության, ֆիզիկական կամ հոգեկան անձեռնմխելիության պաշտպանությանն ուղղված հասարակական հարաբերությունները հանդես են գալիս որպես պարտադիր լրացուցիչ անմիջական օբյեկտ, իսկ գործող Օրենսգրքի 325-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի դեպքում որպես պարտադիր լրացուցիչ անմիջական օբյեկտ հանդես են գալիս նյութական կամ ոչ նյութական օգուտ կամ այլ առավելություն ստանալու կամ իրական կամ ենթադրյալ իրավունքն իրականացնելու սահմանված կարգի պաշտպանությանն ուղղված հասարակական հարաբերությունները:

¹⁰ Տե՛ս Երևան քաղաքի առաջին անդամի ընդհանուր իրավասության դատարանի՝ թիվ ԵԴ/1369/01/20 քրեական գործով «Սահմանադրական դատարան դիմելու մասին» 2021 թվականի հունիսի 21-ի որոշումը (հասանելի է https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=45880421204095622 հղումով 02.11.2024 թ. դրությամբ):

նում, եղանակում, գործիքներում և միջոցներում¹¹:

Բոլոր հանցակազմերի համար որպես պարտադիր հատկանիշ կարող է հանդես գալ միայն հանրորեն վտանգավոր արարքը (գործողությունը կամ անգործությունը)¹² (հանցանք է համարվում գործող Օրենսգրքով նախատեսված, պատժի սպառնալիքով արգելված, հանցագործության սուբյեկտի կողմից մեղավորությամբ կատարված արարքը (գործող Օրենսգրքի 16-րդ հոդվածի 1-ին մաս), իսկ գործող Օրենսգրքով նախատեսված արարք է համարվում պատժի սպառնալիքով արգելված գործողությունը կամ անգործությունը (գործող Օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մաս)):

Հանցագործության օբյեկտիվ կողմի մյուս հատկանիշները՝ հանցավոր հետևանքները, պատճառական կապը հանցավոր արարքի և հետևանքների միջև, ինչպես նաև հանցագործության եղանակը, տեղը, ժամանակը, իրադրությունը, գործիքներն ու միջոցները ֆակուլտատիվ են (ոչ պարտադիր): Այսինքն՝ որոշ հանցակազմերի համար վերջիններս կարող են հանդես գալ որպես հատկանիշներ, իսկ մյուսների համար՝ ոչ¹³:

Անդրադառնալով գործող Օրենսգրքի 323-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի օբյեկտիվ կողմին՝ պետք է նշել, որ ըստ Կ. Քիշարյանի՝ քրեական ենթամշակույթ կրող խմբավորում ղեկավարելը կարող է դրսևորվել այդպիսի խմբավորման կողմից հետապնդվող նպատակների իրականացման համար հրահանգներ տալով, կարգապահությանը հետևելով, «օբշակի» գումարների հավաքագրումը կազմակերպելով, այդ գումարը տնօրինելով, իսկ «երկրորդ ցուցակի» միջոցով՝ նաև այդ գումարների տնօրինումը վերահսկելով:

Ընդ որում, ղեկավարելը կարող է դրսևորվել երկու մակարդակով՝

- քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող անձանց կողմից ղեկավարում,

- պայմանականորեն միջին օղակի կողմից ղեկավարում, որը կարող է դրսևորվել հատկապես բարձրագույն կարգավիճակ ունեցող անձանց հանձնարարություններն իրենցից ստորին օղակներին փոխանցելով և դրանց կատարումը վերահսկելով, կարգուկանոնին հետևելով¹⁴:

Վերը մեջբերված տեսակետները վերաբերում են գողական աշխարհի բաղկացուցիչ մասերին՝ քրեական ենթամշակույթ կրող խմբավորումներին և չեն բացահայտում գողական աշխարհը ղեկավարելու էությունը: Հետևաբար, գողական աշխարհը ղեկավարելու վերաբերյալ պատկերացում կազմելու նպատակով՝ անհրաժեշտ է հիմնվել քննարկվող հանցակազմի հետ ընդհանուր բնութագրիչ գծեր ունեցող հանցավոր կազմակերպություն (հանցավոր համագործակցություն) ղեկավարելու վերաբերյալ արտահայտված մոտեցումների¹⁵ վրա:

¹¹ Տե՛ս *Виденькина Ж. В.*, Уголовная ответственность за организацию преступного сообщества или участие в нем, дисс. на соиск. учен. степени канд. юрид. наук, Москва, 2012, էջեր 97-98, (հասանելի է <https://www.twirpx.com/file/2106501/> հղումով 02.11.2024 թ. դրությամբ):

¹² Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք, Ընդհանուր մաս, դասագիրք բուհերի համար, վեցերորդ հրատ.՝ փոփոխ. և լրաց., խմբ.՝ **Ղազինյան Գ.Ս.**, Երևան, ԵՊՀ հրատ., 2012, էջ 128:

¹³ Տե՛ս նույն տեղում, էջ 128:

¹⁴ Տե՛ս *Քիշարյան Կ. Ա.*, Քրեական ենթամշակույթին առնչվող արարքների քրեաիրավական բնութագիրը (գիտագործական մեկնաբանություններ), գիտ. խմբ.՝ *Առաքելյան Ս. Վ.*, Երևան, Արդարադատության ակադեմիա, 2020, էջ 32, (հասանելի է <https://aoj.am/storage/library/academy-publications/cA1p3cXVvJQorU9WKQ9tqumypZNDI64fq9C5IzEu.pdf> հղումով 02.11.2024թ. դրությամբ):

¹⁵ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք, Հատուկ մաս, դասագիրք բուհերի համար, վեցերորդ հրատ.՝ փոփոխ. և լրաց., խմբ.՝ *Ղազինյան Գ. Ս.*, Երևան, ԵՊՀ հրատ., 2012, էջ 514, Постановление Пленума Верховного Суда Российской Федерации от 10 июня 2010 г. N 12 «О судебной практике рассмотрения уголовных дел об организации преступного сообщества (преступной организации) или участия в нем (ней)», 10-րդ կետ, (հասանելի է https://www.consultant.ru/document/cons_doc_LAW_101362/ հղումով 02.11.2024 թ. դրությամբ), *Виденькина Ж. В.*,

Արդյունքում, հանգում ենք հետևության, որ որպես գողական աշխարհի ղեկավարում պետք է դիտարկել գողական աշխարհի, դրա առանձին խմբավորումների, առանձին ներկայացուցիչների և այլ անձանց նկատմամբ կազմակերպական կամ կառավարչական գործառույթների իրականացումը՝ ինչպես գողական աշխարհի, դրա առանձին խմբավորումների գործունեությունն ապահովելիս, այնպես էլ գողական աշխարհի նպատակ հանդիսացող կոնկրետ արարքներ կատարելիս:

Այդպիսի ղեկավարումը կարող է դրսևորվել գործունեության ընդհանուր պլանները մշակելով, նոր անդամներ հավաքագրելով, գողական աշխարհի անդամների միջև դերերի բաշխմամբ, գողական աշխարհի կամ դրա առանձին մասերի վերաբերյալ որոշումներ կայացնելով և համապատասխան ցուցումներ տալով, նյութատեխնիկական ապահովումը կազմակերպելով, գողական աշխարհի գործունեությունից ստացած օգուտները բաշխելով, ուսնագության օբյեկտներ ընտրելով, գողական աշխարհի նպատակ հանդիսացող կոնկրետ արարքներ կատարելու և դրանք քողարկելու միջոցներ մշակելով, գաղտնիության ապահովմանն ուղղված միջոցներ կազմակերպելով, վարքագծի նորմերը որոշելով, այդ թվում՝ արգելքներ սահմանելով, կարգապահությանը հետևելով, գողական աշխարհի անդամների միջև հիերարխիայի պահպանումն ապահովելով, խրախուսանքի և տույժի միջոցներ կիրառելով, հանրային իշխանության, այդ թվում նաև՝ իրավապահ մարմինների հետ կապեր հաստատելով ու պահպանելով կամ այլ ձևերով:

Գողական աշխարհի ղեկավարումը կարող է իրականացվել ինչպես միանձնյա, այնպես էլ երկու կամ ավելի անձանց կողմից, որոնք միավորվել են համատեղ ղեկավարման համար (ամբողջ գողական աշխարհի ղեկավարները և դրա առանձին խմբավորումների ղեկավարները):

Գողական աշխարհը ղեկավարելն ավարտված է համարվում անձի կողմից կազմակերպական կամ կառավարչական գործառույթներից բխող արարք կատարելու պահից՝ անկախ հետևանքներ վրա հասնելու հանգամանքից:

Հարկ է նշել, որ արարքը գործող Օրենսգրքի 323-րդ հոդվածով որակելու համար անհրաժեշտ է, որպեսզի բացակայեն նույն օրենսգրքի 318-րդ (հանցավոր կազմակերպություն ստեղծելը կամ ղեկավարելը) կամ 320-րդ (օրենքով չնախատեսված զինված միավորում ստեղծելը կամ ղեկավարելը) հոդվածով նախատեսված հանցանքների հատկանիշները: Այլ կերպ, գործող Օրենսգրքի 323-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված է հանցակազմի բացասական (նեգատիվ) հատկանիշ:

Հանցակազմի բացասական (նեգատիվ) հատկանիշի վերաբերյալ արտահայտված դիրքորոշումների¹⁶ լույսի ներքո՝ անդրադառնալով գործող Օրենսգրքի 323-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի բացասական (նեգատիվ) հատկանիշին՝ պետք է փաստել, որ քննարկվող բացասական հատկանիշը նախատեսելով՝ օրենսդիրը նպատակ է հետապնդել բացառել

նշված աշխ., էջեր 103-104, *Якушева Т. В.*, Законодательная регламентация и практика привлечения к уголовной ответственности за организацию преступного сообщества (преступной организации), дисс. на соиск. учен. степени канд. юрид. наук, Москва, 2016, էջեր 88-89, (հասանելի է <https://www.twirpx.com/file/1984128/> հղումով 02.11.2024թ. դրությամբ):

¹⁶ Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի՝ Արարատ Առաքելյանի և մյուսների գործով 2024 թվականի օգոստոսի 16-ի թիվ ՏԴ/0181/01/21 որոշման 16-րդ կետը (հասանելի է <https://www.cassationcourt.am/precedent/precedent-single-decision/criminal-case/2513> հղումով 02.11.2024թ. դրությամբ), *Առաքելյան Ս.Վ., Մկրտչյան Պ. Վ.*, Հանցագործությունների որակման հիմնախնդիրները, մենագրություն, Եր., Արդարադատության ակադեմիա, 2020, էջեր 121, 125, (հասանելի է <https://aoj.am/storage/library/academy-publications/tV5CzIND1JZ2pieKvMtuWhsRHU28fXUti2CAZiUN.pdf> հղումով 02.11.2024 թ. դրությամբ):

արարքը գործող Օրենսգրքի 323-րդ հոդվածով նախատեսված հանցակազմով որակելն այն դեպքերում, երբ առկա են հանցավոր կազմակերպություն ստեղծելը կամ ղեկավարելը, օրենքով չնախատեսված զինված միավորում ստեղծելը կամ ղեկավարելը հանցանքների հատկանիշները:

Այլ կերպ՝ արարքը գործող Օրենսգրքի 323-րդ հոդվածում նախատեսված հանցակազմով որակելու համար, փաստորեն, անհրաժեշտ նախապայման է անձի արարքում միաժամանակ գործող Օրենսգրքի 318-րդ և 320-րդ հոդվածներով նախատեսված հանցանքների հատկանիշների բացակայությունը: Հետևաբար, գողական աշխարհը ղեկավարելու դեպքում, երբ նաև առկա են հանցավոր կազմակերպություն ստեղծելու կամ ղեկավարելու, օրենքով չնախատեսված զինված միավորում ստեղծելու կամ ղեկավարելու հանցանքների հատկանիշները, անձի արարքը, հոդվածում առկա բացառության ուժով, ենթակա չէ որակման գործող Օրենսգրքի 323-րդ հոդվածով:

Հարկ է նշել, որ գործող Օրենսգրքի 323-րդ հոդվածով նախատեսված հանցանքների որակման վերոնշյալ կանոնը վերաբերում է իդեալական համակցությունների դեպքերին: Մինչդեռ ժամանակ, չպետք է բացառել գործող Օրենսգրքի 323-րդ և 318-րդ կամ 320-րդ հոդվածներով՝ իրական համակցության կանոններով որակման հնարավորությունը, եթե կատարվող արարքների միջև բացակայում է ներքին սուբյեկտիվ կապը, և դրանք ընդգրկված չեն մեկ միասնական դիտավորության շրջանակներում:

Մինչ գործող Օրենսգրքի 323-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի բացասական (նեգատիվ) հատկանիշին անդրադառնալով՝ հարկ ենք համարում անդրադառնալ քննարկվող հանցակազմի՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով¹⁷ (այսուհետ նաև՝ նախկին Օրենսգիրք) նախատեսված բացասական (նեգատիվ) հատկանիշին:

Այսպես, արարքը նախկին Օրենսգրքի 223.2-րդ (քրեական ենթամշակույթ կրող խմբավորում ստեղծելը կամ ղեկավարելը) հոդվածով կարող էր որակվել՝ նույն օրենսգրքի 222-րդ (բանդիտիզմ) կամ 223-րդ (հանցավոր համագործակցություն ստեղծելը կամ ղեկավարելը կամ հանցավոր համագործակցությանը մասնակցելը) հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշների բացակայության դեպքում:

Նախկին Օրենսգրքի 222-րդ, 223-րդ հոդվածներով և 223.2-րդ հոդվածով նախատեսված հանցակազմերի սանկցիաների համեմատադրական վերլուծությունից բխում է, որ օրենսդիրն իրավացիորեն բացառել էր արարքը նախկին Օրենսգրքի 223.2-րդ հոդվածով որակելու հնարավորությունն այն դեպքում, երբ անձի արարքում առկա էին նաև առավել խիստ պատժվող՝ նախկին Օրենսգրքի 222-րդ և 223-րդ հոդվածներով նախատեսված հանցագործություններից մեկի բոլոր հատկանիշները:

Ինչպես արդեն նշվել է, արարքը գործող Օրենսգրքի 323-րդ հոդվածով որակելու համար անհրաժեշտ է, որպեսզի բացակայեն նույն օրենսգրքի 318-րդ (հանցավոր կազմակերպություն ստեղծելը կամ ղեկավարելը) կամ 320-րդ (օրենքով չնախատեսված զինված միավորում ստեղծելը կամ ղեկավարելը) հոդվածով նախատեսված հանցանքների հատկանիշները:

Պետք է նշել, որ օրենսդիրն իրավացիորեն քննարկվող հանցակազմում նախատեսել է բացասական հատկանիշը՝ գործող Օրենսգրքի 318-րդ հոդվածի մասով:

Այսպես, գործող Օրենսգրքի 318-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը (հան-

¹⁷ Տես Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք, ՀՕ-528-Ն, ընդունվել է 2003 թվականի ապրիլի 18-ին, ուժի մեջ է մտել 2003 թվականի օգոստոսի 1-ին, ուժը կորցրել է 2022 թվականի հուլիսի 1-ին, ՀՀՊՏ 2003.05.02/25(260) Հոդ.407:

ցավոր կազմակերպություն ստեղծելը կամ ղեկավարելը) պատժվում է ազատազրկմամբ՝ ութից տասներկու տարի ժամկետով, իսկ հանցակազմի ծանրացնող հանգամանքների առկայության դեպքում պատժվում է ազատազրկմամբ՝ տասից տասնհինգ տարի ժամկետով:

Գործող Օրենսգրքի 323-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով, իսկ հանցակազմի ծանրացնող հանգամանքների առկայության դեպքում պատժվում է ազատազրկմամբ՝ ութից տասներկու տարի ժամկետով:

Այսպիսով, գործող Օրենսգրքի 318-րդ հոդվածով, որպես կանոն, առավել խիստ պատիժ է նախատեսված, քան գործող Օրենսգրքի 323-րդ հոդվածով: Բացառություն են կազմում այն դեպքերը, երբ անձի արարքը միաժամանակ համապատասխանում է թե՛ գործող Օրենսգրքի 318-րդ հոդվածի 1-ին մասին, և թե՛ գործող Օրենսգրքի 323-րդ հոդվածի 2-րդ մասին, որոնք երկուսն էլ նախատեսում են հավասար պատիժ:

Նման իրավիճակ կարող է առաջանալ այն դեպքում, երբ անձի արարքում առկա է գողական աշխարհը ղեկավարելու այնպիսի ծանրացնող հանգամանք, որպիսին նախատեսված չէ գործող Օրենսգրքի 318-րդ հոդվածի 2-րդ մասում: Օրինակ՝ քրեակատարողական հիմնարկում պահվող անձի կատարած արարքում միաժամանակ առկա են թե՛ գողական աշխարհը ղեկավարելու, և թե՛ հանցավոր կազմակերպություն ղեկավարելու հատկանիշները, այլ կերպ՝ վերջինիս արարքը համապատասխանում է գործող Օրենսգրքի 318-րդ հոդվածի 1-ին մասին և 323-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետին, որոնց համար նախատեսված պատիժը հավասար է:

Առկա են նման իրավիճակների բացառման մի քանի տարբերակ՝

ա) գործող Օրենսգրքի 318-րդ հոդվածի 1-ին մասի սանկցիայի խստացումը,

բ) գործող Օրենսգրքի 323-րդ հոդվածի 2-րդ մասի սանկցիայի մեղմացումը,

գ) գործող Օրենսգրքի 323-րդ հոդվածի 2-րդ մասից այն ծանրացնող հանգամանքների բացառումը, որոնք նախատեսված չեն գործող Օրենսգրքի 318-րդ հոդվածի 2-րդ մասում,

դ) գործող Օրենսգրքի 318-րդ հոդվածի 2-րդ մասում լրացումներ կատարելը և որպես ծանրացնող հանգամանքներ նույն օրենսգրքի 323-րդ հոդվածի 2-րդ մասում նախատեսված բոլոր հանգամանքները նախատեսելը:

Կարծում ենք, առավել նախընտրելի է վերջին տարբերակը: Գործող Օրենսգրքի 323-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերում սահմանված ծանրացնող հանգամանքների նախատեսումը հիմնավորված է, քանի որ դրանց առկայության դեպքում ևս արարքի կատարման հանրային վտանգավորությունն առավել բարձր է: Հետևաբար, առավել նախընտրելի է գործող Օրենսգրքի 318-րդ հոդվածի 2-րդ մասում լրացումներ կատարելը և որպես ծանրացնող հանգամանքներ նույն օրենսգրքի 323-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանված բոլոր հանգամանքները նախատեսելը: Դեռ ավելին, կարծում ենք, գործող Օրենսգրքի 323-րդ հոդվածի 2-րդ մասում նախատեսված ծանրացնող հանգամանքները պետք է նախատեսել նաև գործող Օրենսգրքի 319-321-րդ հոդվածներում նախատեսված, կազմակերպված հանցավորության այլ դրսևորումների դեպքում ևս՝ հաշվի առնելով դրանց առկայության դեպքում արարքի կատարման հանրային վտանգավորության առավել բարձր լինելը և նպատակ հետապնդելով ապահովել այդ իրավանորմների ներդաշնակությունը:

Ամփոփելով վերոգրյալը՝ հարկ է նշել, որ օրենսդիրն իրավացիորեն բացառել է արարքը գործող Օրենսգրքի 323-րդ հոդվածով որակելու հնարավորությունն այն դեպքում, երբ անձի արարքում առկա է գործող Օրենսգրքի 318-րդ հոդվածով նախատեսված հանցագործության բոլոր հատկանիշները:

Մինևնույն ժամանակ, օրենսդիրը բացառել է արարքը գործող Օրենսգրքի 323-րդ հոդվա-

ծով որակելու հնարավորությունը նաև այն դեպքում, երբ անձի արարքում առկա են գործող Օրենսգրքի 320-րդ հոդվածով նախատեսված հանցագործության բոլոր հատկանիշները, ինչպիսի մոտեցումն ընդունելի չէ:

Այսպես, գործող Օրենսգրքի 320-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով, իսկ հանցակազմի ծանրացնող հանգամանքների առկայության դեպքում պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով: Այլ կերպ, գործող Օրենսգրքի 320-րդ հոդվածով նախատեսված արարքները պատժվում են ավելի մեղմ, քան գործող Օրենսգրքի 323-րդ հոդվածով նախատեսված արարքները:

Նման պայմաններում, ստացվում է, որ անձի արարքում միաժամանակ առավել խիստ պատժվող հանցակազմի (գործող Օրենսգրքի 323-րդ հոդված) և առավել մեղմ պատժվող հանցակազմի (գործող Օրենսգրքի 320-րդ հոդված) առկայության դեպքում, վերջինիս արարքը որակվելու է առավել մեղմ պատժվող հանցակազմով՝ անարդարացիորեն բարելավելով անձի վիճակը: Այլ կերպ, անձի արարքում միայն գողական աշխարհը ղեկավարելու հանցակազմի առկայության դեպքում վերջինս ենթակա է քրեական պատասխանատվության առավել խիստ պատժվող հանցակազմով, իսկ դրա հետ միաժամանակ զինվածության հատկանիշի, և ըստ այդմ՝ օրենքով չնախատեսված զինված միավորում ստեղծելու կամ ղեկավարելու հանցակազմի առկայության դեպքում՝ առավել մեղմ պատժվող հանցակազմով:

Գործող իրավակարգավորման պարագայում, առաջանում է այնպիսի իրավիճակ, երբ գողական աշխարհը ղեկավարելու մեջ մեղադրվող անձանց համար առավել ձեռնտու է, որպեսզի իրենց ներկայացված մեղադրանքում առկա լինի նաև զինվածության հատկանիշը և ըստ այդմ՝ օրենքով չնախատեսված զինված միավորում ստեղծելու կամ ղեկավարելու հանցակազմը, որպիսի պարագայում նրանց արարքները կորակվեն առավել մեղմ պատիժ նախատեսող, գործող Օրենսգրքի 320-րդ հոդվածով:

Ամփոփելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ գործող Օրենսգրքի 323-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի բացասական հատկանիշը՝ գործող Օրենսգրքի 320-րդ հոդվածի մասով, անհրաժեշտ է ուժը կորցրած ճանաչել:

Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է գործող Օրենսգրքի 320-րդ հոդվածի 1-ին մասում կատարել լրացում և օրենքով չնախատեսված զինված միավորում ստեղծելու կամ ղեկավարելու հանցակազմում որպես բացասական հատկանիշ նախատեսել ոչ միայն նույն օրենսգրքի 318-րդ հոդվածով նախատեսված հանցանքի հատկանիշների բացակայությունը, այլ նաև նույն օրենսգրքի 323-րդ հոդվածով նախատեսված հանցանքի հատկանիշների բացակայությունը:

Նման լրացում կատարելու անհրաժեշտությունը կայանում է նրանում, որ բացառվի արարքի որակումն առավել մեղմ պատժվող, գործող Օրենսգրքի 320-րդ հոդվածով այն դեպքում, երբ անձի արարքում այդ հանցակազմի բոլոր հատկանիշների հետ միաժամանակ առկա կլինեն նաև առավել խիստ պատժվող, գործող Օրենսգրքի 323-րդ հոդվածով նախատեսված հանցանքի բոլոր հատկանիշները:

Գործող Օրենսգրքի 323-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի բացասական հատկանիշի վերաբերյալ տեսության մեջ արտահայտվել է կարծիք առ այն, որ արարքը գործող Օրենսգրքի 323-րդ հոդվածի 1-ին մասով որակելու համար պետք է բացառվեն հանցավոր կազմակերպությունը ստեղծելը կամ ղեկավարելը (գործող Օրենսգրքի 318-րդ հոդվածը) և օրենքով չնախատեսված զինված միավորում ստեղծելը կամ ղեկավարելը (գործող Օրենսգրքի 320-րդ հոդվածը): Այս երկու հանցագործություններն ունեն նվազ վտանգավորություն համեմատած գործող Օրենսգրքի 323-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հետ, և

տարբերակվում են ստեղծման նպատակներով ու կատարվելիք գործողություններով¹⁸:

Արտահայտված տեսակետի առնչությամբ՝ նախ, հարկ է կրկնել, որ գործող Օրենսգրքի 318-րդ հոդվածով առավել խիստ պատիժ է նախատեսված, քան գործող Օրենսգրքի 323-րդ հոդվածով, իսկ որոշ դեպքերում՝ հավասար պատիժ: Նման պայմաններում, չենք կարող համաձայնվել այն տեսակետի հետ, որ գործող Օրենսգրքի 318-րդ հոդվածով նախատեսված հանցանքն ունի նվազ վտանգավորություն՝ ի համեմատ գործող Օրենսգրքի 323-րդ հոդվածով նախատեսված հանցանքի: Բացի այդ, նման մեկնաբանության պարագայում հանցակազմի բացասական հատկանիշը պետք է նախատեսվեր ենթադրյալ նվազ վտանգավորություն ունեցող, գործող Օրենսգրքի 318-րդ հոդվածով, որպեսզի անձի արարքում նշված երկու հանցակազմերի միաժամանակյա առկայության դեպքում արարքը որակվեր ենթադրյալ առավել բարձր վտանգավորություն ունեցող, գործող Օրենսգրքի 323-րդ հոդվածով:

Ինչ վերաբերում է այն հետևությանը, որ գործող Օրենսգրքի 318-րդ և 320-րդ հոդվածներով նախատեսված հանցանքները տարբերակվում են գործող Օրենսգրքի 323-րդ հոդվածով նախատեսված հանցանքից ստեղծման նպատակներով ու կատարվելիք գործողություններով, ապա այն ընդունելի չէ: Թեև, քննարկվող հանցակազմերը չեն նույնանում, սակայն հնարավոր են այնպիսի իրավիճակներ, երբ անձի արարքը միաժամանակ համապատասխանի գործող Օրենսգրքի 323-րդ և 318-րդ կամ 320-րդ հոդվածներին: Օրինակ՝ անձի արարքում միաժամանակ առկա լինեն և՛ գողական աշխարհը ղեկավարելու և՛ օրենքով չնախատեսված զինված միավորում ղեկավարելու հատկանիշները:

Բացի այդ, նման մեկնաբանության պարագայում կբացակայեր գործող Օրենսգրքի 323-րդ հոդվածում հանցակազմի բացասական հատկանիշ նախատեսելու անհրաժեշտությունը, քանի որ կբացառվեր անձի արարքում քննարկվող հանցակազմերի միաժամանակյա առկայությունը, ըստ այդմ՝ այդ հանցակազմերի «հատման» հնարավորությունը:

Գործող Օրենսգրքի 323-րդ հոդվածի առնչությամբ պետք է նշել, որ այն չի պարունակում խրախուսական հատուկ նորմ, որը թույլ կտար անձին ազատվել գողական աշխարհը ղեկավարելու համար նախատեսված քրեական պատասխանատվությունից: Նման պայմաններում, անհրաժեշտ ենք համարում քննարկել օրենսդրի այդպիսի մոտեցման նպատակահարմարության հարցը:

Թեև, ընդունելի է հետհանցավոր դրական վարքագիծ դրսևորելու պայմանով գողական աշխարհը ղեկավարող անձանց որոշ դեպքերում քրեական պատասխանատվությունից ազատելը, այնուամենայնիվ, կարծում ենք, որ դա չպետք է իրականացվի այդ հոդվածում խրախուսական նորմ նախատեսելու միջոցով:

Նման հետևությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ քրեական ենթամշակույթի դեմ քրեաիրավական պայքարի արդյունավետության բարձրացմանը նպաստող և միաժամանակ օբյեկտիվորեն իրագործելի պայմաններ նախատեսող խրախուսական նորմ գործող Օրենսգրքի 323-րդ հոդվածում նախատեսելը խնդրահարույց է:

Նախ, պետք է նշել, որ քննարկվող հոդվածում հնարավոր չէ նախատեսել քրեական պատասխանատվությունից ազատող իմպերատիվ խրախուսական նորմ՝ գործող Օրենսգրքի 318-րդ հոդվածով (հանցավոր կազմակերպություն ստեղծելը կամ ղեկավարելը) նախատեսված խրախուսական նորմի նմանությամբ:

Գործող Օրենսգրքի 318-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Հանցավոր կազմակերպու-

¹⁸ Տե՛ս Թումայան Դ. Ա., Հովհաննիսյան Կ. Հ., Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Հատուկ մաս: Ուսումնական ձեռնարկ, Երևան, ՀՀ ոստիկանության կրթահամալիր, Լիմուշ հրատ., 2022, էջ 563:

թյան գործունեության խափանմանը նպաստած անձն ազատվում է սույն հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվությունից: Եթե անձի փաստացի կատարած արարքն այլ հանցակազմ է պարունակում, ապա նա ենթակա է քրեական պատասխանատվության այդ հանցագործության համար»:

Խնդիրը կայանում է նրանում, որ հանցավոր կազմակերպությունները բազմաթիվ են և, որպես կանոն, գործում են միմյանցից անկախ՝ հանդիսանալով ինքնուրույն միավորումներ, որպիսի պայմաններում հնարավոր է առանձին հանցավոր կազմակերպության գործունեությունը խափանել, այդ թվում նաև՝ դրա ղեկավարի օգնությամբ:

Մինչդեռ, գողական աշխարհը հանդես է գալիս որպես մեկ ամբողջություն՝ միավորելով գողական օրենքով առաջնորդվող մարդկանց ոչ միայն Հայաստանի Հանրապետությունում, այլ նաև դրա սահմաններից դուրս:

Նման պայմաններում, հաշվի առնելով գողական աշխարհի տարածվածության մասշտաբները և դրա անդամների բազմաթվությունն՝ օբյեկտիվորեն բացակայում է ամբողջ գողական աշխարհի գործունեությունը խափանելու հնարավորությունը, ըստ այդմ նաև՝ այդ գործընթացին նպաստելու հնարավորությունը:

Կարծում ենք, որևէ անձ, այդ թվում նաև՝ պայմանականորեն ամբողջ գողական աշխարհը ղեկավարողը, չունի այնպիսի հնարավորություն կամ տեղեկատվություն, որ կարողանա նպաստել ամբողջ գողական աշխարհի գործունեության խափանմանը: Հետևաբար, հնարավոր չէ գողական աշխարհը ղեկավարող անձից պահանջել նպաստել գողական աշխարհի գործունեության խափանմանը՝ դա օբյեկտիվորեն անիրագործելի լինելու պատճառաբանությամբ:

Միևնույն ժամանակ, ընդունելի չէ որպես խրախուսական նորմի պայման նախատեսել գողական աշխարհի մի մասի գործունեության խափանմանը նպաստելը՝ նման ձևակերպման, իրավական որոշակիության տեսանկյունից, խոցելի լինելու պատճառով, քանի որ նման անորոշ ձևակերպումից հնարավոր չէ հետևություն անել, թե քանի անձն է դիտարկվելու՝ որպես գողական աշխարհի մի մաս:

Հետևաբար, գործող Օրենսգրքի 323-րդ հոդվածում, գործող Օրենսգրքի 318-րդ հոդվածի խրախուսական նորմի նմանությամբ, իրավակարգավորում նախատեսելն ընդունելի չէ:

Հարկ ենք համարում քննարկել նաև, Վրաստանի քրեական օրենսգրքի¹⁹ 223¹-ին հոդվածով նախատեսված խրախուսական նորմի նմանությամբ, գործող Օրենսգրքի 323-րդ հոդվածում խրախուսական նորմ նախատեսելու նպատակահարմարության հարցը:

Այսպես, Վրաստանի քրեական օրենսգրքի 223¹-ին հոդվածով նախատեսված ծանոթագրության համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործություն («գողական համագործակցությանն» անդամակցել) կատարած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե նա այդ մասին կամովին հայտնում է քրեական վարույթն իրականացնող մարմին և քննչական մարմինների հետ նրա համագործակցության արդյունքում կհաստատվեն ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն կատարած անձի ազգանունը և անունը, կամ (և) նրա անմիջական աջակցությամբ կստեղծվեն էական պայմաններ նման հանցագործության բացահայտման համար, եթե նրա արարքում բացակայում են այլ հանցագործության հատկանիշները: Պատասխանատվությունից ազատելու վերաբերյալ որոշումը կայացնում է քրեական վարույթն իրականացնող մարմինը:

¹⁹ Տե՛ս Уголовный кодекс Грузии (հասանելի է <https://matsne.gov.ge/ru/document/view/16426?publication=259> հղումով 02.11.2024 թ. դրությամբ):

Այսպիսով, Վրաստանի քրեական օրենսգրքի 223¹-ին հոդվածում նախատեսված խրախուսական նորմը քրեական պատասխանատվությունից ազատելը պայմանավորում է ոչ թե «գողական համագործակցության» գործունեությունը խափանելուն նպաստելով, այլ առավել իրագործելի պայման է նախատեսում՝ ըստ էության պահանջելով անձից օժանդակել ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության կամ դա կատարած անձի բացահայտմանը:

Այնուամենայնիվ, կարծում ենք, որ նման խրախուսական նորմ գործող Օրենսգրքի 323-րդ հոդվածով նախատեսելը չի նպաստի քրեական ենթամշակույթի դեմ քրեաիրավական պայքարի արդյունավետության բարձրացմանը և չի ապահովվի պետության՝ տվյալ ոլորտում անհրաժեշտ քրեական քաղաքականության իրականացումը:

Նախ, պետք է նշել, որ գործող Օրենսգրքի 323-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված է ծանր հանցանք, իսկ 2-րդ մասով՝ առանձնապես ծանր: Վրաստանի քրեական օրենսգրքի 223¹-ին հոդվածում նախատեսված խրախուսական նորմի նմանությամբ խրախուսական նորմ գործող Օրենսգրքի 323-րդ հոդվածում նախատեսելու դեպքում ստացվելու է, որ անձը կազատվի պատասխանատվությունից նաև այն դեպքում, երբ օժանդակի իր կատարած հանցանքին հավասար կամ դրանից առավել մեղմ պատժվող հանցանքի (ծանր հանցանք) բացահայտմանը կամ դա կատարած անձի բացահայտմանը, ինչն ընդունելի չենք կարող համարել՝ հատկապես, երբ խոսքը գնում է գողական աշխարհը ղեկավարող անձանց մասին:

Նույնիսկ, առանձնապես ծանր հանցանքի կամ դա կատարած անձի բացահայտմանն օժանդակելու դեպքում գողական աշխարհը ղեկավարող անձանց քրեական պատասխանատվությունից իմպերատիվ կերպով ազատելն ընդունելի չէ:

Զբացառելով, որ կարող են լինել այնպիսի իրավիճակներ, երբ գողական աշխարհը ղեկավարող անձն օժանդակի այնպիսի հանցանքի կամ դա կատարած անձի բացահայտմանը, որ ընդունելի համարվի վերջինիս գործող Օրենսգրքի 323-րդ հոդվածով քրեական պատասխանատվությունից ազատելը, պետք է փաստել, որ հնարավոր են նաև հակառակ իրավիճակները, երբ նույնիսկ իր ցուցաբերած օժանդակության դեպքում քրեական պատասխանատվությունից ազատելը չբխի պետության՝ տվյալ ոլորտում անհրաժեշտ քրեական քաղաքականությունից:

Օրինակ՝ երկար ժամանակ գողական աշխարհի բավականին խոշոր հատվածը ղեկավարած անձի կողմից առանձնապես խոշոր չափերով շորթման (առանձնապես ծանր հանցանք) մեկ դրվագ բացահայտելուն օժանդակելու դեպքում, վերջինիս հետհանցավոր վարքագիծը չի կարող գնահատվել այն աստիճան սոցիալապես օգտակար և դրական, որ հանգեցնի քրեական պատասխանատվությունից ազատման:

Հետևաբար, կարծում ենք՝ Վրաստանի քրեական օրենսգրքի 223¹-ին հոդվածով նախատեսված խրախուսական նորմի նմանությամբ գործող Օրենսգրքի 323-րդ հոդվածում քրեական պատասխանատվությունից ազատող իմպերատիվ խրախուսական նորմ նախատեսելը ևս նպատակահարմար չէ:

Նման պայմաններում ընդունելի չենք համարում իրավաբանական գրականության մեջ արտահայտված այն տեսակետը, որ քննարկվող հոդվածը պետք է լրացնել խրախուսական նորմով²⁰:

Այսպիսով, անհրաժեշտ է քրեական պատասխանատվությունից ազատող այնպիսի իրա-

²⁰ Տե՛ս *Գասպարյան Ա.*, Քրեական ենթամշակույթին առնչվող անձանց հանցավոր գործունեության վերաբերյալ քրեական գործերով քննության կրիմինալիստիկական բնութագիրը, Դատական իշխանություն, սեպտեմբեր-հոկտեմբեր 2021 9-10 (267-268), էջ 96, (հասանելի է <http://ajra.am/hy/judicial-power> հղումով 02.11.2024 թ. դրությամբ):

վակարգավորում, որը թույլ կտա, կոնկրետ քրեական վարույթի փաստական հանգամանքները հաշվի առնելով, յուրաքանչյուր դեպքում որոշել արդյո՞ք գողական աշխարհը ղեկավարած անձը պետք է ազատվի քրեական պատասխանատվությունից՝ հետհանցավոր դրական վարքագիծ դրսևորելու շնորհիվ, թե՛ ոչ:

Նման չափանիշներին համապատասխանող իրավակարգավորում նախատեսված է գործող Օրենսգրքի Ընդհանուր մասում՝ 81-րդ հոդվածի 1.1-ին մասում, որի համաձայն՝ «Եթե անձի առաջին անգամ կատարած հանցանքը ծանր կամ առանձնապես ծանր հանցանք է, ապա հանցավորի դերի, հանցանքը կատարելիս կամ դրանից հետո նրա վարքագծի և այլ հանգամանքների հետ կապված բացառիկ գործոնների առկայության դեպքում նա կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, եթե համագործակցում է քրեական հետապնդման մարմինների հետ, չի վիճարկում իրեն մեղսագրվող արարքը, փաստապատճառած լինելու դեպքում հատուցել կամ այլ կերպ հարթել է հանցագործությամբ պատճառված վնասը: Բացառիկ կարող են ճանաչվել ինչպես առանձին մեղմացնող հանգամանքները, այնպես էլ այդ հանգամանքների համակցությունը»: Միևնույն ժամանակ, նույն հոդվածի 1.2-րդ մասում թվարկված են այն հանցանքները, որոնց դեպքում անձը չի կարող ազատվել քրեական պատասխանատվությունից՝ նույն հոդվածի 1.1-ին մասով նախատեսված հիմքով, և դրանց մեջ գործող Օրենսգրքի 323-րդ հոդվածը ներառված չէ:

Քննարկման առարկա չդարձնելով գործող Օրենսգրքի 81-րդ հոդվածի 1.1-ին մասով նախատեսված իրավակարգավորման նպատակահարմարությունն²¹ in abstracto՝ սույն հետազոտության թեմայով սահմանափակված լինելու պատճառաբանությամբ, և այդ իրավակարգավորման առկայությունն ընդունելով որպես եղելություն՝ գտնում ենք, որ այն կարող է հանդիսանալ այնպիսի իրավական հիմք, որի հիման վրա Վճռաբեկ դատարանը, օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունն ապահովելու իր սահմանադրական առաքելության շրջանակներում, կարող է հնարավորինս հստակեցնել այն պայմանները, որոնց առկայության դեպքում գողական աշխարհը ղեկավարած անձը կարող է օգտվել գործող Օրենսգրքի 81-րդ հոդվածի 1.1-ին մասի հիման վրա քրեական պատասխանատվությունից ազատվելու հայեցողական հիմքից:

Կարծում ենք, որ գողական աշխարհը ղեկավարած անձին գործուն գղջալու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու հարցը լուծելիս՝ պետք է հաշվի առնել այնպիսի գործոններ, ինչպիսիք են՝ գողական աշխարհը ղեկավարելուն ուղղված արարքների բնույթը, անձի զբաղեցրած դիրքը գողական աշխարհում, գողական աշխարհը ղեկավարելու տևողությունը, վերջինիս կողմից այլ հանցանք կամ դա կատարած անձին բացահայտելուն օժանդակելը, այդ հանցանքի բնույթն ու վտանգավորության աստիճանը և այլ հանգամանքներ:

Այսպիսով, թեև ընդունելի է հետհանցավոր դրական վարքագիծ դրսևորելու պայմանով գողական աշխարհը ղեկավարած անձանց որոշ դեպքերում քրեական պատասխանատվությունից ազատելը, այնուամենայնիվ, կարծում ենք, որ դա չպետք է իրականացվի այդ հոդվածում խրախուսական նորմ նախատեսելու միջոցով, այլ պետք է իրականացվի գործող Օրենսգրքի 81-րդ հոդվածի 1.1-ին մասով նախատեսված գործուն գղջալու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու հայեցողական հիմքով, որպիսի հիմքը գողական աշխարհը ղեկավարած անձանց նկատմամբ կիրառելու համար անհրաժեշտ պայմանները պետք է հնարավորինս հստակեցվեն Վճռաբեկ դատարանի կողմից դատական մեկնաբան-

²¹ Տե՛ս ԵԴՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի կարծիքը «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ, (հասանելի է <https://www.y-su.am/faculty/79/articles/41064> հղումով 02.11.2024 թ. դրությամբ):

ման միջոցով:

Պետք է նշել, որ գողական աշխարհը ղեկավարելու հանցակազմում խրախուսական նորմ նախատեսելու աննպատակահարմարության վերաբերյալ արտահայտած մոտեցումները կիրառելի են նաև գործող Օրենսգրքի 322-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի դեպքում, հետևաբար քննարկվող հոդվածում խրախուսական նորմ նախատեսելը ևս ընդունելի չէ:

Այս առնչությամբ, հարկ է նշել, որ առաջարկվել է գործող Օրենսգրքի 322-րդ հոդվածում նախատեսել խրախուսական նորմ, համաձայն որի՝ նույն հոդվածի 1-ին մասում նախատեսված հանցանքը կատարած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե այդ մասին կամովին հայտնել է իրավասու մարմիններին: Եթե անձի փաստացի կատարած արարքն այլ հանցակազմ է պարունակում, ապա ենթակա է քրեական պատասխանատվության այդ հանցագործության համար²²: Մինչդեռ, գործող Օրենսգրքի 322-րդ հոդվածով նախատեսված հանցանքի մասին միայն կամովին հայտնելը, ոչ միշտ է, որ կարող է բավարար հիմք հանդիսանալ անձին քրեական պատասխանատվությունից ազատելու համար: Օրինակ՝ երկար տարիներ «օրենքով գողի» կարգավիճակը պահպանելու դեպքում անձի կողմից միայն այդ մասին իրավասու մարմիններին կամովին հայտնելը, կարծում ենք, չպետք է գնահատվի հետհանցավոր դրական այնպիսի վարքագիծ, որ իմպերատիվ կերպով հանգեցնի քրեական պատասխանատվությունից ազատվելու: Հետևաբար, առաջարկվող խրախուսական նորմը գործող Օրենսգրքի 322-րդ հոդվածում նախատեսելն ընդունելի չէ:

Եզրակացություն

Այսպիսով, գողական աշխարհը ղեկավարելու հիմնական հանցակազմի սեռային և տեսակային օբյեկտները համընկնում են և որպես այդպիսին հանդես են գալիս հասարակական անվտանգության պաշտպանությանն ուղղված հասարակական հարաբերությունները: Անդրադառնալով քննարկվող հիմնական հանցակազմի անմիջական օբյեկտին՝ հարկ է նշել, որ որպես դրա հիմնական անմիջական օբյեկտ հանդես են գալիս անձանց, հասարակության և պետության անվտանգության պաշտպանությանն ուղղված հասարակական հարաբերությունները, իսկ որպես ֆակուլտատիվ լրացուցիչ անմիջական օբյեկտ կարող են հանդես գալ կյանքի, առողջության, անձնական ազատության, պատվի, արժանապատվության, ֆիզիկական, հոգեկան անձեռնմխելիության կամ սեփականության պաշտպանությանն ուղղված կամ այլ հասարակական հարաբերությունները:

Ինչ վերաբերում է գողական աշխարհը ղեկավարելու հանցակազմի օբյեկտիվ կողմին, ապա որպես գողական աշխարհի ղեկավարում պետք է դիտարկել գողական աշխարհի, դրա առանձին խմբավորումների, առանձին ներկայացուցիչների և այլ անձանց նկատմամբ կազմակերպական կամ կառավարչական գործառույթների իրականացումը՝ ինչպես գողական աշխարհի, դրա առանձին խմբավորումների գործունեությունն ապահովելիս, այնպես էլ գողական աշխարհի նպատակ հանդիսացող կոնկրետ արարքներ կատարելիս:

Այդպիսի ղեկավարումը կարող է դրսևորվել գործունեության ընդհանուր պլանները մշակելով, նոր անդամներ հավաքագրելով, գողական աշխարհի անդամների միջև դերերի բաշխմամբ, գողական աշխարհի կամ դրա առանձին մասերի վերաբերյալ որոշումներ կայացնելով և համապատասխան ցուցումներ տալով, նյութատեխնիկական ապահովումը կազմակերպելով, գողական աշխարհի գործունեությունից ստացած օգուտները բաշխելով, ոտնձգության օբյեկտներ ընտրելով, գողական աշխարհի նպատակ հանդիսացող կոնկրետ

²² Տե՛ս *Արշակյան Մ. Ս.*, նշված աշխ., էջ 30:

արարքներ կատարելու և դրանք քողարկելու միջոցներ մշակելով, գաղտնիության ապահովմանն ուղղված միջոցներ կազմակերպելով, վարքագծի նորմերը որոշելով, այդ թվում՝ արգելքներ սահմանելով, կարգապահությանը հետևելով, գողական աշխարհի անդամների միջև հիերարխիայի պահպանումն ապահովելով, խրախուսանքի և տույժի միջոցներ կիրառելով, հանրային իշխանության, այդ թվում նաև՝ իրավապահ մարմինների հետ կապեր հաստատելով ու պահպանելով կամ այլ ձևերով: Գողական աշխարհի ղեկավարումը կարող է իրականացվել ինչպես միանձնյա, այնպես էլ երկու կամ ավելի անձանց կողմից, որոնք միավորվել են համատեղ ղեկավարման համար (ամբողջ գողական աշխարհի ղեկավարները և դրա առանձին խմբավորումների ղեկավարները): Գողական աշխարհը ղեկավարելն ավարտված է համարվում անձի կողմից կազմակերպական կամ կառավարչական գործառնություններից բխող արարք կատարելու պահից՝ անկախ հետևանքներ վրա հասնելու հանգամանքից:

Բացի դրանից՝ գտնում ենք, որ գործող Օրենսգրքի 323-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի բացասական հատկանիշը՝ գործող Օրենսգրքի 320-րդ հոդվածի մասով, անհրաժեշտ է ուժը կորցրած ճանաչել: Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է գործող Օրենսգրքի 320-րդ հոդվածի 1-ին մասում կատարել լրացում և օրենքով չնախատեսված զինված միավորում ստեղծելու կամ ղեկավարելու հանցակազմում որպես բացասական հատկանիշ նախատեսել ոչ միայն նույն օրենսգրքի 318-րդ հոդվածով նախատեսված հանցանքի հատկանիշների բացակայությունը, այլ նաև նույն օրենսգրքի 323-րդ հոդվածով նախատեսված հանցանքի հատկանիշների բացակայությունը:

Թեև ընդունելի է հետհանցավոր դրական վարքագիծ դրսևորելու պայմանով գողական աշխարհը ղեկավարած անձանց որոշ դեպքերում քրեական պատասխանատվությունից ազատելը, այնուամենայնիվ, կարծում ենք, որ դա չպետք է իրականացվի այդ հոդվածում խրախուսական նորմ նախատեսելու միջոցով, այլ պետք է իրականացվի գործող Օրենսգրքի 81-րդ հոդվածի 1.1-ին մասով նախատեսված գործուն գղջալու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու հայեցողական հիմքով, որպիսի հիմքը գողական աշխարհը ղեկավարած անձանց նկատմամբ կիրառելու համար անհրաժեշտ պայմանները պետք է հնարավորինս հստակեցվեն Վճռաբեկ դատարանի կողմից դատական մեկնաբանման միջոցով:

Ամփոփագիր: Սույն հոդվածը նվիրված է գողական աշխարհի ղեկավար կազմի դեմ քրեաիրավական պայքարի որոշ հիմնահարցերին: Մասնավորապես, հոդվածում հեղինակը քննարկել է գողական աշխարհը ղեկավարելու հանցակազմի օբյեկտը, օբյեկտիվ կողմը, ՀՀ քրեական օրենսգրքի 323-րդ հոդվածում նախատեսված հանցակազմի բացասական (նեգատիվ) հատկանիշը, ինչպես նաև հետհանցավոր դրական վարքագիծ դրսևորելու պայմանով գողական աշխարհը ղեկավարած անձանց քրեական պատասխանատվությունից ազատող խրախուսական հատուկ նորմ նախատեսելու նպատակահարմարության հարցը:

Արդյունքում հեղինակը, տեսական տարբեր աղբյուրների վկայակոչմամբ, հստակեցրել է գողական աշխարհը ղեկավարելու օբյեկտը և օբյեկտիվ կողմը, ինչպես նաև ներկայացրել է քննարկվող հոդվածում նախատեսված հանցակազմի բացասական (նեգատիվ) հատկանիշի կատարելագործմանն ուղղված առաջարկ:

Բացի այդ, հեղինակը հանգել է հետևության, որ թեև ընդունելի է հետհանցավոր դրական վարքագիծ դրսևորելու պայմանով գողական աշխարհը ղեկավարած անձանց որոշ դեպքերում քրեական պատասխանատվությունից ազատելը, այնուամենայնիվ, դա չպետք է իրականացվի այդ հոդվածում խրախուսական նորմ նախատեսելու միջոցով, այլ պետք է իրականացվի ՀՀ քրեական օրենսգրքի 81-րդ հոդվածի 1.1-ին մասով նախատեսված գործուն գղջալու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելով: Այդ հիմքը գողական աշխարհը ղեկավարած անձանց նկատմամբ կիրառելու համար անհրաժեշտ պայմանները պետք է հնարավորինս հստակեցվեն ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից:

Annotation. This article is dedicated to some key issues in the criminal-legal fight against the leadership of the thieves' world. In particular, in the article, the author discussed the object, the objective aspect of the corpus delicti of managing the thieves' world, the negative characteristic of the corpus delicti provided for in Article 323 of the Criminal Code of the RA, as well as the question of expediency of provision of a special incentive norm that exempts the persons who manage the thieves' world from criminal liability on the condition that they demonstrate positive post-criminal behavior.

As a result, the author, referring to various theoretical sources, specified the object and objective aspect of managing the thieves' world, and also presented a proposal aimed at improving the negative characteristic of the corpus delicti set out in the article under discussion.

In addition, the author came to the conclusion that although it is acceptable to exonerate the persons who manage the thieves' world from criminal liability in some cases on the condition that they demonstrate positive post-criminal behavior, this should not be done by providing an incentive norm in that article, but should be carried out by exonerating the offender from criminal responsibility on the basis of remorse provided by part 1.1 of Article 81 of the Criminal Code of the RA. The necessary conditions for applying that basis to the persons who manage the thieves' world should be clarified as much as possible by the Court of Cassation of the RA.

Аннотация. Данная статья посвящена некоторым ключевым вопросам уголовно-правовой борьбы против руководства воровского мира. В частности, в статье автор рассматривает объект, объективную сторону состава преступления по руководству воровским миром, негативный признак состава преступления, предусмотренного ст. 323 УК РА, а также вопрос о целесообразности введения специальной поощрительной нормы, освобождающей от уголовной ответственности лиц, руководящих воровским миром, при условии их позитивного посткриминального поведения.

В результате автор, ссылаясь на различные теоретические источники, уточнил объект и объективную сторону руководства воровского мира, а также представил предложение, направленное на улучшение негативного признака состава преступления, изложенной в обсуждаемой статье. Кроме того, автор пришел к выводу, что хотя освобождение лиц, руководящих воровским миром, от уголовной ответственности в некоторых случаях допустимо при условии их позитивного посткриминального поведения, это не должно осуществляться путем предоставления поощрительной нормы в данной статье, а должно осуществляться путем освобождения преступника от уголовной ответственности на основании раскаяния, предусмотренного ч. 1.1 ст. 81 УК РА. Необходимые условия для применения этого основания к лицам, руководящих воровским миром, должны быть максимально уточнены Кассационным судом РА.

Բանալի բառեր – գողական աշխարհը ղեկավարել, հանցագործության օբյեկտ, հանցագործության օբյեկտիվ կողմ, հանցակազմի բացասական հատկանիշ, հեղինակավոր դրական վարքագիծ, քրեական պարասխանադրությունից ազատող խրախուսական հատուկ նորմ:

Keywords: manage the thieves' world, object of crime, objective aspect of crime, negative characteristic of the corpus delicti, positive post-criminal behavior, special incentive norm that exempts the persons from criminal liability.

Ключевые слова: руководство воровского мира, объект преступления, объективная сторона преступления, негативный признак состава преступления, позитивное посткриминальное поведение, специальная поощрительная норма, освобождающая лиц от уголовной ответственности.

Օգտագործված գրականության ցանկ

1. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք, ՀՕ-199-Ն, ընդունվել է 2021 թվականի մայիսի 5-ին, ուժի մեջ է մտել 2022 թվականի հուլիսի 1-ին, Միասնական կայք 2021.05.17-2021.05.30, Պաշտոնական հրապարակման օրը 27.05.2021:

2. Բաբախանյան Ա., Քրեական ենթամշակույթ կրող խմբավորման (գողական աշխարհի) հասկացության և գողական աշխարհի ստեղծելը քրեականացնելու որոշ հիմնահարցեր, Պետություն և իրավունք, թիվ 2 (99), 2024, Երևան, 152-161 էջեր:

3. Краснопеов В. А., Объект преступления в российском уголовном праве (теоретико-правовой анализ), дисс. на соиск. учен. степени канд. юрид. наук, Кисловодск, 2001, 186 էջ, (հասանելի է <https://www.twirpx.com/file/1533079/> հղումով 02.11.2024թ. դրությամբ):

4. Дрожжина Е. А., Общественная безопасность как объект преступления, дисс. на соиск. учен. степени канд. юрид. наук, Москва, 2015, 188 էջ, (հասանելի է <https://www.twirpx.com/file/1820504/> հղումով 02.11.2024թ. դրությամբ):

5. Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք, Ընդհանուր մաս, դասագիրք բուհերի համար, վեցերորդ հրատ.՝ փոփոխ. և լրաց., խմբ.՝ Ղազինյան Գ. Ս., Երևան, ԵՊՀ հրատ., 2012, 544 էջ:

6. Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք, Հատուկ մաս, դասագիրք բուհերի համար, վեցերորդ հրատ.՝ փոփոխ. և լրաց., խմբ.՝ Ղազինյան Գ. Ս., Երևան, ԵՊՀ հրատ., 2012, 1040 էջ:

7. Բաբախանյան Ա., Քրեական ենթամշակույթի տարածման միտումները Հայաստանի Հանրապետությունում, Դատական իշխանություն, հուլիս-սեպտեմբեր 2024 7-9 (301-303), 49-63 էջեր, (հասանելի է http://ajra.am/images/files/Judicial_Power/2024/5_Babaxanyan_A.pdf հղումով 10.02.2025թ. դրությամբ):

8. Արշակյան Մ. Ս., Քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ տալու կամ ստանալու կամ պահպանելու քրեաիրավական բնութագիրը, իրավ. բակավաճիկի որակավորման աստիճանի հայցման համար ավարտական աշխատանք, Երևան, 2024, 63 էջ:

9. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ թիվ ԵԴ/1369/01/20 քրեական գործով «Ասիմանադրական դատարան դիմելու մասին» 2021 թվականի հունիսի 21-ի որոշում (հասանելի է https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=45880421204095622 հղումով 02.11.2024 թ. դրությամբ):

10. Виденькина Ж. В., Уголовная ответственность за организацию преступного сообщества или участие в нем, дисс. на соиск. учен. степени канд. юрид. наук, Москва, 2012, 199 էջ, (հասանելի է <https://www.twirpx.com/file/2106501/> հղումով 02.11.2024 թ. դրությամբ):

11. Բիշարյան Կ. Ա., Քրեական ենթամշակույթին առնչվող արարքների քրեաիրավական բնութագիրը (գիտազործական մեկնաբանություններ), գիտ. խմբ.՝ Առաքելյան Ս. Վ., Երևան, Արդարադատության ակադեմիա, 2020, 46 էջ, (հասանելի է <https://aoj.am/storage/library/academy-publications/cA1p3cXVvJQorU9WKQ9tqumypZNDI64fq9C5lzEu.pdf> հղումով 02.11.2024 թ. դրությամբ):

12. Постановление Пленума Верховного Суда Российской Федерации от 10 июня 2010 г. N 12 «О судебной практике рассмотрения уголовных дел об организации преступного сообщества (преступной организации) или участии в нем (ней)», (հասանելի է https://www.consultant.ru/document/cons_doc_LAW_101362/ հղումով 02.11.2024 թ. դրությամբ):

13. Якушева Т. В., Законодательная регламентация и практика привлечения к уголовной ответственности за организацию преступного сообщества (преступной организации), дисс. на соиск. учен. степени канд. юрид. наук, Москва, 2016, 219 էջ, (հասանելի է <https://www.twirpx.com/file/1984128/> հղումով 02.11.2024 թ. դրությամբ):

14. ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի՝ Արարատ Առաքելյանի և մյուսների գործով 2024 թվականի օգոստոսի 16-ի թիվ ՏԴ/0181/01/21 որոշում (հասանելի է <https://www.cassationcourt.am/precedent/precedent-single-decision/criminal-case/2513> հղումով 02.11.2024թ. դրությամբ):

15. Առաքելյան Ս. Վ., Մկրտչյան Պ. Վ., Հանցագործությունների որակման հիմնախնդիրները, մենագրություն, Եր., Արդարադատության ակադեմիա, 2020, 400 էջ, (հասանելի է <https://aoj.am/storage/library/academy-publications/tV5CzINDI1JZ2pieKvMtuWhsRHU28fXUti2CAZiUN.pdf> հղումով 02.11.2024 թ. դրությամբ):

16. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք, ՀՕ-528-Ն, ընդունվել է 2003 թվականի ապրիլի 18-ին, ուժի մեջ է մտել 2003 թվականի օգոստոսի 1-ին, ուժը կորցրել է 2022 թվականի հուլիսի 1-ին, ՀՀՊՏ 2003.05.02/25(260) Հոդ.407:

17. Թումասյան Դ. Ա., Հովհաննիսյան Կ. Հ., Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Հատուկ



մաս: Ոսումնական ձեռնարկ, Երևան, ՀՀ ոստիկանության կրթահամալիր, Լիմուշ հրատ., 2022, 914 էջ:

18. Уголовный кодекс Грузии (հասանելի է <https://matsne.gov.ge/ru/document/view/16426?publication=259> հղումով 02.11.2024թ. դրությամբ):

19. Գասպարյան Ա., Քրեական ենթամշակույթին առնչվող անձանց հանցավոր գործունեության վերաբերյալ քրեական գործերով քննության կրիմինալիստիկական բնութագիրը, Դատական իշխանություն, սեպտեմբեր-հոկտեմբեր 2021 9-10 (267-268), 84-98 էջեր, (հասանելի է <http://ajra.am/hy/judicial-power> հղումով 02.11.2024 թ. դրությամբ):

20. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի կարծիքը «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ, (հասանելի է <https://www.ysu.am/faculty/79/articles/41064> հղումով 02.11.2024 թ. դրությամբ):

Բաբախանյան Ա. - ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի դատավորի օգնական, ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի դասախոս, էլիասցե՝ arman.babakhanyan@ysu.am:

Ներկայացվել է խմբագրություն 10.02.2025 թ., տրվել է գրախոսության 04.11.2024 թ., երաշխավորվել է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի ամբիոնի դոցենտ, ի.գ.թ. Տ. Սիմոնյանի կողմից, ընդունվել է տպագրության 22.04.2025 թ.:

<https://doi.org/10.59546/18290744-2025.1-3-87>

ԳԵՎՈՐԳ ԻՍՐԱՅԵԼՅԱՆ

Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ՀՀ ԳԱԱ փորձաքննությունների ազգային բյուրոյի քրեաբանության կիրառական
հիմնախնդիրների գիտահետազոտական կենտրոնի պետ,
Եվրասիա միջազգային համալսարանի դասախոս

GEVORG ISRAYELIAN

*Candidate of Legal Sciences, Associate Professor,
Head of the Scientific Research Center of Applied Problems in Criminology of
National Bureau of Expertises of the National Academy of Sciences of the Republic of Armenia,
Lecturer at Eurasia International University*

ГЕВОРГ ИСРАЕЛЯН

*Кандидат юридических наук, доцент,
Начальник Научно-исследовательского центра прикладных проблем криминологии
Национального бюро экспертиз Национальной академии наук Республики Армения,
преподаватель Международного университета «Евразия»*

ԶԵՆՔԻ ՕՐԻՆԱԿԱՆ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂՂԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐՈՂ ԱՆՁԻ ՔՐԵԱԲԱՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

THE CRIMINOLOGICAL CHARACTERISTICS OF THE PERSONALITY OF A CRIMINAL WHO COMMITS CRIMES AGAINST THE LEGITIMATE TRAFFICKING OF WEAPONS

КРИМИНОЛОГИЧЕСКАЯ ХАРАКТЕРИСТИКА ЛИЧНОСТИ ПРЕСТУПНИКА, СОВЕРШАЮЩЕГО ПРЕСТУПЛЕНИЯ ПРОТИВ ЗАКОННОГО ОБОРОТА ОРУЖИЯ

Ներածություն

Վիճակագրական տվյալները վկայում են զենքի օրինական շրջանառության դեմ ուղղված հանցագործությունների քրեաբանական բացասական միտումների մասին: Այսպես, 2021 թվականին արձանագրվել է հանցագործության 714, 2022 թվականին՝ 887 (24.2 %-ով աճ),

2023 թվականին՝ 1179 դեպք (32.9 %-ով աճ)¹: Դա խոսում է կանխարգելիչ ներգործության ակտիվացման անհրաժեշտության մասին:

Ձեռքի օրինական շրջանառության դեմ ուղղված հանցագործությունների նկատմամբ կանխարգելիչ ներգործության ապահովման, մասնավորապես՝ անհատական կանխարգելիչ աշխատանքների կազմակերպման համար հարկավոր է նշված հանցատեսակների քրեաբանական բաղադրիչների, այդ թվում՝ հանցագործի անձի համալիր հետազոտության իրականացում:

Նշվածից ելնելով՝ սույն հետազոտության նպատակն է զեռքի օրինական շրջանառության դեմ ուղղված հանցագործություններ կատարող անձի քրեաբանական նկարագրի բացահայտումը: Հետազոտության խնդիրն է հանցագործի անձի կառուցվածքային տարրերի ներկայացումը և դրանց քրեաբանական նշանակության բացահայտումը:

Հետազոտության առարկան են կազմել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 334-րդ և 335-րդ հոդվածներով նախաձեռնված քրեական վարույթներով 2023-2024 թվականներին կայացված թվով 50 դատական ակտերը:

Հիմնական հետազոտություն

Ձեռքի օրինական շրջանառության դեմ ուղղված հանցագործություններ կատարող անձը բնորոշվում է որպես քրեական օրենքով նախատեսված, պատժի սպառնալիքով արգելված համապատասխան արարք կատարած մարդու՝ սոցիալապես նշանակալի հատկությունների ամբողջություն, որոնք, արտաքին պայմանների հետ զուգակցվելով, ազդում են նրա հանցավոր վարքագծի վրա: Քննարկվող հասկացության համար պարտադիր է այն հանգամանքը, որ հանցագործությունը կատարվում է անձին հատկանշական հակահասարակական հայացքների առկայության արդյունքում²:

Ձեռքի օրինական շրջանառության դեմ ուղղված հանցագործություններ կատարող անձն ունի որոշակի կառուցվածք, որը ներառում է հետևյալ ենթակառուցվածքները.

1. Սոցիալ-ժողովրդագրական հատկանիշներ.

Հատկանիշների այս խումբն են կազմում անձի սեռը, տարիքը, ընտանեկան և պաշտոնական դրությունը, մասնագիտությունը և այլ հատկանիշները:

Սեռային հատկանիշի առումով քննարկվող հանցատեսակները կատարվել են տղամարդկանց կողմից:

Քրեական ակտիվությունն արձանագրվել է 25-50 տարիքային սահմանում:

Հանցանք կատարողներն ազգությամբ հայեր են, Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ:

Հանցավորների ընտանեկան դրությունն ունի հետևյալ պատկերը՝ 60 %-ն ամուսնացած է, 5 %-ը՝ ամուրի, 35 %-ը՝ ամուսնալուծված:

Մեր հետազոտության արդյունքները վկայում են, որ քննարկվող կատեգորիայի հանցավորներն ունեն ցածր կրթական մակարդակ: Այսպես, հանցավորների 60 %-ն ունի միջնակարգ, 2 %-ը՝ միջնակարգ-մասնագիտական, 38 %-ը՝ բարձրագույն կրթություն:

¹ Տես Հայաստանի Հանրապետության դատախազության 2022 թվականի գործունեության մասին հաղորդում, էջ 28 // https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/rep_50_8560351818.pdf (վերջին մուտք՝ 08.01.2025 թ.), Հայաստանի Հանրապետության դատախազության 2023 թվականի գործունեության մասին հաղորդում // https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/dyn_page_285_1465690793.pdf (վերջին մուտք՝ 08.01.2025 թ.), էջ 26:

² Տես *Кобец П.Н.*, Личность рецидивиста и особенности ее формирования // Закон и право 2001. № 11, էջ 39:

Հանցագործների մեծամասնությունն աշխատանքային զբաղվածություն չունի: Այսպես, ուսումնասիրված անձանց 75 %-ը չի աշխատում:

2. Բարոյական որակներ և հոգեբանական առանձնահատկություններ, դրդապատճառային ոլորտ.

Բարոյական որակները և հոգեբանական առանձնահատկությունները թույլ են տալիս խորությամբ ճանաչել անձի բովանդակությունը: Հատկանիշների տվյալ խումբը հաճախ բաժանվում է ենթախմբերի, մասնավորապես՝ առանձնացվում են գիտակցության արժեքային-նորմատիվային բնութագրերը (հայացքներ, համոզմունքներ, արժեքային կողմնորոշումներ), պահանջմունքային-դրդապատճառային ոլորտը (պահանջմունքներ, հետաքրքրություններ, դրդապատճառներ)³:

Հանցագործի անձի գլխավոր բնութագրական հատկությունը զենքի նկատմամբ հետաքրքրությունն է: Հետաքրքրությունն առարկայի՝ իբրև արժեքավոր, գրավիչ ինչ-որ իրի հանդեպ անձի վերաբերմունքն է: Հետաքրքրության բովանդակությունը և բնույթը կապված է անձի դրդապատճառների և պահանջմունքների կազմության, շարժընթացի, ինչպես նաև իրականության ընկալման ձևերի ու միջոցների բնույթի հետ: Հետաքրքրությունն է ընկած գործունեության մոտիվացիայի հիմքում, որը որոշում գործունեության նպատակը⁴:

Հանցագործի անձի առանձնահատկությունները դրսևորվում են նաև մոտիվացիայում: Հանցանքի կատարման դրդապատճառներն են մարդու՝ զենքին տիրելու ձգտումը, ինչը տալիս է ուժի, վստահության, անվտանգության զգացողություն, ինչպես նաև ինքնահաստատումը և այլն⁵:

3. Իրավաբանական հատկանիշներ.

Իրավաբանական հատկանիշներից են դատվածության առկայությունը, խմբի կազմում հանցանքը կատարելու փաստերը: Ուսումնասիրված անձանց 90 %-ը նախկինում դատվածություն չի ունեցել: Խմբի կազմում հանցանք կատարելու ցուցանիշը կազմում է 20 %:

Այսպիսով, խնդրո առարկա հանցագործություններ կատարողներին ընդհանրացված ձևով բնութագրական է երիտասարդ տարիքը՝ 25-50 տարեկան, արական սեռին պատկանելիությունը, ազգությամբ հայ, Հայաստանի Հանրապետության քաղաքացի լինելը, ցածր կրթական մակարդակը, ամուսնական հարաբերությունների առկայությունը, մշտական օրինական եկամուտի աղբյուրի բացակայությունը, հանցագործության առարկային տիրելու, ինքնահաստատման դրդապատճառով հանցանք կատարելը, նախկինում դատվածություն չունենալը:

Վերը նկարագրված տվյալներն ունեն կարևոր քրեաբանական նշանակություն: Այսպես.

1) տարիքային բնութագրումը թույլ է տալիս դատել որոշակի տարիքային խմբի ներկայացուցիչների քրեածին ակտիվության դրսևորման ինտենսիվության աստիճանի և հանցավոր վարքի առանձնահատկությունների մասին,

2) կրթական մակարդակը մեծապես կանխորոշում է հանցագործության կատարման եղանակը, օգտագործվող միջոցների բնույթը,

3) բարոյական որակները և հոգեբանական առանձնահատկությունները թույլ են տալիս խորությամբ բացահայտել անձի բովանդակությունը, ընտրել հոգեբանական ներգոր-

³ Տե՛ս *Чуфаровский Ю.В.*, Криминология в вопросах и ответах: учеб. пособие. – М.: ТК ВЕЛБИ, Изд.-во «Проспект», 2006, էջ 38:

⁴ Տե՛ս *Сошина Л.А.*, Криминологическая характеристика лиц, совершивших преступления в сфере незаконного оборота оружия (на примере Иркутской области) // Сибирский юридический вестник, № 1 (40), 2008, էջ 61:

⁵ Տե՛ս նույն տեղում:

ծուրյան արդյունավետ հնարքներ և այլն⁶:

Ձեռքի օրինական շրջանառության դեմ ուղղված հանցագործություններ կատարող անձին նկարագրող տեղեկատվության հիման վրա պետք է կառուցվի այդ հանցատեսակների անհատական կանխարգելումը: Նշված տվյալները հնարավորություն են տալիս որոշելու անհատական կանխարգելիչ միջոցառումների ուղղվածությունը (օրինակ՝ խմբային հանցանք կատարելու պարագայում դա այլ է, միանձնյա կատարելու դեպքում՝ այլ), ընտրել ներգրավվող անձ (օրինակ՝ արդյունավետ կարող է լինել ամուսնու կամ հանցավորի համար հեղինակություն ունեցող այլ անձի մասնակցությունը կանխարգելիչ միջոցառումներին) և այլն⁷:

Եզրակացություն

Կատարված հետազոտության արդյունքները թույլ են տալիս ձևակերպել հետևյալ եզրահանգումները.

1. Ձեռքի օրինական շրջանառության դեմ ուղղված հանցագործություններ կատարող անձին ընդհանրացված ձևով բնորոշ է երիտասարդ տարիքի (25-50 տարեկան) քրեական ակտիվությունը, արական սեռին պատկանելիությունը, ազգությամբ հայ, Հայաստանի Հանրապետության քաղաքացի լինելը, ամուսնական հարաբերությունների առկայությունը, ցածր կրթական մակարդակը, մշտական աշխատանքային զբաղվածության բացակայությունը, հանցագործության առարկային տիրելու, ինքնահաստատման դրդապատճառով հանցանք կատարելը:

2. Վերը նկարագրված տվյալներն ունեն կարևոր քրեաբանական նշանակություն: Այսպես, տարիքային բնութագրումը թույլ է տալիս դատել որոշակի տարիքային խմբի ներկայացուցիչների քրեածին ակտիվության դրսևորման ինտենսիվության աստիճանի և հանցավոր վարքի առանձնահատկությունների մասին, կրթական մակարդակը մեծապես կանխորոշում է հանցագործության կատարման եղանակը, օգտագործվող միջոցների բնույթը, բարոյական որակները և հոգեբանական առանձնահատկությունները հնարավորություն են ընձեռում խորությամբ բացահայտել անձի բովանդակությունը, ընտրել հոգեբանական ներգործության արդյունավետ հնարքներ և այլն:

3. Ձեռքի օրինական շրջանառության դեմ ուղղված հանցագործությունների կատարող անձին նկարագրող տեղեկատվության հիման վրա պետք է կառուցվի այդ հանցատեսակների անհատական կանխարգելումը: Նշված տվյալները հնարավորություն են տալիս որոշել անհատական կանխարգելիչ միջոցառումների ուղղվածությունը, ընտրել ներգրավվող անձ և այլն:

Ամփոփագիր: Վերջին տարիների վիճակագրական տվյալների վերլուծությունը բացահայտել է զենքի օրինական շրջանառության դեմ ուղղված հանցագործությունների կայուն աճ: Դա խոսում է կանխարգելիչ ներգործության ակտիվացման անհրաժեշտության մասին: Նշված հանցատեսակների նկատմամբ կանխարգելիչ ներգործության ապահովման, մասնավորապես՝ անհատական կանխարգելիչ աշխատանքների կազմակերպման համար հարկավոր է դրանց քրեաբանական բաղադրիչների, այդ թվում՝ հանցագործի անձի հետազոտության իրականացում:

Հոդվածում ներկայացված են զենքի օրինական շրջանառության դեմ ուղղված հանցագործություններ կատա-

⁶ Տե՛ս *Իսրայելյան Գ.*, Թմրահանցագործի անձը և Հայաստանի Հանրապետությունում թմրահանցագործությունների անհատական կանխարգելման որոշ հարցեր // ՀՀ Սահմանադրական դատարան. Տեղեկագիր. 4 (112) 2023, էջ 56:

⁷ Տե՛ս նույն տեղում:

րող անձի՝ հեղինակի կողմից իրականացված քրեաբանական հետազոտության արդյունքները՝ 2023-2024 թվականներին կայացված 50 դատական ակտերի տվյալների հիման վրա: Հետազոտության միջոցով բացահայտվել են հանցագործի անձի կառուցվածքային տարրերը բնութագրող հատկանիշները և դրանց քրեաբանական նշանակությունը:

Հեղինակի հետազոտության արդյունքները վկայում են, որ զենքի օրինական շրջանառության դեմ ուղղված հանցագործություններ կատարողի անձին ընդհանրացված ձևով բնորոշ է երիտասարդ տարիքի (25-50 տարեկան) քրեական ակտիվությունը, արական սեռին պատկանելիությունը, ազգությամբ հայ, Հայաստանի Հանրապետության քաղաքացի լինելը, ամուսնական հարաբերությունների առկայությունը, ցածր կրթական մակարդակը, մշտական աշխատանքային զբաղվածության բացակայությունը, հանցագործության առարկային տիրելու, ինքնահաստատման դրդապատճառով հանցանք կատարելը: Նշված և հանցագործին բնութագրող այլ տվյալները պետք է հաշվի առնվեն վերոհիշյալ հանցագործությունների անհատական կանխարգելման ուղղվածությունը որոշելիս, մեթոդն ընտրելիս և կազմակերպական բնույթի այլ հարցեր կարգավորելիս:

Annotation: An analysis of statistical data in recent years has revealed a steady increase in crimes against legitimate weapons trafficking. This indicates the need to activate the preventive effect. In order to ensure a preventive effect, in particular, for the organization of individual preventive work, it is necessary to carry out a study of the criminological components of these crimes, including the personality of a criminal.

The article presents the results of a study conducted by the author of a person who has committed crimes against the legitimate trafficking of weapons, based on data from 50 judicial acts adopted in 2023-2024. As a result of the research, the signs characterizing the structural elements of the criminal's personality and their criminological significance are revealed.

The results of the author's research prove that a person who commits crimes against the legitimate trafficking of weapons is generally characterized by criminal activity at a young age (25-50 years old), belonging to the male sex, Armenian nationality, citizenship of the Republic of Armenia, marital relations, low level of education, lack of permanent employment, committing crimes motivated by possession of weapons and self-affirmation. These and other data characterizing the offender should be taken into account when determining the direction of individual prevention of the above-mentioned crimes, choosing a method and solving other organizational issues.

Аннотация: Анализ статистических данных за последние годы выявил устойчивый рост числа преступлений против законного оборота оружия. Это свидетельствует о необходимости активации предупредительного воздействия. В целях обеспечения предупредительного воздействия, в частности, для организации индивидуальных профилактических работ, необходимо осуществить исследование криминологических составляющих указанных преступлений, в том числе, личности преступника.

В статье представлены результаты проведенного автором статьи исследования характеристик лица, совершившего преступления против законного оборота оружия, на основе данных 50 судебных актов, принятых в 2023-2024 гг. В результате исследования раскрыты признаки, характеризующие структурные элементы личности преступника и их криминологическое значение.

Результаты исследования доказывают, что для лица, совершающего преступления против законного оборота оружия, в целом характерна криминальная активность в молодом возрасте (25-50 лет), принадлежность к мужскому полу, армянская национальность, гражданство Республики Армения, наличие супружеских отношений, низкий уровень образования, отсутствие постоянной работы, мотив совершения преступления – обладание оружием и самоутверждение. Указанные и другие данные, характеризующие преступника, должны учитываться при определении направления индивидуальной профилактики вышеупомянутых преступлений, выборе метода и при решении других вопросов организационного характера.



Բանալի բառեր - զենք, օրինական շրջանառություն, հանցագործի անձ, քրեաբանական նկարագիր:

Keywords: weapons, legitimate trafficking, criminal personality, criminological characteristics.

Ключевые слова: оружие, законный оборот, личность преступника, криминологическая характеристика.

Օգտագործված գրականության ցանկ

1. Իսրայելյան Գ., Թմրահանցագործի անձը և Հայաստանի Հանրապետությունում թմրահանցագործությունների անհատական կանխարգելման որոշ հարցեր // ՀՀ Սահմանադրական դատարան, Տեղեկագիր 4 (112) 2023, էջեր 49-62:
2. Հայաստանի Հանրապետության դատախազության 2022 թվականի գործունեության մասին հաղորդում // https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/rep_50_8560351818.pdf:
3. Հայաստանի Հանրապետության դատախազության 2023 թվականի գործունեության մասին հաղորդում // https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/dyn_page_285_1465690793.pdf:
4. Кобец П. Н., Личность рецидивиста и особенности ее формирования // Закон и право 2001. № 11. с. 39-42.
5. Сошина Л. А., Криминологическая характеристика лиц, совершивших преступления в сфере незаконного оборота оружия (на примере Иркутской области) // Сибирский юридический вестник, № 1 (40), 2008. с. 60-64.
6. Чуфаровский Ю. В., Криминология в вопросах и ответах: учеб. пособие. – М.: ТК ВЕЛБИ, Изд.-во «Проспект», 2006. с. 144.

Իսրայելյան Գ. - ՀՀ ԳԱԱ փորձաքննությունների ազգային բյուրոյի քրեաբանության կիրառական հիմնախնդիրների գիտահետազոտական կենտրոնի պետ, Եվրասիա միջազգային համալսարանի դասախոս, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, էլիասցե՝ g_i_1979@mail.ru:

Ներկայացվել է խմբագրություն 22.01.2025 թ., տրվել է գրախոսության 22.01.2025 թ., երաշխավորվել է ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ուսումնամեթոդական և զարգացման վարչության պետ, ոստիկանության փոխգնդապետ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Ա. Մնացականյանի կողմից, ընդունվել է տպագրության 22.04.2025 թ.:

<https://doi.org/10.59546/18290744-2025.1-3-93>

МЕРИ ВАНУНИ

Специалист отдела по организации научно-исследовательских и программно-методических работ Академии юстиции, эксперт отдела координации бюджетного процесса Министерства финансов РА

ՄԵՐԻ ՎԱՆՈՒՆԻ

Արդարադատության ակադեմիայի գիտահետազոտական և ծրագրամեթոդական աշխատանքների կազմակերպման բաժնի մասնագետ, ՀՀ ֆինանսների նախարարության բյուջեային համակարգման վարչության փորձագետ

MERI VANUNI

Specialist of the Unit of Organization of Scientific Research and Programmatic-Methodological Activities of the Academy of Justice, expert of the budget process coordination department of Ministry of Finance of the RA

УГОЛОВНАЯ ОТВЕТСТВЕННОСТЬ ЗА МЕЖДУНАРОДНЫЕ ПРЕСТУПЛЕНИЯ В АРМЕНИИ:

ЮРИДИЧЕСКИЕ И ПРАКТИЧЕСКИЕ АСПЕКТЫ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ.
ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՍԴԵԿՏՆԵՐ

CRIMINAL RESPONSIBILITY FOR INTERNATIONAL CRIMES IN ARMENIA: LEGAL AND PRACTICAL ASPECTS

Введение

Международные преступления, такие как геноцид, преступления против человечности и военные преступления, представляют собой одни из самых серьезных нарушений, угрожающих основным принципам международного права и правам человека. Эти преступления не только наносят непоправимый ущерб отдельным жертвам, но и представляют угрозу мировому порядку, угрожая безопасности и миру на международном уровне. В условиях глобализации и активного взаимодействия между странами проблема наказания за международные

преступления становится особенно актуальной. В свете этого важно, чтобы национальные законодательства стран соответствовали международным стандартам, обеспечивая привлечение к ответственности тех, кто совершает такие преступления.

Армения, подписав Римский статут Международного уголовного суда (МУС) в 2002 году, обязалась внедрить принципы международного уголовного права в свою национальную правовую систему. В 2022 году в Уголовный кодекс и Уголовно-процессуальный кодекс Армении были внесены изменения, направленные на усиление уголовной ответственности за международные преступления. Эти изменения стали важным шагом на пути к улучшению правовой базы для эффективного преследования таких преступлений, но на практике остаются проблемы, связанные с нехваткой правоприменительной практики, дефицитом квалифицированных специалистов и другими препятствиями.

В данной статье мы рассмотрим правовые и практические аспекты уголовной ответственности за международные преступления в Армении, с акцентом на изменения в законодательстве, произошедшие в 2022 году. Мы также обсудим основные проблемы, возникающие в правоприменительной практике, и предложим возможные пути их решения для улучшения эффективности борьбы с международной преступностью.

Основное исследование

Армения, подписав Римский статут и ратифицировав его в 2002 году, взяла на себя обязательства интегрировать в свое законодательство нормы международного уголовного права, что отражается в Уголовном кодексе страны. До 2022 года международные преступления, такие как геноцид, преступления против человечности и военные преступления, не имели чёткого определения в армянском законодательстве, что сужало возможности для их правоприменения. Внесение изменений в законодательство в 2022 году стало значимым шагом в направлении установления уголовной ответственности за эти преступления и открыло новые возможности для реализации норм международного права на национальном уровне¹.

Согласно статье 4 Уголовного кодекса Армении, изменения, введённые в 2022 году, расширяют сферу действия армянского уголовного законодательства, позволяя привлекать к ответственности лиц, совершивших международные преступления, независимо от времени и места их совершения. Этот шаг соответствует обязательствам Армении, взятым при ратификации Римского статута, который запрещает международные преступления и требует от стран-участников борьбы с ними на национальном уровне. В соответствии с изменениями в армянском законодательстве, международные преступления теперь чётко определяются как геноцид, военные преступления и преступления против человечности, что также представляет собой важный шаг в укреплении международной правовой безопасности².

В Уголовный кодекс Армении теперь включены отдельные статьи, посвящённые международным преступлениям, в которых подробно рассматриваются как геноцид, так и преступления против человечности. Статья 105 Уголовного кодекса Армении определяет геноцид как «умышленное уничтожение, в том числе частичное уничтожение, национальных, этнических, расовых и религиозных групп» путём массовых убийств, изнасилований,

¹ Иванов, А.А., Международное уголовное право: основы и практика, Издательство «Юридическая литература», 2018, стр. 25-27.

² Ковальчук, П.П., Роль международных норм в национальной правовой системе, Издательство «Наука», 2019, стр. 5-9.

насилованного перемещения населения и других жестоких деяний. Это определение полностью соответствует международным стандартам, что даёт армянскому правосудию возможность более эффективно преследовать лиц, совершивших эти преступления³. В то же время следует отметить, что для эффективного преследования геноцида необходимо наличие доказательств, таких как свидетельские показания, материалы расследований, а также международное сотрудничество с различными государственными и международными организациями⁴. Важно отметить, что международное сообщество оказывает значительное влияние на успешность преследования, так как наличие политических или дипломатических факторов может либо способствовать, либо препятствовать объективному судебному процессу.

В Законодательстве Республики Армении также дано четкое определение понятия «военные преступления». Согласно статье 110 Уголовного кодекса, военные преступления охватывают действия, направленные против мирных жителей и некомбатантов, использование запрещённых методов ведения войны, а также другие преступления, нарушающие законы и обычаи войны. Эти преступления в основном связаны с нарушением международного гуманитарного права, и их преследование требует высокой юридической квалификации. Для этого Армении необходимо развивать механизмы сотрудничества с международными трибуналами, такими как Международный уголовный суд (МУС), а также усиленно работать над созданием специализированных судебных органов, которые будут заниматься расследованием таких дел. Однако на практике армянские органы сталкиваются с трудностями, включая нехватку специалистов в области международного гуманитарного права и ограниченные ресурсы для проведения сложных расследований.⁵ Для улучшения ситуации важна поддержка международных организаций и обмен опытом со странами, уже имеющими успешные практики в области судебного преследования военных преступлений, что поможет Армении создавать более эффективные системы правосудия.⁶

Одним из важнейших изменений, внесенных в Уголовно-процессуальный кодекс Армении в 2022 году, является усиление координации между армянскими правоохранительными органами и международными судебными инстанциями. Статья 10 Уголовно-процессуального кодекса теперь включает положения, обязывающие прокуратуру и другие органы безопасности координировать свою работу с МУС, обеспечивая передачу доказательств и содействие в процессе экстрадиции преступников, обвиняемых в международных преступлениях. Однако это положение, несмотря на его значимость, сталкивается с рядом проблем. Прежде всего, вопросы экстрадиции часто сопровождаются политическими и дипломатическими трудностями. Политические связи между государствами могут влиять на решения об экстрадиции, что усложняет процесс привлечения международных преступников к ответственности. Бывают случаи, когда политический контекст вмешивается в экстрадицию, особенно в отношении высокопрофильных личностей, которые могут быть вовлечены в международные политические процессы, что делает их фактически защищёнными от наказания [6]. Проблемы, связанные с политическим контекстом экстрадиции, требуют разработки механизма, который будет

³ Уголовный кодекс Республики Армения (с изменениями 2022 года), статья 4.

⁴ Петров, В.В., Сотрудничество Армении с Международным уголовным судом: проблемы и пути решения, Издательство «Международное право», 2021, стр. 11-12.

⁵ Мартиросян, Г.Г., Политика и право: вызовы правосудию в Армении, Издательство «Армения», 2022, стр. 22-25.

⁶ Карапетян, Н.Т., Проблемы интеграции международных норм в правовую систему Армении, Издательство «Армянская юридическая академия», 2022, стр. 15-19.

учитывать не только юридические, но и политические аспекты, с целью обеспечения баланса между правами человека и международной правовой справедливостью.

Особое внимание следует уделить подготовке квалифицированных специалистов, способных эффективно расследовать международные преступления. Проблемы, связанные с квалификацией сотрудников правоохранительных органов, следственных и судебных органов, являются одним из главных препятствий для эффективного преследования международных преступлений в Армении. Международные преступления требуют от специалистов глубоких знаний в области международного уголовного права, международных норм и практик, что невозможно без соответствующей подготовки. Поэтому необходимо продолжить разработку и внедрение специализированных образовательных программ и курсов для правоохранительных органов и судей, чтобы обеспечить их готовность к расследованию дел о международных преступлениях. Одним из ключевых шагов является создание специализированных судебных органов, которые будут заниматься исключительно международными преступлениями. На данный момент большинство дел о международных преступлениях рассматривается в обычных уголовных судах, что не всегда обеспечивает необходимый уровень квалификации и должного внимания к таким делам.⁷ Для повышения квалификации сотрудников органов правопорядка, а также для эффективного применения норм международного уголовного права необходимо взаимодействовать с международными организациями, занимающимися подготовкой кадров и обменом опытом.

К тому же недостаточная техническая оснащённость правоохранительных органов и судов является ещё одной серьёзной проблемой. Расследование международных преступлений требует сбора большого объёма данных, включая свидетельские показания, экспертные заключения и другие документы, которые можно собрать и проверить только с помощью современных технологий и оборудования. Армения, как и многие другие страны, сталкивается с нехваткой таких ресурсов, что затрудняет проведение расследований. Важно также учитывать международный контекст, где сбор доказательств часто требует сотрудничества с другими государствами, что может быть затруднено политическими и дипломатическими проблемами.⁸ Для преодоления этих трудностей необходимо продолжать развивать инфраструктуру, обеспечивающую эффективное использование технологий в расследованиях и судебном процессе, а также активно использовать ресурсы международных организаций.

Тем не менее, несмотря на эти проблемы, армянское законодательство и правоприменительная практика продолжают развиваться. Для дальнейшего эффективного применения международных норм в национальной судебной системе важно усилить сотрудничество с международными институтами и активно внедрять международный опыт в процесс правосудия. Эффективное сотрудничество с международными судебными органами, такими как Международный уголовный суд, а также усиление роли национальных судов в решении вопросов международных преступлений позволит улучшить правовую базу и гарантировать высокие стандарты правосудия.

⁷ Смирнова, И.И., Международные преступления и их преследование: правовые и политические аспекты, Издательство «Право», 2020, стр. 12-15.

⁸ Уголовно-процессуальный кодекс Республики Армения (с изменениями 2022 года), статья 10.

Закключение

Анализ изменений, внесённых в Уголовный и Уголовно-процессуальный кодексы Армении в 2022 году, свидетельствует о значительных шагах в направлении интеграции международного уголовного права в национальную правовую систему. Установление чёткого определения международных преступлений, таких как геноцид, военные преступления и преступления против человечности, даёт возможность более эффективно преследовать этих преступников на национальном уровне и укрепляет правовую безопасность страны в контексте международных обязательств.

Тем не менее, для успешной реализации этих норм необходимо решение ряда проблем. Среди них – нехватка квалифицированных специалистов, ограниченные ресурсы для расследования международных преступлений и техническая оснащённость правоохранительных органов и судебных органов. Важным аспектом является также политическая и дипломатическая сложность экстрадиции преступников, что требует совершенствования механизмов сотрудничества с международными судебными инстанциями.

Для эффективного привлечения к ответственности за международные преступления Армении предстоит продолжить развивать сотрудничество с международными организациями, улучшать подготовку кадров в области международного уголовного права и создавать специализированные судебные органы. Внедрение международного опыта и использование современных технологий для сбора и анализа доказательств также станут ключевыми факторами успешного применения международных норм.

Если эти меры будут реализованы, Армения укрепит свою правовую систему и сможет значительно повлиять на глобальное правосудие, активно участвуя в борьбе с международными преступлениями и обеспечивая справедливость на международной арене.

Аннотация. В статье проводится анализ изменений, внесённых в Законодательство Армении в 2022 году, в частности в Уголовный и Уголовно-процессуальный кодексы, которые направлены на более эффективное применение норм международного уголовного права на национальном уровне. В статье рассматривается внедрение чётких определений международных преступлений, таких как геноцид, военные преступления и преступления против человечности, что даёт возможность для преследования виновных в Армении независимо от времени и места совершения преступления. Одним из ключевых аспектов является также усиление координации между армянскими правоохранительными органами и международными судебными инстанциями, что способствует улучшению процесса решения вопроса экстрадиции и передаче доказательств. В статье поднимаются проблемы, такие как нехватка квалифицированных специалистов в области международного уголовного права, недостаточные ресурсы для проведения сложных расследований и техническая оснащённость правоохранительных органов. Также акцентируется внимание на политических и дипломатических сложностях экстрадиции, которые могут повлиять на процесс привлечения к ответственности преступников. В заключении делается вывод о необходимости дальнейшего совершенствования национального законодательства, развития международного сотрудничества и подготовки специалистов для эффективного расследования международных преступлений.

Ամփոփագիր: Հոդվածն ուսումնասիրում է 2022 թվականի հայաստանյան օրենսդրությունը, մասնավորապես՝ քրեական և քրեական դատավարության օրենսգրքերը, որը նպատակ է հետապնդում ավելի արդյունավետ իմպլեմենտացնել միջազգային իրավական նորմերը ներպետական օրենսդրության մեջ: Հոդվածը վերլուծության է ենթարկում միջազգային հանցագործությունների՝ ցեղասպանության, պատերազմական հանցագործությունների և մարդկության դեմ ուղված հանցագործությունների սահմանումները, որոնք հնարավոր են դարձնում

այդ հանցանքների քննությունը Հայաստանի Հանրապետությունում՝ անկախ դրա կատարման վայրից և ժամանակից: Կարևոր նշանակություն ունի Հայաստանի օրենսդիր մարմնի և միջազգային դատարանների միջև համագործակցությունը՝ ապացույցների փոխանցման և արտահանձնման գործընթացների լավարկմանը նպաստելու տեսանկյունից: Աշխատության մեջ ուշադրության են արժանանում քրեական իրավունքով մասնագիտացած անձանց պակասը, համալիր քննության իրականացման համար նախատեսված միջոցների և իրավապահ մարմինների մոտ առկա տեխնիկական միջոցների անբավարարությունը:

Ընդգծվում են նաև արտահանձնման հետ կապված քաղաքական և դիվանագիտական բարդությունները, որոնք կարող են ազդել հանցագործների հետապնդման վրա: Եզրափակելով հոդվածը՝ կոչ է անում ազգային օրենսդրության հետագա կատարելագործմանը, միջազգային համագործակցության զարգացմանը և միջազգային հանցագործությունների արդյունավետ հետաքննության համար մասնագետների պատրաստմանը:

Annotation. This article analyzes the changes made to Armenia's legislation in 2022, particularly the amendments to the Criminal Code and the Criminal Procedure Code, aimed at more effective implementation of international criminal law norms at the national level. The article examines the introduction of clear definitions of international crimes such as genocide, war crimes, and crimes against humanity, which allows for their prosecution in Armenia regardless of the time and place of commission. One of the key aspects also involves strengthening coordination between Armenian law enforcement agencies and international judicial bodies, contributing to the improvement of extradition processes and evidence transfer. The article raises issues such as the lack of qualified specialists in international criminal law, insufficient resources for conducting complex investigations, and the technical inadequacy of law enforcement bodies. The political and diplomatic complexities surrounding extradition, which can affect the prosecution of perpetrators, are also emphasized. In conclusion, the article calls for further improvement of national legislation, the development of international cooperation, and the training of specialists to effectively investigate international crimes.

Ключевые слова: международные преступления, цивилизация, военные преступления, преступления против человечности, Армянское законодательство, уголовная ответственность, международное сотрудничество, экстрадиция, Международный уголовный суд (МУС), правовые реформы.

Բանալի բառեր– միջազգային հանցագործություններ, ցեղասպանություն, պատերազմի հանցագործություններ, մարդկության դեմ հանցագործություններ, Հայաստանի օրենսդրություն, քրեական պատասխանատվություն, միջազգային համագործակցություն, Էկստրադիցիա, Միջազգային քրեական դատարան (ՄԲԴ), իրավաբանական բարեփոխումներ:

Keywords: International crimes, Genocide, war crimes, crimes against humanity, Armenian legislation, criminal responsibility, international cooperation, extradition, International Criminal Court (ICC), legal reforms.

СПИСОК ИСПОЛЬЗОВАННОЙ ЛИТЕРАТУРЫ

1. Иванов, А.А., Международное уголовное право: основы и практика, Издательство «Юридическая литература», 2018.
2. Ковальчук, П.П., Роль международных норм в национальной правовой системе, Издательство «Наука», 2019.
3. Мартиросян, Г.Г., Политика и право: вызовы правосудию в Армении, Издательство «Армения», 2022.
4. Петров, В.В., Сотрудничество Армении с Международным уголовным судом: проблемы и пути решения, Издательство «Международное право», 2021.
5. Смирнова, И.И., Международные преступления и их преследование: правовые и политические аспекты, Издательство «Право», 2020.

6. Уголовный кодекс Республики Армения (с изменениями 2022 года), статья 4.
7. Уголовно-процессуальный кодекс Республики Армения (с изменениями 2022 года), статья 10.
8. Карапетян, Н.Т., Проблемы интеграции международных норм в правовую систему Армении, Издательство «Армянская юридическая академия», 2022.

Вануни М. – Специалист отдела по организации научно-исследовательских и программно-методических работ Академии юстиции, эксперт отдела координации бюджетного процесса Министерства финансов РА, эл. почта: vanuni.mery@gmail.com.

Отправлено в редакцию 05.03.2025 г., дано на рецензирование 05.03.2025 г., утверждено доктором юридических наук, доцентом Исследовательского института международного уголовного права Университета Фридриха-Александра в Эрлангене-Нюрнберге Г. Петросяном, принято в печать 22.04.2025 г.

<https://doi.org/10.59546/18290744-2025.1-3-100>

ԳԵՎՈՐԳ ԲԱՐՍԵՂՅԱՆ

*ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի
քրեական իրավունքի ամբիոնի ասպիրանտ, դասախոս*

GEVORG BARSEGHIAN

*PhD Student at the Chair of Criminal Law of
YSU Faculty of Law, Lecturer*

ГЕВОРГ БАРСЕГЯН

*Аспирант кафедры уголовного права
юридического факультета ЕГУ, преподаватель*

**ՕՊԵՐԱՏԻՎ-ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ
ԲԱՑԱՌՈՂ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԻ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ**

**CURRENT ISSUES AND DEVELOPMENT TRENDS OF CIRCUMSTANCES
EXCLUDING CRIMINAL LIABILITY OF PERSONS CARRYING OUT
OPERATIONAL-SEARCH ACTIVITIES**

**АКТУАЛЬНЫЕ ПРОБЛЕМЫ И ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ
ОБСТОЯТЕЛЬСТВ, ИСКЛЮЧАЮЩИХ УГОЛОВНУЮ
ОТВЕТСТВЕННОСТЬ ЛИЦ, ОСУЩЕСТВЛЯЮЩИХ
ОПЕРАТИВНО-РОЗЫСКНУЮ ДЕЯТЕЛЬНОСТЬ**

I. Ներածություն

Օպերատիվ-հետախուզական գործունեություն (այսուհետ՝ նաև ՕՀԳ) իրականացնող մարմինների աշխատակիցները և այդ մարմինների հետ համագործակցող անձինք էական դերակատարում ունեն հանցավորության դեմ պայքարում: Հիշատակված սուբյեկտներն օպերատիվ-հետախուզական որոշ միջոցառումներ իրականացնելիս հաճախ որդեգրում են հանցագործության հետ եզրային վարքագծային մոդել: Իրավաբանական գրականությունում անգամ նշվում է, որ կարող է տպավորություն ստեղծվել, թե օպերատիվ-հետախուզական գործունեությունն ունի «կիսաիրավական բնույթ»¹: ՕՀԳ իրականացնող անձանց կողմից այլ

¹ Տե՛ս *Астафьев Ю. В.*, Совершенствование форм и методов оперативно-розыскной деятельности в правовом

անձանց կատարվող/կատարած հանցավոր ոտնձգությունների կանխարգելման կամ դրանց հետևանքների կանխման, հանցագործությունների բացահայտման կամ անհրաժեշտ ապացույցների ձեռքբերման ընթացքում ստեղծվում է քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառելու իրական հնարավորություն: Այն ենթադրում է ՕՀԳ իրականացնող անձի գործունեությունում (արարքում) ձևականորեն հանցավոր տարրի առկայություն: Հետևաբար, քրեական օրենքը պետք է նախատեսի իրավաչափության կոնկրետ պայմանների առկայության դեպքում ՕՀԳ իրականացնող անձին ձևականորեն հանցավոր համարվող արարքի համար քրեական պատասխանատվության չենթարկելու հնարավորություն՝ արարքում հակաիրավականության բացակայության և դրա՝ սոցիալապես օգտակար ու նպատակադրված լինելու հաշվառմամբ: Ակնհայտ է, որ խոսքը քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքի մասին է:

Սույն հոդվածի հետազոտման առարկան, այն է՝ քրեական օրենքով պաշտպանվող շահերին իրավաչափ վնաս պատճառելու դեպքում օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող անձանց քրեական պատասխանատվության բացառմանը վերաբերող հարցերը, ներպատական մակարդակում բացարձակապես հետազոտված չէ: Առհասարակ, այս խնդրի հետազոտմանը նվիրված աշխատանքները, տարբեր պատճառներով պայմանավորված, սակավաթիվ են. հնարավոր է գտնել ատենախոսական և մենագրական մի քանի արժեքավոր աշխատանք², որոնք էլ և հիմք են ծառայել այս հետազոտության համար:

ՀՀ քրեական օրենսգրքի³ (այսուհետ՝ նաև Օրենսգիրք)՝ «Քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքները» վերտառությամբ 6-րդ գլխում տեղ գտած կարգավորումների հետազոտումը ցույց է տալիս, որ քննարկվող հարցը համապարփակ կերպով կարգավորված չէ, և մշակված չէ այնպիսի նորմ, որն ուղղված լինի ՕՀԳ քրեաիրավական ապահովման⁴ կարգավորող (ռեգուլյատիվ) ուղղության ամբողջական կարգավորմանն ու կենսագործմանը:

Հիմնական հետազոտություն

II. Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող անձանց քրեական պատասխանատվությունը բացառող նոր հանգամանքի իրավական մոդելավորման անհրաժեշտությունը

Ներպետական քրեական օրենսդրության զարգացման ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ քրեական պատասխանատվությունը բացառող ներկայում առկա հանգամանքները բխում են անհրաժեշտ պաշտպանությունից կամ ծայրահեղ անհրաժեշտությունից: Իրավակիրառ անհրաժեշտությամբ պայմանավորված ձևավորվել են քրեական պատասխանատվու-

государстве // Право и политика. М.: НБ-Иедиа, 2005. № 11.

² Տե՛ս Շկաբին Գ. Ս., Уголовно-правовое обеспечение оперативно-разыскной деятельности: теоретико-прикладные и законодательные аспекты. Диссертация на соискание учёной степени доктора юридических наук, Москва, 2018: Железняков Ю. Г., Уголовная ответственность субъектов оперативно-розыскной деятельности, совершивших преступления при осуществлении оперативно-розыскных мероприятий. Диссертация на соискание учёной степени кандидата юридических наук, Елец, 2009.

Ивенин В. О., Регулятивное и охранительное направления уголовно-правового обеспечения оперативно-розыскной деятельности и средства их реализации. Диссертация на соискание учёной степени кандидата юридических наук, Нижний Новгород, 2021.

³ Տե՛ս ՀՀ քրեական օրենսգիրք: Ընդունվել է 05.05.2021 թ., ուժի մեջ է մտել 01.07.2022 թ., ՀՕ-199-Ն: Գործում է:

⁴ Օպերատիվ-հետախուզական գործունեության քրեաիրավական ապահովման մասին առավել մանրամասն տե՛ս Barseghyan G., The Concept of Criminal-Legal Provision of Operational-Search Activities and a Brief Description of Its Directions, Պետություն և իրավունք N 2 (99) 2024, էջեր 162-173, <https://www.researchgate.net/publication/389314520>.

թյունը բացառող նոր հանգամանքներ: Օրենքով պաշտպանվող շահերին իրավաչափ փաստատճառելու դեպքերը առաջացել են ծայրահեղ անհրաժեշտությունից և, ժամանակի ընթացքում հասունանալով, վերածվել են իրավաբանորեն անկախ հանգամանքների:

Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող անձանց քրեական պատասխանատվությունը բացառող նոր հանգամանքի իրավական մոդելավորման անհրաժեշտությունը հիմնավորելու և դրա էությունը որոշելու համար կարևոր նշանակություն ունի Օրենսգրքում ամրագրված քրեական պատասխանատվությունը բացառող հնարավոր վերաբերելի հանգամանքների բովանդակության ուսումնասիրումը: Դրանց ուսումնասիրումը կարևոր է նաև այն տեսանկյունից, որ քրեական իրավունքի տեսությունում և պրակտիկայում տեսակետներ են արտահայտվում առ այն, որ այդ հանգամանքներն ի գործու են համապարփակ կերպով իրականացնելու օպերատիվ-հետախուզական գործունեության քրեաիրավական ապահովումը: Այսպիսով, քրեական պատասխանատվությունը բացառող հնարավոր վերաբերելի հանգամանքների բովանդակության ուսումնասիրումն էական է հասկանալու համար դրանցով կարգավորվող հնարավոր իրավահարաբերությունների ծավալը, և, ըստ այդմ, որոշելու՝ կա՞րողյոք Օրենսգրքում նոր հանգամանք ամրագրելու անհրաժեշտություն, թե ոչ:

Ծայրահեղ անհրաժեշտության վերաբերյալ. Քրեական իրավունքի տեսությունում տեսակետ է արտահայտվել այն մասին, որ օպերատիվ-հետախուզական գործունեության ընթացքում քրեական օրենքով պաշտպանվող շահերին փաստի պատճառման դեպքերը կարող են դիտարկվել ծայրահեղ անհրաժեշտության իրավաչափության պայմանների համատեքստում: Այս տեսակետը մենք չենք կիսում. նման մոտեցումը հանգեցնելու է ծայրահեղ անհրաժեշտության վերաբերյալ նորմի կամայական և լայն մեկնաբանման, ինչը, ի թիվս այլնի, չի բխում նաև քրեական օրենսդրության նորմատիվ-իրավական բնույթից: Հատուկ նորմի բացակայությունը և այդ պայմաններում ընդհանուր նորմի կիրառմանն ապավինելը հանգեցնելու են քրեական օրենսդրության կամայական մեկնաբանմանը, ոչ միատեսակ իրավակիրառ պրակտիկայի ձևավորմանը, որոնց վերացման կամ հաղթահարման համար այսպես, թե այնպես հետազայում պահանջվելու է իրավական նորմերի հստակեցում: Այն հանգեցնելու է նյութական իրավունքի բարդացման և գերհազեցման:

Քննարկվող թեմային նվիրված հետազոտություններում արդարացիորեն նշվում է, որ հանցավոր կազմակերպություններում ներդրված անձանց քրեական պատասխանատվության չենթարկելը ծայրահեղ անհրաժեշտության հիմքով արդարացի լուծում չէ, քանի որ գործնականորեն անհնար է ապացուցել ծայրահեղ անհրաժեշտության վիճակի առկայությունը ներդրված անձանց կողմից հարկադրված փաստ պատճառելու ընթացքում, և դեպքերի մեծամասնությունում ներդրված անձինք մասնակցում են հանցավոր գործունեությանը ոչ ծայրահեղ անհրաժեշտության պայմաններում⁵:

Սակայն հարկ է նկատել, որ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող անձանց քրեական պատասխանատվությունը բացառող սկզբունքորեն նոր հանգամանքը պետք է մոդելավորվի ծայրահեղ անհրաժեշտության և հիմնավորված ռիսկի իրավական էության, ինչպես նաև իրավական որոշակիության (կանխատեսելիության) սկզբունքի հաշվառմամբ:

Օրենքի կամ այլ իրավական ակտի պահանջը կատարելու վերաբերյալ. որոշ հետազոտողներ կարծում են, որ ՕՀԳ քրեաիրավական ապահովմանն ուղղված, մասնավորապես՝

⁵ Տե՛ս Хаитжанов Т. А., Горбунова К. А., К вопросу об уголовной ответственности лиц, внедрённых в преступные группировки // НиКа. 2012. <https://cyberleninka.ru/article/n/k-voprosu-ob-ugolovnoy-otvetstvennosti-lits-vnedrennyh-v-prestupnye-gruppirovki>.

ՕՀԳ իրականացնող անձանց քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանք կարող է լինել օրենքի կամ այլ իրավական ակտի պահանջը կատարելը: Այսպիսի հանգամանքը նախատեսված է նաև ՀՀ քրեական օրենսգրքում, որի 39-րդ հոդվածն ամրագրում է. «քրեական պատասխանատվության ենթակա չէ քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառած այն անձը, որը կատարել է օրենքով կամ իրավական այլ ակտերով թույլատրվող արարք կամ իր վրա դրված պարտականություն, եթե պահպանվել են դրա իրականացման՝ օրենքով կամ իրավական այլ ակտերով սահմանված պայմանները»:

Հիշատակված հանգամանքն ունի չափազանց մեծ բլանկետայնություն, ինչով պայմանավորված էլ օպերատիվ-հետախուզական գործունեության ընթացքում քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառելու հետ կապված հարցերն այս նորմով կարգավորելը հակասելու է իրավական որոշակիության սկզբունքին:

Քննարկվող հանգամանքի բովանդակությունից ուղղակի հետևում է, որ այս հանգամանքի առկայության (կիրառելիության) համար, քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառած անձը պետք է կատարած լինի այնպիսի արարք (պարտականություն), որը թույլատրվում է օրենքով կամ այլ իրավական ակտով, և պետք է պահպանված լինեն այդ արարքի (պարտականության) իրականացման՝ օրենքով կամ իրավական այլ ակտերով սահմանված պայմանները: Ասվածից բխում է, որ օրենքով կամ այլ իրավական ակտով պետք է սահմանված լինեն արարքի (պարտականության) իրականացման պայմանները: Մինչդեռ, օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման դեպքում քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառելու պայմաններն Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին օրենքով⁶ կամ այլ իրավական ակտով սահմանված չեն և, պայմանավորված օպերատիվ-հետախուզական միջոցառումների էքստրեմալ բնույթով, չեն էլ կարող դրանցով սահմանվել:

Ընդ որում, պետք է նկատի ունենալ, որ քրեական պատասխանատվությունը բացառող այս հանգամանքի դեպքում քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառել թույլատրվում է նաև օրենքից ցածր իրավաբանական ուժ ունեցող ենթաօրենսդրական ակտով սահմանված պայմանների պահմանմամբ: Այս առնչությամբ կարծում ենք, որ որևէ պարագայում ենթաօրենսդրական ակտով չի կարող կարգավորվել ՕՀՄ իրականացման ժամանակ քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնասի պատճառման դեպքերը: Պայմանավորված օպերատիվ-հետախուզական գործունեության գաղտնի բնույթով՝ չի բացառվում որևէ ենթաօրենսդրական ակտի առկայությունը, որով կսահմանվեն քրեական օրենքով պաշտպանվող շահերին թույլատրելի վնասի պատճառման սահմանները, ինչը, մեր կարծիքով, իրավաչափ և արդարացված չէ:

Քննարկվող հանգամանքում նկարագրված չեն պատճառվող հնարավոր վնասի սահմանները, որպիսի պայմաններում կարելի է եզրակացնել, որ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելիս կարող է պատճառվել ցանկացած, այդ թվում՝ ոչ համաչափ վնաս: Ընդ որում, վնասի պատճառման սահմաններ այս նորմում նկարագրվել չեն էլ կարող, քանզի այն տարածվում է գործունեության ամենատարբեր ոլորտների վրա: Ուստի, հնարավոր չէ քննարկվող նորմում նախատեսել պատճառվող հնարավոր վնասի սահմանները և օպերատիվ-հետախուզական գործունեության համար, և, օրինակ, բժշկական գործունեության համար:

⁶ Տե՛ս ՀՀ օրենքը Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին: Ընդունվել է 22.10.2007 թ., ուժի մեջ է մտել 08.12.2007 թ., ՀՕ-223-Ն: Գործում է:

Քննարկվող հանգամանքը, կարծում ենք, կարող է կիրառվել խիստ սահմանափակ դեպքերում: Օրինակ, բժշկի կողմից բժշկական գաղտնիքի հրապարակման դեպքում, որը թելադրված կլինի համաճարակային իրավիճակների կանխարգելման պարտականությամբ, կամ ամուսանընտանեկան հարաբերությունների դեպքում՝ գենետիկ հիվանդությունների կամ սեռավարակների մասին հայտնելը:

Քննարկվող հանգամանքի կիրառության մեկ այլ օրինակ կարող է լինել հայտարարված արտակարգ կամ ռազմական դրությամբ պայմանավորված Ազգային ժողովի պատգամավորի կողմից օրենքով սահմանված ժամկետի ավարտից հետո իր լիազորությունների իրականացումը շարունակելը: Այս արարքն արտաքուստ պարունակում է Օրենսգրքի 419-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցակազմի հատկանիշներ, այն է՝ իշխանությունը պահելը՝ (...) պատգամավորի (...) լիազորությունների ավարտից հետո այդ լիազորությունների իրականացումը շարունակելը: Սակայն, հիմք ընդունելով Սահմանադրության 91-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորումը առ այն, որ ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ Ազգային ժողովի ընտրություն չի անցկացվում, քրեական պատասխանատվությունը բացառող քննարկվող հանգամանքի ուժով պատգամավորը քրեական պատասխանատվության ենթակա չի լինի:

Մասնագիտական գործառույթների իրականացման վերաբերյալ. որոշ հետազոտողների կարծիքով՝ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելիս քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառելու դեպքում ՕՀԳ իրականացնող անձանց քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանք կարող է լինել մասնագիտական գործառույթների իրականացումը:

Մասնագիտական գործառույթների իրականացումը՝ որպես քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանք, ամրագրված է Օրենսգրքում, որի 37-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. «Քրեական պատասխանատվության ենթակա չէ այն անձը, որը քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս է պատճառել ի կատարումն անձի մասնագիտական գործառույթների, եթե պահպանվել են այդ մասնագիտական գործառույթների իրականացման համար իրավական ակտերով սահմանված պահանջները»:

Օրենքի կամ այլ իրավական ակտի պահանջը կատարելու՝ որպես քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքի վերաբերյալ ներկայացված դատողությունները և եզրահանգումները վերաբերում են նաև այս հանգամանքին: Սակայն հարկ է նշել, որ մասնագիտական գործառույթների իրականացումն իր բովանդակությամբ անհամեմատ ավելի լայն է, քան օրենքի կամ այլ իրավական ակտի պահանջը կատարելը: Այսինքն, քննարկվող հանգամանքն ունի ավելի մեծ բլանկետայնություն և օժտված է ավելի մեծ անորոշությամբ, քան օրենքի կամ այլ իրավական ակտի պահանջը կատարելու վերաբերյալ իրավական նորմը:

Հարկ ենք համարում նաև նշել, որ, մեր կարծիքով, մասնագիտական գործառույթների իրականացման վերաբերյալ իրավական նորմը, ըստ էության, ավելորդ է, քանզի դժվար է պատկերացնել, որևէ մասնագիտական գործառույթ, որը նախատեսված չլինի օրենքով կամ այլ իրավական ակտով: Այլ խոսքերով, օրենքի կամ այլ իրավական ակտի պահանջը կատարելու վերաբերյալ իրավական նորմը ամբողջությամբ ծածկում է բոլոր այն դեպքերը, որոնք համարվելու են մասնագիտական գործառույթի իրականացում: Մեր այս տեսակետը հիմնավորվում է «Մասնագիտական գործառույթների իրականացումը» վերտառությամբ 37-րդ հոդվածի բովանդակությամբ, որում հստակորեն նշված է, որ քրեական պատասխանատվությունը բացառող այս հանգամանքը կիրառելի է միայն այն պարագայում, եթե քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառած, մասնագիտական գործառույթ իրականացրած

անձը պահպանել է այդ մասնագիտական գործառույթների իրականացման համար իրավական ակտերով սահմանված պահանջները:

Այսպիսով, մասնագիտական գործառույթների իրականացումը՝ որպես քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանք, օրենքի կամ այլ իրավական ակտի պահանջը կատարելու վերաբերյալ իրավական նորմի բովանդակության կրկնությամբ պայմանավորված, չի կարող համարվել օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելիս քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառելու դեպքում ՕՀԳ իրականացնող անձանց քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանք: Ավելին, իր ավելորդ լինելու հանգամանքով պայմանավորված՝ այն պետք է դուրս բերվի Քրեական օրենսգրքից՝ ուժը կորցրած ճանաչելու միջոցով:

Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող անձանց քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքների արդի հիմնախնդիրների հետազոտման համատեքստում հետազոտական մեծ հետաքրքրություն է ներկայացնում Քրեական օրենսգրքի՝ **«Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների հետ համագործակցելը»** վերտառությամբ քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքի ուսումնասիրումը: Քրեական օրենսգրքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «քրեական պատասխանատվության ենթակա չէ քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառած այն անձը, որն օրենքով սահմանված կարգով համագործակցել է օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների հետ՝ հանցագործությունը բացահայտելուն, կանխելուն կամ ապացույցներ ձեռք բերելուն աջակցելու նպատակով տրված հանձնարարության սահմաններում, եթե այդ նպատակին հասնելու համար վնաս պատճառելու հետ չկապված միջոցները բացակայել են»:

Այս հանգամանքն իր կարգավորման առարկայով ամենամոտն է օպերատիվ-հետախուզական գործունեության քրեաիրավական ապահովմանը, ինչի միջոցով Օրենսդիրն իր հստակ վերաբերմունքն է արտահայտել օպերատիվ-հետախուզական գործունեության քրեաիրավական կարգավորման կարևորությանը: Ընդ որում, Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն ևս՝ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների հետ համագործակցող անձինք ազատվում են հանցագործության համար քրեական պատասխանատվությունից՝ օրենքով սահմանված կարգով:

Քննարկվող հանգամանքը համապարփակ կարգավորման չի ենթարկել օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելիս ՕՀԳ իրականացնող անձանց կողմից քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառելու հետ կապված հարցերը՝ սահմանափակվելով միայն օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների հետ համագործակցող անձանց՝ քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառելու դեպքերը կարգավորելով:

Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող անձանց քրեական պատասխանատվության վերաբերյալ ՀՀ դատական պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դատարանները երբևէ քննարկման առարկա չեն դարձրել և չեն դարձնում ՕՀԳ իրականացնող անձանց՝ քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառած վարքագիծը:

Այսպես, 2010 թվականի ապրիլի 7-ի № ԵԿԴ/0286/01/09 քրեական գործի⁷ ուսումնասի-

⁷ Տե՛ս 2010 թվականի ապրիլի 7-ի № ԵԿԴ/0286/01/09 քրեական գործը

րությունից պարզ է դառնում, որ ՀՀ ոստիկանության հետ համագործակցող, գործով վկայի դատավարական կարգավիճակ ունեցող Կ.Հ.-ն, ամբաստանյալներ Ռ.Ա.-ն և Ա.Ք.-ն Երևան քաղաքի Արշակունյաց պողոտայում գտնվող «Հայրենիք» կինոթատրոնի մոտ հանդիպել են «Էդիկ» անունով ներկայացած գնորդ՝ վերահսկելի գնում իրականացնող, ՀՀ ոստիկանության բաժնի պետ, գործով վկա Պ.Ս.-ին, որը, իբրև 500 գրամ թմրամիջոց ձեռք բերելու համար, իր ավտոմեքենայի մեջ Ա.Ք.-ին է փոխանցել քիմիական մշակման ենթարկված 3.500.000 ՀՀ դրամ գումարը: Ա.Ք.-ն, նշված գումարից առանձնացնելով ու պահելով 1.000.000 ՀՀ դրամը, իջել է մեքենայից և, նստելով քիչ այն կողմ կանգնած վկա Կ.Հ.-ի ավտոմեքենան, մնացած 2.500.000 ՀՀ դրամը տվել է մեքենայում սպասող Ռ.Ա.-ին: Գումարը հաշվելուց հետո վերջինս այն դրել է Կ.Հ.-ի ավտոմեքենայի պահախցիկը, ապա զանգահարել է գործով վկա, իր ծանոթ Լ.Ե.-ին ու խնդրել, որ վերջինս բերի և «Հայրենիք» կինոթատրոնի մոտ իրեն տա նրա տանը պահվող փաթեթը: Վկա Լ.Ե.-ն առանց տեղյակ լինելու փաթեթի պարունակության մասին և Ռ.Ա.-ի խոսքերից իմանալով, թե դրանում մեքենայի յուղ է, մոտ 15 րոպե անց բերել և Կ.Հ.-ի մեքենայում սպասող ամբաստանյալ Ռ.Ա.-ին է տվել առանձնապես խոշոր չափերի՝ 402.7 գրամ «ափիոն» տեսակի թմրամիջոցը: Ամբաստանյալ Ա.Ք.-ն, Ռ.Ա.-ից վերցնելով նշված թմրամիջոցը և նստելով որպես գնորդ ներկայացած «Էդիկ» անունով ոստիկանության աշխատակից Պ.Ս.-ի ավտոմեքենան, թմրամիջոցն ապօրինի իրացրել է նրան:

Դատարանը գործի քննության արդյունքներով Ռ.Ա.-ին և Ա.Ք.-ին մեղավոր է ճանաչել առանձնապես խոշոր չափերով թմրամիջոց ապօրինի իրացնելու համար (ՀՀ քրեական նախկին օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետ): Սակայն որևէ կերպով չի անդրադարձել ՕՀԳ իրականացնող մարմնի հետ համագործակցող Կ.Հ.-ի և ՕՀԳ իրականացնող մարմնի աշխատակից Պ.Ս.-ի արարքներին, մինչդեռ նրանց արարքներում ևս առկա են հանցակազմի հատկանիշներ, թեև ակնհայտ է, որ նրանց արարքները եղել են իրավաչափ և հետապնդել են հանրորեն օգտակար նպատակ: Մասնավորապես՝ Կ.Հ.-ի արարքում առկա է խմբի կազմում առանձնապես խոշոր չափերով թմրամիջոց իրացնելու հանցակազմը (ՀՀ քրեական նախկին օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետ), իսկ Պ.Ս.-ի արարքում՝ առանց իրացնելու նպատակի առանձնապես խոշոր չափերով թմրամիջոց ձեռք բերելու հանցակազմը (ՀՀ քրեական նախկին օրենսգրքի 268-րդ հոդվածի 3-րդ մաս):

2010 թվականի օգոստոսի 3-ի N⁸ ԵԿԴ/0192/01/10⁸ քրեական գործի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ «վերահսկելի գնում» ՕՀՄ շրջանակում, ըստ դատարանի արձանագրման՝ «նշված օպերատիվ հետախուզական գործողությանը ներգրավվել է համապատասխան օպերատիվ աշխատակից», որը Լ.Տ.-ին տվել է 10,000 ԱՄՆ դոլար, իսկ վերջինս, ստանալով նշված 10,000 ԱՄՆ դոլար գումարը, հանցակիցներ Ա.Ա.-ից և Մ.Խ.-ից ստանալով շուրջ 3100 գրամ ափիոն տեսակի թմրամիջոցը, այն հանձնել է [օպերատիվ աշխատակցին] և այդ պահին կազմակերպվել է վերջիններիս վստահությունը: Բերման ենթարկելուց հետո, Լ.Տ.-ի անձնական խուզարկությամբ հայտնաբերվել է 10,000 ԱՄՆ դոլարը, իսկ նրա ձեռքերի մատների և մասամբ ափերի վրա՝ դեղնականաչավուն լուսարձակող նյութը, որով մշակվել էր գումարը:

Սույն քրեական գործի ուսումնասիրությունից նույնպես պարզ է, որ օպերատիվ աշխատակցի արարքում ևս առկա է առանձնապես խոշոր չափերով թմրամիջոց ձեռք բերելու հանցակազմը, մինչդեռ դատարանը այդ արարքին որևէ կերպով չի անդրադարձել:

https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=14355223812264591

⁸ Տե՛ս 2010 թվականի օգոստոսի 3-ի N⁸ ԵԿԴ/0192/01/10 քրեական գործը, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=14355223812270202

Ըստ 2012 թվականի փետրվարի 9-ի № ԵԱՆԴ/0082/01/11⁹ քրեական գործի՝ Զ.Զ.-ն ընկերոջ՝ Յ.Ս.-ի հետ, նպատակ ունենալով ապօրինի ձեռք բերելու, ապա իրացնելու թունավոր նյութ հանդիսացող մետաղական սնդիկ և իմանալով Բ.Ս.-ի և Ս.Մ.-ի մոտ նման նյութի առկայության մասին, սկսել են ուղիներ փնտրել այն ապօրինի ձեռք բերելու և իրացնելու համար: 2010թ. աշնանը Յ.Ս.-ն և Զ.Զ.-ն, նախնական համաձայնության գալով Բ.Ս.-ի հետ, իրացման նպատակով վերջինիցս ապօրինի ձեռք են բերել թունավոր նյութ հանդիսացող 292.67 գրամ քաշով մետաղական սնդիկ, որը, առավել խոշոր խմբաքանակ վաճառելու պայմանով, 2010 թ. դեկտեմբերի 16-ին որպես փորձանմուշ առանց գումար ստանալու ապօրինի իրացրել են ԱԱԾ կողմից իրականացված «վերահսկելի գնում» օպերատիվ-հետախուզական միջոցառման շրջանակներում որպես գնորդ հանդես եկած ԱԱԾ աշխատակցին:

Երբ նախատեսված առավել մեծ խմբաքանակը Բ.Ս.-ի կողմից չի մատակարարվել, նախնական համաձայնության են եկել իրենց ծանոթ Ս.Մ.-ի հետ՝ մոտ 3 կգ մետաղական սնդիկը որպես ամբողջական խմբաքանակ վերջինիցս ապօրինի ձեռք բերելու և իրացնելու հարցում, որից հետո՝ 2011 թ. մարտի 30-ին, նրանից ապօրինի ձեռք են բերել և ԱԱԾ աշխատակցին որպես փորձանմուշ՝ սնդիկի բաղադրությունը պարզելու ապա մնացած խմբաքանակը 3,000 ԱՄՆ դոլար գումարով գնելու նպատակով, ապօրինի իրացրել են 48.380 գրամ մետաղական սնդիկ: 2011 թ. ապրիլի 14-ին Ս.Մ.-ից ապօրինի ձեռք բերված մնացած 3 կգ սնդիկը նույն եղանակով ապօրինի իրացրել են ԱԱԾ նույն աշխատակցին:

Սույն քրեական գործում ևս դատարանի կողմից որևէ անդրադարձ չկա օպերատիվ աշխատակցի արարքներին, մինչդեռ դրանցում առկա են առանձնապես խոշոր չափերով թմրամիջոց ապօրինի ձեռք բերելու հանցակազմի հատկանիշներ:

2012 թվականի ապրիլի 6-ի № ԵԿԴ/0224/01/11 քրեական գործի¹⁰ ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ, ԱԱԾ աշխատակիցների կողմից իրականացված «օպերատիվ ներդրում» և այլ օպերատիվ հետախուզական միջոցառումների հետևանքով [ՀՀ նախկին քրեական դատավարության օրենսգրքի եզրութաբանությամբ] ամբաստանյալ Կ.Մ.-ի կողմից ձեռք է բերվել նշված միջոցառումներով պայմանավորված տեղեկություն, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանը վերաբերող «գաղտնի» վավերագրով փաստաթղթեր՝ օտարերկրյա հատուկ ծառայություններին փոխանցելու նպատակով: Գործի նյութերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ դատարանի կողմից հաստատված հանգամանքները հիմնավորվում են, ի թիվս այլնի, հետևյալ ապացույցներով.

- ԱԱԾ ռազմական հակահետախուզության վարչությունում ծառայող **ՎԿԱ** Վ.Վ.-ի ցուցմունքներով,

- «Օպերատիվ ներդրում» միջոցառման շրջանակներում ՀՀ ՊՆ հետ համատեղ մշակված, հինգ թերթից բաղկացած ԼԴՀ ՊԲ-ի վերաբերյալ տեղեկատվությամբ և գաղտնի դրոշմով չորս փաստաթղթերով, որոնք փոխանցվել են Կ.Մ.-ին և որոնք նա 2011 թվականի հուլիսի 23-ին փորձել է տանել Թուրքիա՝ ադրբեջանական հատուկ ծառայությունների աշխատակից հանդիսացող, Տիգրան անունով անձնավորությանը հանձնելու համար:

Դատարանը Կ.Մ.-ին մեղավոր է ճանաչել պետական դավաճանության համար և դատապարտել 14 տարի ժամկետով ազատազրկման: Քրեական գործի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ դատարանը որևէ կերպով չի անդրադարձել օպերատիվ գործակալի

⁹ Տես 2012 թվականի փետրվարի 9-ի № ԵԱՆԴ/0082/01/11 քրեական գործը, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=1125899906858746

¹⁰ Տես 2012 թվականի ապրիլի 6-ի № ԵԿԴ/0224/01/11 քրեական գործը, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=14355223812281615

արարքներին, մինչդեռ դրանք, ըստ էության, պետական դավաճանությանն օժանդակելու հատկանիշներ են պարունակում:

2015 թվականի օգոստոսի 24-ի № ԵԿԴ/0237/01/14 քրեական գործի¹¹ նյութերից պարզ է դառնում, որ Ա.Մ.-ին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, 2013–2014թթ ընթացքում քննությամբ չպարզված հանգամանքներում իրացնելու նպատակով ձեռք է բերել թունավոր նյութ հանդիսացող ընդհանուր 49209,77 գրամ քաշով մետաղական սնդիկ և դրա մոտ 40 կգ-ն պահել է իր կողմից վարձակալված Երևան քաղաքի N հասցեում գտնվող ավտոտնակում, իսկ մյուս 10 կգ-ն՝ անհատույց տվել է իր ծանոթ Հ.Ո.-ին, որն այն տեղափոխել է՝ նրան պատկանող Նորք-Մարաշ վարչական շրջանում գտնվող հողատարածք և պահել այնտեղ: Այնուհետև, 2014 թ. մայիսի 20-ին, ի կատարումն հանցավոր մտադրության, պայմանավորվելով և վերոհիշյալ մետաղական սնդիկը 2,500 ԱՄՆ դոլարով Մ.Գ.-ին իրացնելու նպատակով, իր ավտոտնակում պահված 40 կգ-ի հետ մեկտեղ 120,000 ՀՀ դրամով ձեռք է բերել իր կողմից Հ.Ո.-ին նախկինում տրված 10 կգ-ն, որից հետո սնդիկի իրացման նախօրոք որոշված վայրից քիչ հեռու հանցագործությունը բացահայտվել է ԱԱԾ աշխատակիցների կողմից իրականացված «վերահսկելի գնում» օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքում, և 49209,77 գրամ քաշով մետաղական սնդիկի իրացումը կանխվել է:

Հ.Ո.-ին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2013 թվականի ամռանն իրացնելու նպատակով Ա.Մ.-ից ձեռք է բերել թունավոր նյութ հանդիսացող, ընդհանուր 10 կգ քաշով մետաղական սնդիկ և այն պահել է իր կողմից վարձակալված հողատարածքում: Այնուհետև, 2014 թվականի մայիսի 20-ին Ա.Մ.-ի առաջարկությամբ, 120000 ՀՀ դրամի դիմաց վերջինիս է իրացրել իր մոտ եղած 10 կգ մետաղական սնդիկը, ինչը բացահայտվել է ՀՀ ԱԱԾ աշխատակիցների կողմից իրականացված «վերահսկելի գնում» օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքում:

Մեկ այլ՝ 2016 թվականի օգոստոսի 18-ի № ԵԱՆԴ/0017/01/15 քրեական գործով¹² «վերահսկելի գնում» օպերատիվ-հետախուզական միջոցառման շրջանակներում ամբաստանյալ Ա.Մ.-ի կողմից ՕՀԳ իրականացնող մարմնի հետ համագործակցող Ա.Հ.-ին փաստաթղթեր փոխանցելու պահին Ա.Մ.-ի մոտից հայտնաբերվել և առգրավվել են այլ անձի՝ Վասիլի Օլեգի Ասլանիդիսի տվյալներով կեղծ փաստաթղթեր՝ ԵԿՄ վկայական, ութամյա կրթության ատեստատ, ծննդյան վկայական, մարտական ուղի՝ կնքված և ստորագրված ԵԿՄ վարչության նախագահի կողմից, բժշկական էպիկրիզ՝ տրված N զորամասի բուժկետի պետի կողմից, ծննդյան վկայականի կնքված թարգմանությունը՝ ռուսերենից հայերեն, բնութագիր՝ տրված Արցախի Շահումյանի շրջանային ժողովրդական պատգամավորների գործադիր կոմիտեի կողմից՝ կնքված և ստորագրված կոմիտեի նախագահի կողմից: Արդյունքում՝ փաստաթղթեր կեղծելու հատկանիշներով հարուցվել էր քրեական գործ (ՀՀ քրեական նախկին օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մաս):

Հիշատակված քրեական գործով վերաքննիչ դատարանը քրեական գործի վարույթը կարճել և վերջինիս նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցրել էր՝ վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով:

2018 թվականի հունիսի 18-ի № ԿԴ2/0057/01/17 քրեական գործով¹³ ՕՀԳ իրականացնող մարմնի հետ համագործակցող Ն.Մ.-ն իրականացվող «արտաքին դիտում» օպերատիվ-հե-

¹¹ Տե՛ս 2015 թվականի օգոստոսի 24-ի № ԵԿԴ/0237/01/14 քրեական գործը, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=14355223812320294

¹² Տե՛ս 2016 թվականի օգոստոսի 18-ի № ԵԱՆԴ/0017/01/15 քրեական գործը, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=1125899906888967:

¹³ Տե՛ս 2018 թվականի հունիսի 18-ի № ԿԴ2/0057/01/17 քրեական գործը, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=16325548649278253:

տախուզական միջոցառման շրջանակում հանդիպել է Ա.Կ.-ին և նրան փոխանցել կաշառքի առարկա հանդիսացող 90,800 ՀՀ դրամ գումարը՝ վարորդական իրավունքի վկայական ստանալու նպատակով: Ա.Պ.-ն, տեղեկանալով, որ Ա.Կ.-ն վարորդի թեկնածու Ն.Մ.-ի հետ գտնվում է N հաշվառման-քննական բաժանմունքի բակում, անձամբ մոտեցել է նրանց, զրույցի ընթացքում տեղեկացել Ն.Մ.-ի՝ հաշվառման-քննական բաժանմունք ներկայանալու իրական նպատակի՝ նրա կողմից Ա.Կ.-ի միջնորդությամբ պաշտոնատար անձին կաշառք տալու պատրաստականության և դրա շուրջ կայացած համաձայնության մասին: Այնուհետև վարորդական իրավունքի վկայական ստանալու համար Ա.Կ.-ի միջնորդությամբ 90800 ՀՀ դրամ գումար [դատարանի արձանագրմամբ] կաշառք տվող Ն.Մ.-ի և կաշառք ստացող՝ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության N հաշվառման-քննական բաժանմունքի տեսուչ, պետական հատուկ ծառայություն իրականացնող պաշտոնատար անձ հանդիսացող՝ Կ.Զ.-ի միջև կաշառքի առարկայի շուրջ արդեն կայացած համաձայնության իրականացմանը նպաստելու համար Ա.Պ.-ն, նյութական շահ ստանալու ակնկալիքով, Ա.Կ.-ից վերցրել է Ն.Մ.-ի անձնագիրն ու կաշառքի առարկա հանդիսացող գումարը և նրան ուղեկցել հաշվառման-քննական բաժանմունք: Ա.Պ.-ն վճարային տերմինալի միջոցով կատարել է սահմանված վճարումները, իսկ կաշառքի գումարը փոխանցել N հաշվառման-քննական բաժանմունքի տեսուչ Կ.Զ.-ին, որից հետո վարորդի թեկնածու Ն.Մ.-ն նույն օրը մասնակցել է քննություններին, որոնց ընթացքում, թեև տեսական քննության ժամանակ առաջադրված հարցերին ճիշտ չի պատասխանել, այնուամենայնիվ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության N հաշվառման-քննական բաժանմունքի տեսուչ, պետական հատուկ ծառայություն իրականացնող պաշտոնատար անձ հանդիսացող՝ Կ.Զ.-ի կողմից քննության արդյունքները գնահատվել են դրական և նույն օրը Ն.Մ.-ին տրվել է «B» կարգի վարորդական իրավունքի վկայական»:

Այլ պետությունների դատական պրակտիկայի ուսումնասիրությունը ևս ցույց է տալիս, որ դատարանները ՕՀԳ իրականացնող անձանց՝ քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառելու դեպքում քրեական պատասխանատվության հարցի շուրջ չունեն միանշանակորեն և հետևողականորեն ձևավորված կայուն պրակտիկա:

Այսպես, ՌԴ Կաբարդինո-Բալկանյան Հանրապետության դատարանի 2018թ. փետրվարի 22-ի № 1-33/2018 քրեական գործով № 1-33/2018 1-362/2017 դատավճռում¹⁴ նշված է. «... կազմակերպված է եղել «Ալի» կեղծանվամբ հանդես եկած, իբր հանցավոր կառույցների ներկայացուցիչ հանդիսացած, «հասցե» տարածքում իր հանցավոր գործունեությունն իրականացրած, սակայն իրականում իրավապահ մարմինների աշխատակիցների կողմից իրականացվող ՕՀՄ շրջանակում որպես գնորդ մասնակցած անձի օպերատիվ ներդրումը (այսուհետ՝ «Ալի» պայմանական գնորդ)»:

Ընդ որում, ՌԴ դատական պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ՌԴ սուբյեկտների դատարանները բավական հաճախ են կիրառում «պայմանական գնորդ» ձևակերպումը: ՌԴ դատարանների կողմից հազվադեպ օգտագործվում է նաև «պայմանական կատարող» ձևակերպումը: Օրինակ՝ «օպերատիվ փորձարարություն» ՕՀՄ-ի կապակցությամբ Դաղստանի գերագույն դատարանի 2012 թվականի նոյեմբերի 23-ի № 2-66/12 քրեական գործով դատավճռում¹⁵ տեղ է գտել այսպիսի ձևակերպում. «Ռուսաստանի Դաշնության

¹⁴ Стѝя Приговор Прохладненского районного суда (Кабардино-Балкарская Республика) № 1-33/2018 1-362/2017 от 22 февраля 2018 г. по делу № 1-33/2018: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://sudact.ru/regular/doc/us1I4ZIG046X/>:

¹⁵ Стѝя Приговор Верховного Суда Республики Дагестан от 23 ноября 2012 г. по делу № 2-66/12 г.: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://sudact.ru/regular/doc/7I6jVWVL3K1/>:

ներքին գործերի նախարարության ղեկավարության կողմից աշխատակցին ... հանձնարարված է եղել հանդես գալ այդ սպանության պայմանական կատարողի դերում»:

Դատական պրակտիկայի ամփոփումը հիմք է տալիս պնդելու, որ դատարանները չեն անդրադառնում ՕՀԳ իրականացնող անձանց՝ քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառած արարքներին՝ դրանք առանց բավարար իրավական հիմքերի և հիմնավորումների, կարծես թե, համարելով իրավաչափ կամ անտեսելով: Մինչդեռ քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառած արարքները կարող են իրավաչափ համարվել Քրեական օրենսգրքով ամրագրված քրեական պատասխանատվությունը բացառող կիրառելի հանգամանքի առկայության պարագայում միայն:

Այսպիսով, «Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների հետ համագործակցելը» վերտառությամբ քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքի բովանդակության ուսումնասիրումից պարզ է դառնում, որ այն կարգավորում է միայն համագործակցող անձանց՝ քրեական օրենքով պաշտպանվող շահերին իրավաչափ վնաս պատճառելու դեպքում քրեական պատասխանատվության չենթարկելու հարցերը՝ դուրս թողնելով միևնույն պայմաններում և հանգամանքներում գործող ՕՀԳ իրականացնող մարմինների աշխատակիցների՝ քրեական օրենքով պաշտպանվող շահերին իրավաչափ վնաս պատճառելու պարագայում քրեական պատասխանատվության չենթարկելու դեպքերը: Այլ խոսքերով՝ քննարկվող հանգամանքը, ուղղված լինելով օպերատիվ-հետախուզական գործունեության քրեաիրավական ապահովմանը, այն իրականացրել է մասնակի. համապարփակ կարգավորման չի ենթարկել օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելիս ՕՀԳ իրականացնող անձանց կողմից քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառելու հետ կապված հարցերը՝ սահմանափակվելով միայն օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների հետ համագործակցող անձանց՝ քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառելու դեպքերը կարգավորելով:

ՀՀ քրեական օրենսգրքի գործող կարգավորումների պարագայում ստացվելու է այնպես, որ համագործակցող անձինք քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառելու դեպքում ենթակա չեն լինելու քրեական պատասխանատվության Քրեական օրենսգրքի 41-րդ հոդվածի կարգավորումների ուժով՝ իրավաչափության համապատասխան պայմանների առկայության դեպքում: Մինչդեռ իրավիճակն այլ է ՕՀԳ իրականացնող մարմինների աշխատակիցների կողմից քրեական օրենքով պաշտպանվող շահերին իրավաչափ վնաս պատճառելու դեպքում: Այս դեպքում, կարծես թե, իրավակիրառողը կամ պետք է «չնկատի», անտեսի ՕՀԳ իրականացնող մարմինների աշխատակիցների կողմից քրեական օրենքով պաշտպանվող շահերին պատճառված վնասը, կամ պետք է ապավինի Քրեական օրենսգրքի՝ «Օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջները կատարելը» կամ «Մասնագիտական գործառույթների իրականացումը» վերտառությամբ քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքներից որևէ մեկին:

Լուծման առաջին տարբերակը ոչ իրավաչափ է, ապօրինի: Երկրորդ տարբերակը՝ անարդարացի՝ բազմաթիվ պատճառներով: Միևնույն հանգամանքներում և պայմաններում ՕՀՄ իրականացնելիս քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառած ՕՀԳ իրականացնող անձանց նկատմամբ առանց ողջամտորեն բավարար հիմքերի դրսևորված է տարբերակված մոտեցում: Ընդ որում, ստացվել է այնպես, որ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելիս համագործակցող անձանց կողմից քրեական օրենքով պաշտպանվող շահերին պատճառվող վնասին իրավաչափության ավելի խիստ պայմաններ են ներկայացվել, քան ՕՀԳ իրականացնող մարմինների աշխատակիցներին, որոնք, սակայն,

ավելի պրոֆեսիոնալ են: Այսպես, եթե առաջնորդվենք այն կանխավարկածով, որ ՕՀԳ մարմինների աշխատակիցների քրեական պատասխանատվության հարցը քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառելու դեպքում լուծվելու է օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջները կատարելու կամ մասնագիտական գործառնությունները իրականացնելու վերաբերյալ քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքով, ապա ստացվելու է այնպես, որ ՕՀԳ մարմինների աշխատակիցների՝ քրեական օրենքով պաշտպանվող շահերին պատճառված վնասի իրավաչափությունը որոշվելու է օրենքով կամ ենթաօրենսդրական ակտով, ինչն ավելի հավանական է, քանի որ ՀՀ գործող որևէ օրենքում նշված անձանց կողմից պատճառված վնասի իրավաչափության վերաբերյալ կարգավորում չկա: Մինչդեռ, իրենց մասնագիտական գիտելիքներով և կարողություններով ՕՀԳ մարմինների աշխատակիցներին զիջող համագործակցող անձանց կողմից ՕՀՄ իրականացնելիս քրեական օրենքով պաշտպանվող շահերին պատճառված վնասի իրավաչափությունը անհամեմատ խիստ պայմաններով որոշվելու է Քրեական օրենսգրքի 41-րդ հոդվածով:

Օպերատիվ-հետախուզական գիտության ներկայացուցիչներն իրենց աշխատություններում պրակտիկայում տեղի ունեցած դեպքերը քննարկելիս նկարագրում են նաև այնպիսի դեպքեր, երբ օպերատիվ ներդրումը, ըստ էության, իրականացվել է հանցավոր կազմակերպության անդամի՝ հավաքագրման միջոցով¹⁶: Այս դեպքում հարց է առաջանում՝ արդյոք արդարացված է ՕՀԳ մարմնի աշխատակցի մասնակցությամբ իրականացվող օպերատիվ ներդրման և հանցավոր կազմակերպության անդամի հավաքագրմամբ իրականացվող օպերատիվ ներդրման դեպքում տարբերակված մոտեցում ցուցաբերել աշխատակցի և հավաքագրված անձի քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքների միջև, այն պարագայում, երբ հավաքագրված անձի քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքին ներկայցվում են ավելի խիստ չափանիշներ, մինչդեռ ենթադրվում է, որ ՕՀԳ իրականացնող մարմնի աշխատակիցը շատ ավելի պատրաստված է, հետևաբար պետք է գործի ավելի պրոֆեսիոնալ:

Նման տարբերակված մոտեցումը չի բխում նաև ժողովրդավարական և իրավական պետության կոնցեպտից, քանզի նման խտրական և ոչ թափանցիկ կարգավորումների պարագայում վարույթն իրականացնող մարմինները կարող են «չնկատել» (իսկ իրականում՝ դիտավորյալ անտեսել) ՕՀԳ աշխատակցի հանցավոր վարքագիծը:

Մեր կարծիքով՝ առանձին շեշտադրման է արժանի այն հանգամանքը, որ «Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների հետ համագործակցելը» վերտառությամբ քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքի պարագայում քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնասի պատճառման սահմանները քիչ թե շատ որոշակի են: Օրենսգրքի 41-րդ հոդվածի 2-րդ մասում հստակորեն ամրագրված է, որ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների հետ համագործակցելիս անձը ենթակա է քրեական պատասխանատվության մարդու դեմ ուղղված ծանր կամ առանձնապես ծանր ավարտված հանցանք կատարելու դեպքում: Մինչդեռ օրենքի կամ այլ

¹⁶ Տե՛ս *Азарков А. В.*, Дефиниции оперативно-розыскных мероприятий: сравнительный анализ и законодательное закрепление. Владимирский юридический институт Федеральной службы исполнения наказаний, 2017, էջ 65: Այս մեխանիզմում հեղինակը ներկայացնում է նաև ՕՀԳ գիտությամբ զբաղվող ականավոր պրոֆեսիոններ Շումիլովի և Չեչետինի համանման կարծիքները:

<https://ordrf.ru/wp-content/uploads/2017/11/%D0%94%D0%B5%D1%84%D0%B8%D0%BD%D0%B8%D1%86%D0%B8%D0%B8-%D0%BE%D0%BF%D0%B5%D1%80%D0%B0%D1%82%D0%B8%D0%B2%D0%BD%D0%BE-%D1%80%D0%BE-D0%B7%D1%8B%D1%81%D0%BA%D0%BD%D1%8B%D1%85-%D0%BC%D0%B5%D1%80%D0%BE%D0%BF%D1%80%D0%B8%D1%8F%D1%82%D0%B8%D0%B9.pdf>

իրավական ակտերի պահանջները կատարելու և մասնագիտական գործառույթներն իրականացնելու վերաբերյալ քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքները չեն սահմանում քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնասի պատճառման սահմանները, այն վերապահելով օրենքով կամ իրավական այլ ակտերով, այդ թվում՝ ենթաօրենսդրական, սահմանված պայմանների/պահանջների պահպանմանը: Սակայն, մեր կարծիքով, իրավապահ գործունեության ընթացքում քրեական օրենքով պաշտպանվող շահերին պատճառվող վնասի սահմանները պետք է որոշվեն բացառապես քրեական օրենքով, և ոչ երբեք ենթաօրենսդրական որևէ ակտով:

Օպերատիվ-հետախուզական գործունեության կարգավորող ուղղության համապարփակ և ամբողջական կարգավորման, իրավական համակարգվածության (կոմպակտության), անհիմն տարբերակված մոտեցման բացառման, թափանցիկության ապահովման, ինչպես նաև քրեական օրենքով պաշտպանվող շահերին պատճառված վնասի իրավաչափության՝ քրեական օրենսգրքով սահմանված միատեսակ պայմանների նախատեսման տեսանկյունից նպատակադիր, արդարացված և իրավաչափ է ՕՀԳ իրականացնող անձի (ՕՀԳ իրականացնող մարմնի աշխատակցի և ՕՀԳ իրականացնող մարմնի հետ համագործակցող անձնի) կողմից ՕՀՄ իրականացնելիս քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառելու վերաբերյալ կարգավորումները ամրագրել Քրեական օրենսգրքի մեկ հոդվածում:

ՕՀԳ քրեաիրավական ապահովման տեսանկյունից հետազոտական հետաքրքրություն է ներկայացնում նաև այն հարցը, թե արդյոք ՕՀՄ իրականացնելիս ՕՀԳ իրականացնող անձանց կողմից քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառելու վերաբերյալ քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքում օրենսդրական ամրագրում պետք է ստանան նաև գաղտնի քննչական գործողությունները: Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի¹⁷ 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում օգտագործվող ներքոհիշյալ հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը, իսկ նույն մասի 40-րդ կետի համաձայն՝ Քրեական դատավարության օրենսգրքի իմաստով օպերատիվ-հետախուզական միջոցառում է համարվում «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքով սահմանված օպերատիվ-հետախուզական միջոցառումը, որի իրականացման համար դատարանի որոշում չի պահանջվում: Քրեական դատավարության օրենսգրքի 241-րդ և 242-րդ հոդվածների համադրված վերլուծության արդյունքում ակնհայտ է դառնում, որ քրեական դատավարության օրենսգրքի իմաստով գաղտնի քննչական գործողություններ են համարվում օպերատիվ-հետախուզական այն միջոցառումները, որոնք իրականացվում են դատարանի որոշման հիման վրա: Այդ ՕՀՄ-ները, Քրեական դատավարության օրենսգրքի եզրութաբանությամբ՝ գաղտնի քննչական գործողություններն են ներքին դիտումը, արտաքին դիտումը, նամակագրության և այլ ոչ թվային հաղորդակցության վերահսկումը, թվային, այդ թվում՝ հեռախոսային հաղորդակցության վերահսկումը, ֆինանսական գործարքների վերահսկումը, կաշառք ստանալու կամ կաշառք տալու նմանակումը:*

Ընդ որում, էական է արձանագրել, որ վերը թվարկված ՕՀՄ-ները կամ Քրեական դատավարության օրենսգրքի իմաստով՝ գաղտնի քննչական գործողությունները Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ևս իրականացվում են բացառապես դատարանի որոշման հիման վրա՝ բացառությամբ, թերևս, «արտաքին դիտում» ՕՀՄ-ի, որը դատարանի որոշմամբ է իրականացվում միայն այն պարա-

¹⁷ Տե՛ս ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք: Ընդունվել է 30.06.2021 թ., ուժի մեջ է մտել 01.07.2022թ., ՀՕ-306-Ն: Գործում է:

գայում, եթե արտաքին դիտման արդյունքների ամրագրումն առանց տեխնիկական միջոցների օգտագործման հնարավոր չէ, և անձը (անձինք), որի (որոնց) նկատմամբ իրականացվում է արտաքին դիտումը, ողջամտորեն չէր (չէին) կարող ենթադրել դրա անցկացման հնարավորության մասին:

ՕՀՄ-ները, ներառյալ՝ վերը թվարկվածները, իրենց էությամբ ավելի լայն են, քան գաղտնի քննչական գործողությունները, քանզի ՕՀՄ-ները կարող են իրականացվել նաև քրեական վարույթի բացակայության պայմաններում, մինչդեռ գաղտնի քննչական գործողությունները կարող են իրականացվել բացառապես նախաձեռնված վարույթի շրջանակներում:

Սահմանափակված լինելով հետազոտության կոնկրետ առարկայով, հետևապես նաև զերծ մնալով ՕՀՄ-ների և գաղտնի քննչական գործողությունների հարաբերակցության դետալային վերլուծությունից՝ պարզապես արձանագրենք, որ Քրեական դատավարության օրենսգրքում իրավական ֆիկցիայի գործադրման միջոցով դատարանի որոշմամբ իրականացվող ՕՀՄ-ները անվանվել են գաղտնի քննչական գործողություններ՝ քրեադատավարական նպատակադրությունից և նպատակահարմարությունից ելնելով: Սակայն իրավական այս ֆիկցիայի կիրառումից դրանք չեն դադարել օպերատիվ-հետախուզական միջոցառումներ լինելուց: Ասվածի մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ գաղտնի քննչական գործողությունների բովանդակությունը նույնությամբ արտացոլում է համանուն ՕՀՄ-ների բովանդակությունը՝ քրեադատավարական ընկալումից բխող, էության վրա չազդող տեղայնացում կատարելով: Հետևաբար այդ ՕՀՄ-ների քրեադատավարական ընկալումը չի կարող ազդել օպերատիվ-հետախուզական գործունեության քրեաիրավական ապահովման վրա:

Վերը շարադրվածի մասին են նաև վկայում, ի թիվս այլ հոդվածների/կարգավորումների, Քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի կարգավորումը առ այն, որ քրեական դատավարության օրենսգրքի իմաստով հետաքննություն է համարվում հետաքննության մարմնի կողմից նախաքննության ընթացքում իրականացվող և դրան օժանդակող գործունեությունը, որը ներառում է գաղտնի քննչական գործողությունների և օպերատիվ-հետախուզական միջոցառումների կատարումը, Քրեական դատավարության օրենսգրքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի կարգավորումն այն մասին, որ մինչդատական վարույթի ընթացքում հսկող դատախազը ստուգման համար հետաքննության մարմնից գրավոր պահանջում է քրեական վարույթի ընթացքում իրականացված օպերատիվ-հետախուզական միջոցառումների և գաղտնի քննչական գործողությունների վերաբերյալ՝ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքով դատախազին տրամադրման ենթակա փաստաթղթերը կամ դրանք ստուգում է դրանց գտնվելու վայրում և մի շարք այլ կարգավորումներ:

Գաղտնի քննչական գործողությունների վերաբերյալ վերոգրյալ ուսումնասիրությունը ամփոփելով՝ կարծում ենք՝ դրանց վերաբերյալ օրենսդրական հատուկ նշում չպետք է լինի մեր կողմից առաջարկվող ՕՀԳ իրականացնող անձանց քրեական պատասխանատվությունը բացառող սկզբունքորեն նոր հանգամանքում:

III. Եզրակացություն

Սույն հոդվածի շրջանակում իրականացված հետազոտության արդյունքում կատարել ենք մի շարք եզրակացություններ, որոնցից հիմնականները հանգում են հետևյալին:

1. ՕՀԳ իրականացնող անձանց կողմից այլ անձանց կատարվող/կատարած հանցավոր ոտնձգությունների կանխարգելման կամ դրանց հետևանքների կանխման, հանցագործությունների բացահայտման կամ անհրաժեշտ ապացույցների ձեռքբերման ընթացքում ստեղծ-

վում է օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառելու իրական հնարավորություն: Այն ենթադրում է ՕՀԳ իրականացնող անձի գործունեությունում (արարքում) ձևականորեն հանցավոր տարրի առկայություն: Հետևաբար, քրեական օրենքը պետք է նախատեսի իրավաչափության կոնկրետ պայմանների առկայության դեպքում ՕՀԳ իրականացնող անձին ձևականորեն հանցավոր համարվող արարքի համար քրեական պատասխանատվության չենթարկելու հնարավորություն՝ արարքում հակաիրավականության բացակայության և դրա՝ սոցիալապես օգտակար ու նպատակադրված լինելու հաշվառմամբ:

2. Քրեական օրենսգրքի՝ «Քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքները» վերտառությամբ 6-րդ գլխում տեղ գտած կարգավորումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ քննարկվող հարցը համապարփակ կերպով կարգավորված չէ, և մշակված չէ այնպիսի համալիր նորմ, որն ուղղված լինի ՕՀԳ քրեաիրավական ապահովման կարգավորող (ռեգուլյատիվ) ուղղության ամբողջական կարգավորմանն ու կենսագործմանը:

3. Ներպետական քրեական օրենսդրության զարգացման ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ քրեական պատասխանատվությունը բացառող ներկայում առկա հանգամանքները բխում են անհրաժեշտ պաշտպանությունից կամ ծայրահեղ անհրաժեշտությունից: Իրավակիրառ անհրաժեշտությամբ պայմանավորված ձևավորվել են քրեական պատասխանատվությունը բացառող նոր հանգամանքներ: Օրենքով պաշտպանվող շահերին իրավաչափ վնաս պատճառելու դեպքերը առաջացել են ծայրահեղ անհրաժեշտությունից և, ժամանակի ընթացքում հասունանալով, վերածվել են իրավաբանորեն անկախ հանգամանքների:

4. Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող անձանց քրեական պատասխանատվությունը բացառող սկզբունքորեն նոր հանգամանքը պետք է մոդելավորվի ծայրահեղ անհրաժեշտության և հիմնավորված ռիսկի իրավական էության, ինչպես նաև իրավական որոշակիության (կանխատեսելիության) սկզբունքի հաշվառմամբ:

5. Դատական պրակտիկայի ամփոփումը հիմք է տալիս պնդելու, որ դատարանները չեն անդրադառնում ՕՀԳ իրականացնող անձանց՝ քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառած արարքներին՝ դրանք առանց բավարար իրավական հիմքերի և հիմնավորումների, կարծես թե, համարելով իրավաչափ կամ անտեսելով: Մինչդեռ քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառած արարքները կարող են իրավաչափ համարվել Քրեական օրենսգրքով ամրագրված քրեական պատասխանատվությունը բացառող կիրառելի հանգամանքի առկայության պարագայում միայն:

Settlement Pressures: The overwhelming majority of civil cases settle before reaching a jury – by some estimates, over 90–95% of civil cases are resolved through negotiated settlements rather than trials.¹⁹ This prevalence of settlement is driven by rational calculations. Trials introduce uncertainty: a jury could side with either party, and the range of possible awards is unpredictable. To avoid the “gamble” of a jury decision, parties often prefer a sure outcome through settlement. Additionally, because trials are public and can damage reputations, corporations or professionals might settle to keep allegations out of the public eye (most settlement agreements are confidential). Courts and judges also encourage settlement; many jurisdictions require mediation or settlement conferences, highlighting the judicial system's interest in resolving cases without consuming scarce trial time. The result is that even where a jury trial right exists, parties voluntarily (or under soft coercion) opt to waive it in exchange for a mutually agreed resolution. **Disparities in resources** can exacerbate settlement pressure: a well-funded defendant can prolong pretrial litigation to wear down a less wealthy adversary, driving the weaker party to settle rather than incur mounting costs. In such scenarios, the “right” to have a jury of one's peers decide the case becomes a leverage point in negotiation rather than an eventual reality. The data bear out the impact of these dynamics: today, only about 1% of civil cases filed in U.S. federal courts are resolved by trial, with jury trials

¹⁷ Sarah Staszak, Explanations for the Vanishing Trial in the United States, 18 Annu. Rev. L. & Soc. Sci. 43 (2022)

¹⁸ Unlike civil law countries like Armenia, where the losing side, as a general rule, must pay the winning side's attorney fees, in the U.S., attorney fees are only available in certain areas of law (e.g., employment discrimination, patent law)

¹⁹ Jeffrey Q. Smith & Grant R. MacQueen, *Going, Going, But Not Quite Gone: Trials Continue to Decline in Federal and State Courts. Does It Matter?*, 101 Judicature 29 (2017).

accounting for roughly 0.7%.²⁰ This is a dramatic shift from past decades and is often cited as evidence that trials (especially jury trials) are becoming a rarity – available in theory but seldom utilized.

“Trial Penalty” and Plea Bargains (Criminal Cases): A parallel phenomenon occurs in criminal justice. Defendants frequently face a stark choice: plead guilty (thereby waiving the jury) in exchange for a lighter sentence or go to trial and risk a much heavier sentence if convicted. This *trial penalty* means the cost of exercising the jury trial right is a substantially longer prison term. Prosecutors and judges have significant influence here – prosecutors control charging and plea offers, and judges often approve agreements or impose sentences. Studies have shown that only a tiny fraction (often <5%) of criminal cases are now resolved by jury trial.²¹

While the Sixth Amendment right to a criminal jury is fundamental, the incentive structure of the system effectively makes it a conditional privilege: a defendant can have a jury trial, but at the possible expense of a far harsher outcome. Many commentators view this as coercive and undermining the spirit of the Sixth Amendment. It demonstrates again that the existence of a formal right does not guarantee its practical availability.

In summary, financial considerations and strategic incentives exert a powerful influence on the use of jury trials. The high cost of going to trial, combined with the absence of routine fee-shifting, often discourages parties from insisting on a jury even when they have a right to one. The system instead channels cases toward settlement or plea agreements. The result is an environment in which the jury trial, while still revered, is often treated as a last resort – a backup option if negotiation fails – rather than the default mode of adjudication. This reality suggests that, in practice, the jury trial operates less as an absolute right readily exercised by all and more as a privilege that one must be prepared (and able) to pay for.

Conclusion.

The jury trial holds a dual role in the American legal system: it is constitutionally recognized as a fundamental right while also being moderated by various conditions in its implementation. On one side, the significance of the jury trial in both rhetorical and legal contexts is unquestionable. The authors of the Constitution embedded it in two amendments, viewing juries as essential protectors of freedom and democratic engagement in the legal system. Thus, jury trials are a fundamental right—woven into the essence of American governance and a hallmark of justice. Conversely, the operation of the jury trial in reality shows it to be a limited or contingent right in various ways. The right is applicable only in specific categories of cases (serious misdemeanors and criminal felonies, along with civil actions at law exceeding a certain threshold and of particular types) and not in others (minor offenses, equity cases, etc.). Even when the right is present, parties must traverse a series of procedural obstacles – such as pleading standards, pretrial motions, summary judgment, and others – before a jury is ever formed. Judges maintain the power to step in if the evidence does not meet legal standards, and involved parties may forgo or feel compelled to give up a jury in favor of a settlement or plea deal. Additionally, practical barriers such as expenses and the absence of fee-shifting imply that a “day in court” in front of a jury is frequently a privilege primarily accessible to those with the means (or significant claims) to warrant it. Statistics indicate that only a small percentage of disputes in the U.S. end in jury verdicts, implying that although the right to a jury

²⁰ Id. at 28.

²¹ Id. at 30.

trial is present, it is often relinquished, limited, or procedurally waived.

In evaluating whether the jury trial is an absolute right or a conditional privilege, the evidence points to a synthesis: it is a core constitutional right in principle, but one that operates within a framework of constraints that make it conditional in practice. The Constitution guarantees the availability of a jury in broad terms, but the legal system simultaneously ensures that only appropriate cases actually invoke that machinery. Thus, the American jury trial can be seen as fundamental – a bedrock principle of justice – yet also managed through procedural and substantive limits. It is not “absolute” in the sense that one can demand a jury in any context whatsoever; rather, it is a right subject to definition and regulation.

In conclusion, the jury trial in the U.S. legal system is best characterized as a fundamental right deliberately hedged with conditions. However, as described in previous chapters, judges wield significant authority, including the power to decide facts without a jury. Despite this, the jury trial remains a defining feature of the justice system’s identity, even as practical realities and policy choices continue to shape when and how this right is exercised.”

Annotation. The article presents the role of the Jury system in the Anglo-Saxon (common law), particularly the American legal system. It examines the constitutional and historical foundations of jury trials in the United States, comparing them with the approaches of the Roman-Germanic legal systems. The article aims to explore the origin, role, significance, and essence of the Jury institution, and ultimately help the reader understand whether the right to a jury trial is an absolute right or not. It also discusses which decisions belong to the jury and which belong to the judge, among other issues. The article unveils the procedural tools that effectively limit the right to a jury trial in the legal process.

The article aims to investigate whether the right to a jury trial remains absolute or becomes a conditional right in the American legal system. The analysis is supported by recent statistical data and legal literature.

Ամփոփագի: Հոդվածը ներկայացնում է Երդվյալ ատենակալների ինստիտուտի դերն անգլոսաքսոնական (ընդհանուր իրավունք), մասնավորապես ամերիկյան իրավական համակարգում: Այն ուսումնասիրում է երդվյալ ատենակալների մասնակցությամբ դատավարության սահմանադրական և պատմական հիմքերը ԱՄՆ-ում՝ համեմատելով դրանք ռոմանոգերմանական իրավական համակարգերի մոտեցումների հետ: Այն միտված է բացահայտել Ատենակալների ինստիտուտի ծագումը, դերը, նշանակությունը, էությունը և վերջապես օգնել ընթերցողին հասկանալ, արդյոք Երդվյալ ատենակալների մասնակցությամբ դատավարության իրավունքը բացարձակ իրավունք է, թե՞ ոչ, որ հարցերի վերաբերյալ որոշում կայացնելու իրավունքը պատկանում Երդվյալ ատենակալներին և որ հարցերում՝ դատավորին և այլն: Հոդվածը բացահայտում է դատավարական գործիքակազմերը, որոնց միջոցով փաստացի սահմանափակվում է դատավարության կողմի երդվյալ ատենակալների մասնակցությամբ դատավարության իրավունքը:

Հոդվածը միտված է բացահայտելու՝ արդյոք երդվյալ ատենակալների մասնակցությամբ դատավարության իրավունքը մնում է բացարձակ, թե՞ դառնում է պայմանական իրավունք ամերիկյան իրավական համակարգում: Վերլուծությունն ամրապնդված է վերջին տարիների վիճակագրական տվյալներով և իրավաբանական գրականությամբ:

Аннотация. Статья представляет роль института присяжных в англосаксонской правовой системе (общего права), в частности, в американской правовой системе. В рамках данной статьи изучаются конституционные и исторические основы судебного разбирательства с участием присяжных в США, они сравниваются с подходами романо-германской правовой системы. Цель статьи – раскрыть происхождение, роль, значение и сущность института присяжных, а также помочь найти ответы на такие вопросы, как читателю понять, является ли право на суд с участием присяжных абсолютным правом или нет; какие решения принимаются присяжными, а какие – судьей, и другие вопросы. Статья выявляет процессуальные инструменты, которые фактически ограничивают

право на судебное разбирательство с участием присяжных.

Статья направлена на исследование того, сохраняется ли право на судебное разбирательство с участием присяжных как абсолютное право, или оно становится условным правом в американской правовой системе. Анализ подкреплен последними статистическими данными и юридической литературой.

Keywords: *society, Anglo-Saxon, Romano-Germanic, civil procedure, trial, justice, jury, jury trial, constitution, judicial decisions, American legal system.*

Բանալի բառեր - հասարակություն, անգլոսաքսոնական, ռոմանոգերմանական, քաղաքացիական դատավարություն, արհեստական, երդվյալ արհեստական, արդարադատություն, սահմանադրություն, դատական որոշումներ, ամերիկյան իրավունք:

Ключевые слова: *общество, англосаксонский, романо-германский, гражданское судопроизводство, судебное разбирательство, правосудие, присяжные, судебное разбирательство с участием присяжных, конституция, судебные решения, американская правовая система..*

Օգտագործված գրականության ցանկ

1. Zouhary, Jack. *Jury Duty: A Founding Principle of American Democracy*, Civil Jury Project at NYU School of Law (July 11, 2017).
2. *The Jury Trial: History, Jury Selection, and the Use of Demonstrative Evidence*, 1 J. Legal Advoc. & Prac. 172, 175 (1999).
3. U.S. Constitution.
4. *Tu v. United States*, 481 U.S. 412 (1987).
5. *Parsons v. Bedford, Breedlove & Robeson*, 28 U.S. 433 (1830).
6. *Beacon Theatres, Inc. v. Westover*, 359 U.S. 500 (1959).
7. 28 U.S.C. § 2402.
8. Federal Rule of Civil Procedure 38.
9. Federal Rule of Civil Procedure 12(b)(6).
10. Bronsteen, John. *Against Summary Judgment*, LAW eCommons.
11. Sperino, Sandra F., & Thomas, Suja A. *Unequal: How America's Courts Undermine Discrimination Law*, 16 (Oxford Univ. Press 2017).
12. Staszak, Sarah. *Explanations for the Vanishing Trial in the United States*, 18 Annu. Rev. L. & Soc. Sci. 43 (2022).
13. Smith, Jeffrey Q., & MacQueen, Grant R. *Going, Going, But Not Quite Gone: Trials Continue to Decline in Federal and State Courts. Does It Matter?* 101 Judicature 29 (2017).

Yeghiazaryan G. - Master of Laws from Yerevan State University and Chicago-Kent College of Law (U.S.), Lawyer at "Agents of Hope" (U.S.), E-mail: gyeghiazaryan@ahtic.org.

Submitted to the editorial office on 01.04.2025, submitted for review on 01.04.2025, approved by Honored Lawyer of the Republic of Armenia, Professor at the Chair of Criminal Procedure and Criminology of Yerevan State University, Doctor of Law, Professor V. Yengibaryan, accepted for publication on 22.04.2025.

<https://doi.org/10.59546/18290744-2025.1-3-147>

ՄԱՐՏԻՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
Հանրային պաշտպանի գրասենյակի մոնիթորինգի պատասխանատու,
Երևանի «Գլաժոր» համալսարանի իրավագիտության ամբիոնի դասախոս,
իրավաբանական գիտությունների թեկնածու

MARTIN MANUKYAN

Responsible for monitoring the work of the
Office of the Public Defender of the Chamber of Advocates of the Republic of Armenia,
Lecturer of the Department of Jurisprudence of the Yerevan University "Gladzor",
Candidate of Legal Sciences

МАРТИН МАНУКЯН

Ответственный за мониторинг работы Аппарата Народного
Защитника Палаты адвокатов Республики Армения,
преподаватель кафедры юриспруденции Ереванского университета «Гладзор»,
кандидат юридических наук

ԱՋԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

FEATURES OF THE FORMATION AND DEVELOPMENT OF NATIONAL PARLIAMENTS IN EASTERN EUROPEAN COUNTRIES

ОСОБЕННОСТИ СТАНОВЛЕНИЯ И РАЗВИТИЯ НАЦИОНАЛЬНЫХ ПАРЛАМЕНТОВ В СТРАНАХ ВОСТОЧНОЙ ЕВРОПЫ

Ներածություն

Կենտրոնական ու Արևելյան Եվրոպայի տարածաշրջանի մեջ մտնող երկրները սույն հոդվածում պայմանականորեն բաժանվում են երկու խմբի: Առաջին խմբում ընդգրկված են այն երկրները, որոնք նախկինում միութենական հանրապետություններ էին ԽՍՀՄ կազմում, իսկ վերջինիս անկումից հետո միավորվեցին Անկախ պետությունների համագործակցության մեջ: Դրանք են՝ Ռուսաստանը, Ուկրաինան, Բելառուսը, Մոլդովան, ինչպես նաև Եվրոպայի աշխարհագրական սահմաններից դուրս գտնվող հարավկովկասյան երկրները՝ Հայաստանը, Վրաստանը (այն դուրս եկավ ԱՊՀ կազմից 2008 թ.) և Ադրբեջանը: Եվրոպայի խորհրդի կազմում է նաև Ղազախստանը, որի տարածքի չնչին մասն է միայն Եվրոպայի աշխար-

հազրական տիրություն:

Երկրորդ խումբը ձևավորում են Արևելյան Եվրոպայի այնպիսի երկրներ, ինչպիսիք են՝ Ալբանիան, Բուլղարիան, Հունգարիան, Լեհաստանը, Ռումինիան, Չեխիան, Սլովակիան և Հարավսլավիայի տրոհումից հետո առաջացած երկրներ՝ Բոսնիա և Հերցեգովինան, Մակեդոնիան, Սերբիան, (2008 թ. Սերբիայի կազմից դուրս գալու և անկախություն հռչակելու մասին հայտարարեց Կոսովոն, որը դեռևս մասամբ ճանաչված երկիր է), Սլովենիան, Խորվաթիան, Մոնտենեգրոն (նախկին Չեռնոգորիան): Այս խմբի մեջ, անտարակույս, մտնում են նաև Լիտվան, Լատվիան և Էստոնիան:

Հիմնական հետազոտություն

Արևելյան Եվրոպայի մեջ մտնող երկրները ոչ միայն աշխարհագրորեն են մոտ իրար, այլև հաճախ պատմական ընդհանրություններ ունեն՝ քանիցս կորցնելով իրենց ինքնուրույնությունը: Դրանցից շատերը երկար ժամանակ գտնվել են թուրքական լծի տակ (Բուլղարիա, Ռումինիա, Ալբանիա, Բոսնիա և Հերցեգովինա), որոշները եղել են Ավստրոհունգարական միապետության տիրապետության ներքո (Չեխիա, Սլովակիա, Սլովենիա, Խորվաթիա): Բալթյան հողերը զրկված էին պետական ինքնուրույնությունից և բաժանվել էին Ռուսաստանի Շվեդիայի և Լեհաստանի միջև: Լեհաստանն իր հերթին տևական ժամանակ կիսված էր Ռուսաստանի, Պրուսիայի և Ավստրիայի միջև: Այդուհանդերձ, Արևելյան Եվրոպայի այդ երկրների սահմանադրական զարգացումը սկսվել է ավելի վաղ, քան առաջին խմբի մեջ մտնող երկրները՝ Ուկրաինան, Բելառուսը և Մոլդովան:

Լեհաստանի առաջին Սահմանադրությունն ընդունվել է դեռևս 1791 թ., **այն առաջինն էր Եվրոպայում** (այն լեհ-լիտվական միացյալ Ռեչ Պոսպոլիտա պետության Սահմանադրությունն էր), Ռումինիայի առաջին Սահմանադրությունը ընդունվել է 1866 թ., **Բուլղարիայի** առաջին Սահմանադրությունը՝ 1879-ին: Առաջին համաշխարհային պատերազմի ավարտին տեղի ունեցած իրադարձություններին հաջորդեցին 1918 թ. Ավստրո-Հունգարիայի անկումը, որի հետևանքով առաջացան մի շարք անկախ պետություններ: Սլովենիան ու Խորվաթիան Սերբիայի հովանու ներքո ձևավորեցին սերբերի, խորվաթների և սլովենիացիների միասնական թագավորությունը, որն ավելի ուշ կոչվեց Հարավսլավիա: Միջպատերազմյան շրջանում այս խմբի գրեթե բոլոր երկրները կամ ընդունեցին նոր սահմանադրություններ, կամ բարեփոխեցին հիները:

Ընդ որում, առաջին հինգ տարում նրանց սահմանադրական օրենսդրությունը միանգամայն ժողովրդավարական բնույթի էր (օրինակ՝ **Չեխոսլովակիայում** ընդունվեց ժամանակավոր Սահմանադրություն, նախ՝ 1918 թ. և հաջորդը՝ 1920թ, Լեհաստանում՝ փոքր Սահմանադրությունը՝ 1919 թ. և Սահմանադրությունը՝ 1920թ , **Լատվիայում և Լիտվայում՝** ժամանակավոր սահմանադրությունները՝ 1920 թ. և Սահմանադրությունը՝ 1922 թ. և այլն): Տարածաշրջանի առանձին երկրներում որոշ ժամանակ գործում էին խորհրդային տիպի սահմանադրություններ (օրինակ՝ **Լատվիայի** կամ **Հունգարիայի** 1919 թ. սահմանադրությունները): Սակայն այդ երկրների ինքնուրույն ժողովրդավարական զարգացումն ընդհատվեց Եվրոպայում ավտորիտար ու ամբողջատիրական միտումների աճով և արդյունքում ծագած Երկրորդ համաշխարհային պատերազմով: Ավտորիտար հիմնական օրենքների օրինակներ կարող են ծառայել **Ալբանիայի** (1928 թ.), **Լեհաստանի** (1935 թ.), **Ռումինիայի** (1938 թ.) միապետական

¹ Sŭi Vsemirnaya istoriya: Kanun Perвой mirovoy voynы/ A.H. Бадак, И.Е. Войнич, Н. М. Волчек и др., Мн Харвест, М., АСТ, 2000. с. 130. Воцелка К., История Австрии. Культура, общество, политика. М., 2007, с. 470

սահմանադրությունները:

Այդ երկրներում նացիզմից ու ֆաշիզմից ազատագրվելու ընթացքում, որում վճռորոշ դեր ունեցավ Խորհրդային Միությունը, և Երկրորդ համաշխարհային պատերազմից անմիջապես հետո սկսեցին ձևավորվել կոմունիստական ավտորիտար-ամբողջատիրական վարչակարգեր, որոնք ուղղորդվում էին Մոսկվայի կողմից:

1989 թ. շրջադարձային տարի եղավ Արևելյան Եվրոպայի երկրների կյանքում՝ վերջ դնելով պետական սոցիալիզմի համաշխարհային համակարգին²: Նշյալ երկրներում տեղի ունեցան հակաամբողջատիրական հեղափոխություններ, որոնց ընթացքում կոմունիստական վարչակարգը տապալվեց, իսկ սոցիալիստական շինծու դաշնային կազմավորումները (**ԽՍՀՄ, Հարավսլավիայի Սոցիալիստական Դաշնային Հանրապետություն, Չեխոսլովակիայի Սոցիալիստական Հանրապետություն**), շուտով փլուզվեցին: Ընդունվեցին նոր, ժողովրդավարական սահմանադրություններ (1990 թ. **Խորվաթիայի Սահմանադրությունը**, 1991 թ.՝ **Բուլղարիայի, Մակեդոնիայի, Ռումինիայի, Սլովենիայի սահմանադրությունները**, 1992 թ.՝ **Լեհաստանի փոքր Սահմանադրությունը**, **Լիտվայի, Սլովակիայի, Չեխիայի, Էստոնիայի** սահմանադրությունները): **Հունգարիայում** 1989-1990 թթ. ընդունվեց նոր խմբագրմամբ Սահմանադրությունը, իսկ **Լատվիայում** վերականգնվեց 1922 թ. մինչպատերազմյան ժողովրդավարական Սահմանադրության գործողությունը: Վերոթվարկյալ բոլոր սահմանադրությունները (**բացի Լեհականից**) ներկայում գործում են՝ փոփոխություններով ու լրացումներով հանդերձ: Ամենաուշը ընդունվեցին **Բոսնիա և Հերցեգովինայի** (1995 թ.), **Լեհաստանի** (1997 թ.) և **Ալբանիայի** (1998 թ.) սահմանադրությունները: Հենց թվարկված սահմանադրություններն էլ իրավական հիմք դարձան և այժմ էլ այդպիսին են Արևելյան Եվրոպայի երկրներում ժողովրդավարական, իրավական, սոցիալական ուղղվածության շուկայական տնտեսությամբ պետություն կառուցելու համար: Ներկայում ընդունված է այդ երկրներն անվանել «անցումային» կամ «երիտասարդ ժողովրդավարություններ»: Ինքը, ժողովրդավարությունը, մեր կարծիքով, ամենից առաջ պետության իրավաքաղաքական կառուցվածքի առանձնահատուկ ձև է, քաղաքական ռեժիմի տիպ: Այդ տիպը մշակվել է այն արևմտյան հասարակությունների կողմից, որոնք ունակ են արագ ընկալելու և յուրացնելու իրենց փոխակերպող ներքին և արտաքին ազդակները, ժողովրդավարական գործընթացի մեջ օրգանապես ներառվելու, կոնֆլիկտների կանխարգելման, ինչպես նաև դրանց օգտագործման մեխանիզմները:

Նախկին սոցիալիստական պետություններն իրենց սահմանադրությունները կառուցել են արդեն գործող արևմտյան սահմանադրությունների հնագույն և դրանցում ակնհայտորեն երևում են փոխառնված դրույթները³: Ինչպես կտեսնենք Արևելյան Եվրոպայի երկրների սահմանադրությունների տեքստերի հետագա վերլուծության մեջ, դրանց վրա առավել շատ ազդել են մայրցամաքային իրավունքի համակարգ ունեցող զարգացած երկրները՝ **Գերմանիան, Ֆրանսիան, Իտալիան**: Օրինակ՝ գերմանական պետական իրավունքից փոխառվել են այնպիսի ինստիտուտներ, ինչպիսիք են կառուցողական անվստահության քվեն և Նախագահի իրավաբանական պատասխանատվության մոդելը: **Ֆրանսիական** սահմանադրական իրավունքը չափազանց ակնհայտ ազդեցություն է գործել **Ռումինիայի** հիմնական օրենքի վրա՝ «ավանդական ֆրանկոֆոնիայի արդյունքում, որն արդեն հարյուր հիսուն տարեկան է»:
Իտալական ազդեցությունը զգալի է **Սլովենիայի** սահմանադրության մի շարք դրույթների վրա, **ամերիկյան** ներկայությունը զգալի է **Բոսնիայի և Հերցեգովինայի** Սահմանադրության

² Տե՛ս *Страшун Б.А.*, Конституционное перемены в Восточной Европе 1989-1990. М., 1991, с. 3.

³ Տե՛ս *Маклаков В.В.*, Введение // Конституции зарубежных государств. Великобритания, Франция, Германия, Италия, Европейский союз, США, Япония, Индия: Учеб пособие. М., 2007, с. IV.

բազմաթիվ դրույթներում:

Միաժամանակ Արևելյան Եվրոպայի երկրները սահմանադրություններ մշակելիս հենվել են նաև սեփական սահմանադրական փորձի վրա, որին այդ երկրներում վերաբերվում են մեծ հարգանքով, թեկուզ և խոստովանում են, որ դա այնքան էլ հաջող փուլ չի եղել⁴:

Չեխիայի գործող Սահմանադրությունում դրույթները հարաբերականորեն քիչ են, սակայն 1920 թ. Չեխոսլովակիայի Սահմանադրությունը, որն անկասկած նրա համար օրինակ է ծառայել, մշակվել է ավստրիական պետական իրավունքի ուժեղ ազդեցությամբ:

Նախքան Արևելյան Եվրոպայի երկրների խորհրդարանների իրավական կարգավիճակի քննությանն անցնելը, հարկավոր է մատնանշել նրանց սահմանադրությունների ընդհանուր առանձնահատկությունները, որոնք ազդում են նաև ներկայացուցչական մարմինների գործունեության վրա: Նախևառաջ դա **սահմանադրությունների ընդգծված ժողովրդավարական և հակաամբողջատիրական բնույթն է**: Դրանք հաստատում են իրենց հավատարմությունը քաղաքական բազմակարծությանն ու իշխանությունների բաժանմանը, ընդ որում՝ հաշվի առնելով կոմունիստական կառավարման ժամանակաշրջանում ձեռք բերված բացասական փորձը: **Նշյալ սահմանադրությունների երկրորդ առանձնահատկությունը ազգային պետականության հարցի նկատմամբ հատուկ ուշադրությունն է**:

Կարևորվում է նաև իշխանության լեգիտիմության պահպանման խնդիրը: Իշխանության լեգիտիմության պահպանման համար խիստ կարևոր է համաձայնությունն իշխանության և քաղաքացիական հասարակության միջև՝ այն նպատակների առնչությամբ, որոնց կենսագործման համար կատարվում են այս կամ այն , թեկուզ և քաղաքացիների կողմից հավանության չարժանացած գործողությունները: Հատուկ շեշտենք, որ համաձայնությունն այն նպատակների հետ, որոնց ձգտում է հասնել ժողովրդավարական իշխանությունը, նշանակում է բնակչության ճնշող մասի, թեկուզ և մասնակի նույնականացում բուն իշխանության գլխավոր ուղեգծի հետ: Քանի որ լիարժեք ժողովրդավարական պետությունը շահագրգռված է , որպեսզի քաղաքացիները դառնան նույնական ազգային պետության և նրա քաղաքականության հետ, համարեն, որ պետությունն ու իշխանությունն արտահայտում են հենց ժողովրդի առաջնային շահերը:

Ներկայում Արևելյան Եվրոպայի մեկ տասնյակ երկրներ Եվրոպական միության անդամներ են: Ընդ որում՝ ԵՄ անդամ դառնալու փաստացի նախապատրաստությունը սկսվեց այդ երկրներում կոմունիստական վարչակարգի տապալմանը գրեթե համընթաց: 1989 թ. դեկտեմբերին ԵՄ-ի ղեկավարությունը հավանություն տվեց Հունգարիային և Լեհաստանին տնտեսական օժանդակություն ցուցաբերելու ծրագրին (PHARE)⁵, ինչը հետագայում կիրառվեց նաև մյուս Արևելաեվրոպական երկրներում: 1991 թ. մեկնարկեց ԵՄ-ի հետ միավորվելու պայմանագրեր կնքելու վերաբերյալ նախկին սոցիալիստական երկրների կողմից դիմումներ ներկայացնելու պաշտոնական գործընթացը⁶: Տնտեսական գործոններից բացի՝ հավակնորդ երկրները պետք է բավարարեին նաև քաղաքական-իրավական պահանջները՝ հավաստելով հարգանքը ժողովրդավարական սկզբունքների, իրավունքի գերակայության, մարդու իրավունքների և փոքրամասնության պաշտպանության նկատմամբ: Ինչպես նաև ի գործու լինեն կատարել ԵՄ-ի անդամակցությունից բխող պարտավորությունները՝ ներառյալ Եվրամիու-

⁴ Տե՛ս *Светлорусова Л.М.*, Развитие парламентаризма в Болгарии (Обзор) // Процессы демократизации в Восточной Европе: Ожидания и реальность: Сб.обзоров и реф./РАИ ИНИОН>Отв.редактор Игрицкий Ю. И., М., 2002. с. 25.

⁵ Տե՛ս *Mc Cormik J.*, Understanding the European Union: a concise introduction 2002, p. 212.

⁶ Տե՛ս *Штадтмюллер Е.*, Проблемы и перспективы развития Европейского союза. Польша и ЕС//Европейский союз на рубеже веков /ПАН.ИНИОН. М., 2000, с. 201.

թյան ազգային իրավական համակարգին ինտեգրվելը: Ներկայում ԵՄ-ի ազդեցությունն անդամ երկրների վրա շատ ուժեղ է: Օրինակ՝ այդ երկրներում սոցիալ-տնտեսական ոլորտում (տրանսպորտ, կրթություն, ֆինանսներ, առողջապահություն, տրանսպորտ, կրթություն, արդյունաբերություն) որոշումների չորս հինգերորդը կայացվում է Եվրոպական նորմերի վրա: Այդ ազդեցությունը շարունակ աճում է՝ ընդգրկելով նաև ազգային խորհրդարաններ:

Իսկույն կարելի է նկատել, որ տվյալ խմբի երկրներին բնորոշ է խորհրդարանների նշանակալի դերը պետական իշխանության բարձրագույն մարմինների համակարգում: Դրանց մեջ չկան նախագահական հանրապետություններ: Դրանք կամ մաքուր խորհրդարանական երկրներ են **Ալբանիան, Հունգարիան, Լատվիան, Չեխիան, Էստոնիան**, կամ հանրապետություններ են, որոնցում երկրի նախագահն ընտրվում է բնակչության կողմից, սակայն կառավարությունը ձևավորվում է խորհրդարանի վճռորոշ ազդեցությամբ և քաղաքական պատասխանատվություն է կրում նրա առջև: Հետազոտողները նկատելով խառը հանրապետության տարբեր այդ երկրներում (նախագահի ուղղակի ընտրություն), սովորաբար խոստովանում են, որ իշխանությունը փաստացի «գործառում է խորհրդարանական համակարգով» (**Լեհաստան**), «պառլամենտարիզմի տարրերի գերակշռությամբ» (**Լիտվա**), կամ անմիջականորեն դասում են դրանք խորհրդարանական հանրապետությունների շարքին (**Ռումինիա⁷, Բոսնիա և Հերցեգովինա⁸**): Այս տեսանկյունից կարելի է խոսել Արևելյան Եվրոպայի երկրների՝ «իշխանությունների բաժանման Եվրոպական մոդելին» հակվածության մասին, որի պարագայում գործադիր իշխանությունն անմիջականորեն կախված է օրենսդիր (ներկայացուցչական) մարմնի աջակցությունից:

Ձևական-իրավական առումով խորհրդարանի գերակայությունն Արևելյան Եվրոպայի երկրներում դրսևորվում է նույնիսկ սահմանադրությունների բաժինների կառուցվածքային դասավորության մեջ: Բոլոր այդ երկրներում պետական իշխանության բարձրագույն մարմինների կանոնակարգումը սկսվում է խորհրդարանից, որին հաջորդում են Նախագահին, ապա կառավարությանը վերաբերող դրույթները: **Ռումինիայի** Սահմանադրությունում (Ֆրանսիայի օրինակով), կա նաև բաժին խորհրդարանի և կառավարության հարաբերությունների վերաբերյալ: **Լատվիական և Էստոնական** սահմանադրություններում տեղ է գտել «Օրենսդրություն» բաժինը:

Արևելյան Եվրոպայի երկրների սահմանադրությունները սահմանում են խորհրդարանի ընդհանուր գործառույթը բարձրագույն պետական մարմինների համակարգում՝ օրենսդիր իշխանության իրականացումը՝ հրաժարվելով ներկայացուցչական մարմինների գերակայության և լիակատար իշխանության սոցիալիստական սկզբունքից: Բացառություն կարելի է համարել **Հունգարիան**, որտեղ խորհրդարանը սահմանվում է որպես «պետական իշխանության և ժողովրդական ներկայացուցչության բարձրագույն մարմին», որն ապահովում է «հասարակության սահմանադրական կարգի պաշտպանությունը, սահմանում է նրա կազմակերպումը, զարգացումը և կառավարման պայմանները»: Նման ձևակերպումները վկայում են այն մասին, որ Հունգարիայի Սահմանադրության որոշ դրույթներ պահպանվել են նախկին սոցիալիստական փորձից: Խորհրդարանի «բարձրագույն» դիրքի մասին խոսվում է նաև **Ռումինիայի** Սահմանադրության մեջ: Բացի այդ, այնտեղ ընդգծվում է, որ դա «երկրի միակ օրենսդիր մարմինն է» (Հոդված 58): **Սլովակիայի** Սահմանադրության մեջ խորհրդա-

⁷ Sfin *Мойсено М.Г.*, Вводная статья к Конституции Румынии // Конституции государств Европы. Под. общ. ред. Л.А. Окункова. М., Изд-во НОРМА. 2001. с. 60.

⁸ Sfin *Шрам В.П.*, Вводная статья к Конституции Боснии и Герцоговины// Конституции государств Европы. Под. общ. ред. Л.А. Окункова. М., Изд-во НОРМА. 2001. с. 429.

րանը նշվում է որպես «միակ մարմինը, որն ընդունում է Սահմանադրությունը և օրենքները» (Հոդված 72): Խորհրդարանի բացառիկ դերը մատնանշելը կարող է հետապնդել երկակի նպատակ. մի կողմից՝ բարձրացնել խորհրդարանի հեղինակությունը, մյուս կողմից՝ սահմանափակել մյուս մարմինների (գործադիր կամ տեղական ինքնակառավարման)՝ օրենքներ ընդունելու հնարավորությունը:

Խորհրդարանի ներկայացուցչական բնույթի մասին էն նշում **Հունգարիայի, Մակեդոնիայի, Ռումինիայի, Խորվաթիայի** սահմանադրությունները: Խորհրդարանի կարևորագույն գործառույթներից մեկի՝ վերահսկողության մասին հիշատակվում է միայն **Բուլղարիայի և Լեհաստանի** սահմանադրություններում: Մյուս սահմանադրություններում այդ բացը լրացվում է այն բանով, որ տեքստում նրանք պարտադիր նախատեսում են խորհրդարանական վերահսկողության զանազան ձևեր: Մի շարք սահմանադրություններ (**Ալբանիա, Բոսնիա և Հերցեգովինա, Լատվիա, Լիտվա, Սլովենիա**) որևէ կերպ չեն նշում խորհրդարանի գործառույթները: Սակայն վերլուծության առարկա սահմանադրությունների գերակշիռ մասում թվարկվում են խորհրդարանական լիազորությունները:

Խորհրդարանի գլխավոր լիազորությունները օրենսդրական բնույթի են: Այդ խմբի երկրներին բնորոշ է խորհրդարանի օրենսդրական իրավասության միանգամայն անսահմանափակ ոլորտը: **Ոչ մի սահմանադրություն չի թվարկում այն հարցերը, որոնց վերաբերյալ խորհրդարանը իրավասու է ընդունել որոշումներ:** Դա հաստատում է խորհրդարանի ինքնուրույն դերը պետական իշխանության բարձրագույն մարմինների շարքում: Ինչ վերաբերում է օրենքների հատուկ կատեգորիաներին, ապա պետք է նշել, որ քննարկվող տասնչորս սահմանադրություններից միայն հինգում են հիշատակվում սահմանադրական օրենքներ (**Լիտվա, Մակեդոնիա, Ռումինիա, Սլովակիա և Չեխիա**), իսկ օրգանական օրենքներ՝ միայն **Մակեդոնիայի և Խորվաթիայի** սահմանադրություններում: Որոշ երկրներում (օրինակ՝ **Ալբանիայում, Հունգարիայում, Մակեդոնիայում, Էստոնիայում**) գոյություն ունեն օրենքների կատեգորիաներ, որոնք ընդունելու համար անհրաժեշտ են առավելագույն թվով ձայներ, սակայն դրանց համար որևէ հատուկ անվանում մտցված չէ:

Արևելյան Եվրոպայի երկրների մյուս ընդհանուր գիծը կարելի է համարել նրանց զգուշավոր վերաբերմունքը օրենսդրական լիազորությունների պատվիրակմանը: Սահմանադրությունների մեծ մասում այն թույլատրվում է միայն ծայրահեղ, բացառիկ իրադրություններում, երբ արտակարգ կամ ռազմական դրության պայմաններում անհրաժեշտ է անհապաղ կարգավորել հասարակական հարաբերությունների ինչ-որ տեսակ՝ այդ դեպքում Նախագահը կամ կառավարությունն իրավունք ունեն ընդունելու ակտեր, որոնք օրենքի ուժ ունեն, պարտադիր արժանանալով խորհրդարանի հավանությանը օրինակ՝ **Հունգարիայում, Լատվիայում, Մակեդոնիայում, Լեհաստանում**): Իսկ սովորական պայմաններում օրենսդրությունը պատվիրակել հնարավոր է միայն՝ ըստ **Ռումինիայի** Սահմանադրության (հատուկ իրավական ակտեր կարող են ընդունվել այն ոլորտներում, որոնք օրգանական օրենքների առարկա չեն) և **Խորվաթիայի** Սահմանադրության համաձայն, երբ խորհրդարանն իրավունք ունի պատվիրակելու օրենսդրական լիազորությունները կառավարությանը մինչև մեկ տարի ժամկետով:

Չեխիայի Սահմանադրությունը ևս ունի առանձնահատկություն, այն միակն է նշյալ խմբից, որը իրավունք է տալիս ընդունելու օրենքի ուժ ունեցող ակտեր ոչ թե կառավարությանը, այլ խորհրդարանի վերին պալատին՝ այն դեպքում, երբ ստորին պալատն արձակված է, իսկ օրենսդրական կարգավորում պահանջող հարցը անհետաձգելի է (Հոդված 33):

Եվրոպական միության ազդեցությունը նորագույն ժամանակների գործոն է: **Սլովակիայի** Սահմանադրության մեջ կատարված վերջին փոփոխություններից մեկը (Հոդված 7) հնա-

րավորություն ընձեռեց կառավարությանը այդ կազմակերպության անդամակցությանը նախապատրաստվելու ընթացքում ընդունելու որոշումներ ԵՄ-ի նորմերն ազգային իրավական համակարգ ներդնելու համար: Կառավարության նմանօրինակ ակտերը չունեն օրենքի ուժ, սակայն, ընդունելու համար պահանջում են խորհրդարանի հատուկ լիազորումը: **Չեխիայում** կառավարությունը նույն եղանակով փորձեց ամրապնդել իր իրավունքը օրենքի ուժ ունեցող ակտեր ընդունելու հարցում, բայց ապարդյուն: Արևելյան Եվրոպայի երկրների սահմանադրությունները չեն նախատեսում նաև մշտական հանձնաժողովների կամ խմբակցությունների իրավունքը խորհրդարանի փոխարեն ընդունելու օրենքներ, ինչպես նախատեսում են **Իտալիայի, Հունաստանի, Իսպանիայի** կամ **Բրազիլիայի** սահմանադրությունները:

Խորհրդարանի լիազորությունների երկրորդ խումբը ֆինանսական լիազորություններն են: Խորհրդարանի ավանդական լիազորությունը՝ ընդունելու բյուջեն և վերահսկելու դրա կատարումը, կարգավորվում է բոլոր սահմանադրությունների կողմից: Ամենալայն տնտեսական լիազորությամբ օժտված է **Հունգարիայի** խորհրդարանը, այն սահմանում է երկրի սոցիալ-տնտեսական ծրագիրը: Երեք երկրում (**Լեհաստան, Խորվաթիա Էստոնիա**) խորհրդարանը կարող է նույնիսկ արձակվել, եթե ժամանակին չընդունի բյուջեն: Սահմանադրությունների մեծ մասում ֆինանսներին նվիրված են հատուկ բաժիններ (օրինակ՝ **Լեհաստանում** և **Սլովենիայում**՝ «հանրային ֆինանսներ», **Ռումինիայում**՝ «տնտեսություն և հանրային ֆինանսներ», **Լիտվայում** և **Էստոնիայում**՝ «ֆինանսներ և պետական բյուջե և այլն»): Հասարակական հարաբերությունների նշյալ տեսակի մանրակրկիտ կարգավորումը համաշխարհային սահմանադրականության արդի միտումներից է և վկայում է զարգացած արևմտյան պետությունների, մասնավորապես **Գերմանիայի** փորձի հետ ծանոթության մասին: Սակայն, արևելաեվրոպական որոշ երկրների համար դա նաև յուրօրինակ վերադարձ է սեփական մինչսոցիալիստական անցյալին⁹: Հասարակական հարաբերությունների կարևորությունը, որ ձևավորվում են պետական բյուջեի մշակման, հաստատման և կատարման գործընթացում, պայմանավորում է դրանց կարգավորման անհրաժեշտությունը իրավական նորմերով, որոնցից գլխավորները ամրագրված են բոլոր պետությունների սահմանադրություններում¹⁰:

Այս առումով կարելի է նշել երկու մարմին (հաստատություն), որոնք հանդիպում են Արևելյան Եվրոպայի երկրների գործող սահմանադրություններում և առհասարակ բոլոր նորագույն սահմանադրություններում: Առաջինը Կենտրոնական բանկն է, երկրորդը՝ Հաշվիչ պալատը (**Բուլղարիա, Հունգարիա**), Հաշվիչ դատարանը (**Ռումինիա, Սլովենիա**), Բարձրագույն վերահսկիչ վարչությունը (**Սլովենիա, Չեխիա**), Պետական վերահսկողությունը (**մերձբալթյան հանրապետություններ**): Ընդ որում՝ սահմանադրությունները ֆինանսական վերահսկողության մարմինների կարգավիճակը կարգավորում են առավել մանրամասն, քան բանկերինը: **Լեհաստանի** Սահմանադրության մեջ Վերահսկողության բարձրագույն պալատին նվիրված է վեց հոդված (այս մարմինը հիշատակված է դեռ 1921թ. լեհական Սահմանադրության մեջ): Սահմանադրությունների մեծ մասում հաշվիչ պալատների ղեկավարությունը նշանակվում է խորհրդարանի կողմից, իսկ Կենտրոնական բանկերի ղեկավարությունը՝ խորհրդարանի և Նախագահի կողմից՝ համատեղ:

Խորհրդարանի լիազորությունների երրորդ խումբը միջազգային պայմանագրերի և համաձայնագրերի վավերացումն ու չեղարկումն է: Վերլուծվող սահմանադրություններից յուրա-

⁹ Сѓи Трещетенкова Н. Ю., Вводная статья к Конституции Литвы // Конституции государств Европы. Под. общ. ред. Л. А. Окунькова. М., Изд-во НОРМА. 2001. с. 330.

¹⁰ Сѓи Тимошенко И. Г., Конституционная регламентация бюджетного процесса в зарубежных государствах // Очерки конституционного права иностранных государств: Учебное и научно-практическое пособие/Отв. ред. Д. А. Ковачев. М., 1999, с. 73.

քանչյուրը կարգավորում է նշյալ հարցը: Դրանց սկզբնական գլուխներում սովորաբար կա հոդված, որը ճանաչում է միջազգային պայմանագրերի գերակայությունը ներքին օրենսդրության նկատմամբ, սակայն, մի շարք նախապայմաններով, օրինակ՝ որ պայմանագիրը վավերացվի և հրապարակվի: Արտաքին քաղաքականությանը նվիրված հատուկ բաժիններ գոյություն ունեն **Ալբանիայի, Լիտվայի, Մակեդոնիայի, Խորվաթիայի և Էստոնիայի** սահմանադրություններում:

Միջազգային պայմանագրերի և համաձայնագրերի առումով այս կամ այն իրավասության օժտված են բոլոր բարձրագույն պետական մարմինները՝ պետության ղեկավարից մինչև դատարաններ: Արևելյան Եվրոպայի երկրների մեծ մասում խորհրդարանը վավերացնում է առավել կարևոր միջազգային պայմանագրերը, որոնց կատեգորիաները սահմանված են հենց սահմանադրության մեջ: Դրանք, օրինակ, այն պայմանագրերն են, որոնք նախատեսում են ընդունել օրենքը կամ փոփոխել այն, ռազմական կամ քաղաքական բնույթի պայմանագրերը, պետության ֆինանսական պարտավորությունները նախատեսող պայմանագրերը և այլն: Որոշ սահմանադրություններ միջազգային պայմանագրերը վավերացնելու լիազորությունը վերապահում են պետության ղեկավարին, ինչին խորհրդարանը տալիս է իր համաձայնությունը (օրինակ՝ **Բոսնիա և Հերցեգովինայում, Լեհաստանում, Չեխիայում**): Սահմանադրություններում առանձնակի տեղ է նվիրվում միջազգային որևէ կազմակերպության անդամակցելու դեպքում ազգային իրավասության իրականացման իրավունքի մի մասը նրան փոխանցելու հարցին. նման միջազգային պայմանագիրը վավերացնելու համար պահանջվում է հանրաքվե (այսպես եղավ արևելաեվրոպական բոլոր երկրներում ԵՄ-ին անդամակցելիս);

Խորհրդարանի լիազորությունների չորրորդ խումբը հանրաքվե նշանակելու լիազորությունն է: Արևելյան Եվրոպայի բոլոր երկրների սահմանադրությունները նախատեսում են ուղղակի ժողովրդավարության այդ կարևոր ձևը: Հաճախ հանրաքվեով կարելի է փոփոխություններ կատարել սահմանադրության մեջ: **Սլովակիայի** Հիմնական օրենքում հանրաքվեին նվիրված էր ութ հոդված (հոդվածներ 93-100): Վերլուծության առարկա երկրների մեծ մասում համազգային հանրաքվեն նշանակվում է խորհրդարանի և Նախագահի կողմից համատեղ: Այսպես, **Բուլղարիայում** խորհրդարանը որոշում է կայացնում ազգային հանրաքվե անցկացնելու մասին (Հոդված 84), իսկ Նախագահը՝ նշանակում է ժամկետը (Հոդված 98), **Լեհաստանում** համապետական հանրաքվե նշանակելու իրավունք ունի Սեյմը, կամ Նախագահը՝ Սենատի համաձայնությամբ (Հոդված 125): Հինգ երկրներում (**Հունգարիա, Լիտվա, Մակեդոնիա, Սլովենիա, Էստոնիա**) դա խորհրդարանի առանձնաշնորհն է; Այս համապատկերում բացառություն է **Չեխիան**, որի Սահմանադրության մեջ հանրաքվեն տևական ժամանակ առհասարակ ամրագրված չէր: 2001 թ., այնտեղ ներառվեցին դրույթներ միջազգային որևէ կազմակերպության անդամակցության հարցով հանրաքվե անցկացնելու հնարավորության մասին: 2002 թ. լրացումներով երկրի Նախագահին հնարավորություն տրվեց «հայտարարելու հանրաքվե Չեխիայի Հանրապետության ԵՄ-ին անդամակցության և դրա արդյունքների վերաբերյալ»: Ներկայումս հանրաքվեի մասին ոչինչ չի ասվում միայն **Բոսնիա և Հերցեգովինայի** Սահմանադրությունում: Թերևս դա ճիշտ է, քանի որ էթնիկ հակամարտության պայմաններում նշյալ ինստիտուտը կարող է միայն սրել իրադրությունը:

Խորհրդարանի լիազորությունների հինգերորդ խումբը տարբեր մարմինների ձևավորման ու պաշտոնատար անձանց նշանակմանը մասնակցելու լիազորությունն է: Հարկ է նշել, որ որոշ երկրներում (**Ալբանիա, Էստոնիա, Լիտվա, Հունգարիա և Չեխիա**) խորհրդարանն է ընտրում երկրի ղեկավարին, մյուս դեպքերում այն նշանակում է Նախագահի ընտրություններ: Ի տարբերություն Գերմանիայի կամ Իտալիայի՝ երկրամասերի ներկայացուցիչները չեն

մասնակցում խորհրդարանի կողմից անցկացվող նախագահական ընտրություններին, բացառությամբ **Էստոնիայի**:

Արդեն նշել ենք, որ Արևելյան Եվրոպայի երկրներում կառավարությունը ցանկացած դեպքում պետք է վայելի խորհրդարանական մեծամասնության աջակցությունը: Համապատասխանաբար, սահմանադրությունները սահմանում են, որ կառավարությունը ձևավորվում է յուրաքանչյուր խորհրդարանական ընտրություններից հետո՝ համաձայն դրա արդյունքների: Չնայած խորհրդարանի առաջատար դերին, այդ գործընթացում, խորհրդարանի և Նախագահի կոնկրետ լիազորությունները կարող են տարբերվել: Ելնելով դրանից՝ առանձնացնենք արևելաեվրոպական երկրներում կառավարության ձևավորման երեք հիմնական մոդելներ:

Առաջին մոդելը պայմանականորեն կարելի է անվանել «Նախագահն առաջարկում է խորհրդարանը նշանակում է»: Այն բնորոշ է **Բուլղարիային**, **Մակեդոնիային** և **Սլովենիային**: Այսպես, համաձայն Սլովենիայի Սահմանադրության 111 հոդվածի, հանրապետության Նախագահը խորհրդարանական խմբակցությունների ղեկավարների հետ խորհրդակցելուց հետո առաջարկում է խորհրդարանին կառավարության ղեկավարի թեկնածությունը: Խորհրդարանն ընտրում է կառավարության ղեկավարին և նրա առաջարկությամբ նշանակում կառավարության մյուս անդամներին: Կառավարությունը երգվում է խորհրդարանի առջև: Արևելյան Եվրոպայի երկրներում պետության ամենաբարձր ներկայացուցչական մարմնի կողմից կառավարության անդամներին նշանակելը պայմանավորված է այն բանով, որ տակավին մինչև վերջերս այնտեղ գոյություն չունեին նախագահի ինստիտուտը: Այն լիազորությունները, որոնք ունեին պետության ղեկավարը Արևմտյան Եվրոպայի երկրներում, վերոնշյալ երկրներում բաշխված էին պետական խորհրդի և բարձրագույն ներկայացուցչական մարմնի միջև: Արդյունքում, երբ Արևելյան Եվրոպայի երկրներից շատերում սահմանվեց Նախագահի պաշտոնը, սկսեց ձևավորվել պետական իշխանության մի կառուցվածք, որը շատ կողմերով չէր համընկնում ավանդական խորհրդարանական ժողովրդավարությամբ երկրների պետական իշխանության կառուցվածքին:

Սակայն Արևելյան Եվրոպայի երկրների գերակշիռ մասում կառավարությունը նշանակելու լիազորությունները այնուամենայնիվ, գտնվում են պետության ղեկավարի ձեռքում, իսկ ներկայացուցչական մարմինը վստահություն է հայտնում (կամ չի հայտնում) կառավարության այդ կազմին: Ուստի, դիտարկենք Արևելյան Եվրոպայի երկրներում կառավարություն ձևավորելու **երկրորդ մոդելը**:

Այն կարելի է պայմանականորեն ձևակերպել հետևյալ կերպ՝ «Նախագահն առաջարկում է-խորհրդարանը վստահություն է հայտնում- Նախագահը նշանակում է»: Որպես օրինակ կարելի է նշել **Էստոնիան**, **Խորվաթիան** և **Ռումինիան**: Այսպես, համաձայն **Ռումինիայի** Սահմանադրության 102-103 հոդվածների՝ Նախագահը վարչապետի պաշտոնում թեկնածություն է առաջադրում խորհրդարանական կուսակցությունների հետ խորհրդակցելուց հետո: Թեկնածուն տասնօրյա ժամկետում խորհրդարան է ներկայացնում ծրագիր և կառավարության ամբողջ կազմը՝ վստահության արժանանալու համար: Խորհրդարանից ստացած վստահության քվեի հիման վրա՝ Նախագահը նշանակում է կառավարությունը: Կառավարությունը երդում է տալիս Նախագահին:

Երրորդ մոդելը կարելի է ձևակերպել այսպես՝ «Նախագահը նշանակում է – խորհրդարանը վստահություն է հայտնում»: Այն կիրառվում է **Բոսնիա** և **Հերցեգովինայում**, **Սլովակիայում**, **Չեխիայում** և **Լեհաստանում**, արևմտյան երկրներից՝ **Իտալիայում**: Այսպես, համաձայն Սլովակիայի Սահմանադրության 110-113 հոդվածների, երկրի Նախագահը նշանակում է կառավարության ղեկավարին և վերջինիս առաջարկությամբ՝ կառավարության մյուս անդամ-

ներին: Նշանակումից հետո 30-օրյա ժամկետում կառավարությունը պետք է խորհրդարան ներկայացնի իր գործունեության ծրագիրը՝ վստահության արժանանալու համար: Կառավարությունը երդում է տալիս Նախագահին: Նման կարգը հաճախ է արժանանում քննադատության, քանի որ այդ երկրների սահմանադրությունները ֆորմալ առումով Նախագահին չեն պարտադրում՝ հաշվի առնելու խորհրդարանի կուսակցական կազմը, իսկ նրա նշանակած անձանց որոշակի ժամկետով հասանելի են դառնում կարևորագույն, այդ թվում և գաղտնի պետական փաստաթղթերը:

Հետաքրքիր է համեմատել խորհրդարանի լիազորությունները դատական մարմինները ձևավորելիս: Ինչպես հայտնի է՝ սոցիալիստական ժամանակաշրջանում դատավորներին նշանակում էր (և փոխում) բարձրագույն ներկայացուցչական մարմինը: Ներկայում Արևելյան-Եվրոպայի երկրների մեծ մասում դատավորներ նշանակելու իրավունքը պատկանում է պետության ղեկավարին: Խորհրդարանը դատավորներ է ընտրում միայն **Լատվիայում**, **Մակեդոնիայում** և **Սլովենիայում**: Սակայն, բարձր աստիճանի դատարանի դատավորներ, այդ թվում և Սահմանադրական դատարանի անդամներ նշանակելու գործընթացին սովորաբար մասնակցում են և խորհրդարանը, և նախագահը: Բացի դրանից **Ֆրանսիայի**, **Իսպանիայի** և **Իտալիայի** օրինակով արևելաեվրոպական երկրների սահմանադրությունները նախատեսում են ստեղծել դատական հանրակցության բարձրագույն մարմիններ, որոնք հաճախ անվանվում են **Դատական խորհուրդներ**: **Բուլղարիայում** և **Խորվաթիայում** նշյալ մարմինները նշանակում են դատավորներին: Ուշագրավ է, որ խորհրդարանը պարտադիր մասնակցում է այդ մարմինների ձևավորմանը՝ Նախագահի և դատավորների հետ միասին:

Զարգացած երկրները փորձն ազդել է նաև այսօրի ինստիտուտի ձևավորման վրա, ինչպիսին Մարդու իրավունքների հանձնակատարն է (**Օմբուդսմեն**), որին ընտրում է խորհրդարանը: **Հունգարիայում** բացի մարդու իրավունքների հանձնակատարի պաշտոնից հիմնվել է նաև ազգային և էթնիկ փոքրամասնությունների իրավունքների հանձնակատարի պաշտոն, մի շարք երկրներում գործում են նաև երեխաների իրավունքների հանձնակատարներ: Վերջապես, ժամանակաշրջանի բնորոշ գծերից է այն, որ արևելաեվրոպական որոշ սահմանադրություններ կանոնակարգում են այնպիսի մարմինների կարգավիճակը, ինչպիսիք են ռադիոյի և հեռուստատեսության համալեռնական խորհուրդը կամ **Ռումինիայի** տեղեկատվական ծառայությունը: Միանգամայն տրամաբանական է, որ այդ մարմինները ձևավորվում են Նախագահի և խորհրդարանի հետ համատեղ (համապատասխանաբար՝ Հոդված 214 և Հոդված 62):

Խորհրդարանի լիազորությունների **վեցերորդ խումբը** քաղաքական և իրավաբանական վերահսկողությունն է պետական մարմինների և պաշտոնատար անձանց, առաջին հերթին՝ կառավարության և պետության ղեկավարի նկատմամբ: Արևելյան Եվրոպայի երկրների սահմանադրությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանցում ամրագրվել են խորհրդարանական համակարգի կայուն սկզբունքներից մեկը՝ խորհրդարանի առջև կառավարության պատասխանատվության սկզբունքը: Միակ բացառությունը, երբ սահմանադրությունը նախատեսում է կառավարության պատասխանատվությունը ոչ միայն խորհրդարանի, այլև Նախագահին առջև, **Լիտվայի Սահմանադրությունն է**, որում ամրագրված է, որ նախարարները պատասխանատվություն են կրում Սեյմի և Նախագահի առջև, և որ կառավարությունը վայր է դնում լիազորությունները Սեյմի կամ Նախագահի ընտրություններից հետո (Հոդվածներ՝ 92, 96):

Գերմանիայի Սահմանադրության օրինակով որոշ երկրներ ներառեցին կառուցողական վստահության քվեն, որը թույլատրում է հեռացնել կառավարության գործող ղեկավարին (նրա

հետ նաև կառավարության ամբողջ կազմին) միայն խորհրդարանի կողմից կառավարության նոր ղեկավար ընտրվելու դեպքում (**Ալբանիա, Հունգարիա, Լեհաստան Սլովենիա**): Մյուս երկրները, թեպետ և կիրառում են ավանդական վստահության քվեն, սակայն զգալիորեն բարդացրել են խորհրդարանի կողմից անվստահություն հայտնելը: Օրինակ՝ Բուլղարիայի Սահմանադրությունը սահմանել է, որ կառավարությանը անվստահություն հայտնելու վերաբերյալ առաջարկություն կարող է ներկայացնել միայն խորհրդարանի պատգամավորների մեկ հինգերորդ մասը, այն ընդունելու համար անհրաժեշտ են պատգամավորների կեսից ավելի ձայները:

Բացի խորհրդարանի առջև կառավարության համերաշխ քաղաքական պատասխանատվությունից, քննարկվող սահմանադրությունների մեծ մասում նախատեսված է **կառավարության անդամների անձնական պատասխանատվություն**: Դրա առկայությունն ուժեղացնում է խորհրդարանի վերահսկողությունը, պաշտպանում է կառավարությանը որպես մեկ ամբողջություն արմատական փոփոխություններից, իսկ խորհրդարանին՝ վաղաժամկետ լուծարումից: Այս առումով հետաքրքիր է **Լիտվայի** Սահմանադրության այն դրույթը, ըստ որի՝ եթե փոխարինվում է նախարարների կեսից ավելին, կառավարությունը վերստին պետք է լիազորություններ ստանա Սեյմից (Հոդված 10): Համանման դրույթ գոյություն ունի նաև Մակեդոնիայի Սահմանադրությունում (Հոդված 94):

Քննարկվող երկրների կեսում «ռացիոնալիզացված պառլամենտարիզմի» ոգով կիրառվում է կառավարության՝ խորհրդարանին ուղղված ոչ թե պարզ, այլ կապակցված հարցը: Օրինակ՝ համաձայն **Ռումինիայի** Սահմանադրության 117 հոդվածի, կառավարության ղեկավարը կարող է կառավարության վստահության հարցը կապել խորհրդարանի կողմից օրենքի կամ այլ որոշման ընդունման հետ, եթե որոշումը ընդունված չէ, համարում է, որ կառավարությանը անվստահություն է հայտնվել: Նման գործողությունների օգնությամբ կառավարությունը ճնշում է բանեցնում խորհրդարանի վրա՝ նպատակ ունենալով հասնել իրեն ձեռնտու ակտի ընդունմանը: Ավելին, երկու երկրում՝ **Սլովակիայում** և **Չեխիայում**, Նախագահին իրավունք ունի արձակելու խորհրդարանը, եթե այն երեք ամսվա ընթացքում որոշում չի կայացրել կառավարության օրինագծի վերաբերյալ, ինչի հետ կառավարությունը կապում է իրեն վստահություն հայտնելը (համապատասխանաբար, Հոդվածներ՝ 102 , 35):

Ինչ վերաբերում է խորհրդարանի առջև բարձր պաշտոնատար անձանց իրավական պատասխանատվությանը, ապա արևելաեվրոպական երկրներում խորհրդարանն իրավունք ունի առաջադրելու մեղադրանք երկրի ղեկավարին՝ առավել հաճախ սահմանադրությունը, օրենքները խախտելու կամ պետական դավաճանության համար: Ուշագրավ է, որ այդ երկրների մեծ մասն ընտրել է Նախագահի իրավական պատասխանատվության **գերմանական մոդելը**, որի դեպքում Նախագահին պաշտոնանկ անելու որոշում է կայացնում Սահմանադրական դատարանը: Բացառություն են **մերձբալթյան հանրապետությունները**, որտեղ նման որոշում կայացնելու հնարավորություն ունի խորհրդարանը, ինչպես նաև **Լեհաստանը**, որտեղ նման որոշում ընդունում է Պետական տրիբունալը, և **Ռումինիան**, որտեղ նման որոշում կայացնելու իրավունք ունի Արդարադատության գերագույն դատարանը, որը գլխավորում է ընդհանուր իրավասության դատարանների համակարգը: Բացի դրանից՝ Ռումինիայում այդ հարցով հնարավոր է անցկացնել հանրաքվե (Հոդված 95):

Հետաքրքիր է, որ **Սլովենիայում** ևս, Նախագահը կարող է պաշտոնանկ արվել ժողովրդական քվեարկությամբ՝ խորհրդարանի նախաձեռնությամբ (Հոդված 106): Սակայն այստեղ **Ավստրիայի օրինակով**՝ գոյություն ունի Նախագահի յուրատեսակ քաղաքական պատասխանատվություն, քանի որ իրավական հիմքեր նման պաշտոնանկության համար

սահմանված չեն, և եթե Նախագահը հետ չի կանչվում հանրաքվեի արդյունքներով, ապա նա ցրում է խորհրդարանը, և սկսվում է Նախագահի լիազորությունների նոր ժամկետը: **Լատվիայում** և **Լիտվայում** ևս, խորհրդարանը կարող է պաշտոնանկ անել Նախագահին առանց իրավաբանական հիմքերի (համապատասխանաբար, Հոդվածներ՝ 51,87): Կառավարության անդամներն իրավական պատասխանատվություն են կրում խորհրդարանի առջև մի շարք երկրներում (օրինակ՝ **Լեհաստանում**, **Ռումինիայում**, **Սլովենիայում**), որոնց ընթացակարգը նման է նախագահների պատասխանատվությանը: Վերջապես, որոշ երկրներում խորհրդարանի իրավասության մեջ է մտնում բարձրագույն դատարանների դատավորների նկատմամբ քրեական հետապնդում սկսելու վերաբերյալ համաձայնություն տալը (օրինակ՝ **Ալբանիայում**, **Չեխիայում**, **Էստոնիայում**):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վարչական գործը հարուցվել է Մելիք Հակոբյանի հայցի հիման վրա, որով վերջինս պահանջել է անվավեր ճանաչել ՀՀ ոստիկանության պետի 12.08.2020 թվականի թիվ 2334-Ա հրամանը, պարտավորեցնել պատասխանողին իրեն վերականգնել նախկին աշխատանքում՝ պաշտոնում, և որպես հետևանք՝ վճարել հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար միջին աշխատավարձի գումարը:

Դատարանի 16.02.2022 թվականի վճռով հայցը բավարարվել է այն պատճառաբանությամբ, որ «(...) ՀՀ ոստիկանության պետի 2020 թվականի օգոստոսի 12-ի թիվ 2334-Ա հրամանը Մելիք Մարտունի Հակոբյանին վերաբերող առաջին կետի մասով ընդունվել է «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի սխալ մեկնաբանման, «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի սխալ կիրառման հետևանքով, ինչը հիմք է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի հիմքով հրամանը Մելիք Մարտունի Հակոբյանի մասով անվավեր ճանաչելու համար:

«Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին պարբերության համաձայն՝ ոստիկանությունից անհիմն կամ անօրինական ազատված, կոչումը կամ պաշտոնն իջեցված ծառայողներին մինչև դրանց վերականգնումն ընկած ժամանակահատվածի համար տրվում է դրամական փոխհատուցում նրան չվճարված աշխատավարձի չափով, բայց ոչ ավելի, քան 3 ամսվա համար:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածը սահմանում է՝ «1. Աշխատանքի պայմանների փոփոխման, գործադուրի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը դադարեցնելու կամ աշխատանքային պայմանագիրը լուծելու հետ համաձայն չլինելու դեպքում աշխատողը համապատասխան անհատական իրավական ակտը (փաստաթուղթը)

ստանալու օրվանից հետո՝ երկու ամսվա ընթացքում, իրավունք ունի դիմելու դատարան: Եթե պարզվում է, որ աշխատանքի պայմանները փոփոխվել են, աշխատողի հետ աշխատանքային պայմանագիրը լուծվել է առանց օրինական հիմքերի կամ օրենսդրությամբ սահմանված կարգի խախտումով, ապա աշխատողի խախտված իրավունքները վերականգնվում են: Այդ դեպքում աշխատողի օգտին գործատուից գանձվում է միջին աշխատավարձը՝ հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար, կամ աշխատավարձի տարբերությունը այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում աշխատողը կատարում էր նվազ վարձատրվող աշխատանք: Միջին աշխատավարձը հաշվարկվում է աշխատողի միջին օրական աշխատավարձի չափը համապատասխան օրերի քանակով բազմապարկելու միջոցով:

2. Տնտեսական, տեխնոլոգիական, կազմակերպչական պարճառներով կամ գործատուի և աշխատողի հետագա աշխատանքային հարաբերությունների վերականգնման անհնարինության դեպքում դատարանը կարող է աշխատողին չվերականգնել իր նախկին աշխատանքում՝ պարտավորեցնելով գործատուին հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար վճարել հատուցում՝ միջին աշխատավարձի չափով, մինչև դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելը, և աշխատողին աշխատանքում չվերականգնելու դիմաց հատուցում՝ ոչ պակաս, քան միջին աշխատավարձի, բայց ոչ ավելի, քան միջին աշխատավարձի տասներկուամսյակի չափով: Դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից աշխատանքային պայմանագիրը համարվում է լուծված:

Դատարանն առաջին հերթին անդրադառնալով դատական նիստին պատասխանողի ներկայացուցչի «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 52-րդ հոդվածի վկայակոչմամբ ներկայացված այն փաստարկին, որ օրենսդիրը հատուկ օրենքով սահմանել է, որ ոստիկանության բոլոր այն ծառայողներին, որոնք ճանաչվում են անհիմն ազատված դրամական փոխհատուցումը տրվում է միջին աշխատավարձի 3 ամսվա չափով՝ արձանագրում է, որ հիշյալ նորմը չի վերացնում ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 1-ին մասի գործողությունը, քանի որ այդ նորմով սահմանված է ոստիկանության ծառայողի՝ ծառայությունում վերականգնելու դեպքում լրացուցիչ դրամական փոխհատուցում ստանալու իրավունք, որը չի կարող նույնանալ հարկադիր պարապուրդի համար վճարվող աշխատավարձի հետ:

Հետևաբար՝ հաշվի առնելով, որ վերոնշյալ հիմնավորումներով ՀՀ ոստիկանության պետի 2020 թվականի օգոստոսի 12-ի թիվ 2334-Ա հրամանը Մելիք Մարտունի Հակոբյանին վերաբերող մասով ոչ իրավաչափ է և դրա գործողությունն այդ մասով անվավեր ճանաչելու միջոցով ենթակա է դադարեցման՝ Դատարանը գտնում է, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան Մելիք Մարտունի Հակոբյանին վճարման է ենթակա միջին աշխատավարձի չափով հատուցում՝ հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար՝ 2020 թվականի օգոստոսի 12-ից մինչև դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելը»:

Դատարանի վճիռը Ոստիկանության կողմից վերաքննության կարգով բողոքարկվել է միայն հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար միջին աշխատավարձի գումարը վճարելուն պարտավորեցնելու մասով:

Վերաքննիչ դատարանի 07.07.2023 թվականի որոշմամբ Ոստիկանության վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի 16.02.2022 թվականի վճիռը՝ հարկադիր պարապուրդի մասով, բեկանվել և փոփոխվել է՝ պարտավորեցվել է Ոստիկանությանը Մելիք Հակոբյանին վճարել դրամական հատուցում չվճարված աշխատավարձի չափով, բայց ոչ ավելի, քան

3 ամսվա համար: Վերաքննիչ դատարանը նման եզրահանգման եկել է որոշման հիմքում դնելով հետևյալ պատճառաբանությունը. «(...) Ոստիկանությունից անհիմն կամ անօրինական ազատված, կոչումը կամ պաշտոնն իջեցված ծառայողներին մինչև դրանց վերականգնումն ընկած ժամանակահատվածի համար տրվում է դրամական փոխհատուցում: Բացի այդ, նորմը նախատեսում է նաև, թե ինչ չափով է վճարվում այդ փոխհատուցումը:

Նշվածի հաշվառմամբ Վերաքննիչ դատարանը նկատում է, որ նշված նորմի կիրառելի կամ ոչ կիրառելի լինելու հարցի պարզման համար անհրաժեշտ էր պարզել արդյո՞ք հայցվորն անհիմն կամ անօրինական է ազատվել Ոստիկանությունում ծառայությունից, թե ոչ: Եվ քանի որ, Վարչական դատարանը հիմնավոր է համարել հայցվորի պահանջը՝ անվավեր ճանաչվելով Ոստիկանության պետի 2020 թվականի օգոստոսի 12-ի թիվ 2334-Ա հրամանի 1-ին կետը, իսկ այդ մասով դատական ակտը բողոքարկված չլինելու պայմաններում համարվում է ուժի մեջ մտած դատական ակտ, այսինքն հաստատվել է փաստն առ այն, որ հայցվորն անհիմն կերպով է ազատվել աշխատանքից, ապա Վերաքննիչ դատարանը նկատում է, որ հարկադիր պարապուրդի մասով Վարչական դատարանը եկել է սխալ եզրահանգման՝ սխալ է մեկնաբանել «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ մասը: Մասնավորապես, հայցվորին ոստիկանությունում ծառայությունից ազատելու մասին ՀՀ ոստիկանության պետի 2020 թվականի օգոստոսի 12-ի թիվ 2334-Ա հրամանի ոչ իրավաչափ որակումն ուղիղ նշանակում է, որ հայցվորը ոստիկանությունում ծառայությունից ազատվել է անհիմն: Այլ կերպ ասած, հայցվորը, 2020 թվականի օգոստոսի 12-ի թիվ 2334-Ա հրամանի 1-ին կետն անվավեր ճանաչված լինելու պայմաններում, պահպանում է «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դրամական հատուցում ստանալու իրավունքը, սակայն ոչ թե հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի, այլ չվճարված աշխատավարձի չափով, բայց ոչ ավելի, քան 3 ամսվա համար:

Ըստ այդմ, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ հայցը՝ հարկադիր պարապուրդի ողջ ժամանակահատվածի համար դրամական հատուցում տրամադրելուն Ոստիկանությանը պարտավորեցնելու մասով, հիմնավոր չէ և ենթակա է մերժման՝ «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կանոնակարգման հաշվառմամբ և դրանով հարկորոշված ժամանակային տիրույթի կտրվածքով: Սա նշանակում է, որ նշված մասով հայցը բավարարելով՝ Վարչական դատարանը թույլ է տվել գործի ելքի վրա ազդեցություն ունեցող դատական սխալ, ինչը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով ամրագրված կանոնակարգումների համաձայն, բողոքարկված վճիռն այդ մասով բեկանելու հիմք է»:

Վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Սույն գործով Մելիք Հակոբյանը պահանջել է անվավեր ճանաչել ՀՀ ոստիկանության պետի 12.08.2020 թվականի թիվ 2334-Ա հրամանը, պարտավորեցնել պատասխանողին իրեն վերականգնել նախկին աշխատանքում՝ պաշտոնում, և որպես հետևանք՝ վճարել հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար միջին աշխատավարձի գումարը:

Դատարանը 16.02.2022 թվականի վճռով անվավեր է ճանաչել ՀՀ ոստիկանության պետի 12.08.2020 թվականի թիվ 2334-Ա հրամանի 1-ին կետը, իսկ այդ մասով դատական ակտը չի բողոքարկվել վերաքննության կարգով, ուստի համարվում է ուժի մեջ մտած դատական ակտ, այլ կերպ ասած՝ հաստատվել է փաստն առ այն, որ հայցվորն անհիմն կերպով է ազատվել աշխատանքից:

Հաջորդիվ՝ Դատարանը 16.02.2022 թվականի վճռով գտել է, որ «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ մասը չի վերացնում ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 1-ին մասի գործողությունը, քանի որ այդ նորմով սահմանված է ոստիկանության ծառայողի՝ ծառայությունում վերականգնելու դեպքում լրացուցիչ դրամական փոխհատուցում ստանալու իրավունքը, որը չի կարող նույնանալ հարկադիր պարապուրդի համար վճարվող աշխատավարձի հետ: Մինչդեռ, Վերաքննիչ դատարանը 07.07.2023 թվականի որոշմամբ գտել է, որ հարկադիր պարապուրդի ողջ ժամանակահատվածի համար դրամական փոխհատուցում տրամադրելուն պարտավորեցնելու պահանջը հիմնավոր չէ, և տվյալ դեպքում ենթակա է կիրառման «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ մասը, որպիսի պայմաններում հայցվորը պահպանում է դրամական փոխհատուցում ստանալու իրավունքը, սակայն ոչ թե հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի, այլ չվճարված աշխատավարձի չափով, բայց ոչ ավելի, քան 3 ամսվա համար:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն անհիմն է համարում Դատարանի այն դիրքորոշումը, ըստ որի՝ սույն դեպքում «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի նորմը կիրառելի չէ ներքոհիշյալ պատճառաբանությամբ:

Հիմք ընդունելով վերն արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն դեպքում հայցվորի վարձատրության իրավունքը ենթակա էր վերականգնման ոչ թե ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 1-ին մասի հիման վրա, որպիսի հետևության հանգել էր Դատարանը, այլ «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի հիման վրա: Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ սույն դեպքում «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի նշված նորմը ենթակա է կիրառման ՀՀ սահմանադրական դատարանի 15.10.2024 թվականի թիվ ՍԴՈ-1757 որոշման հաշվառմամբ, այսինքն՝ առանց փոխհատուցում ստանալու իրավունքի եռամսյա սահմանափակման դրույթի:

Վերոհիշյալ պատճառաբանությամբ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հայցվորին պետք է «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար փոխհատուցում վճարվի՝ սույն որոշմամբ արտահայտված դիրքորոշումների լույսի ներքո:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել նաև հետևյալը.

ՀՀ Սահմանադրության 171-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ Վճռաբեկ դատարանը դատական ակտերն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակներում վերանայելու միջոցով ապահովում է օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ Վճռաբեկ դատարանը դատական ակտերն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակում վերանայելու միջոցով ապահովում է օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը Վճռաբեկ դատարանն ապահովում է, եթե առկա է իրավունքի զարգացման խնդիր, կամ տարբեր գործերով դատարանների կողմից նորմատիվ իրավական ակտը տարաբնույթ է կիրառվել կամ չի կիրառվել տարաբնույթ իրավաընկալման հետևանքով:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իր գործի քննության ժամանակ որպես

իրավական փաստարկ իրավունք ունի վկայակոչելու նույնանման փաստերով այլ գործով Հայաստանի Հանրապետության դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտում առկա օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտի մեկնաբանությունները: Դատարանն անդրադառնում է նման իրավական փաստարկներին:

Տվյալ դեպքում բողոք բերած անձի կողմից, որպես իրավական փաստարկ, վկայակոչվել է թիվ ՎԴ-2/0266/05/20 վարչական գործով ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի կողմից կայացված դատական ակտը, որով ՀՀ վերաքննիչ վարչական դատարանը, վերլուծության ենթարկելով «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ մասը եզրահանգել է, որ «անդրադառնալով Օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի վկայակոչմամբ բողոքաբերի փաստարկին առ այն, որ դրամական փոխհատուցումը պետք է տրամադրվի չվճարված աշխատավարձի չափով, բայց ոչ ավելի, քան 3 ամսվա համար՝ Վերաքննիչ դատարանն այն անհիմն է համարում, քանի որ նշված իրավանորմով սահմանված է ոստիկանության ծառայողի՝ ծառայությունում վերականգնելու դեպքում լրացուցիչ դրամական փոխհատուցում ստանալու իրավունքը, որը չի կարող նույնանալ հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար վճարվող աշխատավարձի հետ»:

Վճռաբեկ դատարանը, արժևորելով օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունն ապահովելու իր սահմանադրական առաքելությունը, անհրաժեշտ է համարում նշել, որ «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ մասը ենթակա է կիրառման սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ, ինչն էական նշանակություն կունենա Ոստիկանությունից անհիմն կամ անօրինական ազատված, կոչումը կամ պաշտոնն իջեցված ծառայողի հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար դրամական փոխհատուցում ստանալու առանձնահատկությունների վերաբերյալ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 152-րդ և 163-րդ հոդվածների հիմքով Վերաքննիչ դատարանի որոշումը մասնակիորեն բեկանելու համար:

Միաժամանակ, ՀՀ վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու ՀՀ վճռաբեկ դատարանի լիազորությունը՝ հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար՝ գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 57-րդ հոդվածի համաձայն՝ պետական տուրքի չափի, դրա վճարումից ազատելու, պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետելու և դրա չափը նվազեցնելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի՝ հայցադիմումը դատարան ներկայացնելու պահին գործող խմբագրությամբ 22-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ դատարաններում պետական տուրքի վճարումից ազատվում են՝ հայցվորները՝ աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների հետ կապված այլ գումարների գանձման և **աշխատանքային վեճերի վերաբերյալ հայցերով:**

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի առաջին մասում նշված անձինք տուրքի վճարումից ազատվում են նաև դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ պետական տուրքը ենթակա է վերադարձման մասնակի կամ լրիվ՝ եթե պետական տուրքը վճարվել է ավելի, քան պահանջվում է գործող օրենսդրությամբ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով հայցվոր Մելիք Հակոբյանն ազատված է պետական տուրք վճարելու պարտականությունից, իսկ սույն վճռաբեկ բողոքի համար վճարել է 30.000 ՀՀ դրամ պետական տուրք, հետևաբար իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի հիմքով ենթակա է վերադարձման այն վճարած անձին, ուստի նշված հիմքով սույն գործով պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 07.07.2023 թվականի որոշումը և օրինական ուժ տալ ՀՀ վարչական դատարանի 16.02.2022 թվականի վճիռն՝ սույն որոշման պատճառաբանություններով:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՏԴ/0023/01/22

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ
ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԸ
(ԱՅՍՈՒՀԵՏ՝ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ)**

17 հունվարի 2025 թվական ք.Երևան
գրավոր ընթացակարգով քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝
2023 թվականի ապրիլի 3-ի որոշման դեմ մեղադրյալ Մարգարետ Մաքսիմի Բեգլարյանի
պաշտպաններ Մ.Թամազյանի, Ա.Մանթաշյանի և մեղադրյալ Նվեր Արամի Բեգլարյանի
պաշտպան Զ.Սակովայի վճռաբեկ բողոքները,

ՊԱՐԶԵՑ

Վարույթի դատավարական նախապատմությունը.

1. 2021 թվականի հոկտեմբերի 19-ին ՀՀ ոստիկանության Տավուշի մարզային վարչության
Դիվիզանի բաժնում 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի
(այսուհետ՝ նաև ՀՀ նախկին քրեական օրենսգիրք) 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի
հատկանիշներով հարուցվել է թիվ 36162821 քրեական գործը:

2. 2021 թվականի նոյեմբերի 16-ին Մարգարետ Մաքսիմի Բեգլարյանը ներգրավվել է որպես
մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 177-րդ
հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով՝ երկու դրվագով:

2021 թվականի նոյեմբերի 16-ին Արշակ Ռազմիկի Հարությունյանը ներգրավվել է որպես
մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 177-րդ
հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով՝ երկու դրվագով:

2021 թվականի նոյեմբերի 17-ին Նվեր Արամի Բեգլարյանը ներգրավվել է որպես
մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 177-րդ
հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով՝ երկու դրվագով:

2022 թվականի փետրվարի 22-ին Մարգարետ Բեգլարյանին և Արշակ Հարությունյանին
առաջադրված մեղադրանքները փոփոխվել ու լրացվել են, և նրանց նոր մեղադրանք է
առաջադրվել ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ
կետերով և 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

2022 թվականի փետրվարի 23-ին Նվեր Բեգլարյանին առաջադրված մեղադրանքը
փոփոխվել ու լրացվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ նախկին քրեական
օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով և 177-րդ հոդվածի 3-րդ մասի
1-ին կետով:

3. 2022 թվականի փետրվարի 28-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2022 թվականի դեկտեմբերի 13-ին Առաջին ատյանի դատարանն իր կայացրած երեք որոշումներով մեղադրյալներ Մարգալետ Բեգլարյանին, Արշակ Հարությունյանին և Նվեր Բեգլարյանին ազատել է ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով և 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցանքների համար քրեական պատասխանատվությունից՝ տուժողների հետ հաշտության հիմքով:

4. Առաջին ատյանի դատարանի հիշյալ որոշումների դեմ դատախազը ներկայացրել է վերաքննիչ բողոքներ, որոնք ՀՀ Վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2023 թվականի ապրիլի 3-ի որոշմամբ բավարարել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2022 թվականի դեկտեմբերի 13-ի որոշումները բեկանել է և քրեական գործը փոխանցել նույն դատարան՝ նոր քննության:

5. Վերաքննիչ դատարանի հիշյալ որոշման դեմ Մարգալետ Բեգլարյանի պաշտպաններ Մ.Թամազյանը, Ա.Մանթաշյանը և Նվեր Բեգլարյանի պաշտպան Չ.Սակովան բերել են վճռաբեկ բողոքներ, որոնք Վճռաբեկ դատարանի՝ 2023 թվականի հոկտեմբերի 23-ի որոշմամբ ընդունվել են վարույթ և սահմանվել դատական վարույթի իրականացման գրավոր ընթացակարգ:

Վճռաբեկ բողոքների հիմքերը, փաստարկները և պահանջը

Վճռաբեկ բողոքները քննվում են հետևյալ հիմքերի և հիմնավորումների սահմաններում.

6. Մեղադրյալ Մարգալետ Բեգլարյանի պաշտպաններ Մ.Թամազյանը և Ա.Մանթաշյանը վճռաբեկ բողոքում նշել են, որ վիճարկվող դատական ակտը ենթակա է ամբողջությամբ բեկանման, քանի որ Վերաքննիչ դատարանը առերևույթ թույլ է տվել նյութական օրենքի խախտում, այն է՝ ճիշտ չի կիրառել 2022 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի(այսուհետ՝ նաև ՀՀ գործող քրեական օրենսգիրք) 82-րդ հոդվածը: Բողոքաբերները փաստարկել են, որ համանման փաստական հանգամանքների առկայության պայմաններում մեկ այլ քրեական գործով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2022 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ ԵԴ/1673/01/21 որոշմամբ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով քրեական հետապնդումը դադարեցրել է և քրեական գործի վարույթը կարճել՝ տուժողի հետ հաշտվելու հիմքով, որպիսի որոշումը չի բողոքարկվել և մտել է օրինական ուժի մեջ: Այլ կերպ՝ առկա է ստորադաս դատարանների կողմից տարբեր վարույթներով նույնանման հանգամանքների առկայությամբ միմյանց հակասող առնվազն երկու դատական ակտեր, ուստի Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ ՀՀ քրեական օրենսգրքի վերաբերելի նորմի միատեսակ կիրառությունն ապահովելու համար:

6.1. Միևնույն ժամանակ, բողոք բերած անձինք իրենց անհամաձայնությունն են հայտնել Վերաքննիչ դատարանի այն դիրքորոշմանը, որ անձի վիճակը բարելավող օրենքին հետադարձություն տալն ու այն գործով ամբաստանյալի նկատմամբ կիրառելը, նույնիսկ օրինական ուժի մեջ չմտած եզրափակիչ դատավարական ակտի առկայության պայմաններում, թույլատրելի և ընդունելի կարող է դիտարկվել, եթե վիճարկվող դատական ակտում հղում կատարվեր համապատասխան օրենքի, մասնավորապես՝ ՀՀ քրեական օրենսգրքը գործողության մեջ դնելու մասին 2022 թվականի հունիսի 9-ի օրենքի կոնկրետ նորմի վրա, որը չի կատարվել: Վերոնշյալի կապակցությամբ բողոքաբերներն ընդգծել են, որ Առաջին

ատյանի դատարանը հղում է կատարել ՀՀ գործող քրեական օրենսգրքի 9-րդ հոդվածին, իսկ ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի վիճարկվող դատական ակտում ՀՀ քրեական օրենսգրքի գործողության մեջ դնելու մասին 2022 թվականի հունիսի 9-ի օրենքի կոնկրետ նորմի վրա հղում կատարելու անհրաժեշտությանը, պաշտպանները գտել են, որ կոնկրետ նորմին հղում կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

6.2. Բողոք բերած անձինք ընդգծել են նաև, որ օրենսդիրը մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը գործող իրավակարգավորումներով քանակական առումով որևէ սահմանափակում չի նախատեսել մեղադրյալի կողմից տուժողի հետ հաշտության հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական գործի վարույթը կարճելու համար, որն էլ կիրառելի է Մարգարտ Բեգլարյանի նկատմամբ, քանի որ 2022 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ մտած ՀՀ քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված սահմանափակումն անձի վիճակը վատթարացնող նորմ է, ուստի այդ մասով այն հետադարձ ուժ չի կարող ունենալ: Հետևաբար, Առաջին ատյանի դատարանը, հաշվի առնելով վերոնշյալը, կայացրել է օրինական և պատճառաբանված դատական ակտ:

7. Վերոգրյալի հիման վրա, բողոք բերած անձինք խնդրել են բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2023 թվականի ապրիլի 3-ի որոշումը՝ Առաջին ատյանի դատարանի՝ 2022 թվականի դեկտեմբերի 13-ի որոշումը թողնելով օրինական ուժի մեջ:

8. Նվեր Բեգլարյանի պաշտպան Զ.Սակովան ներկայացված վճռաբեկ բողոքում նշել է, որ Վերաքննիչ դատարանը, բեկանելով և վարույթը նոր քննության ուղարկելով, թույլ է տվել դատական սխալ՝ նյութական և դատավարական նորմերի էական խախտում, որն ազդել է գործի ելքի վրա, բացի այդ, բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար:

8.1. Բողոքաբերն ընդգծել է, որ քրեական օրենքի հետադարձության կանոնը ենթադրում է, որ հանցավոր արարքի փաստացի կատարումից հետո ընդունված, արարքի հանցավորությունը և պատժելիությունը վերացնող օրենքը պետք է հետադարձ ուժ ունենա, քանի որ նախկին քրեական օրենսգրքով տուժողի հետ հաշտության հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելը և քրեական պատասխանատվությունից ազատելը հայեցողական իրավունք էր, իսկ նոր քրեական օրենսգրքի պայմաններում՝ իմպերատիվ պահանջ: Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի այն փաստարկին, որ այս ինստիտուտը կիրառելի է բացառապես այն պարագայում, երբ անձն առաջին անգամ է կատարում ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք, իսկ վերոնշյալ քրեական գործով բացակայում է նման պայմանը, քանի որ մեղադրյալները մեղադրվում են ենթադրաբար կատարված երկու հանցագործությունների մեջ, բողոքաբերի պնդմամբ անհիմն է, քանի որ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի տուժողի հետ հաշտվելու հիմքով պատասխանատվությունից ազատելու հնարավորությունը նախատեսում էր ոչ թե հանցանքի ծանրությամբ պայմանանավորված, այլ որոշակի հանցատեսակներով, հետևաբար ՀՀ նախկին օրենսդրությամբ ևս նախատեսված է եղել տուժողի հետ մեղադրյալի հաշտության հիմքով քրեական հետապնդման դադարեցումը: Բացի այդ, բողոք բերած անձի կարծիքով՝ 2022 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածի սահմանափակ կիրառումը հանգեցնում է անմեղության կանխավարկածի խախտմանը, ուստի Վերաքննիչ դատարանի կողմից այդպիսի կարծիքի վաղաժամ արտահայտումն ինքնին հակասում է անմեղության կանխավարկածին:

9. Վերոգրյալի հիման վրա, բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2023 թվականի ապրիլի 3-ի որոշումը և կայացնել նոր դատական ակտ՝ մեղադրյալ Նվեր Բեգլարյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնել՝ տուժողների

հետ հաշտվելու հիմքով կամ բեկանված մասով վարույթը փոխանցել համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալը:

Վճռաբեկ բողոքների քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

10. Մարզպետ Բեգլարյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով և 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով այն բանի համար, որ նա «(...) [Ուրիշի գույքի գաղտնի հափշտակություն կատարելու հարցի շուրջ՝ նախնական համաձայնության գալով Արշակ Ռազմիկի Հարությունյանի և Նվեր Արամի Բեգլարյանի հետ, 2021 թվականի սեպտեմբերի 15-ին՝ ժամը 01:00-ի սահմաններում, երկաթյա ձողով բացել է (...) Արթուր Օրուջյանին փաստացի պարկանող «Վազ 212140» մակնիշի (...) ավտոմեքենայի դուռը, որից հետո միմյանց փոխլրացնող գործողություններ կատարելով՝ շարժի է գցել նշված ավտոմեքենան և գաղտնի հափշտակել այն և մեքենայի մաս կազմող էլեկտրական ճախարակը՝ Արթուր Օրուջյանին պարճառելով խոշոր չափերի՝ 2.570.000 ՀՀ դրամի գույքային վնաս: Բացի այդ, Մարզպետ Մաքսիմի Բեգլարյանը, ուրիշի գույքի գաղտնի հափշտակություն կատարելու հարցի շուրջ նախնական համաձայնության գալով Արշակ Ռազմիկի Հարությունյանի և Նվեր Արամի Բեգլարյանի հետ, 2021 թվականի հոկտեմբերի 10-ին՝ ժամը 04:00-ի սահմաններում, երկաթյա ձողով կտրելով (...) Անգին Ալիսանյանին պարկանող խանութ-սրահի մուտքի դռան երկաթյա կախովի կողպեքը, որից հետո բացելով եվրոպական արտադրության դուռը, ապօրինի մուտք է գործել այնտեղ և միմյանց փոխլրացնող գործողություններ կատարելով՝ գաղտնի հափշտակել է 4.644.200 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ տարբեր տեսակի հագուստներ, կոշիկներ, 1 հատ տեսագրառում կատարող սարք և 1 հատ համակարգչի մոնիտոր՝ Անգին Ալիսանյանին պարճառելով առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս (...)»¹:

Նվեր Բեգլարյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով և 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով այն բանի համար, որ նա «(...) [Ուրիշի գույքի գաղտնի հափշտակություն կատարելու հարցի շուրջ՝ նախնական համաձայնության գալով Արշակ Ռազմիկի Հարությունյանի և Մարզպետ Մաքսիմի Բեգլարյանի հետ, 2021 թվականի սեպտեմբերի 15-ին՝ ժամը 01:00-ի սահմաններում, երկաթյա ձողով բացել է (...) Արթուր Օրուջյանին փաստացի պարկանող «Վազ 212140» մակնիշի (...) ավտոմեքենայի դուռը, որից հետո միմյանց փոխլրացնող գործողություններ կատարելով՝ շարժի է գցել նշված ավտոմեքենան և գաղտնի հափշտակել այն և մեքենայի մաս կազմող էլեկտրական ճախարակը՝ Արթուր Օրուջյանին պարճառելով խոշոր չափերի՝ 2.570.000 ՀՀ դրամի գույքային վնաս: Բացի այդ, Նվեր Արամի Բեգլարյանը, ուրիշի գույքի գաղտնի հափշտակություն կատարելու հարցի շուրջ նախնական համաձայնության գալով Արշակ Ռազմիկի Հարությունյանի և Մարզպետ Մաքսիմի Բեգլարյանի հետ, 2021 թվականի հոկտեմբերի 10-ին՝ ժամը 04:00-ի սահմաններում, երկաթյա ձողով կտրելով (...) Անգին Ալիսանյանին պարկանող խանութ-սրահի մուտքի դռան երկաթյա կախովի կողպեքը, որից հետո բացելով եվրոպական արտադրության դուռը, ապօրինի մուտք է գործել այնտեղ և միմյանց փոխլրացնող գործողություններ կատարելով՝ գաղտնի հափշտակել է 4.644.200 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ տարբեր տեսակի հագուստներ, կոշիկներ, 1 հատ տեսագրառում կատարող սարք և 1 հատ համակարգչի մոնիտոր՝ Անգին Ալիսանյանին

¹ Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 4, թերթեր 13-14:

պարճառելով առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս (...)»²:

Արշակ Հարությունյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով և 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով այն բանի համար, որ նա «.../Ուլիշի գույքի գաղտնի հափշտակություն կատարելու հարցի շուրջ նախնական համաձայնության գալով Մարգարե Մաքսիմի Բեգլարյանի և Նվեր Արամի Բեգլարյանի հետ 2021 թվականի սեպտեմբերի 15-ին՝ ժամը 01:00-ի սահմաններում, երկաթյա ձողով բացել է (...) Արթուր Օրուջանին փաստացի պարկանող «Վազ 212140» մակնիշի (...) ավտոմեքենայի դուռը, որից հետո միմյանց փոխլրացնող գործողություններ կատարելով՝ շարժի է գցել նշված ավտոմեքենան և գաղտնի հափշտակել այն և մեքենայի մաս կազմող էլեկտրական ճախարակը՝ Արթուր Օրուջանին պարճառելով խոշոր չափերի՝ 2.570. 000 ՀՀ դրամի գույքային վնաս: Բացի այդ, Արշակ Ռազմիկի Հարությունյանը, ուլիշի գույքի գաղտնի հափշտակություն կատարելու հարցի շուրջ նախնական համաձայնության գալով Մարգարե Մաքսիմի Բեգլարյանի և Նվեր Արամի Բեգլարյանի հետ, 2021 թվականի հոկտեմբերի 10-ին՝ ժամը 04:00-ի սահմաններում երկաթյա ձողով կտրելով (...) Անգին Ալիսանյանին պարկանող խանութ-սրահի մուտքի դռան երկաթյա կախովի կողպեքը, որից հետո բացելով եվրոպական արտադրության դուռը, ապօրինի մուտք է գործել այնտեղ և միմյանց փոխլրացնող գործողություններ կատարելով՝ գաղտնի հափշտակել է 4.644.200 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ փարբեր տեսակի հագուստներ, կոշիկներ, 1 հար տեսագրառում կատարող սարք և 1 հար համակարգչի մոնիտոր՝ Անգին Ալիսանյանին պարճառելով առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս (...)»³:

11. Առաջին ատյանի դատարանը, 2022 թվականի դեկտեմբերի 13-ի որոշմամբ Նվեր Բեգլարյանին քրեական պատասխանատվությունից ազատելով, արձանագրել է. «(...) Հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները, հաշվի առնելով այն, որ ամբաստանյալ Նվեր Արամի Բեգլարյանը համարվում է դատվածություն չունեցող, վերջինիս կողմից կատարված հանցագործությունները հանդիսանում են միջին ծանրության հանցագործություններ, ամբաստանյալի և տուժողների միջև առկա է հաշտության վերաբերյալ ինքնուրույն և ազատ կամարտահայտության վրա հիմնված փոխադարձ համաձայնություն, հաշվի առնելով, որ ամբաստանյալը գիտակցում է, որ տուժողների հետ հաշտության հիմքով քրեական հետապնդման դադարեցումը կրելու է ոչ արդարացնող (ոչ ռեաբիլիտացնող) բնույթ, և չի առարկել նշված հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական գործի վարույթը կարճելու դեմ՝ Դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Մարգարե Մաքսիմի Բեգլարյանին պետք է ազատել 2003 թվականի օգոստոսի 1-ին ուժի մեջ մտած ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-ր մասի 1-ին և 2-րդ կետերով (համապատասխանում է 2022 թվականի հուլիսի 1-ին ուժի մեջ մտած ՀՀ քրեական օրենսգրքի 254-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 4-րդ կետերին) 2021 թվականի սեպտեմբերի 15-ին և 2003 թվականի օգոստոսի 1-ին ուժի մեջ մտած ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով (համապատասխանում է 2022 թվականի հուլիսի 1-ին ուժի մեջ մտած ՀՀ քրեական օրենսգրքի 254-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետին) 2021 թվականի հոկտեմբերի 10-ին կատարած հանցանքների համար քրեական պատասխանատվությունից՝ տուժողների հետ հաշտության հիմքով (...)»⁴:

11.1. Առաջին ատյանի դատարանը, 2022 թվականի դեկտեմբերի 13-ի որոշմամբ Մարգարե

² Տես վարույթի նյութեր, հատոր 4, թերթեր 41-42:

³ Տես վարույթի նյութեր, հատոր 4, թերթեր 27-28:

⁴ Տես վարույթի նյութեր, հատոր 8, թերթեր 89-93:

Բեգլարյանին քրեական պատասխանատվությունից ազատելով, արձանագրել է. «(...) Հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները, հաշվի առնելով այն, որ ամբաստանյալ Մարգարե Մաքսիմի Բեգլարյանը համարվում է դատվածություն չունեցող, վերջինիս կողմից կատարված հանցագործությունները հանդիսանում են միջին ծանրության հանցագործություններ, ամբաստանյալի և տուժողների միջև առկա է հաշտության վերաբերյալ ինքնուրույն և ազատ կամարտահայտության վրա հիմնված փոխադարձ համաձայնություն, հաշվի առնելով, որ ամբաստանյալը գիտակցում է, որ տուժողների հետ հաշտության հիմքով քրեական հետապնդման դադարեցումը կրելու է ոչ արդարացնող (ոչ ռեաբիլիտացնող) բնույթ, և չի առարկել նշված հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական գործի վարույթը կարճելու դեմ՝ Դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Մարգարե Մաքսիմի Բեգլարյանին պետք է ազատել 2003 թվականի օգոստոսի 1-ին ուժի մեջ մտած ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-ր մասի 1-ին և 2-րդ կետերով (համապատասխանում է 2022 թվականի հուլիսի 1-ին ուժի մեջ մտած ՀՀ քրեական օրենսգրքի 254-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 4-րդ կետերին) 2021 թվականի սեպտեմբերի 15-ին և 2003 թվականի օգոստոսի 1-ին ուժի մեջ մտած ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով (համապատասխանում է 2022 թվականի հուլիսի 1-ին ուժի մեջ մտած ՀՀ քրեական օրենսգրքի 254-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետին) 2021 թվականի հոկտեմբերի 10-ին կատարած հանցանքների համար քրեական պատասխանատվությունից՝ տուժողների հետ հաշտության հիմքով (...)»⁵:

11.2. Առաջին ատյանի դատարանը, 2022 թվականի դեկտեմբերի 13-ի որոշմամբ Արշակ Հարությունյանին քրեական պատասխանատվությունից ազատելով, արձանագրել է. «(...) Հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները, հաշվի առնելով այն, որ ամբաստանյալ Արշակ Ռազմիկի Հարությունյանը համարվում է դատվածություն չունեցող, վերջինիս կողմից կատարված հանցագործությունները հանդիսանում են միջին ծանրության հանցագործություններ, ամբաստանյալի և տուժողների միջև առկա է հաշտության վերաբերյալ ինքնուրույն և ազատ կամարտահայտության վրա հիմնված փոխադարձ համաձայնություն, հաշվի առնելով, որ ամբաստանյալը գիտակցում է, որ տուժողների հետ հաշտության հիմքով քրեական հետապնդման դադարեցումը կրելու է ոչ արդարացնող (ոչ ռեաբիլիտացիոն) բնույթ, և չի առարկել նշված հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական գործի վարույթը կարճելու դեմ՝ Դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Արշակ Ռազմիկի Հարությունյանին պետք է ազատել 2003 թվականի օգոստոսի 1-ին ուժի մեջ մտած ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով (համապատասխանում է 2022 թվականի հուլիսի 1-ին ուժի մեջ մտած ՀՀ քրեական օրենսգրքի 254-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 4-րդ կետերին) 2021 թվականի սեպտեմբերի 15-ին և 2003 թվականի օգոստոսի 1-ին ուժի մեջ մտած ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով (համապատասխանում է 2022 թվականի հուլիսի 1-ին ուժի մեջ մտած ՀՀ քրեական օրենսգրքի 254-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետին) 2021 թվականի հոկտեմբերի 10-ին կատարած հանցանքների համար քրեական պատասխանատվությունից՝ տուժողների հետ հաշտության հիմքով (...)»⁶:

12. Վերաքննիչ դատարանի՝ 2023 թվականի ապրիլի 3-ի որոշման համաձայն՝ «(...) Առաջին ատյանի դատարանի 2022 թվականի դեկտեմբերի 13-ի կայացրած երեք

⁵ Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 8, թերթեր 94-100:

⁶ Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 8, թերթեր 84-88:

որոշումներով մեղադրյալներ Մարգալետ Բեգլարյանը, Արշակ Հարությունյանը և Նվեր Բեգլարյանն ազատվել են 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով և 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցանքների համար քրեական պատասխանատվությունից՝ տուժողների հետ հաշտության հիմքով և նրանց նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու որոշում կայացնելով ղեկավարվել է ՀՀ քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածով, այսինքն՝ Առաջին աստիճանի դատարանը ըստ էության հետադարձ ուժ է տվել 2022 թվականի հուլիսի 1-ին ուժի մեջ մտած ՀՀ քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածին, որը Վերաքննիչ դատարանի համար ընդունելի չէ՝ հետևյալ պարզառաքանությամբ։ Անձի վիճակը բարելավող օրենքին հետադարձություն տալն ու այն գործով ամբաստանյալի նկատմամբ կիրառելը, նույնիսկ օրինական ուժի մեջ չմտած եզրափակիչ դատավարական ակտի առկայության պայմաններում, թույլատրելի և ընդունելի կարող էր դիտարկվել, եթե վիճարկվող դատական ակտում հղում կատարվեր նաև համապատասխան օրենքի, մասնավորապես՝ ՀՀ քրեական օրենսգրքը գործողության մեջ դնելու մասին 2022 թվականի հունիսի 9-ի օրենքի կոնկրետ նորմի վրա, որը չի կատարվել։

(...)

Վերաքննիչ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ նախկին օրենսդրությունը միջին ծանրության հանցանք կատարած անձին տուժողի հետ հաշտվելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու հնարավորություն առհասարակ չէր նախատեսում, որպիսի պայմաններում միջին ծանրության հանցանք կատարած անձին տուժողի հետ հաշտվելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու կարգավորումը չի կարող ստանալ «մասնակի» կիրառելիություն և կտրված մեկնաբանվել դրա կիրառելիությունը սահմանափակող պայմանից, քանի որ նման մեկնաբանությունը հակասում է նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակին։ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ սույն դեպքում օրենսդրի նպատակը հանդիսանում է միայն մեկ հանցանքի՝ առաջին անգամ կատարված հանցանքի համար անձին քրեական պատասխանատվությունից ազատելը։

(...)

Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ մեղադրյալներին վերագրված արարքներից առաջինը՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով (համապատասխանում է 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 254-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 4-րդ կետերին)՝ Արթուր Օրուջյանի դրվագով նախատեսված արարքը կատարվել է 2021 թվականի սեպտեմբերի 15-ին, իսկ երկրորդ՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով (համապատասխանում է 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 254-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետին)՝ Անգին Ալիսանյանի դրվագով նախատեսված արարքը՝ 2021 թվականի հոկտեմբերի 10-ին։ Երկու արարքներն էլ ըստ բնույթի և վրանգավորության աստիճանի միջին ծանրության հանցանքներ են։ Տուժողները երկու արարքների մասով էլ արտահայտել են մեղադրյալների հետ հաշտվելու վերաբերյալ դիրքորոշում, մեղադրյալներն իրենց անմեղությունը չեն վիճարկել, իսկ Առաջին աստիճանի դատարանը վիճարկվող որոշման մեջ արձանագրել է, որ տուժողներ Արթուր Օրուջյանի, Անգին Ալիսանյանի և մեղադրյալներ Մարգալետ Բեգլարյանի, Արշակ Հարությունյանի և Նվեր Բեգլարյանի միջև հաշտության վերաբերյալ ձեռք բերված փոխադարձ համաձայնությունը հիմնված է կողմերի ինքնուրույն և ազատ կամահայտնության

վրա:

Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ ՀՀ նոր քրեական օրենսգրքն առաջին անգամ հանցանք կատարած անձ է դիտարկում այն անձին, ով՝

ա. նախկինում հանցանք չի կատարել,

բ. կատարել է, սակայն ազատվել է քրեական պատասխանատվությունից, կամ

գ. որի դատվածությունը սույն օրենսգրքով սահմանված կարգով մարվել կամ վերացվել է:

Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ վերը նշված թվարկման «բ» և «գ» կետերը սույն գործին վերաբերելի չեն, քանի որ Մարգալետ Բեգլարյանը, Արշակ Հարությունյանը և Նվեր Բեգլարյանը ենթադրաբար կատարել են երկու հանցագործություն, հետևաբար՝ նրանց նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածի կիրառման իրավաչափությունը պետք է ստուգվի և գնահատվի «ա» կետում նշված պայմանը պահպանված լինելու համարեքստում, որպիսի պայմաններում Վերաքննիչ դատարանը գտնում է, որ 2022 թվականի հուլիսի 1-ից գործող ՀՀ քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված կարգավորման կիրառելիությունն ապահովող «առաջին անգամ հանցանք կատարելու» պահանջն առկա չէ այն պարագայում, երբ անձին մեկ քրեական վարույթի շրջանակներում մեղսագրվում է մի քանի հանցանքների կատարում:

Միաժամանակ հարկ է նշել, որ վերը նշված չի վերաբերում այն դեպքերին, երբ անձին մեղսագրվում են մի քանի հանցանքներ տարբեր վարույթների շրջանակներում: Նման պայմաններում կարող է ստեղծվել մի իրավիճակ, երբ դատարանը մեղսագրվող արարքներից մեկի մասով կիրառելի չհամարի ՀՀ քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված կարգավորումը՝ հիմքում դնելով այլ՝ դեռևս քննվող քրեական գործով մեղսագրվող արարք, որով դեռևս չի հաստատվել անձի մեղավորության փաստը և որով հետագայում անձը կարող է արդարացվել, որպիսի պարագայում կիսախտվի անմեղության կանխավարկածի սկզբունքը:

Մինչդեռ նշված խնդիրը չի առաջանում մեղսագրված արարքները մեկ վարույթի շրջանակներում քննելու պայմաններում, քանի որ այդ դեպքում անձին մեղսագրված արարքների վերաբերյալ քննությունն իրականացվում է միաժամանակ, արարքներին իրավական գնահատական տրվում է մեկ դատական ակտով, որն օրինական ուժի մեջ է մտնում բոլոր արարքների կապակցությամբ միաժամանակ: Այսինքն՝ նշված բոլոր արարքներով անձը մեղավոր է ճանաչվում մեկ վարույթի շրջանակներում՝ մեկ դատավճռով:

Վերաքննիչ դատարանը փաստում է նաև, որ ընդհանուր կանոնի համաձայն՝ հանցանք կատարելու փաստը հիմնավորվում է օրինական ուժի մեջ մտած մեղադրող դատավճռով, թեև քրեական օրենսդրության առանձին ինստիտուտների կիրառման համար բավարար է մեղադրող (օրինական ուժի մեջ չմտած) դատավճռի առկայությունը, օրինակ՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետի ընդհատման հարցը պարզելիս:

(...)

Ամփոփելով վերոգրյալը՝ Վերաքննիչ դատարանը փաստում է, որ մեղադրյալներ Մարգալետ Բեգլարյանին, Արշակ Հարությունյանին և Նվեր Բեգլարյանին միևնույն վարույթի շրջանակներում մեղսագրվում են երկու տարբեր հանցանքների կատարում, հետևաբար 2022 թվականի հուլիսի 1-ից գործող ՀՀ քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված կարգավորման իմաստով վերջինս երկրորդ հանցագործության կատարման պահին չի հանդիսացել «առաջին անգամ հանցանք կատարած անձ» և վերոնշյալ գործով արտահայտված իրավական դիրքորոշման լույսի ներքո ստուգելով քննարկվող նորմին հետադարձություն տալու և այն մեղադրյալներ Մարգալետ Բեգլարյանի, Արշակ Հարությունյանի

և Նվեր Բեգլարյանի նկատմամբ կիրառելու իրավաչափության հարցը՝ Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ նոր քննության ընթացքում Առաջին աստիճանի դատարանը պարտավոր է անդրադառնալ նաև հետևյալ հարցին՝ արդյո՞ք հնարավոր է մեղադրյալներ Մարգարե Բեգլարյանին, Արշակ Հարությունյանին և Նվեր Բեգլարյանին վերագրված արարքներից միայն մեկով ՀՀ քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածի կիրառումը, եթե նույն գործի շրջանակներում եզրափակիչ դատական ակտով փաստվում է տվյալ անձի կողմից նաև այլ (հաջորդող կամ նախորդող) հանցանք ենթադրաբար կատարելու հանգամանքը:

(...) Վերաքննիչ դատարանը գտնում է, որ Առաջին աստիճանի դատարանի կողմից կայացված դատական ակտում քրեական հետապնդման դադարեցման վերաբերյալ իրավական գնահատականը ճիշտ է այն պատճառով, որ անձանց վերագրվող 2 դրվագով հանցագործությունների վերաբերյալ ճիշտ է կիրառվել գործող ՀՀ քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածը, որով թույլ է տրվել նյութական օրենքի ոչ ճիշտ կիրառում: Իսկ օրենքը հստակ նշում է նյութական օրենքի ոչ ճիշտ կիրառման դեպքում Վերաքննիչ դատարանի լիազորությունների շրջանակը, այն է՝ բեկանում է համապատասխան դատական ակտը՝ վարույթը փոխանցելով Առաջին աստիճանի դատարան՝ նոր քննության (...)»⁷:

Վճռաբեկ դատարանի հիմնավորումները և եզրահանգումը

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործով «առաջին անգամ հանցանք կատարած անձ» հասկացության, ինչպես նաև *տուժողի և հանցանք կատարած անձի հաշտության հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու* նորմի մեկնաբանման կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման և իրավունքի զարգացման խնդիր: Ուստի, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղենիշային նշանակություն ունենալ նույնաբնույթ գործերով միասնական դատական պրակտիկայի ձևավորման համար:

13. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ է արդյոք Վերաքննիչ դատարանի դատողությունն առ այն, որ ՀՀ գործող քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված կարգավորման կիրառելիությունն ապահովող՝ «առաջին անգամ հանցանք կատարելու» պահանջն առկա է այն դեպքում, երբ անձին մեկ քրեական վարույթի շրջանակներում մեղսագրվում է մի քանի հանցանքների կատարում:

ՀՀ գործող քրեական օրենսգրքում օգտագործվող հիմնական հասկացություններ սահմանող նույն օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ «**առաջին անգամ հանցանք կատարած՝ անձ, որը նախկինում հանցանք չի կատարել կամ կատարել է, սակայն ազատվել է քրեական պատասխանատվությունից, կամ որի դատվածությունը սույն օրենսգրքով սահմանված կարգով մարվել կամ վերացվել է**»:

Մեջբերված նորմի վերլուծությունը ցույց է տալիս, որ ՀՀ գործող քրեական օրենսգրքի համատեքստում որպես *առաջին անգամ հանցանք կատարած է* դիտարկվում այն անձը, որը՝

- 1) նախկինում հանցանք չի կատարել կամ
- 2) կատարել է, սակայն ազատվել է քրեական պատասխանատվությունից կամ
- 3) որի դատվածությունը մարվել կամ վերացվել է:

14. Քրեական օրենսդրության համակարգային վերլուծությունը ցույց է տալիս, որ քրեական պատասխանատվության և պատժի նշանակման գործընթացում օրենսդիրը կարևորում է՝

⁷ Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 9, թերթեր 116-132:

հանցանքը կատարվում է առաջին անգամ, թե կայուն հանցավոր վարքագիծ որդեգրած անձի կողմից:

Մասնավորապես, առաջին անգամ հանցանք կատարելու դեպքում քրեական պատասխանատվության և պատժի ենթարկելու հարցում օրենսդրորեն նախատեսվել են որոշակի արտոնյալ կարգավորումներ, որոնք միտված են հնարավորինս մեղմ ներգործության միջոցներով ներազդելու անձի վրա ձեռնպահ մնալ հետագա հանցավոր արարքներ կատարելուց և նրա մոտ ձևավորել իրավաչափ վարքագիծ՝ այդ կերպ նպաստելով վերջինիս վերասոցիալականացմանը: Այսպես՝ հանցանքն առաջին անգամ կատարելը որոշ դեպքերում հիմք է անձին **քրեական պատասխանատվությունից ազատելու համար**, առաջին անգամ ոչ մեծ ծանրության հանցանք կատարած անձը **չի կարող դատապարտվել ազատազրկման**, բացի այդ հանցանքն առաջին անգամ հանգամանքների պատահական զուգորդմամբ կատարելն օրենսդրորեն նախատեսվել է որպես **քրեական պատասխանատվությունը կամ պատիժը մեղմացնող հանգամանք** և այլն:

Միևնույն ժամանակ, ի հակակշիռ վերոնշյալի, հանցանքը դատվածություն ունեցող անձի կողմից կատարելն օրենսդրորեն նախատեսվել է որպես քրեական **պատասխանատվությունը կամ պատիժը ծանրացնող հանգամանք**, իսկ ռեցիդիվի առկայությունը՝ որպես **խիստ պատիժ նշանակելու հիմք**:

Օրենսդրի այս մոտեցումը տրամաբանական է, քանզի քրեական հակազդեցության արդարությունն ու անահտականացումն ապահովելու տեսանկյունից կարևոր է տարբերակված մոտեցում ցուցաբերել և միևնույն հարթության վրա չդիտարկել առաջին անգամ հանցանք կատարած անձին և այն անձին, որի նկատմամբ պետությունն արդեն իսկ գործադրել է իր քրեաիրավական գործիքակազմը և ենթարկել քրեական պատասխանատվության ու պատժի: Այլ կերպ՝ կրկնվող հանցավոր վարքագծի այնպիսի կայուն դրսևորումները, երբ անձը, ի հեճուկս իր նկատմամբ կիրառված քրեաիրավական ներգործության միջոցների, չի կանգնում ուղղման ճանապարհին և շարունակում է իր հանցավոր գործունեությունը, վկայում են հանցավորի անձի առավել բարձր վտանգավորության մասին, ցույց տալիս, որ պետության գործադրած միջոցներն ի զորու չեն եղել ձևավորել իրավահպատակ վարքագիծ, ուստի ողջամտորեն հիմք են նրա նկատմամբ քրեական ներգործությունը խստացնելու համար:

Մինչդեռ, եթե անձի նկատմամբ պետությունը դեռևս չի իրագործել քրեաիրավական ներգործություն, սահմանված կարգով չի արտահայտել իր պարսավանքը կատարված հանցավոր արարքին ու գնահատական տվել դրան, այն կատարող անձին չի ենթարկել քրեական պատասխանատվության և պատժի, իրավական տեսանկյունից տվյալ անձը պետք է դիտարկվի որպես առաջին անգամ հանցանք կատարած՝ անկախ մեղսագրվող ենթադրյալ հանցավոր արարքների քանակից: Այլ կերպ՝ նշված դեպքում անձը չի կարող համարվել նախկինում հանցանք կատարած, քանի դեռ պետությունը՝ ի դեմս իրավասու մարմնի՝ դատարանի, մեղադրական դատավճռի կայացմամբ չի հաստատել վերջինիս մեղավորությունը մեղսագրվող հանցավոր արարքում կամ արարքներում:

15. Սույն որոշման նախորդ կետում արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով ՀՀ գործող քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված՝ «առաջին անգամ հանցանք կատարած անձի» բնորոշման մեջ առկա՝ «անձ, որը նախկինում հանցանք չի կատարել» ձևակերպմանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ որպես այդպիսին պետք է դիտարկվել այն անձին, որի՝ նախկինում դատապարտման վերաբերյալ տեղեկություններ առկա չեն: Այլ կերպ՝ եթե անձին մեղսագրվող ենթադրյալ հանցավոր արարքը կամ արարքները կատարելու օրվա դրությամբ վերջինիս նկատմամբ

առկա չի եղել **նախկինում (կոնկրետ գործով մեղսագրվող արարքից/արարքներից առաջ կատարված) հանցանքի կատարումը հավաստող օրինական ուժի մեջ մտած** մեղադրական դատական ակտ, անձը պետք է դիտվի **որպես առաջին անգամ հանցանք կատարած** կամ որ նույնն է՝ **«անձ, որը նախկինում հանցանք չի կատարել»**։ Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ քանի դեռ պետության անունից անձի նախկինում կատարած արարքին չի տրվել քրեաիրավական գնահատական, վերջինիս մեղքը չի հաստատվել դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով և նա չի ենթարկվել քրեական պատասխանատվության ու պատժի, իրավական տեսանկյունից տվյալ անձը պետք է համարվի որպես առաջին անգամ հանցանք կատարած։

Վճռաբեկ դատարանի վերոնշյալ դիրքորոշումը պայմանավորված է նաև անձի անմեղության կանխավարկածը երաշխավորելու անհրաժեշտությամբ, քանզի անձի կողմից նախկինում հանցանք կատարելու հանգամանքը կարող է հաստատվել բացառապես դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտով։ Ի հակակշիռ վերոնշյալի՝ անձը ՀՀ գործող քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի իմաստով չի համարվի առաջին անգամ հանցանք կատարած, եթե վերջինս նախկինում կատարված հանցանքի համար դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտով դատապարտվելուց հետո, չմարված կամ չվերացված դատվածության պայմաններում, կատարում է նոր հանցանք։

Այսպիսով, ընդհանրացնելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ անձի կողմից «առաջին անգամ հանցանք կատարելու» պայմանը քննարկելիս էականը ոչ թե անձին մեղսագրվող ենթադրյալ հանցավոր արարքների քանակն է, այլ այն՝ արդյոք ենթադրյալ հանցավոր արարքը կամ արարքները կատարելու օրվա դրությամբ վերջինիս նկատմամբ առկա է եղել նախկինում հանցանքի կատարումը հավաստող դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռ, թե ոչ։

16. ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 73-րդ հոդվածի համաձայն՝ *«Ոչ մեծ ծանրության հանցանք կատարած անձը կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, եթե նա հաշտվել է տուժողի հետ և հաբուցել կամ այլ կերպ հարթել է նրան պատճառած վնասը»*։

ՀՀ գործող քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Եթե անձն առաջին անգամ է հանցանք կատարել, ապա ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե նրա կատարած արարքը ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք է, և նրա ու տուժողի միջև առկա է հաշտության վերաբերյալ ինքնուրույն և ազատ կամարտահայտության վրա հիմնված փոխադարձ համաձայնությունը, բացառությամբ այն դեպքերի, երբ կատարված հանցանքում առկա են ընտանիքում բռնության հատկանիշներ»*։

(...)

5. Նախկինումսույն հոդվածով նախատեսված հիմքով քրեական պատասխանատվությունից ազատված անձը չի կարող նույն հիմքով կրկին ազատվել քրեական պատասխանատվությունից»։

ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 73-րդ հոդվածով նախատեսված՝ տուժողի հետ հաշտվելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատվելու նորմի վերաբերյալ Վճռաբեկ դատարանն *Աշոտ Բաբայանի* վերաբերյալ որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(...) [Հ]աշտության հիմքով անձին քրեական պատասխանատվությունից ազատելը վարույթն իրականացնող մարմնի հայեցողական լիազորությունն է, որի իրացումը ենթադրում է որոշակի նախապայմանների առկայություն։ Դրանք են՝*

- 1) անձի կողմից ոչ մեծ ծանրության հանցանք կատարած լինելը,
- 2) տուժողի և հանցանք կատարած անձի հաշտությունը,
- 3) պատճառված վնասը հաբուցած կամ այլ կերպ հարթած լինելը։

Միևնույն ժամանակ, վարույթն իրականացնող մարմինը կարող է հրաժարվել իր լիազորությունն իրացնելուց այն դեպքում, երբ բացակայում է նշված երեք նախապայմաններից (իրավաչափության պայմաններից) մեկը կամ մի քանիսը:

(...)

Հանցանք կատարած անձի համար հաշվությունը հանցանքի կատարման մեջ իրեն մեղավոր ճանաչելն է, այդ արարքի համար զղջալը, ավստսանք հայտնելը, իսկ տուժողի համար՝ հանցանք կատարած անձին ներելը: Բացի այդ, հաշվությունը ենթադրում է տուժողի և ենթադրյալ հանցագործի կամավոր և փոխադարձ համաձայնություն միմյանց հետ հաշվվելու վերաբերյալ: Այսինքն՝ հաշվությունը պետք է լինի ինչպես գործողություն, այնպես էլ փոխադարձ գործողությունների արդյունք:

Հաշվության կամավոր բնույթը ենթադրում է հաշվվելու վերաբերյալ կողմերի ինքնուրույն և ազատ կամահայտնություն:

Հաշվության փոխադարձ բնույթը նշանակում է, որ կողմերից երկուսն էլ պետք է հայտարարեն հաշվության մասին:

Հաշվության կամավոր և փոխադարձ բնույթի բացակայության դեպքում վարույթն իրականացնող մարմինը չի կարող որոշում կայացնել հաշվության հիմքով քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու վերաբերյալ: Այլ կերպ՝ հաշվությունը երկու կողմերի փոխադարձ կամահայտնությունն է, այն երբեք չի կարող կրել միակողմանի բնույթ, և եթե տուժողը ցանկություն է հայտնում հաշվվելու, իսկ հանցանք կատարած անձը դրա դեմ առարկում է, կամ հակառակը, ապա հաշվության հիմքով քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու իրավական հիմքը բացակայում է: Նույն կերպ, հաշվությունը կամավոր և փոխադարձ չի կարող համարվել, հետևաբար՝ այդ հիմքով քրեական գործի վարույթը չի կարող դադարեցվել, եթե հաշվությունը հետևանք է տուժողի նկատմամբ հանցանք կատարած անձի գործադրած ոչ իրավաչափ ներգործության⁸:

17. ՀՀ գործող քրեական օրենսգրքով նախատեսված իրավակարգավորումների համաձայն՝ տուժողի և հանցանք կատարած անձի հաշտության հիմքով անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից՝ հետևյալ նախապայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- անձը կատարել է **ոչ մեծ կամ միջին ծանրության** հանցանք, բացառությամբ այն դեպքերի, երբ կատարված հանցանքում առկա են ընտանիքում բռնության հատկանիշներ,

- հանցանքը կատարել է **առաջին անգամ**,

- անձի և տուժողի միջև առկա է հաշտության վերաբերյալ **ինքնուրույն և ազատ կամարտահայտության վրա հիմնված փոխադարձ համաձայնություն**:

Հաշտության ինստիտուտի նախկին և ներկայումս գործող կարգավորումների համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ դրա կիրառելիության շրջանակները ՀՀ գործող քրեական օրենսդրությամբ ընդլայնվել են: Մասնավորապես, անձը նշված հիմքով քրեական պատասխանատվությունից ազատվում է ոչ միայն ոչ մեծ, այլև միջին ծանրության հանցանք կատարելու դեպքում, բացի այդ, հաշտության կայացումն արդեն իսկ անվերապահ հիմք է անձին քրեական պատասխանատվությունից ազատելու համար, իսկ պատճառված վնասը հատուցելու կամ այլ կերպ հարթելու պարտադիր պայմանն այլևս չի նախատեսվել:

⁸ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Աշոտ Բաբայանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԱԲԴ/0157/01/10 որոշման 16-18-րդ կետերը:

17.1. Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ քննարկվող ինստիտուտի գործադրման **պարտադիր հիմքը** հանցանք կատարած անձի և տուժողի միջև **ինքնուրույն և ազատ կամարտահայտության վրա հիմնված հաշտությունն է**, ուստի դա է պատճառը, որ նախկին քրեական օրենսդրությամբ առկա՝ տուժողին պատճառված վնասը հատուցելուկամայլկերպհարթելուպարտադիրպայմաննայլևսչի նախատեսվել: Վերոնշյալով է պայմանավորված նաև հաշտության դեպքում քրեական պատասխանատվությունից ազատելու **իմպերատիվ հիմքի** նախատեսումը՝ ի տարբերություն նախկին իրավակարգավորման, երբ քրեական պատասխանատվությունից ազատելու հարցը գտնվում էր վարույթն իրականացնող մարմնի հայեցողության տիրույթում: Այլ կերպ՝ տուժողի և հանցանք կատարած անձի միջև **ինքնուրույն և ազատ կամարտահայտության** վրա հիմնված հաշտության դեպքում, անձը **պետք է ազատվի** քրեական պատասխանատվությունից: Ընդ որում, հաշտության՝ վերոնշյալ չափանիշներին բավարարելու հարցը քննարկելիս, շարունակում են կիրառելի լինել Վճռաբեկ դատարանի՝ սույն որոշման 16-րդ կետում մեջբերված՝ *Աշոտ Բաբայանի* գործով որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Միաժամանակ, հաշտության ինստիտուտի կիրառման պարտադիր պայման է **ոչ մեծ կամ միջին ծանրության** հանցանքը(ները) **առաջին անգամ** կատարելը: Ոչ մեծ և միջին ծանրության հանցանքների հասկացությունները սահմանված են ՀՀ գործող քրեական օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, ինչ վերաբերում է հանցանքն առաջին անգամ կատարված լինելու պայմանին, ապա կիրառելի են սույն որոշման 13-15-րդ կետերում սահմանված չափանիշները: Մասնավորապես, եթե անձը կատարել է ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կամ հանցանքներ և առկա չեն նշված անձի կողմից նախկինում կատարված հանցանքի համար օրինական ուժի մեջ մտած դատական ակտով դատապարտման վերաբերյալ տեղեկություններ, ապա վերջինս համարվում է առաջին անգամ հանցանք կատարած և տուժողի հետ հաշտության դեպքում ենթակա է քրեական պատասխանատվությունից ազատման:

18. Միևնույն ժամանակ, հաշտության հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու նորմի շրջանակում նախատեսված է տվյալ նորմի կիրառելիության սահմանափակում: Մասնավորապես, ՀՀ գործող քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ նախկինում տվյալ հոդվածով նախատեսված հիմքով քրեական պատասխանատվությունից ազատված անձը չի կարող նույն հիմքով կրկին ազատվել քրեական պատասխանատվությունից:

Օրենսդրի կողմից նշված արգելքի սահմանումը պայմանավորված է չարաշահումները բացառելու, քրեական պատասխանատվության անխուսափելիությունը հետևողականորեն ապահովելու և անպատժելիության մթնոլորտ չստեղծելու անհրաժեշտությամբ, ուստի անձը պետք է գիտակցի, որ իր նկատմամբ խրախուսական նորմի կիրառումից հետո հանցավոր վարքագիծը շարունակելու դեպքում, այլևս չի կարող հավակնել քրեական պատասխանատվությունից նույն հիմքով ազատման:

Ընդ որում, Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ նշված արգելքը գործում է միայն այն դեպքում, երբ անձը տուժողի հետ հաշտության հիմքով քրեական պատասխանատվությունից ազատվելուց հետո կրկին հանցանք է կատարում, հակառակ պարագայում, երբ հանցանքը կատարվել է նախքան հաշտության հիմքով քրեական պատասխանատվությունից ազատվելու ակտի կայացումը, տվյալ նորմի կիրառելիությունը չի կարող սահմանափակվել: Վճռաբեկ դատարանի վերոնշյալ դիրքորոշումը պայմանավորված է այն հանգամանքով, որ անձի համար պետք է ակնհայտ լինի, որ պետությունը, մեկ անգամ առանց ռեաբիլիտացնելու

«ներելով» իր հանցավոր վարքագիծը և քրեական պատասխանատվությունից ազատելով, հնարավորություն է տալիս անհրաժեշտ դասեր քաղելու և ուղղման ճանապարհին կանգնելու համար, հակառակ պարագայում՝ հանցավոր վարքագիծը շարունակելու դեպքում, վերջինս զրկվում է նույն հիմքով քրեական պատասխանատվությունից ազատվելու հնարավորությունից:

19. Սույն գործի փաստական տվյալների վերլուծությունից հետևում է, որ՝

- Մարգալետ Բեգլարյանին, Արշակ Հարությունյանին և Նվեր Բեգլարյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով և 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով⁹:

- Առաջին ատյանի դատարանը 2022 թվականի դեկտեմբերի 13-ին կայացրած երեք որոշումներով ամբաստանյալներ Մարգալետ Բեգլարյանին, Արշակ Հարությունյանին և Նվեր Բեգլարյանին ազատել է ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով (համապատասխանում է ՀՀ գործող քրեական օրենսգրքի 254-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 4-րդ կետերին) և 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով (համապատասխանում է ՀՀ գործող քրեական օրենսգրքի 254-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետին) նախատեսված հանցանքների համար քրեական պատասխանատվությունից՝ տուժողների հետ հաշտության հիմքով: Մասնավորապես, Առաջին ատյանի դատարանն ընդգծել է, որ ամբաստանյալները չունեն դատվածություն, վերջիններիս մեղսագրվում են միջին ծանրության հանցագործություններ, նրանց և տուժողների միջև առկա է հաշտության վերաբերյալ ինքնուրույն և ազատ կամարտահայտության վրա հիմնված փոխադարձ համաձայնություն, բացի այդ գիտակցում են, որ տուժողների հետ հաշտության հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելը կրելու է ոչ ռեաբիլիտացնող բնույթ, և չեն առարկել նշված հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական գործի վարույթը կարճելու դեմ¹⁰:

- Վերաքննիչ դատարանը, բեկանելով Առաջին ատյանի դատարանի կայացրած որոշումները և գործը նոր քննության փոխանցելով, նախ արձանագրել է, որ Առաջին ատյանի դատարանը հետադարձ ուժ է տվել ՀՀ գործող քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածին, որը Վերաքննիչ դատարանի համար ընդունելի չէ, քանի որ անձի վիճակը բարելավող օրենքին հետադարձություն տալն ու այն գործով ամբաստանյալի նկատմամբ կիրառելը թույլատրելի է, եթե նախատեսված է օրենքով, մինչդեռ վիճարկվող դատական ակտում ՀՀ քրեական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին 2022 թվականի հունիսի 9-ի օրենքի որևէ նորմի վրա հղում չի կատարվել:

Միևնույն ժամանակ, Վերաքննիչ դատարանը փաստել է, որ ՀՀ գործող քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված կարգավորման կիրառելիությունն ապահովող՝ «առաջին անգամ հանցանք կատարելու» պահանջն առկա չէ այն պարագայում, երբ անձին մեկ քրեական վարույթի շրջանակներում մեղսագրվում է մի քանի հանցանքների կատարում: Որպես հիմնավորում Վերաքննիչ դատարանը վկայակոչել է վաղեմության ժամկետի ընդհատման վերաբերյալ Վճռաբեկ դատարանի՝ Սարգիս Կարապետյանի գործով կայացված թիվ ԵԷԴ/0071/01/17 որոշման իրավական դիրքորոշումները՝ ընդգծելով, որ անմեղության կանխավարկածի ոտնահարման խնդիր չի առաջանում մեղսագրված արարքները մեկ վարույթի շրջանակներում քննելու պայմաններում, քանի որ նշված բոլոր արարքներով անձը մեղավոր է ճանաչվում մեկ վարույթի շրջանակներում՝ մեկ դատավճռով:

⁹ Տես սույն որոշման 10-րդ կետը:

¹⁰ Տես սույն որոշման 11-11.2-րդ կետերը:

Արդյունքում, Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ Մարգալետ Բեգլարյանին, Արշակ Հարությունյանին և Նվեր Բեգլարյանին միևնույն վարույթի շրջանակներում մեղսագրվում են երկու տարբեր հանցանքների կատարում, հետևաբար ՀՀ գործող քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված կարգավորման իմաստով՝ վերջիններս երկրորդ հանցանքի կատարման պահին չեն հանդիսացել «առաջին անգամ հանցանք կատարած անձ»¹¹:

20. Նախորդ կետում մեջբերված փաստական տվյալները գնահատելով սույն որոշման 13-18-րդ կետերում մեջբերված իրավական նորմերի և արտահայտված իրավական դիրքորոշումների համատեքստում՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանը Մարգալետ Բեգլարյանին և Նվեր Բեգլարյանին քրեական պատասխանատվությունից ազատելու հարցում եկել է ճիշտ եզրահանգման: Մասնավորապես, վերջիններիս մեղսագրվում է միջին ծանրության երկու հանցագործություն, նրանք չեն ունեցել դատվածություն նախկինում կատարված հանցանքի համար և նրանց ու տուժողների միջև առկա է հաշտության վերաբերյալ ինքնուրույն և ազատ կամարտահայտության վրա հիմնված փոխադարձ համաձայնություն:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի այն դատողություններին, որ մեղադրյալներին միևնույն վարույթի շրջանակներում մեղսագրվում են **երկու տարբեր հանցանքներ**, հետևաբար ՀՀ գործող քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված կարգավորման իմաստով՝ վերջիններս **երկրորդ հանցանքի** կատարման պահին չեն հանդիսացել «առաջին անգամ հանցանք կատարած անձ», և Վճռաբեկ դատարանի՝ Սարգիս Կարապետյանի գործով որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների համաձայն՝ անմեղության կանխավարկածի ուսնահարման խնդիր չի առաջանում՝ մեղսագրված արարքները մեկ վարույթի շրջանակներում քննելու պայմաններում, քանի որ նշված բոլոր արարքներով անձը մեղավոր է ճանաչվում մեկ վարույթի շրջանակներում՝ մեկ դատավճռով, ապա Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ քանի դեռ անձի նկատմամբ պետությունը չի իրականացրել իր քրեաիրավական ներգործությունը, սահմանված կարգով չի արտահայտել իր պարսավանքը կատարված հանցավոր արարքին ու գնահատական տվել դրան, չի ենթարկել քրեական պատասխանատվության և պատժի, իրավական տեսանկյունից տվյալ անձը պետք է դիտարկվի որպես **առաջին անգամ հանցանք կատարած**՝ անկախ մեղսագրվող ենթադրյալ հանցավոր արարքների քանակից: Այս տեսանկյունից Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործի նյութերում առկա չէ որևէ տվյալ առ այն, որ մեղադրյալներին մեղսագրվող ենթադրյալ հանցավոր արարքները կատարելու դրությամբ վերջիններիս նկատմամբ առկա է եղել **նախկինում հանցանքի կատարումը հավաստող օրինական ուժի մեջ մտած** մեղադրական դատական ակտ:

Վերոշարադրյալից արդեն իսկ հետևում է, որ տարբեր են Վերաքննիչ դատարանի կողմից վկայակոչված՝ թիվ ԵԷԴ/0071/01/17 քրեական գործի և սույն գործի թե՛ փաստական հանգամանքները, թե՛ կիրառելի իրավական նորմերը և թե՛ իրավական խնդիրը: Մասնավորապես, Սարգիս Կարապետյանի գործով որոշման շրջանակներում Վճռաբեկ դատարանն անդրադարձել է **վաղեմության ժամկետների ընդհամարման** հիմնախնդրին, մինդեռ սույն գործով իրավական խնդիրը **«առաջին անգամ հանցանք կատարած անձ» հասկացության մեկնաբանումն է (որպիսին բացակայում է վաղեմության ժամկետներին վերաբերող դրույթներում)**, և դրա համատեքստում **տուժողի և հանցանք**

¹¹ Տե՛ս սույն որոշման 12-րդ կետը:

կատարած անձի հաշտության հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտի կիրառումը, հետևաբար վկայակոչված որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները սույն գործի նկատմամբ կիրառելի չեն:

Միևնույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ Վերաքննիչ դատարանի այն դիրքորոշումները, որ անմեղության կանխավարկածի ուտնահարման խնդիր չի առաջանում մեղսագրված արարքները մեկ վարույթի շրջանակներում քննելու պայմաններում, քանի որ նշված բոլոր արարքներով անձը մեղավոր է ճանաչվում մեկ վարույթի շրջանակներում՝ մեկ դատավճռով: Վճռաբեկ դատարանի համոզմամբ՝ նշված եզրահանգումն իրավաչափ չէ, քանի որ ՀՀ գործող քրեական օրենսգրքով որպես առաջին անգամ հանցանք կատարած է դիտարկվում այն **անձը, որը նախկինում հանցանք չի կատարել**, հետևաբար, եթե վարույթն իրականացնող մարմինը քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական գործի վարույթը կարճելու միջնորդությունը մերժում է այն պատճառաբանությամբ, որ տվյալ անձը չի համարվում առաջին անգամ հանցանք կատարած, այսինքն՝ նախկինում հանցանք է կատարել՝ առանց այդ նախկինում կատարած հանցանքը հավաստող օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճռի առկայության, անխուսափելիորեն խախտում է անմեղության կանխավարկածը, քանզի կանխակալ կարծիք է արտահայտում անձի մեղավորության հարցի վերաբերյալ:

21. Անդրադառնալով Վերաքննիչ դատարանի այն դիրքորոշմանը, որ Առաջին ատյանի դատարանը հետադարձ ուժ է տվել ՀՀ գործող քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածին, որն անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենք է և դրա՝ հետադարձ ուժով կիրառելու հնարավորություն օրենքով նախատեսված չէ, ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ գործող քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածով նախատեսված՝ տուժողի և հանցանք կատարած անձի միջև տեղի ունեցած հաշտությունը քրեական պատասխանատվությունից ազատող իմպերատիվ հիմք է, ուստի, Վճռաբեկ դատարանի՝ *Միշա Մուրադյանի* վերաբերյալ որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների համաձայն, վերոնշյալ նորմին պետք է հետադարձ ուժ տրվի¹²:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի դատողությունն առ այն, որ ՀՀ գործող քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված կարգավորման կիրառելիությունն ապահովող՝ «առաջին անգամ հանցանք կատարելու» պահանջն առկա չէ այն դեպքում, երբ անձին մեկ քրեական վարույթի շրջանակներում մեղսագրվում է մի քանի հանցանքների կատարում, իրավաչափ չէ:

22. Ընդհանրացնելով սույն որոշման նախորդ կետերում մեջբերված և վերլուծված փաստական տվյալները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ առկա են ՀՀ գործող քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածով նախատեսված հիմքով Մարգարետ Բեգլարյանին և Նվեր Բեգլարյանին քրեական պատասխանատվությունից ազատելու բոլոր հիմքերն ու պայմանները, հետևաբար Վերաքննիչ դատարանի դատական ակտը ենթակա է բեկանման: Միևնույն ժամանակ, հիմք ընդունելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 359-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետում ամրագրված նորմը, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ բողոքարկված դատական ակտի բեկանման հիմքն ակնհայտորեն վերաբերում է նաև դատական ակտը չբողոքարկված մեղադրյալին՝ Արշակ Հարությունյանին, ուստի սույն վարույթով առերևույթ առկա է վճռաբեկ բողոքի սահմաններից դուրս գալու հիմք՝ ի շահ

¹² Տես, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ *Միշա Մուրադյանի* գործով 2023 թվականի նոյեմբերի 10-ի թիվ ԵԴ/1424/01/21 որոշումը:

մեղադրյալ Արշակ Հարությունյանի:

23. Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ գործող քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածը, որը ենթակա էր կիրառման: Այսինքն՝ թույլ է տրվել նյութական օրենքի ոչ ճիշտ կիրառում, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 387-րդ հոդվածի համաձայն, հիմք է ստորադաս դատարանի դատական ակտը բեկանելու համար: Միևնույն ժամանակ, Առաջին ատյանի դատարանը, Մարզպետ Բեգլարյանին, Արշակ Հարությունյանին և Նվեր Բեգլարյանին տուժողների հետ հաշտության հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելով, կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտեր, ուստի անհրաժեշտ է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2023 թվականի ապրիլի 3-ի դատական ակտը՝ օրինական ուժ տալով Առաջին ատյանի դատարանի՝ 2022 թվականի դեկտեմբերի 13-ին կայացրած որոշումներին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ, 31-րդ, 34-րդ, 264-րդ, 281-րդ, 352-րդ, 359-րդ, 361-363-րդ և 385-387-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Մարզպետ Մաքսիմի Բեգլարյանի, Նվեր Արամի Բեգլարյանի և Արշակ Ռազմիկի Հարությունյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2023 թվականի ապրիլի 3-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2022 թվականի դեկտեմբերի 13-ի որոշումներին՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացնելու օրը:

ԵԴ/0535/13/22

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ
ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԸ
(ԱՅՍՈՒՀԵՏ՝ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ)

22 հունվարի 2025 թվական ք.Երևան
գրավոր ընթացակարգով քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2022 թվականի նոյեմբերի 14-ի որոշման դեմ դատապարտյալ Անդրանիկ Կարապետի Դարբինյանի պաշտպան Է.Թովմասյանի վճռաբեկ բողոքը,

ՊԱՐԶԵՑ

Վարույթի դատավարական նախապատմությունը.

1. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2020 թվականի սեպտեմբերի 11-ի դատավճռով, արագացված դատաքննության կարգի կիրառմամբ, Անդրանիկ Կարապետի Դարբինյանը մեղավոր է ճանաչվել 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ նաև ՀՀ նախկին քրեական օրենսգիրք) 189-րդ հոդվածի 3-րդ մասով և դատապարտվել է ազատազրկման՝ 4 (չորս) տարի ժամկետով:

2022 թվականի հուլիսի 15-ին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան) է ստացվել ՀՀ արդարադատության նախարարության «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի դատապարտյալ Անդրանիկ Դարբինյանի միջնորդությունը՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2020 թվականի սեպտեմբերի 11-ի դատավճռով հաստատված հանցանքը և իր նկատմամբ նշանակված պատիժը 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքին (այսուհետ՝ նաև ՀՀ գործող քրեական օրենսգիրք) համապատասխանեցնելու վերաբերյալ:

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2022 թվականի սեպտեմբերի 7-ի որոշմամբ Ա.Դարբինյանի կատարած արարքը՝ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 189-րդ հոդվածի 3-րդ մասով, համապատասխանեցվել է ՀՀ գործող քրեական օրենսգրքի 286-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետին, և նրա նկատմամբ պատիժ է սահմանվել ազատազրկում՝ 3 (երեք) տարի 4 (չորս) ամիս ժամկետով:

3. Դատախազ Հ.Մկրտչյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2022 թվականի նոյեմբերի 14-ի որոշմամբ բողոքը բավարարել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2022 թվականի սեպտեմբերի

7-ի որոշումը՝ բեկանել՝ մերժելով հանցանքը և պատիժը համապատասխանեցնելու վերաբերյալ Ա.Դարբինյանի միջնորդությունը:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ դատապարտյալ Ա.Դարբինյանի պաշտպան Է.Թովմասյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2023 թվականի փետրվարի 15-ի որոշմամբ ընդունվել է վարույթ և սահմանվել դատական վարույթի իրականացման գրավոր ընթացակարգ:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

5. Բողոքի հեղինակի պնդմամբ՝ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ՝ քրեադատավարական օրենքի էական խախտում, որն ազդել է գործի ելքի վրա:

Մասնավորապես, բողոքաբերն ընդգծել է, որ Վերաքննիչ դատարանն ըստ էության վատթարացրել է դատապարտյալ Ա.Դարբինյանի վիճակը՝ վերջինիս զրկելով իր նկատմամբ պատիժը մեղմացնող օրենսդրությունն հետադարձ ուժով կիրառելու հնարավորությունից:

5.1. Ըստ բողոք բերած անձի՝ Ա.Դարբինյանի վերաբերյալ դատավճիռը կայացվել է արագացված դատաքննության կարգի կիրառմամբ, և նրա նկատմամբ նշանակված պատիժը չի կարող գերազանցել իրեն մեղսագրված արարքի սանկցիայով նախատեսված առավել խիստ պատժի երկու երրորդը, ուստի դատապարտյալ Ա.Դարբինյանի նկատմամբ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 189-րդ հոդվածի 3-րդ մասով նշանակված պատիժն ավելի խիստ է ՀՀ գործող քրեական օրենսգրքի 286-րդ հոդվածի 2-րդ մասի սանկցիայով սահմանված ազատազրկման առավելագույն ժամկետի երկու երրորդից:

Հետևաբար, «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի կիրառմամբ, դատապարտյալ Ա.Դարբինյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 286-րդ հոդվածի 2-րդ մասով պետք է պատիժ նշանակվեր ազատազրկում՝ 3 (երեք) տարի 4 (չորս) ամիս ժամկետով:

6. Վերոգրյալի հիման վրա, բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2022 թվականի նոյեմբերի 14-ի որոշումը՝ օրինական ուժ տալով Առաջին ատյանի դատարանի՝ 2022 թվականի սեպտեմբերի 7-ի որոշմանը:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

7. Առաջին ատյանի դատարանը 2022 թվականի սեպտեմբերի 7-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. «(...) Գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, արագացված դատաքննության կարգի կիրառմամբ, 2020 թվականի սեպտեմբերի 11-ի դատավճռով Ա.Դարբինյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի (ընդունված՝ 18.04.2003, ՀՕ-528-Ն) (այսուհետք նաև՝ Նախկին քրեական օրենսգիրք) 189-րդ հոդվածի 3-րդ մասով ու դատապարտել ազատազրկման՝ 4 տարի ժամկետով:

Դատավճիռ կայացնելու պահին գործող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ «Դատարանն արագացված կարգով դատական քննության արդյունքում մեղադրական դատավճիռ կայացնելիս նշանակում է պարիժ, որը չի կարող գերազանցել կադավրված հանցագործության համար նախատեսված առավել խիստ պարիժի երկու երրորդը, իսկ եթե առավել խիստ պարիժի երկու երրորդը փոքր է քվյալ

հանցագործության համար նախատեսված առավել մեղմ պատժից՝ ապա առավել մեղմ պատժը»:

Մասնավորապես, Ա.Դարբինյանը դատապարտվել է կեղծ ձեռնարկատիրություն իրականացնելու համար, որի արդյունքում պատճառվել է առանձնապես խոշոր չափի վնաս: 2021 թվականի մայիսի 5-ին ընունված ՀՀ քրեական օրենսգրքի 286-րդ հոդվածը քրեական պատասխանատվություն է սահմանում առանց ապրանքների մատակարարման կամ առանց ծառայությունների մատուցման կեղծ փաստաթուղթ տրամադրելու կամ ծախսերի կամ եկամուտների վերաբերյալ կեղծ փաստաթուղթ կազմելու և ներկայացնելու համար, ուստի Ա.Դարբինյանի Նախկին օրենսգրքի 189-րդ հոդվածի 3-րդ մասով մեղսագրված հանցանքը ներառվում է ՀՀ քրեական օրենսգրքի 286-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետում:

Այսպիսով, Դատարանն արձանագրում է, որ դատապարտյալ Ա.Դարբինյանի նկատմամբ մեղադրական դատավճիռ կայացնելու պահին գործող ՀՀ քրեական օրենսգրքի 189-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված արարքը համընկնում է Նոր քրեական օրենսգրքի 286-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված արարքին:

Դատարանն արձանագրում է նաև, որ ՀՀ նոր քրեական օրենսգրքի 286-րդ հոդվածի 2-րդ մասի սանկցիան նախատեսում է պատիժ ազատազրկում՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

Մեջբերված իրավական նորմերի և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով որոշման մեջ հաստատված հանգամանքները և հաշվի առնելով այն, որ Ա.Դարբինյանի վերաբերյալ դատավճիռը կայացվել է արագացված դատաքննության կարգի կիրառմամբ և Ա.Դարբինյանի նկատմամբ նշանակված պատիժը չի կարող գերազանցել իրեն մեղսագրված արարքի սանկցիայիով նախատեսված առավել խիստ պատժի երկու երրորդը՝ Դատարանն արձանագրում է, որ դատապարտյալ Ա.Դարբինյանի նկատմամբ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 189-րդ հոդվածի 3-րդ մասով նշանակված պատիժը ավելի խիստ է 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 286-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի սանկցիայով սահմանված ազատազրկման առավելագույն ժամկետի երկու երրորդից: Այսպես՝ Երևան քաղաքի առաջին փուլի ընդհանուր իրավասության դատարանի 2020 թվականի սեպտեմբերի 11-ի դատավճռով Ա.Դարբինյանի նկատմամբ սույն հոդվածով նշանակվել է 4 տարի ժամկետով ազատազրկում: Ուստի, հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը, Ա.Դարբինյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 286-րդ հոդվածի 2-րդ մասով պետք է պատիժ նշանակել ազատազրկում՝ 3 տարի 4 ամիս ժամկետով:

Պատժի սկիզբ հաշվելով 2021 թվականի հունիսի 12-ից (...)»:

8. Վերաքննիչ դատարանը 2022 թվականի նոյեմբերի 14-ի որոշմամբ արձանագրել է. «(...) [Վ]երաքննիչ դատարանը փաստում է, որ օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատավարական ակտի առկայության պայմաններում քրեական օրենսդրությանը կարող է տրվել հետադարձ ուժ՝ հետևյալ դեպքերում՝

- ուժի մեջ մտած օրենսդրությամբ լրիվ կամ մասնակիորեն վերացվել է արարքի հանցավորությունը,

- նշանակված պատիժն ավելի խիստ է ուժի մեջ մտած օրենսդրությամբ նախատեսված պատժի առավելագույն ժամկետից,

- նշանակված պատժատեսակն ավելի խիստ է ուժի մեջ մտած օրենսդրությամբ նախատեսված առավել խիստ պատժատեսակից,

¹ Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 1-ին, թերթեր 44-51:

- հանցանք կամ քրեական օրենսդրությամբ նախատեսված արարք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավվել է ուժի մեջ մտած օրենսդրությամբ, եթե օրենքով նախատեսվել է, որ անձի վիճակն այլ կերպ բարելավող համապատասխան իրավանորմին տրվում է հետադարձ ուժ:

(...)

Վերաքննիչ դատարանը փաստում է, որ կատարված հանցանքը և դրա համար նշանակված պատիժը 2022 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ մտած ՀՀ քրեական օրենսգրքին համապատասխանեցնելու համար անհրաժեշտ է սույն որոշման նախորդ կետում մատնանշված պայմաններից առնվազն մեկի առկայությունը:

Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ Առաջին աստիճանի դատարանը սույն որոշման 5.3-րդ կետում նշված հանգամանքների բացակայության պայմաններում որոշում է կայացրել դատապարտյալ Անդրանիկ Կարապետի Դարբինյանի կատարած՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 189-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված արարքը 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 286-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետին համապատասխանեցնելու մասին, ինչպես նաև վերը նշված արարքի համար նշանակված պատիժը փոփոխելու (նվազեցնելու) մասին, այն պայմաններում, երբ և նոր քրեական օրենսգրքում և այն գործողության մեջ դնելու մասին օրենքում սահմանված է պատիժը համապատասխանեցնելու (պատիժը նվազեցնելու) հիմնական պայմանը, այն է՝ պատիժը մեղմացնող օրենսդրությունն ունի հետադարձ ուժ, եթե նշանակված պատիժն ավելի խիստ է ուժի մեջ մտած օրենսդրությամբ նախատեսված պատիժի առավելագույն ժամկետից (ըստ ՀՀ քրեական օրենսգրքի 9-րդ հոդվածի), կամ երբ դատապարտյալի նկատմամբ նշանակված պատիժն ավելի խիստ է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածով նախատեսված պատիժի առավելագույն ժամկետից (ՀՀ քրեական օրենսգրքը գործողության մեջ դնելու մասին օրենքի 6-րդ հոդված):

Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ Կարապետյանի նկատմամբ նշանակված պատիժը՝ չորս տարի ժամկետով ազատազրկումը գտնվում է 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 286-րդ հոդվածի 2-րդ մասի սանկցիայի սահմաններում (պատիժ է նախատեսում երկուսից հինգ տարի ժամկետով): Այդպիսով Վերաքննիչ դատարանի գնահատմամբ՝ Առաջին աստիճանի դատարանը թույլ է տվել վարույթի ելքի վրա ազդեցություն ունեցող դատական սխալ, այն է՝ ճիշտ չի կիրառել նյութական օրենքը, ինչի արդյունքում կայացվել է ոչ իրավաչափ դատական ակտ:

Ամփոփելով վերոնշյալը՝ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ Առաջին աստիճանի դատարանի որոշումը պետք է բեկանել՝ մերժելով ՀՀ ԱՆ «Արմավիր» քրեակարարողական հիմնարկի դատապարտյալ Անդրանիկ Կարապետի Դարբինյանի միջնորդությունը՝ վերջինիս կատարած հանցանքը և դրա համար նշանակված պատիժը 2022 թվականի հուլիսի 1-ին ուժի մեջ մտած ՀՀ քրեական օրենսգրքին համապատասխանեցնելու վերաբերյալ (...):²:

Վճռաբեկ դատարանի հիմնավորումները և եզրահանգումը.

9. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավորված են արդյո՞ք Առաջին աստիճանի դատարանի դատական ակտը բեկանելու

² Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 1-ին, թերթեր 79-88:

և դատապարտյալ Ա.Դարբինյանի միջնորդությունը մերժելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունները:

ՀՀ գործող քրեական օրենսգրքի 9-րդ հոդվածի համաձայն՝ «(...) 2. Արարքի հանցավորությունը լրիվ կամ մասնակիորեն վերացնող կամ պարիժը մեղմացնող օրենսդրությունն ունի հետադարձ ուժ: Նշված դեպքում այն տարածվում է մինչև դրա ուժի մեջ մտնելը հանցանք կամ քրեական օրենսդրությամբ նախատեսված արարք կատարած այն անձանց վրա, որոնց վերաբերյալ դեռևս առկա չէ օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատավարական ակտ:

3. Եզրափակիչ դատավարական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո արարքի հանցավորությունը լրիվ կամ մասնակիորեն վերացնող օրենսդրությունն ունի հետադարձ ուժ: Եզրափակիչ դատավարական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո պարիժը մեղմացնող օրենսդրությունն ունի հետադարձ ուժ, եթե նշանակված պարիժն ավելի խիստ է ուժի մեջ մտած օրենսդրությամբ նախատեսված պարիժի առավելագույն ժամկետից, կամ նշանակված պարիժատեսակն ավելի խիստ է ուժի մեջ մտած օրենսդրությամբ նախատեսված առավել խիստ պարիժատեսակից: Նշված դեպքերում այն տարածվում է մինչև դրա ուժի մեջ մտնելը հանցանք կամ քրեական օրենսդրությամբ նախատեսված արարք կատարած այն անձանց վրա, որոնք կրում են պարիժը կամ կրել են դա, սակայն ունեն դատվածություն (...):»

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ «1. Հայաստանի Հանրապետության 2003 թվականի ապրիլի 18-ի քրեական օրենսգրքին համապատասխան դատապարտված և պարիժ չկրած կամ պարիժ կրող անձանց նկատմամբ կամ այն անձանց նկատմամբ, որոնք կրել են պարիժը, սակայն ունեն դատվածություն, նշանակված, կիրառվող կամ կիրառված պարիժի ժամկետը համապատասխանեցնել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքին այն դեպքերում, երբ դատապարտյալի նկատմամբ նշանակված պարիժն ավելի խիստ է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածով նախատեսված պարիժի առավելագույն ժամկետից, կամ նշանակված պարիժատեսակն ավելի խիստ է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածով նախատեսված առավել խիստ պարիժատեսակից՝ հաշվի առնելով նաև Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի ընդհանուր մասի դրույթները»:

10. Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի դեպքում քրեական օրենքը հետադարձությամբ կիրառելու առանձնահատկություններին, Մելիք Մեսրոպյանի վերաբերյալ որոշմամբ արձանագրել է հետևյալը. «(...) Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ իրավական որոշակիության սկզբունքի առանցքային բաղադրարարներից մեկը դատական ակտերի կայունության կամ *res judicata* սկզբունքն է, որի ցանկացած խախտում հանգեցնում է իրավական որոշակիության ոտնահարման և ուղղակիորեն ազդում իրավունքի գերակայության սկզբունքի վրա: *Res judicata* սկզբունքի հիմքում ընկած է իրավական կարգադրագրերի կայունության, օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի անփոփոխելիության ու վերջնական լինելու, դրանց համընդհանուր պարտադիրության գաղափարը, որով, ի թիվս այլնի, ապահովվում է նաև դատարանների հեղինակությունը և վստահությունը դատական իշխանության նկատմամբ: Հետևաբար, իրավական որոշակիության սկզբունքից շեղումը կարող է արդարացված համարվել միայն օրենքով հստակ սահմանված, պարտադիր հանդիսացող էական և անհաղթահարելի հանգամանքների դեպքում:

(...)

(...) Վճռաբեկ դատարանը փաստում է, որ դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելուց հետո ընդունված նոր օրենքը կարող է Սահմանադրական դատարանի՝ վերը վկայակոչված թիվ ՍԴՈ-1348 որոշման իմաստով դիտարկվել այդ դատական ակտը բացառիկ վերանայման ենթարկելու նոր հանգամանք, եթե օրենսդրական փոփոխության արդյունքում լրիվ կամ մասնակիորեն վերանում է արարքի հանցավորությունը, մեղմանում հանցանք կատարած անձի նկատմամբ նշանակված պատիժը կամ այլ կերպ բարելավվում վերջինիս վիճակը: Ընդ որում, ի տարբերություն օրենքի հետադարձության պարզ կարգի, օրենքի հետադարձության վերստուգիչ (ռևիզիոն) կարգի դեպքում օրինական ուժի մեջ մտած դատական ակտի՝ նոր օրենքի ընդունման հիմքով վերանայելու հնարավորությունը միջազգային սկզբունքներին համապատասխան՝ սահմանափակված է դատական ակտերի կայունության և որոշակիության սկզբունքների պահպանման անհրաժեշտությամբ:

Այսպես՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նոր օրենքի ընդունման հիմքով օրինական ուժի մեջ մտած դատական ակտի վերանայման համար անհրաժեշտ է, որ ընդունված նոր օրենքը ոչ միայն բարելավի հանցանք կատարած անձի վիճակը, այլև բացառիկ կայացված դատական ակտն օրինական ուժի մեջ թողնելու հնարավորությունը: Այլ խոսքով՝ օրենքի հետադարձության կանոնը վերստուգիչ (ռևիզիոն) կարգով կիրառելի է այն պարագայում, երբ օրենսդրական փոփոխության արդյունքում օրինական ուժի մեջ մտած դատական ակտը հակասում է օրինականության և իրավունքի գերակայության սկզբունքներին, որպիսի պայմաններում դատարանի համար պարտադիր է օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի վերանայումը և նոր օրենքի գործողության տարածումն այն անձանց նկատմամբ, ովքեր կրում են պատիժը կամ կրել են այն, սակայն ունեն դատվածություն: Մասնավորապես, որպես այդպիսին կարող են դիտարկվել օրենսդրական այնպիսի փոփոխությունները, որոնք, ի թիվս այլնի, վերացնում են արարքի հանցավորությունը, փոխում արարքի իրավաբանական որակումը, մեղմացնում անձի նկատմամբ նշանակված պատիժը կամ այն փոխարինում ավելի մեղմ պարժապետակով կամ որևէ կերպ բարելավում են հանցանք կատարած անձի վիճակը (...)»³:

11. Սույն որոշման 9-10-րդ կետերում մեջբերված իրավական նորմերի և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ՀՀ գործող քրեական օրենսգրքով օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատավարական ակտերի դեպքում քրեական օրենքը հետադարձ ուժով կիրառելու հարցում նախատեսվել են որոշակի սահմանափակումներ, ինչը պայմանավորված է դատական ակտերի կայունության և որոշակիության սկզբունքների պահպանման անհրաժեշտությամբ: Մասնավորապես, եզրափակիչ դատավարական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո քրեական օրենսդրությունը հետադարձ ուժ ունի միայն այն դեպքում, երբ՝

- լրիվ կամ մասնակիորեն **վերացնում է արարքի հանցավորությունը,**
- նշանակված **պատիժն ավելի խիստ է ուժի մեջ մտած օրենսդրությամբ նախատեսված պատժի առավելագույն ժամկետից,**
- նշանակված **պարժապետակն ավելի խիստ է ուժի մեջ մտած օրենսդրությամբ նախատեսված առավել խիստ պարժապետակից:**

Ընդ որում, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ եթե կոնկրետ դեպքում առկա են պատիժ նշանակելու որևէ հատուկ կանոնի պարտադիր կիրառման հիմքեր, ապա

³ Տես Վճռաբեկ դատարանի՝ Մելիք Ժիրայրի Մեսրոպյանի վերաբերյալ գործով 2021 թվականի հունիսի 11-ին կայացված թիվ ԵԷԴ/0040/01/12 որոշման 13-14-րդ կետերը:

«ուժի մեջ մտած օրենսդրությամբ նախատեսված **պատժի առավելագույն ժամկետը**» է համարվում տվյալ հատուկ կանոնի կիրառմամբ ստացվող ժամկետը (օրինակ՝ չավարտված հանցագործության, համաձայնեցման կամ արագացված վարույթ կիրառելու դեպքերում և այլն):

Վերոնշյալի մասին է վկայում նաև «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով նախատեսված կարգավորումը, որի համաձայն՝ որոշելու համար՝ արդյո՞ք նշանակված պատիժն ավելի խիստ է ուժի մեջ մտած օրենսդրությամբ նախատեսված պատժի առավելագույն ժամկետից կամ արդյո՞ք նշանակված պատժատեսակն ավելի խիստ է ուժի մեջ մտած օրենսդրությամբ նախատեսված առավել խիստ պատժատեսակից, հաշվի են առնվում նաև ՀՀ քրեական օրենսգրքի ընդհանուր մասի դրույթները:

12. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Ա.Դարբինյանը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2020 թվականի սեպտեմբերի 11-ի դատավճռով՝ արագացված դատաքննության կարգի կիրառմամբ, մեղավոր է ճանաչվել ՀՀ նախկին քրեական օրենսգրքի՝ 189-րդ հոդվածի 3-րդ մասով և դատապարտվել ազատազրկման՝ 4 (չորս) տարի ժամկետով: Առաջին ատյանի դատարանը 2022 թվականի սեպտեմբերի 7-ի որոշմամբ արձանագրել է, որ դատապարտյալ Ա.Դարբինյանի նկատմամբ մեղադրական դատավճիռ կայացնելու պահին գործող՝ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 189-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված արարքը համապատասխանում է ՀՀ գործող քրեական օրենսգրքի 286-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված արարքին: Միևնույն ժամանակ, Առաջին ատյանի դատարանը փաստել է, որ 2020 թվականի սեպտեմբերի 11-ի դատավճիռը կայացվել է արագացված դատաքննության կարգի կիրառմամբ, հետևաբար դատապարտյալ Ա.Դարբինյանի նկատմամբ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 189-րդ հոդվածի 3-րդ մասով նշանակված պատիժն ավելի խիստ է ՀՀ գործող քրեական օրենսգրքի 286-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի սանկցիայով սահմանված ազատազրկման առավելագույն ժամկետի երկու երրորդից: Արդյունքում, Առաջին ատյանի դատարանը, հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը, Ա.Դարբինյանի նկատմամբ ՀՀ գործող քրեական օրենսգրքի 286-րդ հոդվածի 2-րդ մասով պատիժ է նշանակել ազատազրկում՝ 3 (երեք) տարի 4 (չորս) ամիս ժամկետով⁴:

- Վերաքննիչ դատարանը, բեկանելով Առաջին ատյանի դատարանի՝ 2022 թվականի սեպտեմբերի 7-ի որոշումը, արձանագրել է, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից արդեն իսկ արագացված դատական քննության արդյունքում կայացված և օրինական ուժի մեջ մտած դատավճռով Ա.Դարբինյանի նկատմամբ նշանակված պատիժը՝ չորս տարի ժամկետով ազատազրկումը, գտնվում է ՀՀ գործող քրեական օրենսգրքի 286-րդ հոդվածի 2-րդ մասի սանկցիայի սահմաններում, ուստի Առաջին ատյանի դատարանը, ներկայացված միջնորդությունը բավարարելով, եկել է սխալ եզրահանգման: Արդյունքում, Վերաքննիչ դատարանն Առաջին ատյանի դատարանի որոշումը բեկանել է և դատապարտյալ Ա.Դարբինյանի միջնորդությունը՝ հանցանքը և դրա համար նշանակված պատիժը ՀՀ գործող քրեական օրենսգրքին համապատասխանեցնելու վերաբերյալ, մերժել է⁵:

⁴ Տես սույն որոշման 7-րդ կետը:

⁵ Տես սույն որոշման 8-րդ կետը:

13. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական տվյալները գնահատելով սույն որոշման 9-11-րդ կետերում մեջբերված իրավանորմերի և արտահայտված իրավական դիրքորոշումների համատեքստում՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, Առաջին ատյանի դատարանի որոշումը բեկանելով և հանցանքն ու դրա համար նշանակված պատիժը ՀՀ գործող քրեական օրենսգրքին համապատասխանեցնելու վերաբերյալ Ա.Դարբինյանի միջնորդությունը մերժելով, եկել է սխալ եզրահանգման:

Այսպես՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ դատապարտյալ Ա.Դարբինյանին ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 189-րդ հոդվածի 3-րդ մասով մեղսագրվող արարքի համար որպես պատիժ նախատեսված է **ազատազրկում՝ չորսից ութ տարի ժամկետով**: Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2020 թվականի սեպտեմբերի 11-ի դատավճռով՝ արագացված դատաքննության կարգի կիրառմամբ, Ա.Դարբինյանին դատապարտել է **ազատազրկման՝ չորս տարի ժամկետով**: Վերջինիս մեղսագրվող վերոնշված արարքը համապատասխանում է ՀՀ գործող քրեական օրենսգրքի 286-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետին, որի համար որպես պատիժ սահմանված է **ազատազրկում՝ երկուսից հինգ տարի ժամկետով**:

Վերոշարադրյալից բխում է, որ արագացված դատաքննության կարգի կիրառման պայմաններում դատապարտյալ Ա.Դարբինյանի նկատմամբ նշանակված պատիժը՝ **չորս տարի ժամկետով** ազատազրկումը, ավելի խիստ է ուժի մեջ մտած օրենսդրությամբ նախատեսված պատժի առավելագույն ժամկետի երկու երրորդից՝ **երեք տարի չորս ամիս ժամկետով** ազատազրկումից: Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ պատիժ նշանակելու որևէ հատուկ կանոնի պարտադիր կիրառման հիմքերի առկայության դեպքում «ուժի մեջ մտած օրենսդրությամբ նախատեսված **պատժի առավելագույն ժամկետ**» է համարվում տվյալ հատուկ կանոնի կիրառմամբ ստացվող պատժի ժամկետը, որպիսին սույն գործով արագացված դատաքննության դեպքում պատիժ նշանակելու հատուկ կանոնն է՝ նախատեսված 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածի 6-րդ մասով:

14. Հիմք ընդունելով սույն որոշման նախորդ կետում կատարված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանը եկել է ճիշտ հետևության առ այն, որ դատապարտյալ Ա.Դարբինյանի նկատմամբ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 189-րդ հոդվածի 3-րդ մասով նշանակված պատիժն ավելի խիստ է ՀՀ գործող քրեական օրենսգրքի 286-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի սանկցիայով սահմանված ազատազրկման առավելագույն ժամկետի երկու երրորդից, ուստի, հիմք ընդունելով ՀՀ գործող քրեական օրենսգրքի 9-րդ հոդվածի 3-րդ մասը, «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը, Ա.Դարբինյանի նկատմամբ պատիժ է նշանակել ազատազրկում՝ **երեք տարի չորս ամիս ժամկետով**:

Հետևաբար, Առաջին ատյանի դատարանի դատական ակտը բեկանելու և դատապարտյալ Ա.Դարբինյանի միջնորդությունը մերժելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունները հիմնավորված չեն:

15. Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն վարույթով Վերաքննիչ դատարանը թույլ է տվել նյութական օրենքի ոչ ճիշտ կիրառում, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 387-րդ հոդվածի համաձայն, հիմք է ստորադաս դատարանի դատական ակտը բեկանելու համար: Միևնույն ժամանակ, Առաջին ատյանի դատարանը, կատարված հանցանքը և նշանակված պատիժը ՀՀ գործող քրեական օրենսգրքին համապատասխանեցնելու վերաբերյալ դատապարտյալ Ա.Դարբինյանի

միջնորդությունը բավարարելով, կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ, ուստի անհրաժեշտ է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2022 թվականի նոյեմբերի 14-ի որոշումը՝ օրինական ուժ տալով Առաջին ատյանի դատարանի՝ 2022 թվականի սեպտեմբերի 7-ին կայացրած դատական ակտին: Միաժամանակ, պատժի կրման սկիզբը հաշվելով 2021 թվականի հունիսի 12-ից՝ Ա.Դարբինյանի կողմից պատիժը պետք է համարել կրած և նրան անհապաղ ազատ արձակել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ, 34-րդ, 264-րդ, 281-րդ, 352-րդ, 361-363-րդ և 385-387-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

Դատապարտյալ Անդրանիկ Կարապետի Դարբինյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2022 թվականի նոյեմբերի 14-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2022 թվականի սեպտեմբերի 7-ի որոշմանը:

Անդրանիկ Կարապետի Դարբինյանի կողմից պատիժը համարել կրած և նրան անհապաղ ազատ արձակել:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացնելու օրը:

ԵԴ/35626/02/22

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ
ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱԼԱՏԸ
(ԱՅՍՈՒՀԵՏ՝ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ)**

2025 թվականի փետրվարի 28-ին

գրավոր ընթացակարգով քննելով ըստ Աշոտ Մարտիրոսյանի և Սինարա Խեչոյանի (այսուհետ՝ Համահայցվորներ) հայցի ընդդեմ Սյուզաննա Մկրտչյանի՝ գրավոր դադարած ճանաչելու պահանջի մասին, քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 20.05.2024 թվականի որոշման դեմ Սյուզաննա Մկրտչյանի բերած վճռաբեկ բողոքը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Համահայցվորները պահանջել են դադարած ճանաչել Երևանի Հալաբյան փողոցի 43-րդ շենքի թիվ 15 հասցեում գտնվող բնակարանի նկատմամբ Սյուզաննա Մկրտչյանի գրավի իրավունքը:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 25.07.2023 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 20.05.2024 թվականի որոշմամբ Սյուզաննա Մկրտչյանի բերած վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 25.07.2023 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Սյուզաննա Մկրտչյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 170-րդ, 226-րդ, 227-րդ, 233-րդ, 247-րդ և 368-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 9-րդ, 157-րդ ու 192-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված հիմքերի առկայությունը պատճառաբանել է հետևյալ

հիմնավորումներով:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Դատարանը, 22.03.2023 թվականի դատական նիստում քննարկելով գործի վարույթը կասեցնելու վերաբերյալ իր միջնորդությունը, հեռացել է խորհրդակցական սենյակ և վերադառնալով դատական նիստի՝ նույն օրը բանավոր հայտարարել է, որ մերժում է գործի վարույթը կասեցնելու վերաբերյալ միջնորդությունը: Գործի նյութերում բացակայում է գործի վարույթը կասեցնելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու մասին դատական ակտը: Պարզ չէ նաև, թե ինչ պատճառով է դատարանը մերժել գործի վարույթը կասեցնելու վերաբերյալ միջնորդությունը: Առկա չէ նաև արձանագրային որոշում:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ գործով առկա են եղել կասեցման հիմքեր, մինչդեռ դատարանները մերժել են կասեցնել գործի վարույթը՝ որևէ ձևով չպատճառաբանելով այն:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև, որ գրավի իրավունքը չի կարող դադարել, քանի որ գրավով ապահովված են ոչ միայն 15.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամը՝ որպես փոխառություն, այլև այդ գումարի նկատմամբ հաշվարկվող՝ փոխառության գումարի երկու տոկոսի և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսների բռնագանձման ենթակա գումարները. այդ պահանջները քննվում են թիվ ԵԱՆԴ/2965/02/16 քաղաքացիական գործի շրջանակներում:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 20.05.2024 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության, կամ կայացնել նոր դատական ակտ՝ հայցը մերժել:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) սույն քաղաքացիական գործով պատասխանող Սյուզաննա Մկրտչյանը ներկայացրել գործի վարույթը կասեցնելու վերաբերյալ միջնորդություն՝ խնդրելով թիվ ԵԴ/35626/02/22 քաղաքացիական գործի վարույթը կասեցնել:

Դատարանը 11.07.2023 թվականի դատական նիստում կայացված արձանագրային որոշմամբ Սյուզաննա Մկրտչյանի միջնորդությունը մերժել է (**հատոր 1-ին, գ.թ. 63, 64, 67-69**).

2) թիվ ԵԱԴԴ/3129/02/14 քաղաքացիական գործով Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի կողմից 04.03.2016 թվականին կայացված վճռով բավարարվել է Էդիկ Ասլանյանի ու Աշոտ Մարտիրոսյանի հայցն ընդդեմ Հենրիկ Օհանյանի, Երրորդ անձ Սինարա Խեչոյանի, և վճռվել է՝ «որպես 22.01.2010 թվականին Աշոտ Մարտիրոսյանի, Սինարա Խեչոյանի և Հենրիկ Օհանյանի միջև կնքված անշարժ գույքի շինծու առուվաճառքի պայմանագրի հետևանք նշված պայմանագիրը դիտել որպես Էդիկ Ասլանյանի, որպես փոխառուի և Հենրիկ Օհանյանի, որպես փոխառուի միջև կնքված 15,000 ԱՄՆ դոլար գումարի փոխառության պայմանագիր և Աշոտ Մարտիրոսյանի, Սինարա Խեչոյանի, որպես գրավատերերի և Հենրիկ Օհանյանի, որպես գրավառուի միջև կնքված ք. Երևան, Հալաբյան փողոցի 43-րդ շենքի 15-րդ բնակարանի գրավի պայմանագիր:

Անվավեր ճանաչել ք. Երևան, Հալաբյան փողոցի 43 շենքի 15-րդ բնակարանի նկատմամբ Հենրիկ Օհանյանի գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական 01-001-4-54 մատյանի 000171 համարի տակ գրանցված սեփականության իրավունքը (սեփականության իրավունքի գրանցման վկայական թիվ 267929, տրված 27.01.2010

թվականին)»:

Նշված վճիռը մտել է օրինական ուժի մեջ, որի հիման վրա տրվել է կատարողական թերթ (հիմք՝ «www.court.am»):

3) թիվ ԵԱՆԴ/2965/02/16 քաղաքացիական գործով դիմելով դատարան՝ Հենրիկ Օհանյանը պահանջել է Էդիկ Ասլանյանից բռնագանձել 15.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ՝ որպես փոխառության գումար, 18.07.2013 թվականից մինչև 18.07.2018 թվականն ընկած ժամանակահատվածի համար 15.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի նկատմամբ հաշվարկված ամսական 2% տոկոսադրույթով տոկոս և 18.07.2018 թվականից մինչև պարտավորության դադարման օրն ընկած ժամանակահատվածի համար ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի կարգով հաշվարկված բանկային տոկոս՝ միաժամանակ խնդրելով բռնագանձումը տարածել Աշոտ Մարտիրոսյանին ու Սինարա Խեչոյանին սեփականության իրավունքով պատկանող գրավի առարկա՝ Երևանի Հալաբյան փողոցի 43-րդ շենքի թիվ 15 հասցեում գտնվող բնակարանի վրա:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 25.04.2019 թվականին կայացված վճռով Հենրիկ Օհանյանի հայցն ընդդեմ Աշոտ Մարտիրոսյանի, Սինարա Խեչոյանի և Էդիկ Ասլանյանի բավարարվել է մասնակիորեն, վճռվել է՝ «Էդիկ Սամվելի Ասլանյանից հոգուր հայցվոր՝ Հենրիկ Վարդանի Օհանյանի բռնագանձել 15,000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ՝ որպես փոխառության գումար և բռնագանձումը տարածել համապատասխանողներ՝ Աշոտ Սերգեյի Մարտիրոսյանին և Սինարա Սարգսի Խեչոյանին սեփականության իրավունքով պատկանող գրավի առարկա՝ ք. Երևան, Հալաբյան փողոց, 43 շենք, թիվ 15 հասցեում գտնվող բնակարանի վրա:

(...):

18.07.2013թ.-ից մինչև 18.07.2018թ.-ն ընկած ժամանակահատվածի համար 15,000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի նկատմամբ հաշվարկված ամսական 2% տոկոսադրույթով տոկոս և 18.07.2018թ.-ից մինչև պարտավորության դադարման օրն ընկած ժամանակահատվածի համար ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի կարգով հաշվարկված բանկային տոկոս պատասխանող՝ Էդիկ Սամվելի Ասլանյանից բռնագանձելու մասին պահանջները մերժել:

(...):»:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 06.02.2020 թվականի որոշմամբ Հենրիկ Օհանյանի բերած վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 25.04.2019 թվականի վճիռը մասնակիորեն՝ 18.07.2013 թվականից մինչև 18.07.2016 թվականն ընկած ժամանակահատվածի համար 15.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի նկատմամբ հաշվարկված ամսական 2 տոկոս տոկոսադրույթով տոկոս և 18.07.2016 թվականից մինչև պարտավորության դադարման օրն ընկած ժամանակահատվածի համար ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի կարգով հաշվարկված բանկային տոկոս պատասխանող Էդիկ Ասլանյանից բռնագանձելու հայցապահանջների մասերով, բեկանվել է, ու այդ մասերով գործն ուղարկվել է նույն դատարան՝ նոր քննության. մնացած մասով վճիռը թողնվել է անփոփոխ:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 06.02.2020 թվականի որոշումը վճռաբեկության կարգով չի բողոքարկվել և մտել է օրինական ուժի մեջ:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 14.04.2020 թվականի որոշմամբ թիվ ԵԱՆԴ/2965/02/16 քաղաքացիական գործն ընդունվել է վարույթ:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական

դատարանի 06.12.2023 թվականի որոշմամբ թիվ ԵԱՆԴ/2965/02/16 քաղաքացիական գործից առանձնացվել է Հենրիկ Օհանյանի իրավահաջորդ Սյուզաննա Մկրտչյանի հայցապահանջն ընդդեմ Էդիկ Ասլանյանի, Աշոտ Մարտիրոսյանի և Սինարա Խեչոյանի՝ վերը նշված տոկոսները բռնագանձելու մասին պահանջը՝ առանձին վարույթում քննելու համար, ու գործին շնորհվել է նոր գործի համար (**հիմք՝ «www.court.am»**).

4) թիվ ԵԱԴԴ/3129/02/14 քաղաքացիական գործով Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի կողմից 04.03.2016 թվականին կայացված վճռի ու Հենրիկ Օհանյանի մահվանից հետո՝ 11.05.2022 թվականին Սյուզաննա Մկրտչյանին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի հիման վրա 18.05.2022 թվականին գրանցվել է վերջինիս գրավի իրավունքը Երևանի Աջափնյակ, Հալաբյան փողոցի 43-րդ շենքի թիվ 15 բնակարանի նկատմամբ (**հատոր 1-ին, գ.թ. 41**):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի իմաստով, այն է՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 226-րդ և 233-րդ հոդվածների կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 233-րդ հոդվածի իմաստով գրավով ապահովված պահանջի ծավալին (բովանդակությանը):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 368-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պարտավորությունների կատարումը կարող է ապահովվել գրավով (գում 15), (...) և օրենքով կամ պայմանագրով նախատեսված այլ եղանակներով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 225.1-ին հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ապահովված իրավունքը օրենքի կամ պայմանագրի ուժով, ի ապահովումն պարտավորության կատարման, գույքի կամ գույքային իրավունքի կամ պարտավորական իրավունքի նկատմամբ պարտատիրոջ իրավունքն է:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ անշարժ գույքի, տրանսպորտային միջոցի, բանկային հաշվի, դեպոզիտի (ավանդի), ինչպես նաև արժեթղթի գրավի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են նույն օրենսգրքի 15-րդ գլխով:

Նույն հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ ապահովված իրավունքը ծագում և գործում է պարտավորության ծագման պահից մինչև պարտավորության պատշաճ կատարումը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 226-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գրավի իրավունքը (այսուհետ՝ գրավը) գրավատուի գույքի նկատմամբ գրավառուի գույքային իրավունքն է, որը միաժամանակ միջոց է գրավառուի հանդեպ պարտապանի ունեցած դրամական կամ այլ պարտավորության կատարման ապահովման համար:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գրավը լրացուցիչ (ակցեսոր) պարտավորություն է գրավառուի (պարտատիրոջ) հանդեպ գրավատուի (պարտապանի) հիմնական պարտավորության կատարման ապահովման համար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 227-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գրավը ծագում է պայմանագրի ուժով: Գրավը ծագում է նաև օրենքի հիման վրա՝ դրանում նշված հանգամանքների երևան գալով: Օրենքում պետք է նախատեսվի այն գույքը, որը համարվում է պարտավորության կատարման ապահովման համար գրավ դրված:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ պայմանագրի ուժով ծագած գրավի մասին նույն օրենսգրքի կանոնները համապատասխանաբար կիրառվում են օրենքի հիման վրա ծագած գրավի նկատմամբ, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 233-րդ հոդվածի համաձայն՝ գրավն ապահովում է գրավառուի պահանջն այն ծավալով, որն այն ունի փաստացի բավարարման պահին, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով կամ օրենքով: Այդ պահանջը մասնավորապես ներառում է տոկոսները, տուժանքը, կատարման ժամկետի կետանցով պատճառված վնասների, ինչպես նաև գրավ դրված գույքը պահելու, պահպանելու, դրա վրա բռնազանձում տարածելու և իրացնելու համար գրավառուի կատարած կամ կատարվելիք ծախսերի, ներառյալ՝ գրավի առարկան իրացնելու հետ կապված հարկերի գումարների հատուցումը, որոնք գրավառուն պարտավոր է վճարել որպես գրավատուի հարկային գործակալ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գրավի իրավունքը ծագում է գրավի պայմանագիրը կնքելու պահից, իսկ այն դեպքերում, երբ գրավի իրավունքը ենթակա է պետական գրանցման, ապա այն գրանցելու պահից: Ոչ փաստաթղթային ձևով թողարկված արժեթղթերի գրավի իրավունքը ծագում է իրավունքների գրառում կատարող անձի մոտ համապատասխան գրառում կատարելու պահից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի համաձայն՝ գրավը դադարում է գրավով ապահովված պարտավորությունը դադարելով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 248-րդ հոդվածի համաձայն՝ գրավառուի (պարտատիրոջ) պահանջները բավարարելու համար գրավ դրված գույքի վրա կարող է բռնազանձում տարածվել պարտապանի կողմից գրավով ապահովված պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու այնպիսի հանգամանքներում, որոնց համար վերջինս պատասխանատվություն է կրում:

Վերը նշված նորմերի վերլուծությունից բխում է, որ պարտավորությունների կատարումը կարող է ապահովվել նաև գրավով, որը, լինելով ապահովված իրավունք, գրավատուի գույքի նկատմամբ գրավառուի գույքային իրավունքն է: Գրավի իրավունքը միաժամանակ միջոց է գրավառուի հանդեպ պարտապանի ունեցած դրամական կամ այլ պարտավորության կատարման ապահովման համար: Գրավի իրավունքը ծագում և գործում է պարտավորության ծագման պահից մինչև դրա պատշաճ կատարումը:

Գրավի իրավունքը, ըստ էության, այլ անձի գույքի նկատմամբ ունեցած այնպիսի իրավունքն է, որի շնորհիվ գրավառուն հնարավորություն ունի պարտապանի կողմից պարտավորությունը չկատարելու դեպքում գրավադրված գույքի արժեքից բավարարելու իր պահանջները: Այսինքն՝ գրավի նպատակը գրավառուի՝ գրավով ապահովված պարտավորությունը չկատարելու դեպքում գրավ դրված գույքի արժեքից բավարարում ստանալն է:

Գրավի իրավունքը կարող է ծագել նաև օրենքի հիման վրա՝ դրանում նշված հանգամանքների երևան գալով: Այս դեպքում ևս նման գրավի նկատմամբ ենթակա են կիրառման պայմանագրի ուժով ծագած գրավի մասին ՀՀ քաղաքացիական օրենսգրքի կանոնները, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով: Գրավի իրավունքը ծագում է գրավի պայմանագիրը կնքելու պահից, իսկ այն դեպքերում, երբ գրավի իրավունքը ենթակա է պետական գրանցման, ապա այն գրանցելու պահից:

Մինչև նույն ժամանակ օրենսդիրը սահմանել է գրավով ապահովված պահանջի ծավալը՝ նախատեսելով, որ գրավն ապահովում է գրավառուի պահանջն այն ծավալով, որն այն ունի փաստացի բավարարման պահին, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով կամ օրենքով: **Ընդ որում, այդ պահանջը մասնավորապես ներառում է նաև տոկոսները,**

տուժանքը, կատարման ժամկետի կետանցով պատճառված վնասների, ինչպես նաև գրավ դրված գույքը պահելու, պահպանելու, դրա վրա բռնագանձում տարածելու և իրացնելու համար գրավառուի կատարած կամ կատարվելիք ծախսերի, ներառյալ՝ գրավի առարկան իրացնելու հետ կապված հարկերի գումարների հատուցումը:

Գրավի դադարման հիմքերից է գրավով ապահովված պարտավորությունը դադարելը:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներից մեկով արձանագրել է, որ գրավի իրավունքը կամ գրավը պարտավորությունների՝ իրային-իրավական ապահովման միջոց է, որը գրավառուին իրավունք է վերապահում հիմնական պարտավորության չկատարման դեպքում գրավատուի այլ պարտատերերի հանդեպ նախապատվության իրավունքով բավարարում ստանալու գրավի առարկայի արժեքից: Վերոգրյալ բնորոշումից բխում է, որ գրավով ապահովված պարտավորության պարտատերը գրավի առարկայի արժեքից իր պահանջի բավարարման նախապատվության իրավունք ունի մյուս պարտատերերի նկատմամբ, այսինքն՝ գրավով ապահովված պարտավորության պարտապանի մյուս պարտատերերի համեմատությամբ գրավով ապահովված պարտավորության պարտատիրոջ պահանջը ենթակա է բավարարման նախապատվության իրավունքով:

Գրավի իրավունքն առանձնահատուկ տեղ է զբաղեցնում իրային իրավունքների շարքում: Ի տարբերություն այլ իրային իրավունքների՝ գրավն առաջանում և իրավական արժևորում է ստանում այնքանով, որքանով այն անհրաժեշտ է օգտագործել հիմնական պարտավորության կատարումն ապահովելու համար: Այդ իսկ պատճառով գրավը, որպես այդպիսին, ունի երկակի բնույթ. այն բնութագրվում է որպես պարտավորաիրավական բնույթի իրային-իրավական ապահովման միջոց: Գրավի իրավունքին բնորոշ են իրային իրավունքներին ներհատուկ հետևյալ առանձնահատկությունները.

«բացարձակ իրավունքը». գրավի իրավունքին համապատասխանում է բոլորի և յուրաքանչյուրի պարտականությունը՝ ձեռնպահ մնալու այդ իրավունքի իրականացումը խախտող կամ խոչընդոտող արարքներից (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 241-րդ հոդված),

«հետևելու իրավունքը». գրավի իրավունքի կրողը պահպանում է իր իրավունքն անգամ այն դեպքում, երբ գրավի առարկան անցնում է այլ անձի սեփականության ներքո (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 242-րդ հոդվածի 1-ին կետ) (*տե՛ս «Սեյվր» ՍՊԸ-ն ընդդեմ Նշան Ալեքսանյանի թիվ ԵԿԴ/0169/02/15 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2016 թվականի որոշումը*):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ գրավի առանցքային գործառույթն ապահովման գործառույթն է, որի ուժով պարտատերը հնարավորություն է ունենում գրավի առարկայի արժեքի հաշվին նախապատվության իրավունքով ստանալ իր պահանջի բավարարում: Գրավի իրավունքի այս գործառույթը հիմք ընդունելով՝ օրենսդիրը սահմանել է գրավ դրված գույքի բռնագանձման և իրացման դեպքում գրավատուի և գրավառուի միջև փոխհաշվարկի կատարման պահանջ: Մասնավորապես՝ օրենսդիրը գրավառուին հնարավորություն է տվել գրավ դրված գույքի իրացումից ստացված գումարից պահել այդ գույքի վրա բռնագանձում տարածելու և իրացնելու համար ծախսերը վճարելու համար անհրաժեշտ գումարները և բավարարել իր պահանջները, իսկ այդ գումարների նվազեցման արդյունքում մնացած գումարը ենթակա է տրման գրավատուին: ՀՀ վճռաբեկ դատարանի գնահատմամբ՝ գրավի առարկայի վրա բռնագանձում տարածելու և իրացնելու իրավահարաբերությունների կարգավորման հիմքում ընկած է այն մոտեցումը, որ գրավը չի կարող ծառայել որպես կողմերից որևէ մեկի (գրավատուի կամ գրավառուի) հարստացման միջոց. այն կոչված է ողջամիտ հավասարակշռություն ապահովելու՝ մի կողմից՝ գրավառուի՝

գրավի առարկայի արժեքի հաշվին նախապատվության իրավունքով իր պահանջի բավարարում ստանալու իրավունքի, մյուս կողմից՝ գրավատուի՝ գրավի առարկայի վրա բռնագանձում տարածելու և իրացնելու համար ծախսերը և գրավով ապահովված, չկատարված (ոչ պատշաճ կատարված) պարտավորության գումարը գերազանցող գրավի առարկայի արժեքի մնացած մասը հետ ստանալու օրինական շահի միջև (տե՛ս «Էվոկաբանկ» ՓԲԸ-ն ընդդեմ «Արտադրա-Տպագրական» ՓԲԸ-ի թիվ ԵՄԴ/1206/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 08.05.2020 թվականի որոշումը):

Վերը նշված իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ

Սույն գործի փաստերի համաձայն՝ թիվ ԵԱԴԴ/3129/02/14 քաղաքացիական գործով Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի կողմից 04.03.2016 թվականին կայացված վճռով բավարարվել է Էդիկ Ասլանյանի ու Աշոտ Մարտիրոսյանի հայցն ընդդեմ Հենրիկ Օհանյանի, Երրորդ անձ Սինարա Խեչոյանի, և վճռվել է՝ «որպես 22.01.2010 թվականին Աշոտ Մարտիրոսյանի, Սինարա Խեչոյանի և Հենրիկ Օհանյանի միջև կնքված անշարժ գույքի շինծու առուվաճառքի պայմանագրի հետևանք նշված պայմանագիրը դիտել որպես Էդիկ Ասլանյանի, որպես փոխառուի և Հենրիկ Օհանյանի, որպես փոխառուի միջև կնքված 15,000 ԱՄՆ դոլար գումարի փոխառության պայմանագիր և Աշոտ Մարտիրոսյանի, Սինարա Խեչոյանի, որպես գրավատուների և Հենրիկ Օհանյանի, որպես գրավառուի միջև կնքված ք. Երևան, Հալաբյան փողոցի 43-րդ շենքի 15-րդ բնակարանի գրավի պայմանագիր»:

Անվավեր ճանաչել ք. Երևան, Հալաբյան փողոցի 43 շենքի 15-րդ բնակարանի նկատմամբ Հենրիկ Օհանյանի գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական 01-001-4-54 մատյանի 000171 համարի տակ գրանցված սեփականության իրավունքը (սեփականության իրավունքի գրանցման վկայական թիվ 267929, տրված 27.01.2010 թվականին)»:

Նշված վճիռը մտել է օրինական ուժի մեջ, որի հիման վրա տրվել է կատարողական թերթ:

Թիվ ԵԱՆԴ/2965/02/16 քաղաքացիական գործով Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 25.04.2019 թվականին կայացված վճռով Հենրիկ Օհանյանի հայցն ընդդեմ Աշոտ Մարտիրոսյանի, Սինարա Խեչոյանի և Էդիկ Ասլանյանի բավարարվել է մասնակիորեն, վճռվել է՝ «Էդիկ Սամվելի Ասլանյանից հոգուր հայցվոր՝ Հենրիկ Վարդանի Օհանյանի բռնագանձել 15,000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ՝ որպես փոխառության գումար և բռնագանձումը տարածել համապատասխանողներ՝ Աշոտ Սերգեյի Մարտիրոսյանին և Սինարա Սարգսի Խեչոյանին սեփականության իրավունքով պատկանող գրավի առարկա՝ ք. Երևան, Հալաբյան փողոց, 43 շենք, թիվ 15 հասցեում գտնվող բնակարանի վրա»:

(...):

18.07.2013թ.-ից մինչև 18.07.2018թ.-ն ընկած ժամանակահատվածի համար 15,000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի նկատմամբ հաշվարկված ամսական 2% տոկոսադրույթով տոկոս և 18.07.2018թ.-ից մինչև պարտավորության դադարման օրն ընկած ժամանակահատվածի համար ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի կարգով հաշվարկված բանկային տոկոս պատասխանող՝ Էդիկ Սամվելի Ասլանյանից բռնագանձելու մասին պահանջները մերժել:

(...):

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 06.02.2020 թվականի որոշմամբ Հենրիկ Օհանյանի բերած վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 25.04.2019 թվականի վճիռը մասնակիորեն՝ 18.07.2013 թվականից մինչև 18.07.2016 թվականն ընկած ժամանակահատվածի համար 15.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի նկատմամբ հաշվարկված ամսական 2 տոկոս տոկոսադրույքով տոկոս և 18.07.2016 թվականից մինչև պարտավորության դադարման օրն ընկած ժամանակահատվածի համար ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի կարգով հաշվարկված բանկային տոկոս պատասխանող Էդիկ Ասլանյանից բռնագանձելու հայցապահանջների մասերով, բեկանվել է, ու այդ մասերով գործն ուղարկվել է նույն դատարան՝ նոր քննության. մնացած մասով վճիռը թողնվել է անփոփոխ:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 06.02.2020 թվականի որոշումը վճռաբեկության կարգով չի բողոքարկվել և մտել է օրինական ուժի մեջ:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 14.04.2020 թվականի որոշմամբ թիվ ԵԱՆԴ/2965/02/16 քաղաքացիական գործն ընդունվել է վարույթ:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 06.12.2023 թվականի որոշմամբ թիվ ԵԱՆԴ/2965/02/16 քաղաքացիական գործից առանձնացվել է Հենրիկ Օհանյանի իրավահաջորդ Սյուզաննա Մկրտչյանի հայցապահանջն ընդդեմ Էդիկ Ասլանյանի, Աշոտ Մարտիրոսյանի և Սինարա Խեչոյանի՝ վերը նշված տոկոսները բռնագանձելու մասին պահանջը՝ առանձին վարույթում քննելու համար, ու գործին շնորհվել է նոր գործի համար:

Թիվ ԵԱԴԴ/3129/02/14 քաղաքացիական գործով Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի կողմից 04.03.2016 թվականին կայացված վճռի ու Հենրիկ Օհանյանի մահվանից հետո՝ 11.05.2022 թվականին Սյուզաննա Մկրտչյանին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի հիման վրա 18.05.2022 թվականին գրանցվել է վերջինիս գրավի իրավունքը Երևանի Աջափնյակ, Հալաբյան փողոցի 43-րդ շենքի թիվ 15 բնակարանի նկատմամբ:

Այժմ Համահայցվորները, դիմելով Դատարան, պահանջել են դադարած ճանաչել Երևանի Հալաբյան փողոցի 43-րդ շենքի թիվ 15 հասցեում գտնվող բնակարանի նկատմամբ Սյուզաննա Մկրտչյանի գրավի իրավունքը՝ հայցի հիմքում դնելով այն, որ *Էդիկ Ասլանյանը մահացել է և չունի ժառանգությունն ընդունած ժառանգներ, Էդիկ Ասլանյանի կողմից փոխառության պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու հիմքով Հենրիկ Օհանյանը դիմել է դատարան՝ գումար բռնագանձելու մասին պահանջով, որը բավարարվել է, և 06.03.2020 թվականին դատական ակտը մտել է օրինական ուժի մեջ, սակայն դատական ակտն ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում հայցվորը կատարողական թերթ ստանալու համար դիմում չի ներկայացրել, ուստի բաց է թողել օրենքով սահմանված ժամկետը, այսինքն՝ Էդիկ Ասլանյանի պարտավորությունը դադարել է: Թիվ ԵԱՆԴ/2965/02/16 քաղաքացիական գործով կայացված վճիռն այլևս կատարման ենթակա չէ:*

Դատարանը, պատճառաբանելով, որ՝

- «Երևան քաղաքի Հալաբյան փողոցի շենք 43 թիվ 15 հասցեում գտնվող բնակարանի նկատմամբ Սյուզաննա Մկրտչյանի հոր՝ Հենրիկ Օհանյանի գրավի իրավունքն առաջացել է Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԵԱԴԴ/3129/02/14 քաղաքացիական գործով 2016թ. մարտի 4-ի վճռի հիման վրա»,

- «տվյալ քաղաքացիական գործով պատասխանող Սյուզաննա Առաքելյանի հայրը՝

Հենրիկ Օհանյանը բաց է թողել թիվ ԵԱԴԴ/3129/02/14 քաղաքացիական գործով 2016թ. մարտի 4-ի վճռի հիման վրա կատարողական թերթ տալու մեկամյա ժամկետը, ինչպես նաև բացակայում է նշված բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին կատարողական թերթ տված դատարանի որոշումը (այն ընդհանրապես չի ներկայացվել): Նշված փաստերը ընդունել է նաև պատասխանող Սյուզաննա Մկրտչյանը»,

– «օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա կատարողական թերթն օրենքով սահմանված մեկ տարվա ժամկետում կատարման չներկայացնելով և հետագայում բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին պահանջ չներկայացնելու փաստով պատասխանողի հայրը՝ Հենրիկ Օհանյանը գրկվել է թիվ ԵԱՆԴ/2965/02/16 քաղաքացիական գործի վճռով սահմանված գումարը պահանջելու սուբյեկտիվ իրավունքի իրացման իրավական հնարավորությունից, իսկ Էդիկ Ասլանյանն ազատվել է նույն վճռով սահմանված պարտավորությունից, հետևաբար՝ վճռով սահմանված հայցվորի պարտավորությունն օրենքի ուժով դադարել է, իսկ դրամական պարտավորության կատարման հիմքով որպես ակցեսոր պարտավորություն դադարել է նաև գրավի իրավունքը»

ու, գտնելով, որ՝

– «Հենրիկ Օհանյանի կողմից դատավարական անգործություն ցուցաբերելու և թիվ ԵԱՆԴ/2965/02/16 քաղաքացիական գործի օրինական ուժի մեջ մտած դատական ակտը մեկ տարվա ընթացքում կատարման ներկայացրած չլինելու հանգամանքը չի կարող բացասաբար անդրադառնալ Էդիկ Ասլանյանի, ինչպես նաև գրավատուներ Աշոտ Մարտիրոսյանի և Սինարա Խեչոյանի իրավունքների և օրինական շահերի վրա՝ անորոշ ժամկետով գրավի (արգելանքի) տակ թողնելով գրավատուների սեփականությունը հանդիսացող գույքը՝ գրկելով նրանց գույքն իրենց հայեցողությամբ տնօրինելու, տիրապետելու և օգտագործելու ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքից»,

25.07.2023 թվականին վճիռ է կայացրել Համահայցվորների հայցը բավարարելու մասին:

Նշված վճռի դեմ վերաքննիչ բողոք է ներկայացրել պատասխանող Սյուզաննա Մկրտչյանը՝ որպես վերաքննիչ բողոքի հիմք նշելով Դատարանի կողմից նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 226-րդ հոդվածը խախտելը, իսկ որպես վերաքննիչ բողոքի հիմքի հիմնավորում՝ նաև այն, որ «գրավի իրավունքը չի կարող դադարել, երբ այդ գրավով ապահովված է ոչ միայն 15.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամը որպես փոխառություն, այլև այդ գումարի նկատմամբ հաշվարկվող փոխառության գումարի 2 տոկոսի և ՀՀ քաղ օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսների բռնագանձման ենթակա գումարները /տես ԵԱՆԴ/2965/02/16 գործով հայցապահանջի առարկաները/»:

Վերաքննիչ դատարանը, պատճառաբանելով, որ՝

– «սույն գործով երկու կողմերն էլ ընդունել են այն փաստը, որ Հենրիկ Օհանյանի կողմից 25.04.2019 թվականի վճռի չբեկանված մասով օրենքով նախատեսված ժամկետում կատարման չի ներկայացվել: Նշյալով առաջնորդվել է նաև Դատարանը»,

– «Դատարանի հետևությունները՝ փոխառության պարտավորության դադարած լինելու դեպքում այն ապահովող գրավի պարտավորության դադարած լինելու մասին, իրավաչափ են»

ու գտնելով, որ՝

– «Սույն գործով հայցվորները Էդիկ Ասլանյանի և Հենրիկ Օհանյանի միջև կնքված փոխառության պարտավորական իրավահարաբերությունների գրավատուներն են, և նրանք Դատարան դիմել են իրենց սեփականության իրավունքով պարկանող գույքի վերաբերմամբ գրավի իրավունքը դադարած ճանաչելու պահանջով: Այն հանգամանքը, որ վճիռը հարկադիր

կատարման ենթակա չլինելը ինքնին հանգեցնելու է գրավի իրավունքի դադարման, վկայում է նրա մասին, որ համահայցվորները իրավունք ունեն նման պահանջով դիմել Դատարան և իրենց պահանջը հիմնավորել թույլատրելի, վերաբերելի ապացույցների ծավալով»,

20.05.2024 թվականին որոշում է կայացրել Սյուզաննա Մկրտչյանի բերած վերաքննիչ բողոքը մերժելու և Դատարանի 25.07.2023 թվականի վճիռն անփոփոխ թողնելու մասին:

Վկայակոչված իրավական ակտերի և դրանց վերաբերյալ արտահայտված իրավական դիրքորոշումների համատեքստում գնահատելով Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դրանք անհիմն են ու չեն կարող հիմք հանդիսանալ Սյուզաննա Մկրտչյանի բերած վերաքննիչ բողոքն ամբողջությամբ մերժելու և Դատարանի 25.07.2023 թվականի վճիռն անփոփոխ թողնելու համար հետևյալ պատճառաբանությամբ:

Վերը նշված փաստերի վերլուծությունից բխում է, որ տվյալ դեպքում Երևանի Հալաբյան փողոցի 43-րդ շենքի թիվ 15 հասցեում գտնվող բնակարանի նկատմամբ Հենրիկ Օհանյանի (սույն գործով պատասխանող Սյուզաննա Մկրտչյանի իրավանախորդն է) գրավի իրավունքը, որը հետագայում ժառանգության իրավունքով փոխանցվել է Սյուզաննա Մկրտչյանին, ծագել է օրենքի հիման վրա, այն է՝ թիվ ԵԱԴԴ/3129/02/14 քաղաքացիական գործով Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը, 04.03.2016 թվականին վճիռ կայացնելով Էդիկ Ասլանյանի ու Աշոտ Մարտիրոսյանի հայցը բավարարելու մասին, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության 1998 թվականի հունիսի 17-ի օրենսգրքի 132-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 304-րդ հոդվածի 2-րդ կետերով, ըստ էության, կիրառել է շինծու գործարքի անվավերության հետևանքներ, որի արդյունքում Հենրիկ Օհանյանի հանդեպ Էդիկ Ասլանյանի ունեցած 15.000 ԱՄՆ դոլար գումարի չափով դրամական պարտավորության կատարումը համարել է ապահովված վերը նշված անշարժ գույքով: Հետագայում նշված վճիռից բխող գրավի իրավունքը գրանցվել է:

Սույն գործերի փաստերի վերլուծությունից հետևում է նաև, որ թիվ ԵԱՆԴ/2965/02/16 քաղաքացիական գործի շրջանակներում Հենրիկ Օհանյանի կողմից ընդդեմ Աշոտ Մարտիրոսյանի, Սինարա Խեչոյանի և Էդիկ Ասլանյանի ներկայացվել են ոչ միայն 15.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ՝ որպես փոխառության գումար բռնագանձելու, այլ նաև՝ 18.07.2013 թվականից մինչև 18.07.2018 թվականն ընկած ժամանակահատվածի համար 15.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի նկատմամբ ամսական **2 փոկոս**, ու 18.07.2018 թվականից մինչև պարտավորության դադարման օրն ընկած ժամանակահատվածի համար ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի կարգով հաշվարկված բանկային **փոկոս** բռնագանձելու մասին պահանջներ, որոնց մասով Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 25.04.2019 թվականի վճռի դեմ ներկայացված վերաքննիչ բողոքը քննության առնելու արդյունքում նույն վճիռը բեկանվել է, և այդ մասերով գործն ուղարկվել է նույն դատարան՝ նոր քննության: **Ընդ որում, նշված գործով հայցվորը պահանջել է բռնագանձումը տարածել Աշոտ Մարտիրոսյանին և Սինարա Խեչոյանին սեփականության իրավունքով պարկանող՝ գրավի առարկա Երևանի Հալաբյան փողոցի 43-րդ շենքի թիվ 15 հասցեում գտնվող բնակարանի վրա՝ նպատակ ունենալով ապահովելու ինչպես 15.000 ԱՄՆ դոլար գումարի, այնպես էլ՝ վերը նշված փոկոսների չափով գումարի՝ որպես դրամական պարտավորությունների կատարումը:**

Գործի նոր քննության ժամանակ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 06.12.2023 թվականի որոշմամբ թիվ

ԵԱՆԴ/2965/02/16 քաղաքացիական գործից առանձնացվել է Հենրիկ Օհանյանի իրավահաջորդ Սյուզաննա Մկրտչյանի հայցապահանջն ընդդեմ Էդիկ Ասլանյանի, Աշոտ Մարտիրոսյանի և Սինարա Խեչոյանի՝ վերը նշված տոկոսները բռնագանձելու մասին՝ առանձին վարույթում քննելու համար՝ գործին շնորհելով նոր գործի համար:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հիմք ընդունելով սույն գործի քննության շրջանակներում թիվ ԵԱՆԴ/2965/02/16 քաղաքացիական գործով պարզված վերը նշված հանգամանքները՝ անշարժ գույքի նկատմամբ Սյուզաննա Մկրտչյանի գրավի իրավունքը չէր կարող դատական կարգով ճանաչվել դադարած այն պայմաններում, երբ թիվ ԵԱՆԴ/2965/02/16 քաղաքացիական գործով ներկայացված պահանջներից նաև վերը նշված տոկոսները բռնագանձելու մասին պահանջներն են եղել ապահովված գրավի առարկա հանդիսացող՝ Երևանի Հալաբյան փողոցի 43-րդ շենքի թիվ 15 հասցեում գտնվող բնակարանով, այսինքն՝ այդ պահանջներն օրենքի իմաստով ևս ներառված են եղել գրավով ապահովված պահանջների ծավալում: Ավելին՝ սույն գործով ինչպես Դատարանի կողմից 25.07.2023 թվականին վճիռ կայացնելիս, այնպես էլ Վերաքննիչ դատարանի կողմից 20.05.2024 թվականին որոշում կայացնելիս այդ պահանջների մասով գործի քննությունը դեռևս ավարտված չի եղել, և առկա չի եղել այդ պահանջները մերժելու մասին օրինական ուժի մեջ մտած դատական ակտ:

Վերը նշված հանգամանքները Վերաքննիչ դատարանի կողմից անտեսվել են:

Ամփոփելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով Վերաքննիչ դատարանի 20.05.2024 թվականի որոշումը բեկանելու համար:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի ակտն ամբողջությամբ բեկանելու և փոփոխելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը, քանի որ ստորադաս դատարանների հաստատած փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս կայացնելու նման դատական ակտ, ու դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից այն առումով, որ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք, ու գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված՝ անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի նաև պատասխանողի համար, և գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում վերը նշված իրավունքի խախտման տեսանկյունից:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով վճռաբեկ բողոքի հիմքին՝ կապված Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 9-րդ և 157-րդ հոդվածները խախտելու հետ, ու դրա վերաբերյալ հիմնավորմանը, արձանագրում է, որ վճռաբեկ բողոքի նշված հիմքն անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ միջանկյալ դատական ակտեր են նույն հոդվածի 2-րդ մասում չնշված որոշումները, որոնք կայացվում են առանձին ակտի ձևով կամ արձանագրային որոշմամբ:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ արձանագրային որոշումը դատական նիստի ընթացքում դատարանի բանավոր կայացրած որոշումն է:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 162-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ դատական նիստի պարզ թղթային արձանագրությունում նշվում են դատարանի արձանագրային որոշումները և կարգադրությունները:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 199-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ առաջին ատյանի դատարանն **առանձին ակտի ձևով** կայացնում է այն որոշումները, որոնք՝

1) ենթակա են բողոքարկման.

2) կայացվում են դատական նիստից դուրս.

3) նույն օրենսգրքի համաձայն՝ պետք է կայացվեն առանձին ակտի ձևով:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասում չնշված որոշումները դատարանի հայեցողությամբ կարող են կայացվել առանձին ակտի ձևով կամ ամրագրվել դատական նիստի արձանագրության մեջ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ վերաքննության կարգով բողոքարկման են ենթակա առաջին ատյանի դատարանի հետևյալ որոշումները՝ գործի վարույթը կասեցնելու, գործի վարույթը վերսկսելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու մասին դատարանի որոշումները:

Վերը նշված նորմերի վերլուծությունից բխում է, որ միջանկյալ դատական ակտեր են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի 2-րդ մասում չնշված որոշումները, որոնք կայացվում են առանձին ակտի ձևով կամ արձանագրային որոշմամբ: Արձանագրային որոշումը դատական նիստի ընթացքում դատարանի բանավոր կայացրած որոշումն է, որի մասին նշում է կատարվում դատական նիստի պարզ թղթային արձանագրությունում: Ընդ որում, օրենսդիրը սպառնիչ թվարկել է այն որոշումների տեսակները, որոնք առաջին ատյանի դատարանը կայացնում է առանձին ակտի ձևով, դրանք են՝ բողոքարկման ենթակա որոշումները, դատական նիստից դուրս կայացվող որոշումները և այն որոշումները, որոնք, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համաձայն, պետք է կայացվեն առանձին ակտի ձևով՝ միաժամանակ դատարանին իրավունք վերապահելով առանձին ակտի ձևով կայացնելու նաև միջանկյալ դատական ակտ հանդիսացող այլ որոշումները:

Տվյալ դեպքում գործի վարույթը կասեցնելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու մասին որոշումը միջանկյալ դատական ակտ է, որը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, չի հանդիսանում բողոքարկման ենթակա որոշում, և քանի որ սույն գործով գործի վարույթը կասեցնելու մասին միջնորդությունը մերժելու մասին որոշումը կայացվել է դատական նիստում, ու նման որոշումը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համաձայն, ենթակա չէ պարտադիր կարգով առանձին ակտի ձևով կայացման, ուստի Դատարանը, 11.07.2023 թվականի դատական նիստում թիվ ԵԴ/35626/02/22 քաղաքացիական գործի վարույթը կասեցնելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու մասին որոշման վերաբերյալ նշումը կատարելով բացառապես թղթային արձանագրությունում և այդ որոշումը չկայացնելով առանձին ակտի ձևով, դատավարական իրավունքի որևէ նորմի խախտում թույլ չի տվել:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

պետական տուրքի գանձման օբյեկտները, պետական տուրքի չափը և վճարման կարգը սահմանվում են «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն գլխի [ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ գլուխ] կանոններին համապատասխան:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ բողոքարկված դատական ակտը բեկանելու և փոփոխելու դեպքում վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարանը եզրափակիչ դատական ակտով գործին մասնակցող անձանց միջև վերաբաշխում է դատական ծախսերը՝ նույն գլխի [ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ գլուխ] կանոնների համաձայն:

Սույն գործով նկատի ունենալով, որ Վճռաբեկ բողոքի բավարարման արդյունքում Վերաքննիչ դատարանի դատական ակտը ենթակա է ամբողջությամբ բեկանման և փոփոխման, հայցը ենթակա է մերժման՝ Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 102-րդ, 109-րդ ու 112-րդ հոդվածների, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի համապատասխան իրավակարգավորումները, գտնում է, որ Համահայցվորների կողմից հայցադիմումը Դատարան ներկայացնելու համար արդեն իսկ պետական տուրքի գումարն օրենքով սահմանված չափով վճարված լինելու պայմաններում այդ հարցը պետք է համարել լուծված, իսկ վերաքննիչ և Վճռաբեկ բողոքները ներկայացնելու համար Սյուզաննա Մկրտչյանի կողմից նախապես, համապատասխանաբար, 30.000 ՀՀ դրամ ու 40.000 ՀՀ դրամ վճարված լինելու պայմաններում Համահայցվորներից հոգուտ Սյուզաննա Մկրտչյանի համապարտության կարգով պետք է բռնագանձել ընդհանուր 70.000 ՀՀ դրամ:

Մինչդեռ ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այլ դատական ծախսերի վերաբերյալ պահանջ ներկայացված չլինելու պատճառաբանությամբ այդ ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ ու 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 20.05.2024 թվականի որոշումը բեկանել և փոփոխել՝ Աշոտ Մարտիրոսյանի ու Սինարա Խեչոյանի հայցը մերժել:

2. Աշոտ Մարտիրոսյանից և Սինարա Խեչոյանից հոգուտ Սյուզաննա Մկրտչյանի համապարտության կարգով բռնագանձել 30.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար, ու 40.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

Մնացած մասով դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ԲԱՐԵՄԱՂԹԱՆՔ

ՀՀ դատավորների միությունը շնորհավորում է

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավոր
Գայանե ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ծննդյան 55-ամյակը,

ՀՀ վարչական դատարանի դատավոր
Արմեն ՆԵՐՍԻՍՅԱՆԻ ծննդյան 55-ամյակը,

ՀՀ Վճռաբեկ դատարանի վարչական պալատի նախագահ
Հովսեփ ԲԵԴԵՎՅԱՆԻ ծննդյան 50-ամյակը,

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի դատավոր
Կարեն ԳԵՎՈՐԳՅԱՆԻ ծննդյան 50-ամյակը,

ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության
դատարանի դատավոր
Գնել ԶԱՔԱՐՅԱՆԻ ծննդյան 50-ամյակը,

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատավոր
Վազգեն ՌՇՏՈՒՆԻԻ ծննդյան 45-ամյակը,

ՀՀ Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր
իրավասության դատարանի դատավոր
Դավիթ ՍԱՐԳՍՅԱՆԻ ծննդյան 45-ամյակը,

ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության
դատարանի դատավոր
Արմեն ՇԻՐՈՅԱՆԻ ծննդյան 45-ամյակը,

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության
քաղաքացիական դատարանի դատավոր
Մարինա ՏԱՇՉՅԱՆԻ ծննդյան 40-ամյակը,

ՀՀ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության
դատարանի դատավոր
Վազգեն ՍՄԲԱՏՅԱՆԻ ծննդյան 40-ամյակը,

ՀՀ հակակոռուպցիոն դատարանի դատավոր
Սարգիս ԴԱԴՈՅԱՆԻ ծննդյան 35-ամյակը,

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության
քաղաքացիական դատարանի դատավոր
Մարիաննա ՍՏԵՓԱՆՅԱՆԻ ծննդյան 35-ամյակը,

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության
քրեական դատարանի դատավոր
Էդուարդ ՄԿՐՏՉՅԱՆԻ ծննդյան 35-ամյակը,

ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր
իրավասության դատարանի դատավոր
Նարեկ ԲԵԳԼԱՐՅԱՆԻ ծննդյան 35-ամյակը,

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության
քրեական դատարանի դատավոր
Ժորա ԶԻՉՈՅԱՆԻ ծննդյան 30-ամյակը,

*մաղթում նրանց առողջություն, անսպառ եռանդ
և մասնագիտական արդյունավետ գործունեություն:*

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ

«Դատական իշխանություն» գիտամեթոդական պարբերականը լույս է տեսնում տարեկան առնվազն չորս անգամ:

Պարբերականի գիտական խմբագրական խորհուրդը քննարկում է միայն այն նյութերը, որոնք ներկայացվում են գրախոսականի առկայությամբ:

Տպագրվող նյութը պետք է ունենա որոշակի կառուցվածք՝ **ներածություն, հիմնական հետազոտություն** (որը կարող է ունենալ բաժիններ և ենթաբաժիններ), **եզրակացություն**:

«Դատական իշխանություն» պարբերականում տպագրության ներկայացվող նյութերի տեխնիկական պահանջները.

1. նյութի սկզբում դրվում է վերնագիրը (գլխատառերով),
2. հաջորդ տողում՝ հեղինակի անուն-ազգանունը (գլխատառերով), հեղինակի գիտական աստիճանն ու կոչումը, աշխատանքի վայրը, պաշտոնը, հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի անվանումը,
3. տեքստի լուսանցքները. վերև՝ 25 մմ, ներքև՝ 25 մմ, աջ՝ 25 մմ, ձախ՝ 20 մմ,
4. հայերեն շարվածքի տառատեսակը՝ GHEA Grapalat, անգլերեն շարվածքի տառատեսակը՝ GHEA Grapalat, ռուսերեն շարվածքի տառատեսակը՝ GHEA Grapalat,
5. հիմնական տառաչափը՝ 12,
6. միջտողային հեռավորությունը՝ 1.5,
7. օգտագործված գրականության ցանկ՝ աճման կարգով, տառաչափը՝ 10, նշվում է աղբյուրի հեղինակը (թավ), վերնագիրը, հատորը, հրատարակության տեղը, տարեթիվը (մամուլի դեպքում՝ նաև համարը) և էջերի քանակը,
8. հղումները տրվում են տողատակում՝ աճման կարգով, տառաչափը՝ 10, նշվում է աղբյուրի հեղինակը (թավ), վերնագիրը, հատորը, հրատարակության տեղը, տարեթիվը (մամուլի դեպքում՝ նաև համարը) և էջը,
9. նյութը կարող է ներկայացվել հայերեն, անգլերեն կամ ռուսերեն, այն պետք է ունենա երեք լեզուներով ամփոփագրեր (ընդ որում՝ եթե այն անգլերեն կամ ռուսերեն չէ, ամփոփագիրը պետք է լինի 150-250 բառի սահմաններում), որոնք պետք է պարունակեն որոշակի, հստակ և ընդգրկուն տեղեկատվություն նյութի վերաբերյալ: Նյութը երեք լեզվով պետք է ունենա մինչև 10 բանալի բառեր,
10. նյութն անհրաժեշտ է ներկայացնել էլեկտրոնային եղանակով (էլեկտրոնային փոստ՝ kchalabyan@gmail.com):

Պարբերականում հոդվածները տպագրվում են վճարովի հիմունքներով: Տպագրության վճարը կազմում է 20.000 (քսան հազար) ՀՀ դրամ: Բացառություն են կազմում ՀՀ դատավորների միության անդամ դատավորները (ինչպես նաև ՀՀ դատավորների միության անդամ նախկին դատավորները), ում համար հոդվածների տպագրությունն իրականացվում է անվճար հիմունքներով:

ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ СУДЕБНАЯ ВЛАСТЬ JUDICIAL POWER

ԳԻՏԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
НАУЧНО-МЕТОДИЧЕСКИЙ ЖУРНАЛ
SCIENTIFIC - METHODOICAL JOURNAL

1-3/307-309 2025
ՀՌԻՆՎԱՐ-ՄԱՐՏ

Գիտական խմբագրական խորհուրդ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Լիլիթ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ – ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահ, ՀՀ վաստակավոր իրավաբան, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐ

Արման Դիլանյան – ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահ, իրավաբանական գիտությունների թեկնածու,

Համլետ Ասատրյան – ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահ, ՀՀ վաստակավոր իրավաբան,

Հովսեփ Բեդկյան – ՀՀ Վճռաբեկ դատարանի վարչական պալատի նախագահ,

Արթուր Դավթյան – ՀՀ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի նախագահ, իրավաբանական գիտությունների թեկնածու,

Երվանդ Խունդկարյան – ՀՀ Սահմանադրական դատարանի դատավոր, ՀՀ վաստակավոր իրավաբան,

Սերժիկ Ավետիսյան – ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի դատավոր, ՀՀ վաստակավոր իրավաբան, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,

Ելիզավետա Դանիելյան – ՀՀ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի կոռուպցիոն հանցագործությունների քննության դատական կազմի դատավոր, ՀՀ վաստակավոր իրավաբան, իրավաբանական գիտությունների թեկնածու,

Լիանա Հակոբյան – ՀՀ Վճռաբեկ դատարանի վարչական պալատի դատավոր, իրավաբանական գիտությունների թեկնածու,

Ռուզաննա Հակոբյան – ՀՀ Վճռաբեկ դատարանի վարչական պալատի դատավոր, ՀՀ վաստակավոր իրավաբան,

Նորա Կարապետյան – ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավոր, իրավաբանական գիտությունների թեկնածու,

Գոռ Թորոսյան – ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի դատավոր, իրավաբանական գիտությունների թեկնածու,

Արշակ Վարդանյան – ՀՀ դատավորների միության անդամ, իրավաբանական գիտությունների թեկնածու,

Սերգեյ Առաքելյան – ՀՀ Արդարադատության ակադեմիայի ռեկտոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,

Արմեն Հայկյանց – ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,

Վահե Հովհաննիսյան – ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,

Բորիս Գավրիլով – ՌԴ ներքին գործերի նախարարության Կառավարման ակադեմիայի հանցագործությունների քննության մարմինների կառավարման ամբիոնի պրոֆեսոր, ՌԴ գիտության վաստակավոր գործիչ, ՌԴ վաստակավոր իրավաբան, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,

Անատոլի Կուստով – ՌԴ վաստակավոր իրավաբան, Ռուսաստանի բնական գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

Գլխավոր խմբագիր՝

ՀՀ վաստակավոր իրավաբան, ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի պրոֆեսոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Վահե Ենգիբարյան**

«Դատական իշխանություն» գիտամեթոդական ամսագիրը 2014 թվականից ընդգրկված է Հայաստանի Հանրապետության բարձրագույն որակավորման կոմիտեի կողմից հաստատված թեկնածուական ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար ընդունելի պարբերական գիտական հրատարակությունների ցուցակում:

Հրատարակվում է

Երևանի դատական փորձագիտության և հոգեբանության ինստիտուտի գիտական խորհրդի երաշխավորությամբ:

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«ՀՀ դատավորների միություն»
հասարակական կազմակերպություն
Հասցե՝ ք. Երևան, Վ. Սարգսյան 5
<http://www.ajra.am>

«Դատական իշխանություն»
Հասցե՝ ք. Երևան, Վ. Սարգսյան 5
Հեռ. 56-99-89

Էլ. հասցե՝ judge@netsys.am
ISSI 1829-0744

Հանձնվել է տպագրության՝ 22.04.2025
Ֆորմատը՝ 70x100 1/8
Տպաքանակը՝ 60
Ծավալը՝ 14.625 պալմ. մամուլ
Գրանցման վկայական՝ 01Մ000023
Տրված է՝ 07.11.2001 թ.

Տպագրված է «ՔՈՓԻ ՓՐԻՆԹ» ՍՊԸ-ում:
ք. Երևան, Խորենացի 4-րդ նրբ., 69 տուն

ԼՈՒՅՍ Է ՏԵՄՆՈՒՄ
1997 ԹՎԱԿԱՆԻՑ



8 978994 656562

copy  print